# ԷՋՄԻԱԾԻՆ



Ե

2001

Aж146

ԾԷ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**Մ ա յ ի ս**
**2001**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական անդրանիկ այցելությունը Միացյալ Նահանգներ և Կանադա . . . . . . . . . . . . . . . . . 3

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Կոնդակը Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ նշանակելու մասին . . . . . 39
Կաթողիկոսության շքանշանների և Հայրապետական Օրհնության ու գնահատանքի գրերի փվչություն . . . . . . . . . . 41

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հաղթանակի օրվա առիթով . . . . . . . 43
Գարեգին Բ Կաթողիկոս. «Մեր աղոթքն է, որ նպաստենք մեր ժողովուրդների բարեկամությանը». Լիբանանի նախագահն այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին . . . . . . . . . . . . . . . . . . 44
Ամենայն Հայոց Հայրապետի փնօրինությամբ կարգալույծ է հռչակված Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը . . . . . . . . . . . 45
Գարեգին Բ Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Իրանում փեղի ունեցած ինքնաթիռի վթարի առիթով . . . . . . . . . . . 46

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Իրաքահայ թեմ

### ԱՐԱՄ ՄՐԿ. ՔԵԹԵՆՃՅԱՆ

ա) Մուսուլում նոր կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքը . . . . . . . 47
բ) Ավզրուկ գյուղի նորակառույց Ս. Վարդան եկեղեցու օծումը . . . 47
Լուրեր Գերմանիայի հայոց թեմից . . . . . . . . . . . . . . . 49

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՍԵՆ ԱՐՔԵՊՍ. ԲԵՐԲԵՐՅԱՆ - Անհրաժեշտ գիտելիքներ քրիստոնյաների համար ........ 50

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Հայ Եկեղեցին և հայոց հավատքը ռուսական աղբյուրներում ........ 56
Ս. Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. Լ. ԵԹԻՄՅԱՆ - Փիլոման Թայիրյան ..... 71
ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Թովմա Մեծոփեցու «Պատմագրության» լեզվական առանձնահատկությունները .. 77
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - «Սուրբ» բառի գործածության առանձնահատկությունները հայերենի տարբեր դրսևորումներում ........ 85
ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ - Տավուշի մարզի միջնադարյան ճանապարհները ........ 94

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Գիրք՝ նվիրված Անանիա Սանահնեցուն ........ 108

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ - «Էջմիածին» ամսագրի մատենագիտություն (1984-2000 թթ.) ........ 112
ԱՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ - Հայ ժողովրդական բանահյուսությունն ու բանագիտությունը «Հանդես ամսօրյայի» էջերում ........ 127
ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ - Վահագն Սպամբոլցյան - 70 ........ 134

Եկեղեցական բեմ. լուրեր ........ 137

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата .. 138
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin ........ 141
"Etchmiadzme" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine ...... 144

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՎ ԿԱՆԱԴԱ

**Ա. Մեկնում և ժամանում ԱՄՆ**
**Մայիս 5**

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2001 թվականի մայիս 5-ին սկսեց հովվապետական անդրանիկ իր այցելությունը Միացյալ Նահանգներ և Կանադա: Նորին Սրբության շքախմբում ընգրկված էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Մայր Աթոռի դիվանապետ, Հոգեշնորհ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը և գավազանակիր, Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Նանյանը:

Վեհափառ Հայրապետն իր շքախմբի անդամների հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության ուղեկցությամբ հանդիսավոր թափորով մուտք գործեց Մայր Տաճար՝ ճամփորդությունից առաջ Իջման Ս. Սեղանի առջև աղոթք բարձրացնելով առ Աստված և հրաժեշտի խոսք ուղղելով միաբանությանն ու հավատացյալներին: Հանուն միաբանության Նորին Սրբությանն ուղղված ողջերթի խոսքից հետո, որն արտասանեց Գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, ներկաններին դիմեց Վեհափառ Հայրապետը՝ ի մասնավորի նշելով. «Շուրջ երկամյա Մեր գահակալության ընթացքին Հայրապետական ամենաերկար ճամբորդությունն է, որ ներկայիս պիտի ունենանք Հյուսիսային Ամերիկայում: Աղոթում ենք առ Աստված, որպեսզի Տերն Իր զորակցությունն ու օգնականությունը աջակից դարձնի մեզ մեր առաքելության մեջ՝ զորացնելու սերն ու կապվածությունը Ամերիկայում ու Կանադայում կայք հաստատած հայորդաց հոգիներում առ Մայր Հայրենիքն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»:

Հրաժեշտից հետո մեքենաների շարասյունը շարժվեց «Զվարթնոց» օդանավակայան, որտեղ Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել բարձրաստիճան հոգևորականներ, պետական այրեր և այլք:

Օդակայանից Երևան - Ֆրանկֆուրտ չվերթով ինքնաթիռը շարժվեց 7.00-ին, և արդեն հինգ ժամ հետո Նորին Սրբությունն իր շքախմբով գտնվում էր Գերմանիայում, որտեղից գերմանական «Լուֆթհանզա» ավիաընկերության օդանավով շուրջ տասներկուժամյա թռիչքից հետո ժամանեց Միացյալ Նահանգաց ցեղափեսիլ քաղաքներից մեկը՝ Սան Ֆրանցիսկո: Օդանավից իջնելուն պես Վեհափառ Հայրապետին ընդառաջ եկան Հյուսիսային Ամերիկայի հայոց թեմերի առաջնորդները՝ Գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը (Ամերիկայի արևմտյան թեմ), Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը (ԱՄՆ արևելյան թեմ) և Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը (Կանադայի հայոց թեմ): Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաև ԱՄՆ արևմտյան թեմի եկեղեցական վարչության անդամները՝ թեմական խորհրդի ատենապետ Վարուժան Ալթըբարմաքյանի գլխավորությամբ, և հավատավոր բազմաթիվ ամերիկահայեր:

Աջահամբույրից և ավանդական աղուհացի մատուցումից հետո Նորին Սրբությունը ողջույնի իր խոսքն ուղղեց հայորդիներին և « Պահպանիչ» աղոթքով Տիրոջ հովանավորությունը հայցեց Առաքելական մեր Եկեղեցու բոլոր զավակների՝ ի մասնավորի Հյուսիսային Ամերիկայի հայության համար: Այնուհետև Վեհափառ Հայրապետն ուղեկցվեց հյուրանոց, որտեղից Հայրապետական շքախումբը ճանապարհվեց Սան Ֆրանցիսկոյի «Սուրբ Հովհաննես Ավետարանիչ» անունը կրող եկեղեցի: Եկեղեցու նորակառույց ընդարձակ սրահում հավաքվել էր հոծ բազմություն, և երբ Հայոց Հայրապետը մուտք գործեց, հնչեց «Հրաշափառ»-ը: Ուխտադրության արարողությունից հետո ողջույնի խոսք ասաց թեմակալ առաջնորդ Վաչե արքեպս. Հովսեփյանը և Նորին Սրբությանը հրավիրեց օրհնության իր պատգամը բերել եկեղեցու անդամներին: Վերջում, աջահամբույրից հետո, եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքին հայորդիք խանդավառությամբ իրենց բարեմաղթությունները բերեցին Վեհափառ Հայրապետին:

**Մայիս 6**

Մայիս 6- ի առավոտյան Նորին Սրբության ներկայության շնորհը վայելեցին Օքլենդի Սուրբ Վարդան եկեղեցու ծխականները: Տեղի համայնքը ստեղծվել է 1927 թ., իսկ շենքը կառուցվել է 1957 թ.: Ս. Վարդան եկեղեցում Նորին Սրբությանը վերստին ողջունեց Վաչե արքեպս. Հովսեփյանը: Այնուհետև ներկաներին Հայրապետական իր պատգամն ուղղեց Վեհափառը: Արարողությունից հետո տեղի հավատացյալներին ևս առիթ ընձեռվեց անմիջական զրույց և շփում ունենալու Հայոց

Հայրապետի հետ՝ կազմակերպված ընդունելության ընթացքում կիսելով իրենց ազգային-եկեղեցական մտածումներն ու մտահոգությունները Նորին Սրբության հետ:

Նույն օրը Սան Ֆրանցիսկոյի հունական եկեղեցում տեղի ունեցավ Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Վեհափառ Հայրապետը՝ առընթերակայությամբ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանի: Հայրապետական թափորը դուրս եկավ ավանդատնից և «Խորհուրդ խորին» - ի հնչյունների ներքո հանդիսաքայլ շարժվեց դեպի տաճար: Արարողությանը մասնակից էին բարձրաստիճան եկեղեցականներ, ի թիվս որոնց նաև հույն եկեղեցու հովիվը և հավատացյալ բազմաթիվ հայորդիներ:

Պատարագի ընթացքին Վեհափառ Հայրապետը ներկաներին ուղղեց Հայրապետական իր խոսքը՝ բնաբան ունենալով «Խաչ քո եղիցի մեզ ապաւէն» խոսքերը: Վեհափառն ասաց.

*Սիրելի բարեպաշտ հայորդիք,*

*Առաջին անգամ չէ, որ Մենք գտնվում ենք Ամերիկայում, սակայն այսօր, երբ Հայոց Հայրապետին են ուղղված ուրախությամբ լեցուն հազարավոր ձեր աչքերը, այն զգացումն ունենք, որ առաջին անգամ ենք այստեղ, Ամերիկայի օրհնյալ հողում: Ձեր բազմահազար ներկայության մեջ Մենք տեսնում և զգում ենք աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականության ոգին և ուժը, քանզի մեր ամենքիս հոգու հայացքի առջև այս պահին Մայր Հայաստանն ու Սուրբ Էջմիածինն են, որով մեկ ենք մենք մեր անցյալով, այսօրով ու գալիքով, մեր իղձերով, մեր հույսերով ու տեսիլքով:*

*Սիրելիներ, հոգիս առանձնակի խնդությամբ է լցված Ամերիկայի հայոց թեմեր Հայրապետական Մեր անդրանիկ այցելության առիթով: Փառք Բարձրյալին, որ շնորհեց մեզ պատիվը Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի տոնական ու հոգենորոգ տարում՝ որպես հովիվ ու սիրեցյալ հոտ, միմյանց հանդիպելու:*

*Հայրենիքի ազատ երկնքից ու ավիրական եզերքներից ողջույն ու սեր ենք բերել ձեզ, Սուրբ Էջմիածնի Լույս Խորանի օրհնությունը: Բերել ենք հայրենաբնակ մեր զավակների՝ ձեր եղբայրների ու քույրերի ջերմագին ողջագուրանքն ու բարեմաղթանքները:*

*Սիրելիներ,*

*Այստեղ ենք եկել Տեր-Զորից, Մեր հոգում ամփոփած՝ ձեզ ենք բերել ու ձեր հոգիներին ենք փոխանցում Հայոց մեծ Եղեռնի զոհերի հուշարձաններին վառվող անմար կրակի բոցը: Ուխտավոր բազմաթիվ հայորդիների հետ ապրիլի 24-ին խոնարհվեցինք մեկ ու կես միլիոն հայ նահատակների հավաքական գերեզմանին, Հայրենիքի ավիրական հողն ու ջուրը սփռեցինք այն հողին, որը նրանց նշխարներով շաղախված՝ սրբագործված է ամեն հայի համար: Քրիստոսին խաչակից մեր նահա-*

*ցանկների հիշատակի առջև Հարության խորհուրդն է նորոգվում մեր հոգիներում, հաստատվում Խաչի հաղթանակը մահվան դեմ: Արդարև մեր ժողովուրդը գիտի խաչի զորությունը, քանզի Հարության ժողովուրդ է: Ինչպես ասացինք Տեր Զորում՝ բազմիցս խաչվելով չէ, որ խաչակից ենք Քրիստոսին, այլ որովհետև Հարություն ենք առել: Ինչ է խաչի ճանապարհը, եթե ոչ չարի մերժում և բարու հաստատում, սիրո հաղթանակ մարդկային կյանքում, ազատություն մեղքից, որի համար Աստված Իր արյունը հեղեց խաչի վրա և Իր Հարությամբ՝ որպես ամենահաղթ նշան Իր զորության ու Իր կենդանի ներկայության մեր մեջ, պարգևեց մեզ լուսեղեն խորհուրդը Խաչի:*

*Դուք էլ, սիրեցյալ ու հարազատ զավակներ մեր, շառավիղներն եք այն հայորդիների, ովքեր քնավեր ու սփռացիր, բայց առ Աստված ապավինությամբ, արդարության ու կյանքի հաղթանակի հավատով, իրենց հոգիներում դրոշմը խաչի՝ նորից հիմնեցին իրենց տունը ու ծխեցին ծուխը հայրենական՝ շարունակելով ապրել «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (Գաղ. Զ:14) գիտակցությամբ:*

*Գիտենք, որ հավատավոր ձեր կյանքով, ձեր բարի գործերով, քրիստոնյա հայի օրինակելի, ազնիվ ու արժանապատիվ նկարագրով Դուք շարունակում եք ձեր հայրերի ավանդները և հարգանք ու վստահություն եք վայելում Ամերիկայի այս մեծ քաղաքում: Շատերին է հայտնի, որ ձեր քրիստոնեական նախաձեռնողությամբ Սան-Ֆրանցիսկոն հսկող բարձունքում շարունակում է կանգուն մնալ ազատարար Խաչը Քրիստոսի՝ որպես հայ ժողովրդի աներկբա հավատի մի նոր վկայություն ու Տիրոջ փառաբանություն: Հպարտ ենք Մենք որպես Հայոց Հայրապետ, քրիստոնեական ձեր ոգով ու հավատքով:*

*1700 տարիներ առաջ ազգովի համաձայն առանք Խաչը Քրիստոսի և կանգնեցրինք հաղթական ողջ հայոց աշխարհում՝ առաջինը հռչակելով քրիստոնեությունը որպես պետական կրոն: 1700 տարիներ ի վեր կենդանարար ու սքանչելագործ խաչը Քրիստոսի ծաղկում է մեր լեռներին, մատյաններին, Աստվածգիտության լույսով հրաշագործում հայի հոգու անդաստաններում, իմաստավորում հայության կյանքը, վառ պահում մեր մեջ ազատության տենչանքն ու արդարության սերը, նորոգում ոգին օրհնդագործ: Փորձությունների դեմ հանդիման խաչին ապավինած ապրեցինք, խաչով զինավառ մոխիրներից հառնեցինք, մահեր ոտնահարեցինք և հարուցյալ ընդերեցինք բարին ու բարու հետ քայլեցինք: Փառք Տիրոջը, որ կենարար Իր Խաչով պայծառ է պահում Հարության հավատի լույսը ձեր հոգում, որ Հայրենիքից ու Սուրբ Էջմիածնից օծվելով զարդված օրհնյալ ու հզոր այս երկրում առաջնորդում է ձեզ դեպի սուրբ ավազանը Աստվածկառույց Առա-*

*քելական մեր Եկեղեցու և հարազատ գիրկը մեր հինավուրց, բայց հավատով միշտ երիտասարդ ու կյանքով լեցուն ժողովրդի:*

*Սիրելիներ, խաչին ապավինած ու Հարության հավատով այսօր մեր ժողովուրդը նոր օրն է կերտում անկախ Հայաստանի ու ազատագրված Արցախի: Հայոց եկեղեցիների նորոգված ու նորակառույց գմբեթներից Տերունական խաչը վերստին օրհնություն է սփռում մեր Հայրենիքում, վերստին խաչի պյառնացրությամբ հայորդիք դառնում են դեպի խնկաբույր խորանները մեր սրբավայրերի և նրանց լույսը անթեղում իրենց հոգիներում ու հաստատում ընտանեկան իրենց հարկերում: Դժվարությունների ու հոգսերի բեռի ներքո, բայց հույսով ու լավատեսությամբ մեր ժողովուրդը ձեռնամուխ է հայրենական կյանքի վերաշինությանը, ազգային մեր իղձերի իրականացմանը: Արդ, ինչպես ազգովին հանձն առանք, այնպես էլ ազգովին՝ Հայոց Մեծ Դարձի 1700-ամյա հոբելյանով նորոգած հավատի մեր ուխտը, հավատավոր գործերով պանծացնենք «Խաչն կենարար, որ եղև մեզ փրկություն», որպեսզի այսօր էլ խաչի հաղթական խորհուրդը ուղեկից լինի մեզ և օրհնություն: Միաբան ու միակամ, Աստծո՝ մեր հանդեպ ունեցած Սիրով և միմյանց հանդեպ մեր սիրով զորացած՝ զինվորագրվենք մեր Սուրբ Եկեղեցու շինության, Մայր Հայրենիքի վերակառուցման, ազգային մեր կյանքի վերածննդի սուրբ առաքելությանը, և թող խաչի մեր ճանապարհը առաջնորդի մեզ դեպի հայոց Թաբոր լեռը պայծառակերպության:*

*Այսօր միաձուլենք մեր հոգիները ու հայցենք մեր հայրերի Աստծուն, որ զորացնի մեր մեջ սիրո ու միաբանության արարող ոգին, Իր պատվիրանների անշեղ արահետներով անսայթաք առաջնորդի ազգային մեր կյանքը և անսասան պահի Հայոց Եկեղեցին ու Հայրենիքը, կենսունակ հայոց սփյուռքը:*

*Թող Բարձրյալ Տերը ամենուր զորավոր պահի քրիստոնեական ոգին մեր մեջ, և մարդիկ տեսնեն մեր հավատավոր գործերը ու փառաբանեն Աստծուն՝ մեր Հորը, որ երկնքում է: Աղոթենք, որ մեր ու մեր զավակների հոգում միշտ այնպես պայծառ ու անշաղախ զգացվի այն խաչը, որ 2000 տարիներ առաջ առաքյալների ձեռքով կանգնեցվեց Արարատի դիմաց ու 1700 տարիներ առաջ Աստծո Միածին Որդու՝ Հարուցյալ մեր Փրկչի Էջքով բարձրացվեց Տաճարին Սուրբ Էջմիածնի, որը իրենց հավատակերտ ձեռքերով կառուցեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, հայոց Տրդատ Գ արքան ու նորադարձ ժողովուրդը մեր: Մեր հայրերի օրինակով աղոթք առ Աստված բարձրացնենք ու հայցենք.*

*Խաչ Քո եղիցի մեզ պահապան, Տէր Յիսուս,*
*յորժամ երեւիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս:*
*Յայնժամ մեք մի՛ ամաչեսցուք յուսացեալքս ի Քեզ.*

*այլ զօրութեամբ Քով մեծաւ բերկրեսցուք ընդ ազգէ քումմէ՝*
*որպէս զորդիս լուսոյ եւ որդիս փրկութեան:*

Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդին՝ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանին, հունական եկեղեցու հովվին՝ եկեղեցին սիրահոժար կերպով հայերին տրամադրելու համար: Այս առիթով Վեհափառ Հայրապետը եկեղեցուն նվիրեց Տիրամոր հայատառ պատկեր:

Վեհափառ Հայրապետը հատուկ կերպով իր քաջալերանքին արժանացրեց նաև դպրաց դասի անդամ - անդամուհիներին, որոնք բազմաձայն շքեղությամբ ու մեծ խանդավառությամբ էին կատարում Սուրբ Պատարագի հոգեզմայլ մեղեդիները: Պատարագի ավարտին գրեթե բոլոր հավատացյալները հաղորդվեցին՝ վերստին նորոգելով քրիստոնյայի իրենց ուխտը:

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցուն կից ընդարձակ հանդիսասրահում տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն և ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Երեկույթին ներկա հայորդիք ունկնդրեցին բարձրաստիճան հոգևորականների խոսքերը և դիտեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Շողակաթ» նորաստեղծ ստուդիայի պատրաստած հեռուստաֆիլմը՝ Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունից ի վեր Մայր Աթոռում ծավալված աշխատանքների մասին: Տպավորությունները խանդավառող էին: Վերջում ամենքին Հայրական իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ հորդորելով ամուր կապված մնալ հայրենական ավանդներին:

**Մայիս 7 - 9**

Սան Ֆրանցիսկոյից Վեհափառ Հայրապետը մայիս 7 - ին ճանապարհվեց Ֆրեզնո, քաղաք, ուր հանգիստ էր գտել ազգային մեր հերոս զորավար Անդրանիկի անհանգիստ հոգին, և ուր ներշնչվել է նաև հայազգի նշանավոր գրողը՝ Վիլյամ Սարոյանը: Քաղաքը բարեկեց է, հռչակված հողագործության, ի մասնավորի պտղագործության մեջ արձանագրած հաջողություններով, խաղողի, սալորենու, դեղձի ու ծիրանի այգիներով ու մերձարևադարձային կուլտուրաների մշակությամբ: Ֆրեզնոն ներկայիս ունի շուրջ չորս հարյուր հազար բնակիչ, որոնցից հիսուն հազարը հայեր են: Ինչպես մյուս բնակիչներից շատերը, հայերը ևս հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ:

Վեհափառ Հայրապետի այցելությունը համընկավ այն եղանակին, երբ քաղաքը ներկայանում էր գարնանային զարթոնքի իր ամբողջ շքեղությամբ: Աշխատանքային աշխույժ եռուզեռի շրջան էր: Հակառակ այս ամենին, սակայն, հայությունը թողել էր առօրյա իր աշխատանքը և շտապել օդանավակայան՝ դիմավորելու Հայոց Հայրապետին: Նորին Սրբությունն իր շքախմբով Ֆրեզնո ժամանեց մասնավոր ինքնաթիռով: Հայրապետական շքախմբին ընդառաջ ելան բազմաթիվ ֆրեզնոյահայեր՝

քաղաքի հայոց համայնքների հոգևոր հովիվները, եկեղեցական վարչության պատվարժան անդամները, հավատացյալներ, լրագրողներ ու այլք: Ծափողջույններից ու հանդիսավոր ընդունելությունից հետո օդանավակայանում Նորին Սրբությունը կարճ հարցազրույց ունեցավ «Ֆրեզնո Բի» քաղաքային տեղական թերթի թղթակցի հետ՝ լուսաբանելով իր այցի նպատակը, պատասխանելով նաև վերջինիս հետաքրքրող մի շարք հարցերի:

Երեկոյան, «Հրաշափառ»-ի արարողությամբ, Վեհափառ Հայրապետը մուտք գործեց Ֆրեզնոյի Ս. Պողոս հայկական եկեղեցի: Կանոնական աղոթքից հետո Նորին Սրբությունը, առընթերակայությամբ Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանի և Գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, պատարագեց և տվեց իր Հայրապետական պատգամը:

*Սիրելի ժողովուրդ հայոց*

*Հովվապետական Մեր անդրանիկ այցն ենք կատարում Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Կանադա: Մեր հոգում ծրարած ձեզ բերել ենք ողջույններ Հայաստանից, Արցախի ազատաշունչ եզերքներից, հայրենի մեր երկիրը սրբացնող եկեղեցիներից, վանքերից ու խաչքարերից, ողջույն՝ մեր սուրբ հայրերի և հայրապետների լույս նշխարներից, Եռաբլուրի փառքի բարձունքում հանգչող հայրենյաց հերոսների շիրիմներից: Ողջունում ենք ձեզ Սուրբ Լուսավորչի Կանթեղի լույսով, Հայոց բարձրիկ աշխարհի կարոտով, Աստվածկառույց Սուրբ Էջմիածնի սիրով:*

*Եկել ենք հարանց մեր սուրբ հավատը նորոգելու կոչով, մեր ընթացքը դեպի Աստված անսայթաք դարձնելու հորդորով ու պատգամով: Հայոց Մեծ Դարձի՝ համազգային մկրտության 1700-ամյակը երկնային մի նոր հրավեր է մեզ՝ առ Աստված մեր հայրերի Սուրբ Ուխտը վերահաստատելու, խոստովանելու մեր հավատարմությունը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, որ փրկության տապանն է մեր, Աստծո հետ հայոց հանդիպավայրը, ուր ծնվում ու շարունակ նորոգվում են սերն ու խաղաղությունը մեր կյանքի, խորհուրդը մեր հավերժության: Արդարև, ի՞նչ արժե ճանապարհը, եթե այն չի առաջնորդում մեզ դեպի Աստծո Սուրբ Տաճար՝ հոգևորով իմաստավորելու մեր կյանքը, բարու մեջ ապրելու, արդարություն գործելու, խաղաղություն հաստատելու: Այսօր մենք տոնախմբում ենք նվիրական հիշատակները մեր պատմության հավատակերտ օրերի, երբ Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ 2000 տարիներ առաջ հիմնադրված Հայոց Եկեղեցին 301 թ. պաշտոնական ճանաչում գտավ, և քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական կրոն: Երբ Սբ. Լուսավորչի զորեղ հավատքով Ավետարանի լույսը բազմապատկվեց ու առատացավ մեր Հայրենիքում: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցիով լույս հագավ հայոց կյանքը: Հայ Եկեղեցուց ճառագող հավատով զգեստավոր-*

*վեցին ազատության ու արդարության սերը մեր ժողովրդի. աղբյուրացավ ու ծովացավ ստեղծագործ ուժը հայոց՝ կերտելով Քրիստոսաշունչ հայ մշակույթը, որով արժանի ներդրում ունենք համամարդկային քաղաքակրթության մեջ, որով ճանաչելի ենք այլ ժողովուրդների ու հաղորդակից նրանց: Մեր հավատի անխորտակ բերդամրոցն է Հայ Եկեղեցին, գայթող ու մոլորեցնող ճանապարհներից մեզ հեռու պահող, Միածնաէջ Սուրբ Խորանի լույսով դեպի Աստված առաջնորդող հոգևոր Տաճարը, որ հավերժական է՝ հաստատված Աստծո Սիրո վրա, որ «ոչ երբեք անկանի» (Ա Կորնթ. 13. 8): Եղավ, որ դարերի հոլովույթներում տկարացավ մեր Եկեղեցին: Տկարացավ, երբ մեր սերը, մեր հավատը պակասեց, երբ մեր հույսը առ Աստված թուլացավ, սակայն մշտապես՝ զորեղ, թե տկար, պարզեց օրհնության իր թևերը մեր վրա ու խնամեց մեզ՝ լինի հայրենի հողում, թե նրանից հեռու: Խնամեց ու հոգաց որպես ծնող Մայր, որ միշտ զորեղ է իր զավակի հանդեպ ունեցած սիրով: Խորհրդային անաստվածության տասնամյակներին անգամ մեր Եկեղեցին վառ պահեց հավատի ջահը մեր ժողովրդի հոգում, անկոտրում՝ քրիստոնյա հայի ինքնության ոգին:*

*Գոհություն Բարձրյալին, փշրվեցին բռնության շղթաները, տապալվեցին հայ հոգիները միմյանցից տարանջատող պատնեշները: Հայոց Եկեղեցին այսօր վերազարթոնք է ապրում, ազատության մեջ ջանում հաղթահարել այն բոլոր ավերները, որ գործվեցին աթեիզմի ձեռքերով: Հառնում են խոնարհված եկեղեցիները, կառուցվում նորերը, Ավետարանի հունդերն են սերմանվում մանկանց ու մեծերի սրտերում, ընտանեկան հարկերից, ուսումնական, մշակութային հաստատություններից ներս: Հայրենիքում աղոթք է բարձրանում առ Աստված՝ միաձուլվելով սփյուռքում ապրող մեր զավակների աղոթքներին և որպես օրհնություն իջնում հայոց կյանքին:*

*«Սէր ոչ երբէք անկանի»: Այս հավատով ապրել ենք, ապավինել Աստծուն, սիրել մեր ընտանիքը, մեր Հայրենիքը: Այդ սիրո՛վ կերտվեց 88-յան մեր միաբանությունը, անձնահանք այդ սիրո՛վ դուրս եկանք մարտադաշտ ու պաշտպանեցինք ազատության մեր իրավունքը Արցախում: Հաղթանակող այդ սիրով 1991-ին հանձն առանք Հայաստանի նոր անկախությունը և ընթացանք մեր նոր պետականությունը կերտելու դժվարին ճանապարհով: Հայաստանում, սիրելիներ, դեռևս շարունակվում են տնտեսական և ընկերային կյանքի դժվարություններն ու հոգսերը: Լուրջ բարեփոխումների կարիք են զգում հասարակական կյանքի կարևոր շատ բնագավառներ, վճիռների սպասում բազում խնդիրներ: Հաճախ անորոշությունն ու անվստահությունն են մարդկանց հոգիներում: Վերստին մեր միաբանության կարիքն է զգացվում՝ շաղախված սիրով, չընկրկող, չպարտվող, երկմտություն ու երկյուղ չունեցող սիրով, սեր, որ չար բան չի խորհում, չի նախանձում, անիրավության վրա չի ուրախանում, այլ միշտ հավատում է, միշտ*

հուսադրում ու միշտ արարում: Այս էր Մեր պատգամը Սուրբ Հարության տոնին, այս է Մեր պատգամը այսօր և միշտ:

Սիրելիներ, մենք գիտենք, թե ինչպես հուզվել ու տագնապել են ձեր հոգիները վերջին տասնամյակում, երբ լսում էիք Հայաստանում երկրաշարժի ավերների, Արցախյան թեժ մարտերի, հայրենաբնակ հայության կրած նեղությունների մասին: Գիտենք այն բազմաթիվ ու բազմապիսի օգնությունների մասին, որ դուք սիրով, հույսով ու լավատեսությամբ ուղարկել եք ձեր եղբայրներին ու քույրերին, բարեսիրական այն ծրագրերի մասին, որ իրականացրել եք անսակարկ ծառայությամբ՝ որպես արժանի հետևորդները ձեր հայրերի ու պապերի: Հիշենք, թե ինչպես Ամերիկայում իրենց նոր կյանքը սկսող հայորդիք՝ հաղթահարելով ամենադժվարին իրավիճակներ, դիմանալով ամենաչարքաշ աշխատանքի ու կյանքի, թանկ ժառանգության պես պահեցին այն արժեքները, որ կրում էին իրենց հոգում որպես քրիստոնյա հայեր՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու զավակներ: Հիշենք այն գորովը, որով նրանք իրենց հոգիներում անթեղեցին Եկեղեցու և Հայրենիքի սերն ու փոխանցեցին սերնդե-սերունդ: Եվ մեզ համար հասկանալի կդառնա բարեգործության այն ոգին, որ միշտ արթուն է եղել ամերիկահայոց մեջ, հայրենասիրության այն ուժը, որ ոգեշնչել է առանց վարանելու զինվորագրվելու Հայաստանի ազատագրության գործին: Հիրավի, ուր էլ լինենք, մեր արմատներում զգում ենք Արարատի լանջին Նոյյան որթատունկի ավիշի քաղցրությունը: Ուր էլ լինենք, չի կարող մեր հոգում մարել Աստվածպարգև այն հողի կանչը, որ թաթախված է նախնյաց արյուն-քրտինքով, որ շաղախված է հիշատակներով ու սրբություններով, որից այնքան աղոթք է խնկարկվել առ Աստված: Հիրավի, «Ուր գանձն ձեր է, անդ և հոգին ձեր եղիցի» (Ղուկ. 12. 34): Այո, ուր մեր գանձերն են, այնտեղ են և մեր հոգիները: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու Մայր Հայրենիքն են շնորհաց աղբյուր մեր գանձարանը, մեր հոգու հանգրվանը, մեր ընդհանուր տունը: Նրանք այսօր զգում են իրենց զավակների՝ ձեր, մեր հոգածության կարիքը:

Սիրելի բարեպաշտ հայորդիք, հայոց կյանքի անբաժան մասն եք դուք ձեր գործուն մասնակցությամբ, ձեր սիրով ու նվիրումով, որով ծաղկում է հայ կյանքն Ամերիկայի համայնքներում, որով «գրոյ հիշատակի արժանի» արության բազում գործերով ներկա եք դուք Հայրենիքում: Ազատ Հայաստանի հզորության կառույցի հիմնաքարերը դնելու, միասնական ու ծաղկուն Եկեղեցու Խորանի լույսն առատացնելու ժամանակն է այսօր, և այդ ժամանակը մեզ է վիճակվել: Հաջողության ամենամեծ գրավականը՝ Հայաստանի ու Արցախի անկախության իրողությունն է: Արդ, աներկյուղ ու աներկբա, վճռական ու քաջերանդ, արարող սիրով ստանձնենք վերաշի-

*նությունը մեր դռան: Հայրենիքը վեր է ամենից և ամենայնից: Խոնարհվենք Հայրենիքի սիրո և Հայրենիքի հանդեպ մեր պարտքի առջև:*

*Մենք երջանիկ ու հպարտ ենք, որ դուք՝ լիիրավ քաղաքացիներն Ամերիկայի, քրիստոնյա հայի ձեր նկարագրով հարգանք ու վստահություն եք վայելում այս հզոր երկրում և ձեր ազնիվ ու ջանասերի ներդրումը բերում ամերիկյան կյանքին:*

*Սիրելիներ, մեր հանդիպման այս առիթով ուրախ ենք նաև, որ Մայրերի օրվա կապակցությամբ այսօր կարող ենք շնորհավորել. Աստվածային օրհնություն և արևշատ ու երջանիկ կյանքի բարեմաղթանքներ բերել ինչպես Ամերիկայում ապրող բոլոր մայրերին, այնպես և հայուհի մայրերին, որոնք առաջին դաստիարակն են մեր մանուկների և նրանց հոգիներում առ Աստված հավատի ու հայրենյաց սիրո առաջին սերմերի պահ տվողները: Ձեզ ենք փոխանցում հայրենաբնակ հայոց սերն ու ողջագուրանքը և վերածննդի ոգին, որ ազատության շնորհիվ նոր հազարամյակի հետ քայլում է մեր հողում և ոգեշնչում մեզ բոլորիս ի Հայաստան և ի սփյուռս:*

*Լիցուն հայոց համազգային մկրտության և քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի լուսեղեն խորհրդով, հուսառատ ու լավատես ոգով միաձայնաբար աղոթք բարձրացնենք առ Աստված, որ օրհնի մեր Եկեղեցին ու Հայրենիքը և մեր հավատի ու ազգային միաբանության ուխտը: Հայցենք Բարձրյալից, որ Իր Ամենախնամ հովանու ներքո միշտ խաղաղ ու բարգավաճ պահի Ամերիկայի Միացյալ Նահանգները, բարօր ու երջանիկ՝ ամերիկյան հյուրընկալ ու մարդասեր ժողովուրդը: Եվ թող զորացնի Աստված մեզ մեր պարտքի մեջ ու առաջնորդի ճշմարտության Իր Հոգով այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:*

**Մայիսի 8**

Վեհափառ Հայրապետը, առաջնորդ Սրբազան Հոր և շքախմբի ընկերակցությամբ այցելեց Կենտրոնական Կալիֆոռնիայի հետևյալ եկեղեցիները՝ Եղեմի Ս. Աստվածածին, Ռիդլի Ս. Սահակ-Մեսրոպ և Ֆաուլրի Ս. Գրիգոր Լուսավորիչ, և կանոնական աղոթքից հետո, առաջնորդ Սրբազան Հոր հրավերով, տվեց իր Հայրապետական պատգամը: Վեհափառ Հայրապետն իր այցելած այս ծուխերին մեկական հուշանվերներ հանձնեց, որ պատրաստված էին Հայաստանում 1700-ամյակի առթիվ: Թեմիս այս ծուխերը հոգեկան մեծ ցնծության ու վերացումի պահեր ապրեցին Նորին Սրբության օրհնաբեր այցելությամբ:

Ապա Նորին Սրբությունն իր շքախմբով այցելեց Ֆրեզնոյի Ս. Խաչ եկեղեցի և դասի մեջ առանձնական աղոթք մատուցեց:

Երեկոյան Ս. Պողոս եկեղեցում կատարվեց Երեկոյան ժամերգություն:

Նորին Սրբությունն իր Հովվապետական օրհնաբեր այցելության և 1700-ամյակի առիթով Կենտրոնական Կալիֆոռնիայի մեր եկեղեցիների երիտասարդությանը բացառիկ առիթ շնորհեց Վեհափառ Հայրապետի խոսքերը լսելու և հարցումներ ուղղելու Հայոց Հովվապետին:

Սպեղծված մտերմիկ և ջերմ մթնոլորտի մեջ, Նորին Սրբությունը պատմեց, թե ինչպես ամեն կիրակի հայրը իր ձեռքից բռնած և իրենց ընտանիքի մյուս անդամները՝ եղբայրներն ու քույրերը, Ս. Էջմիածին էին գնում, եկեղեցու դռան առջև ծնրադրում և այդպես մտնում ներս: Ծնողներից սովորել էր, որ Տաճարի յուրաքանչյուր քարը յոկ սյարզ քար չէր, այլ կենդանի ուժ, որ իր մեջ ուներ նաև մեր հայրերի աղոթքները: Վեհափառ Հայրապետը նշեց, որ միշտ վստահություն է ունեցել Աստծու վրա և իր կյանքը նվիրել Աստծուն ու Եկեղեցուն և իր աղոթքները միշտ ավարտել՝ ասելով. «Տեր, քո կամքը թող լինի»:

Ապա տեղի ունեցավ աջահամբույր, և Նորին Սրբությունը փոքրիկ խաչեր բաժանեց ներկաներին, որին հաջորդեց ընդունելությունը եկեղեցու Հայկ Պերպերյան սրահում:

**Մայիսի 9**

Առավոտյան Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Ֆրեզնոյի Համազգայնական Հայկական Վարժարան, ուր տեղի ունեցավ ավանդական աղոթացի օրհնությունը: Ապա Նորին Սրբությունը զրույց ունեցավ աշակերտների հետ: Եվ, արդարև, աշակերտության և ուսուցչական կազմի համար ցնծության օր եղավ Նորին Սրբության այցելությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն այցելեց Ֆրեզնոյի Պետական համալսարան, որտեղ Alise Peters լսարանի ուսանողները անհամբերությամբ սպասում էին Նորին Սրբության ժամանմանը: Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Հայ Ուսանողների Միության հետ՝ միությանը նվիրելով կենտրոնում խաչով հյուսված մի գորգ: Ուսանողները չափազանց երախտապարտ մնացին:

Նորին Սրբությունն իր շքախմբով օրվա վերջին այցելությունը տվեց Կալիֆոռնիայի Հայ Տարեցների Տուն, որի վարչության նախագահն է Ջեկ Պետրոսյանը: Վեհափառ Հայրապետը խոսեց տարեցների և պաշտոնյաննների հետ: Վերջին հանդիպումը տեղի ունեցավ մի խումբ տարեցների հետ, որոնց Նորին Սրբությունն իր գնահատությունը հայտնեց հայ ժողովրդին մատուցած տարիների իրենց ծառայության համար:

Ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, մայիսի 9-ի երեկոյան Հովվապետական պաշտոնական ճաշկերույթ տրվեց Ֆրեզնոյի «Ռեսփին» պանդոկի մեջ, ուր ներ-

կա էին ազգային բարերարներ. Օրթոդոքս և Ավետարանական Եկեղեցիների հոգևորականներ ու հյուրեր: Ֆրեզնոյի քաղաքապետ Էլըն Օթրին իր գոհունակությունը հայտնեց, որ հանդիպում է Նորին Սրբության հետ, և նրան հանձնեց քաղաքի խորհրդանշական բանալին:

Տիար Սթիվ Սամվելյանը, որ Պետական հարաբերությունների ատենապետն է, պետական զանազան պաշտոնյաների կողմից ուղարկված բանաձևերը հանձնեց Նորին Սրբությանը: Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնից բերված նվերներ հանձնեց քաղաքապետ Օթրիին և Պրն Սամվելյանին:

Նորին սրբությունն իր խոսքի մեջ նշեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարևորությունը ազատ հայրենիքից ներս՝ թե՛ հոգևոր, և թե՛ շինարարական մարզերում: Վեհափառ Հայրապետը նաև շեշտեց նոր հոգևորականների և կրոնի ուսուցիչների պատրաստության անհետաձգելի անհրաժեշտությունը: Նորին Սրբությունն իր գնահատությունը հայտնեց առաջնորդ Սրբազան Հորը և ընդունելության հանձնախմբին՝ ջերմ ընդունելության համար, և խոսքն ավարտեց՝ ասելով. «Ֆրեզնոյից չպետք է բաժանվեմ առանց ձեզանից յուրաքանչյուրին նրավեր ուղղելու, որ այցելեք Հայաստան: Քրիստոնյա այս հին երկիրը պիտի խոսի ձեր սրտերի հետ»: Նորին Սրբության ժպիտն ու Հայրապետական պատգամը անմոռանալի պիտի մնան հավատացյալների սրտերի և մտքերի մեջ:

**Մայիս 10**

Կենտրոնական Կալիֆոռնիա կատարած իր Հովվապետական այցելությունից հետո, Նորին Սրբությունը, ընկերակցությամբ թեմակալ առաջնորդ, Գեր. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի և շքախմբի, հատուկ օդանավով Ֆրեզնոյից Վեն Նայսի օդանավակայան ժամանեց հինգշաբթի, մայիսի 10-ին, առավոտյան ժամը 10.00-ին, և ծափողջույններով դիմավորվեց հոգևորականների, ծրագրիչ հանձնաժողովի և մամլո ներկայացուցիչների կողմից ու առաջնորդվեց դեպի իրեն հատկացված ցահը:

Օդանավակայանի ընդունելության հանձնախմբի ատենապետ, իրավաբան Պերճ Պոյաճյանը բարիգալստյան խոսքով բոլորին ներկայացրեց Վեհափառ Հայրապետին:

Առաջնորդ Սրբազան Հայրն իր ուրախությունը հայտնեց, որ Հյուսիսային և Կենտրոնական Կալիֆոռնիա կատարած իր Հովվապետական շնորհաբեր այցելությունից հետո Նորին Սրբությունը 1700-ամյակի առթիվ Հովվապետական իր այցելությունն է սկսում Հարավային Կալիֆոռնիայի մեջ: Թեմակալ առաջնորդի բարիգալստյան և ողջույնի խոսքից հետո Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց Սրբազան Հորը՝ իր հրավերի և բոլոր ջանքերի համար, և ապա Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, ազատ ու անկախ Հայաստանից և հայրենիքի մեր ժողովրդի կողմից Իր ողջույնները հայտնեց բոլորին: Վեհափառ Հայրապետը Իր

գոհունակություն հայտնեց, որ թեմի հավատացյալները Ամերիկայի ազատ պայմանների մեջ շարունակում են պահպանել իրենց հավատքը և ազգային սովորությունները:

Մամուլի և հեռուստատեսության ներկայացուցիչների տված բոլոր հարցերին, ինչպես Հայաստանի մեջ հոգևոր վերազարթոնքի, նոր հոգևորականների պատրաստության, Հայ Եկեղեցու վարչական ներքին միության, Հայաստանի ներկա դժվարությունների մասին տվեց հակիրճ և գոհացուցիչ պատասխաններ:

Հարցազրույցի վերջում Վեհափառ Հայրապետն առաջնորդ Սրբազան Հոր ընկերակցությամբ և իր շքախմբով, որին միացավ նաև հյուրաբար Արևմտյան թեմ այցելած Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, նույն օդանավով մեկնեց դեպի Սքացդեյլ, Արիզոնա՝ այցելելու համար Արիզոնայի եկեղեցական ծուխ:

Սքացդեյլում Նորին Սրբությանը ջերմորեն դիմավորեցին եկեղեցու ծխական խորհուրդի և հարակից կազմակերպությունների անդամները: Ավանդական աղուհացի ու օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի եկեղեցի, ուր նրան սպասում էին ծխական խորհրդի անդամներ, Եկեղեցու բարերարներ, տարբեր հարանվանություններից հոգևորականներ ու բազում հավատացյալներ:

Նորին Ս. Օծությունը «Հրաշափառ»-ի արարողությամբ մուտք գործեց եկեղեցի: Կանոնական աղոթքից հետո առաջնորդ Սրբազան Հայրը ջերմագին բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը և հայտնեց, որ առաջին անգամն է, որ Ամենայն Հայոց Հայրապետ է այցելում Արիզոնա և իրենց ծուխ: Եկեղեցին լի էր ավելի քան 300 հավատացյալներով:

Վեհափառ Հայրն իր գոհունակությունը հայտնեց, որ մեծ թվով հավատացյալներ եկել էին հանդիպելու իրենց Հայրապետի հետ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և հայրենաբնակ իրենց քույրերի և եղբայրների ողջույնները ստանալու: Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց, որ Արևմտյան թեմն իր առաքելությունը ծավալում է նաև Կալիֆոռնիայից դուրս՝ Արիզոնայի և շրջակա այլ նահանգների մեջ: Նորին Սրբությունը բոլորին հորդորեց պահպանելու հայկական ու ազգային սովորությունները ամերիկյան հողի վրա:

Մեկնելուց առաջ Վեհափառ Հայրապետն Արիզոնայի ծխին 1700-ամյակի առիթով պատրաստված մի հատուկ հուշանվեր նվիրեց:

Նորին Սրբությունը նույն հատուկ օդանավով, Սրբազան Հոր ընկերակցությամբ և շքախմբով, երեկոյան վերադարձավ Վեն Նայս:

Երեկոյան Նորին Սրբությունը թեմի հոգևորականների և հյուր եկեղեցականների հետ՝ Գերշ. Տ. Մուշեղ եպս. Մարտիրոսյան, Հայր Տաճատ վրդ. Յարտըմյան, Վեր. Պերճ Ճամպազեան, թափորով և «Հրաշափառ»-ի արարողությամբ մուտք գործեց Վեն Նայսի Սուրբ Պետրոս հայկական եկեղեցի: Հավատացյալների հոծ բազմու-

թյան էր հավաքվել՝ ընդունելու իրենց ազգընտիր Հայրապետին և լսելու այստեղ փրվող անդրանիկ պատգամը: Կանոնական աղոթքից հետո, Սրբազան Հայրը ջերմագին և հոգեկան անհուն բերկրանքով բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին՝ նշելով, որ Հյուսիսային և Կենտրոնական Կալիֆոռնիա կատարած օրհնաբեր հովվապետական այցելությունից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնաբեր այցելությունն սկսում է Ս. Վարդան եկեղեցուց: Սրբազան Հայրն իր խոսքի մեջ շեշտեց, որ Քրիստոսի Լույսը Երուսաղեմից Հայաստան հասավ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս Առաքյալների կողմից, և ապա Ս. Գրիգոր Լուսավորչի շնորհիվ նույն լույսով լուսավորվեցին հայ ժողովրդի միտքն ու հոգին, և որ իրենց սերը Մայր Աթոռի և Մայր Հայրենիքի նկատմամբ անխախտ է, և ուրախ են, որ առաքելաշավիղ իրենց Հայրապետն այցելության է եկել իր բանավոր հոտին: Սրբազան Հայրը խնդրեց, որ Նորին Սրբությունն իր հայրապետական պատգամը տա հավատացյալներին և նրանց բաշխի իր օրհնությունները:

Վեհափառ Հայրապետը փառք տվեց Աստծուն, որ Մայր Հայրենիքն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ձերբազատված են համայնավարական լծից և ազատ են իրենց հոգևոր ու ազգային առաքելությունը ծավալելու և մեր նախահայրերի կրոնական ու ազգային ոգով դաստիարակելու մեր ժողովրդի զավակներին: Նորին Սրբությունը շեշտեց, որ 2001 թվականը հոբելյանական փարի է, որի ընթացքում միշտ պետք է աղոթենք: Ապա հայտնեց, որ 1700-ամյակի առթիվ Մայր Աթոռը մի շարք հոգևոր հանդիսություններ և այլ ձեռնարկներ է ծրագրել, որոնք զնդեցիկ առիթներ պիտի ստեղծեն՝ վերանորոգելու մեր հավատքն ու ուխտը, առավել նվիրումով ծառայելու Հայաստանյայց Եկեղեցուն և մեր սիրեցյալ հայ ժողովրդին: Վեհափառ Հայրապետը կոչ ուղղեց բոլոր հավատացյալներին՝ այցելել Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

**Մայիսի 11**

Առավոտյան ժամը 10.00-ին Փասադենայի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայոց եկեղեցու Աղաջանյան սրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի՝ Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ, Գերշ. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի, կանադահայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Հովնան արք. Տերտերյանի և Արևմտյան թեմի հոգևորականության, տեղի ունեցավ Հարավային Կալիֆոռնիայի 12 ամենօրյա հայ վարժարանների աշակերտության կազմակերպած միացյալ գեղարվեստական հանդիսությունը:

Բեմի վրա Հովսեփյան վարժարանից երկու աշակերտներ հայկական տարազներով և ավանդական աղուհացով դիմավորեցին Նորին Սրբությանը: Վեհը օրհնեց և ապա ասաց բացման աղոթքը: Շուրջ 900 հոգի հոտնկայս ունկնդրեց ԱՄՆ-ի և Հայաստանի Հանրապետության հիմները: Այս հայտագրին ներկա էր նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս, փիար Վալերի Մկրտումյանը:

Թեմակալ առաջնորդ, Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը հրավիրվեց, որպեսզի ներկայացնի և հրավիրի Նորին Սրբությանը: Ապա աշակերտությունը հոգևկայս և որոտընդոստ ծափերով ողջունեց Վեհափառին բեմ բարձրանալիս: Հայրապետն իր խոսքում հիմնականում ասաց. «Հոգևոր հայրեր, տնօրեններ և պատասխանատուներ, սիրելի աշակերտներ, շատ հուզված և ուրախ եմ ի տես այս հավաքի, սիրո և հարգանքի հանդիպումի: Եկել եմ միության և սիրո պատգամը բերելու ձեզ: Դուք ձեր ներկայությամբ փաստում ենք միության քաղցր պատկերը: Ինչպես ասվեց, Էջմիածնից քրիստոնեության Լույսն է, որ տարածված է Հայոց մեր աշխարհի մեջ... Սիրելի աշակերտներ, ջանացեք լինել միշտ ճշմարիտ հայ քրիստոնյաներ»:

«Հայր մեր»-ի երգեցողությամբ իր ավարտին հասավ այս անմոռանալի և գեղեցիկ միջոցառումը:

Ապա Վեհափառ Հայրապետը փոքրիկ խաչեր նվիրեց և անձամբ խոսեց հայ վարժարաններից եկած տարբեր աշակերտների հետ: Հայրական այս մտերմիկ շփումը մեծ խանդավառությամբ ընդունեց աշակերտությունը:

Երեկոյան Clendale Civic Auditorium-ում 1700-ամյակի առթիվ տեղի ունեցավ երաժշտական ճոխ համերգ:

Վեհափառ Հայրապետն իր շքախմբի ընկերակցությամբ առաջնորդվեց համերգասրահ և կատարեց համերգի բացումը, որն սկսվեց Տերունական աղոթքով: Համերգին ներկա էին նաև այլ հարանվանությունների և եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես նաև Լոս Անջելեսում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս, տիար Վալերի Մկրտումյանը:

Առաջնորդ Սրբազան Հայրն իր գոհունակությունը հայտնեց այս եհանալի համերգի հաջողության համար և ասաց. «Մենք այսօր Զատկի ուրախությամբ ենք ապրում, երբ մեր մեջ ունենք Ամենայն Հայոց Հայրապետին»:

Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց 1700-ամյակի առթիվ ներկայացված այս կենսունակ հայտագրի համար՝ շնորհավորելով բոլոր մասնակիցներին և պատասխանատուներին: Ապա Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բաշխեց բոլորին՝ կոչ ուղղելով, որ Ս. Լուսավորչի Կաթեղի լույսը և Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունները միշտ առաջնորդեն մեզ դեպի հոգևոր ու ազգային կյանք:

**Մայիս 12**

Շաբաթ օրը, մայիս 12-ի առավոտյան, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Արարատ Հայ Տարեցների Տունը, որ գտնվում է Միշն Հիլզի մեջ (Կալիֆոռնիա): Նորին Սրբությունն իր Հայրապետական խոսքն ուղղեց տարեցներին՝ առողջություն և արևշատություն մաղթելով նրանց:

ԳՐԱԴԱՐԱՆ ... ԳՈՐԾԱՐԱՆ

Ապա Վեհափառ Հայրապետն այցելեց հիվանդանոցային բաժին և աղոթեց նրանց առողջության համար: Նորին Սրբության թե՛ խոսքը, և թե՛ անմիջական շփումը բացառիկ ջերմություն հաղորդեցին մեր փարեցներին:

Այնուհետև Վեհափառի առաջնորդարանի մեջ հանդիպում ունեցավ Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպության կենտրոնական վարչության անդամների հետ: Վեհափառ Հայրապետը գնահատելով Արևմտյան թեմի երիտասարդների եկեղեցասեր ծառայությունները՝ կոչ արեց էլ ավելի շատ երիտասարդներ համախմբել եկեղեցու շուրջ և ընդարձակել իրենց ծառայության հորիզոնը: Երիտասարդաց Միության անդամներն իրենց մտահոգող զանազան հարցերն ուղղեցին Նորին Սրբությանը և ստացան լուսաբանություններ ու խորհուրդներ իրենց ապագա գործունեության համար:

Կեսօրին թեմի հոգևորականներն առիթն ունեցան ժողով գումարելու Վեհափառի նախագահությամբ, ուր քննարկվեցին Հայրապետի նախաձեռնած մի շարք ծրագրերին, հոգևոր ջերմ մթնոլորտում փոխանակվեցին գաղափարներ: Վեհափառ Հայրապետը շեշտեց ժողովուրդը Եկեղեցի առաջնորդելու կարևորությունը բազմամշակույթ այդ երկրի մեջ:

Ժողովից հետո Նորին Սուրբ Օծությունը, իր շքախումբը և բոլոր հոգևորականները շարժվեցին Մոնթեբելլոյի Հայ Նահատակաց հուշարձան, ուր Երիտասարդաց Միության անդամները, Հ. Բ. Ը. Մ. սկաուտները և վարժարանի աշակերտները սպասում էին Վեհափառի ժամանմանը: Նորին Սրբությունը թեմակալ առաջնորդի Դեր Զորից բերած ավազն ու նահատակաց մասունքները զետեղեց հատուկ մի տեղ, ապա հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն կատարվեց ցեղասպանությանը զոհ գնացած բյուրավոր նահատակների հոգիների համար: Մոնթեբելլոյի քաղաքապետ Մերի Էն Սուսեսիոն հանուն քաղաքի իր բարի գալստյան խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետին, որից հետո ՀՀ գլխավոր հյուպատոս, տիար Վալերի Մկրտումյանը սրտագին բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին՝ ներկայացրեց Մայր Աթոռի և Նորին Սրբության ազգանվեր ծառայությունները: Վեհափառն իր խոսքում հիշեց նահատակների քրիստոնեական անընկճելի ոգին և հայրենասիրությունը՝ հույս հայտնելով, որ համաքական ջանքերով մի օր ցեղասպանությունը պիտի ճանաչվի համայն աշխարհում:

Վերջում տեղի ունեցավ աջահամբույր:

Նույն օրը Նորին Սրբությունն իր շքախմբով թեմակալ առաջնորդի և թեմի հոգևորականների ուղեկցությամբ այցելեց Սուրբ Խաչ եկեղեցի և «Ուրախ լեր»-ի և «Հրաշափառ»-ի շարականներիհնչյունների տակ մտավ եկեղեցի: Կանոնական աղոթքից և բարիգալստյան խոսքից հետո Նորին Սրբությունը Հայրապետական իր օրհնությունները բաշխեց հավատացյալներին՝ ասելով. «Մենք եկել ենք մեր ժողովրդին խորհուրդ և պատգամ բերելու, որպեսզի հեռավոր այս ափերում շարունակեն իրենց՝ մեր հայրերի սրբազան հավատքին հավատարիմ ընթացքը, շարունակեն անդուլ, անհողդողդ աշխատանքով կյանքի կոչել այն բոլոր երազներն ու տեսիլները,

որոնք պիտի առաջնորդեն մեզ մեր դարավոր երազների իրականացման՝ գորեղ հայրենիք ունենալու և օրինյալ հայրենիքի ներքո համախմբված տեսնելու մեր ժողովրդի զավակներին»:

Աքահամբույրից հետո տաճարի սրահում տեղի ունեցավ հյուրասիրություն՝ հոգևորականների և պաշտոնյաների համար, որի ժամանակ բոլորն առիթն ունեցան ավելի մոտիկից շփվելու և ճանաչելու Հայոց Հայրապետին:

**Մայիս 13**

Արևմտյան թեմի փարեզրության մեջ երկրորդ անգամը լինելով, Հայրապետական Սուրբ Պատարագ մատուցվեց Հանրահռչակ Հոլիվուդ Պոլում:

Բեմը մասնավոր կերպով պատրաստվել էր սքանչելի խորանով և բարձրադիր խաչով:

«Հայր մեր»-ից առաջ Հայրապետը քարոզեց «Սէր ոչ անկանի» բնաբանով: Նորին Սրբությունն իր քարոզում ասաց. «Հայ Եկեղեցին անխորտակելի բերդն է մեր հավատքի: Դուք անբաժան մասնիկն եք հայ կյանքի, ձեր գործնական մասնակցությամբ ու նվիրվածությամբ Ամերիկայի տարածքի հայկական համայնքների կյանքը բարգավաճում է: Դուք ներկա եք Հայաստանի մեջ՝ ձեր բազմապիսի քաջարի գործերով, որոնք արժանի են գրքերում արձանագրվելու. ուստի վճռականությամբ ու սիրով նվիրվենք մեր տունը վերակառուցելու գործին, քանի որ մեր հայրենիքը ամեն բանից վեր է»:

Քարոզի վերջում Նորին Սրբությունը, բարձրորեն գնահատելով թեմակալ առաջնորդի եկեղեցանվեր բազմամյա ծառայությունը՝ եպիսկոպոսական պանակե նվիրեց նրան:

Վեհափառի գլխավորությամբ հոգևորականների դասը և երգչախումբը խմբանկարվեցին:

Երեկոյան Բևեռլի Հիլ հյուրանոցում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, և պատշաճ հայտագիր գործադրվեց: Ներկաները գոհունակությամբ դիտեցին «Էջմիածնի առաքելությունը 21-րդ դարում» տեսաժապավենը, ուր ներկայացված էին Վեհափառի զանազան այցելությունները, պատգամներն ու շինարարական ծրագիրները:

**Մայիս 14**

Նորին Սրբությունն առաջնորդարանում հատուկ ընդունելություն շնորհեց քաղաքում գործող հայ ավանդական կուսակցությունների, ինչպես և կրթական ու բարե-

գործական զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներին և անհատներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր շքախմբով և թեմակալ առաջնորդի ընկերակցությամբ, այցելեց ՀՀ հյուպատոսարան, որտեղ նրան սիրով դիմավորեցին գլխավոր հյուպատոս, փիար Վալերի Մկրտումյանը, հյուպատոսները և անձնակազմը: Պարոն հյուպատոսն իր ուրախությունը հայտնեց Վեհափառի Հովվապետական այցելությունների համար և հաջողություն մաղթեց Կանադա և ԱՄՆ արևելյան թեմ կատարելիք այցելություններին: Նորին Սրբությունը բարձր գնահատեց փիար Մկրտումյանի գործոն մասնակցությունը հայկական կազմակերպությունների և համայնքային ծրագիրներին:

Երեկոյան ՀԲԸՄ Փասադենայի կենտրոնի մեջ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և ՀԲԸՄ նախագահ փիկին Լուիզ Սիմոն Մանուկյանի ներկայությամբ հանդիսավոր կերպով նշվեց Միության 95-ամյակը: Տոնակատարության ավարտին Նորին Սրբությունն անձնական կարճ հանդիպում ունեցավ ներկաների հետ:

**Մայիս 15**

Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ն Ամերիկայի Արևմտյան թեմ կատարած իր օրհնաբեր անդրանիկ այցելությունը փայլուն հաջողությամբ պսակելով՝ Լոս Անջելեսից իր շքախմբով, ուղեկցությամբ Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի և Գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ուղևորվեց Կանադա:

Նորին Սրբության առաջին հանգրվանը Վանկուվեր քաղաքն էր, ուր բնակվում են շուրջ երկու հազար հայեր: Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և իր շքախմբին դիմավորելու էին եկել տեղի Սուրբ Վարդան եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գեղարդ քահանա Կարապետյանը և եկեղեցական վարչության անդամները:

Այնուհետև Հայոց Հայրապետը այցելեց Ս. Վարդան եկեղեցի, որտեղ տեղի ունեցան հրաշափառի հանդիսավոր արարողություն և աջահամբույր:

**Մայիս 16**

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, Նորին Սրբությունը Վանկուվերից մեկնեց Մոնրեալ: Դիմավորման համար օդանավակայան էին եկել թեմի եկեղեցականները, Կանադայում ՀՀ դեսպան Արա Պապյանը, եկեղեցական վարչության անդամներն ու հավաքացյալ հայորդիք: Երեկոյան Նորին Սրբությունն արդեն Մոնրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում էր, որտեղ տեղի ունեցավ «Հրաշափառ»-ի հանդիսավոր արարողություն: Թեմակալ առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի ուղեկցությամբ Հայրապետական թափոր կազմվեց եկեղեցու

առջև, պարզվեց հայրապետական ամպհովանին, և հավատացյալները խմբերում բազմությամբ հավաքվեցին թափորի շուրջ՝ ստանալու Հայրապետի օրհնությունը:

Թափորը շարժվեց եկեղեցի, որտեղ հավաքվել էր շուրջ հազար հոգիանոց բազմություն: Նորին Սրբության գլխավորությամբ բարձրաստիճան եկեղեցականները բարձրացան Ս. Խորան, և Հովնան արքեպս. Տերտերյանը ողջույնի ու բարիգալստյան իր խոսքն ուղղեց Հայոց Հայրապետին ու իր շքախմբին՝ հանուն Կանադայի հայոց թեմի հոգևորականաց ու թեմական - համայնքային մարմինների ու հավատացյալների սրտաբուխ իր մաղթանքները բերելով Հայրապետին: Այնուհետև Սրբազան Հայրը հրավիրեց Վեհափառ Հորը, որը հայրական իր պատգամն ու օրհնությունը տվեց կանադահայությանը:

**Մայիս 17**

Վեհափառ Հայրապետը մեկնեց Կանադայի մայրաքաղաք Օտտավա, որտեղ հանդիպում ունեցավ Կանադայի վարչապետ Ժան Քրեթյենի հետ: Նորին Սրբության հետ հանդիպմանը մասնակցում էին Գերաշնորհ Տ. Հովնան, Տ.Վաչե, Տ. Նավասարդ Սրբազանները: Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց վարչապետին՝ Կանադայի հայության նկատմամբ դրսևորած իր հոգածու և ուշադիր վերաբերմունքի համար՝ նրան նվիրելով քանդակազարդ ծաղկաման: Վարչապետը ևս իր ուրախությունը հայտնեց հանդիպման համար՝ ողջունելով Վեհափառ Հոր ներկայությունը Կանադայում և հայտնելով իր շնորհակալությունը, որ հայությունը գործուն մասնակցություն է բերում երկրի բարգավաճման գործում:

Վարչապետի հետ հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Կանադայում ՀՀ դեսպանատուն՝ իր բարեմաղթանքներն ու օրհնությունը բերելով դեսպանության ողջ աշխատակազմին՝ դեսպան Արա Պապյանի գլխավորությամբ:

Այնուհետև Նորին Սրբությունը վերադարձավ Մոնրեալ: Երեկոյան Նորին Սրբությունն իր շքախմբով հրավիրված էր մեր Եկեղեցու կանադահայ նվիրյալ զավակ Պերճ Աքըլյանի կազմակերպած ընթրիքին:

**Մայիս 18**

Մայիս 18-ի առավոտյան Վեհափառ Հայրապետի ժամանակացույցում նախատեսված էր այցելություն Մոնրեալի երիտասարդ հայորդիներին, ովքեր ուսանում են քաղաքի հայկական Արմեն Քեբեկ - Ալեք Մանուկյան, Նարեկ և Սուրբ Հակոբ վարժարաններում: Վեհափառ Հայրապետի առաջին շնորհաբեր այցելությանն արժա-

նացան Ալեք Մանուկյան վարժարանի փեսչական-ուսուցչական կազմն ու սաները: Վարժարանում ուսանում են հինգ հարյուր աշակերտներ: Ազգային մեծանուն բարերարի անունը կրող վարժարանի շենքի սեմին Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել վարժարանի պատվարժան հիմնադիր նախագահ փիար Արշավիր Գյոնջյանը, փնօրենուհի Վարդուհի Պալյանը, վարժարանի սաներն ու ծնողները: Հայոց Հայրապետը, մատուցված ավանդական աղուհացի օրհնությունը կատարելուց հետո, Կանադահայոց առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի ուղեկցությամբ իր շքախմբով մուտք գործեց վարժարան, որտեղ Նորին Սրբությանը ողջույնի խոսք ուղղեցին վարժարանի հիմնադիր նախագահն ու փնօրենուհին՝ արտահայտելով իրենց անկեղծ ուրախությունն ու բերկրանքը Վեհափառ Հոր պատմական այցի առիթով:

Այնուհետև հանդիսասրահը փոխադրվեց վարժարանի սաներին, որոնք իրենց խումբ մանկավարժների ղեկավարությամբ ներկայացրին գեղարվեստական իրենց ծրագիրը:

Հանդիսության ավարտին բոլոր ներկաներին օրհնության իր խոսքն ուղղեց ազգիս Հայրապետը՝ ի մասնավորի հորդորելով վարժարանի սաներին արժանի ժառանգորդները լինել վարժարանի հիմնման համար զոհողություն սպանձնած պատվարժան բարերար Ալեք Մանուկյանի՝ այս կերպ արժեքների նկատմամբ դրսևորած նախանձախնդրությամբ երախտահատույց լինելով վախճանյալ բարերարին :

Հաջորդ վարժարանը, ուր այցելեց Նորին Սրբությունը, «Մատյան ողբերգության» անմահանուն գործի հեղինակի անունը կրող «Նարեկ» վարժարանն էր, որ ուսանում են շուրջ չորս հարյուր սաներ: Ընդարձակ հանդիսասրահում Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասաց վարժարանի փնօրեն Պոլ Գազանճյանը, որին հաջորդեց վարժարանի սաների պատրաստած գեղարվեստական հայտագիրը: Կանադահայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի խոսքից հետո, ով ներկաներին ներկայացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, օրհնության իր պատգամը բերեց Հայոց Հայրապետը՝ վարժարանի սաներին ու ուսուցչական կազմին հորդորելով ամուր մնալ հայրենական ավանդներին, լինելով հավատարիմ քաղաքացիները Կանադայի հյուրընկալ պետության:

Ժամը 12.30-ին Վեհափառ Հայրապետն արդեն Սուրբ Հակոբ վարժարանում էր, որտեղ Նորին Սրբությանը դիմավորեցին Մեծի Տանն Կիլիկիո Բերիո թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Սուրեն արքեպս. Գաթարոյանը, վարժարանի փնօրեն Լևոն Բոլգանյանը, վարժարանի խանդավառ սաներն ու մեծաթիվ հայորդիք: Վարժարանի ընդարձակ սրահում կազմակերպված էր հանդիսություն, և սաները փնօրենի ողջույնի խոսքից հետո գեղարվեստական իրենց հայտագրով այստեղ ևս ուրախություն պարգևեցին Հայոց Հայրապետին:

Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց ամենքին՝ հայտնելով իր ուրախությունը վարժարանում հայեցի դաստիարակության ու կրթական առաքելության մեջ տարվող աշխատանքների համար: Վարժարան այցելելուց հետո Վե-

Նափառ Հայրապետն ուխտի մեկնեց համանուն Ս. Հակոբ եկեղեցի, ուր վերստին աղոթք բարձրացրեց առ Աստված՝ կանադահայոց համայնքի բարգավաճման ու պայծառության համար:

Օրվա ծրագրում Վեհափառ Հայրապետի այցելության հաջորդ հանգրվանը Մոնրեալի Մանուար Քարդիեվիլ անունը կրող ծերերի տունն էր, որտեղ օթևանել էին շուրջ վաթսուն հայ մամիկներ ու պապիկներ: Նորին Սրբությունն այցի ընթացքին մխիթարության իր խոսքերն ուղղեց վաստակյալ հայ ծնողներին՝ գովերգելով նրանց և հաստատելով, որ կանադահայոց ներկա հայաբույր կյանքը կերտել են իրենք իրենց քրտինքով՝ հավատարմություն դրսևորելով ազգային ինքնության պահպանության առաքելությանը:

Ժամը 14.30-ին Վեհափառ Հայրապետը վերադարձավ առաջնորդարան, որտեղ հոգևորականաց հետ մասնակցեց իր պատվին կազմակերպված ճաշկերույթին:

Ժամը 15.15-ին Նորին Սրբությունն իր շքախմբով մեկնեց Քվեբեկի վարչապետարան, որտեղ հանդիպում պետք է ունենար Քվեբեկի վարչապետ Բերնար Լանդրիի հետ: Քվեբեկը Կանադայի կարևորագույն շրջաններից է, որտեղի շուրջ յոթ միլիոն բնակիչներից հինգ և կեսը ֆրանսիացիներ են: Վարչապետը Վեհափառ Հայրապետին և իր շքախմբին ընդունեց բացառիկ ջերմությամբ: Հանդիպման ընթացքին Նորին Սրբությունը ծանուցեց վարչապետին, որ Հայ Եկեղեցին նշում է իր պաշտոնականացման 1700 - ամյակը, և հրավիրեց նրան սեպտեմբերյան կարևորագույն հանդիսություններին այցելել Հայաստան:

Վարչապետը, շնորհակալություն հայտնելով հրավերի համար, հայտարարեց, որ հանուն Քվեբեկի իշխանության հանդիսություններին մասնակցելու համար Հայաստան կգործուղի նախարարներից մեկին: Այնուհետև Վեհափառ Հայրապետն անդրադարձավ հայ ժողովրդի դարասկզբյան ողբերգությանը՝ ցեղասպանությանը, և հույս հայտնեց, որ ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացի մեջ մյուս պետություններին կմիանա նաև Կանադան: Վարչապետը ևս իր համոզումը հայտնեց այդ ուղղությամբ՝ արձանագրելով, որ Քվեբեկի շրջանային իշխանությանց շրջանակում ցեղասպանությունն արդեն իսկ ճանաչում ստացել է:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունն իր շքախմբով խմբանկարվեց վարչապետի հետ:

Երեկոյան ժամը 6-ին Վեհափառ Հայրապետի ծրագրում նախատեսված էր այցելություն Մոնրեալի քաղաքապետարան: Քաղաքապետը՝ Պիեռ Բուրգը, հրավիրել էր Նորին Սրբությանն ու շքախմբին քաղաքապետարան՝ հանդիսավոր ճաշկերույթ տալու Վեհափառ Հայրապետի պատվին: Ճաշկերույթին ներկա էին նաև քույր Եկեղեցիների՝ Մոնրեալում գործող ներկայացուցիչներ և մոնրեալահայեր: Ճաշկերույթն անցավ բացառիկ ջերմ ու մտերիմ մթնոլորտում: Քաղաքապետն իր լավագույն զգացումներն արտահայտեց Մոնրեալում բնակություն հաստատած հայերի նկատմամբ, որոնցից երեքն արդեն իսկ իր անմիջական օգնականներն էին: Նորին Սրբությունը

իր գնահատանքն ու օրհնությունը բերեց քաղաքապետին՝ հայության նկատմամբ դրսևորած իր ջերմ ու ազնիվ վերաբերմունքի ու հայասիրության համար:

Քաղաքապետարանից Հայրապետական շքախումբը շարժվեց դեպի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի, որտեղ արդեն հավաքվել էին բազմաթիվ հայ երիտասարդներ՝ հանդիպում ունենալու Վեհափառ Հայրապետի հետ: Երիտասարդների հետ Վեհափառ Հայրապետի հանդիպումը տևեց շուրջ չորս ժամ, որի ընթացքում Նորին Սրբությունը հատկապես շեշտադրեց մեր Եկեղեցու հոգևոր ու ազգապահպանման դերի կարևորությունը գաղութահայության կյանքում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերակատարությունը հայության պատմական գոյատևման մեջ: Վերջում Վեհափառ Հայրը ջերմ ու անմիջական մթնոլորտում անդրադարձավ ու պատասխանեց Կանադայի երիտասարդ հայորդյաց հարցումներին՝ լուսաբանելով հատկապես ընկերային կյանքից ներս նրանց հուզող մի շարք հարցեր:

**Մայիս 19**

Վեհափառ Հայրապետը առավոտյան ժամը 11.00-ին Մոնրեալի «Wyndham» հյուրանոցից իր շքախմբով շարժվեց դեպի առաջնորդարան՝ նախագահելու կանադահայոց թեմական պատգամավորական ժողովը՝ իր օրհնության խոսքը բերելու ժողովի անդամներին: Իր պատգամում Նորին Սրբությունը հատուկ կերպով գնահատանքի արժանացրեց կանադահայոց առաջնորդ, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանին՝ իր աշխույժ ու ժրաջան գործունեության համար: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց նաև պատգամավորական ժողովի անդամներին՝ ներհամայնքային ազգային եկեղեցական կյանքից բացի ազնվորեն ու գործուն կերպով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի զորացմանը նպաստելու համար:

Ժողովի ավարտից հետո Նորին Սրբությունն առաջնորդարանի ընդունարանում հանդիպեց Կանադայի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նորին Սրբությանը աջահամբույրի ու հանդիպման եկան կանադահայոց թեմի թեմական ու համայնքային խորհուրդների ու հարակից մարմինների, մշակութային ու հայրենակցական միությունների անդամները:

Երեկոյան «Wyndham» հյուրանոցի ընդունելությանց ընդարձակ սրահում տեղի ունեցավ հանդիսավոր ճաշկերույթ, որին մասնակցելու էին եկել շուրջ յոթ հարյուր հայորդիներ: Ջերմ ու անմիջական մթնոլորտում ներկաներին բացման խոսքով դիմեց կանադահայոց թեմական խորհրդի ատենապետ Արտո Բասմաջյանը: Սրտի խոսք ասացին Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և Կանադայում ՀՀ դեսպան, տիար Արա Պապյանը: Ճաշկերույթի ընթացքում ցուցադրվեց «Շողակաթ» հեռուստաընկերության կողմից պատրաստված ֆիլմը՝ Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին օրերից սկսյալ Մայր Աթոռում իրականացված գործունեության մասին:

ճաշկերույթի ընթացքին Նորին Սրբությանը մատուցվեցին նվերներ. Միջազգային Տեղեկատվական Ակադեմիայի փնօրինությունը Նորին Սրբությանը փվեց այդ հաստատության փիլիսոփայության դոկտորի կոչում, իսկ Արթուր Կեփիկյանը Վեհափառ Հայրապետին նվիրեց Եղիազար Այնթափցուն պատկանած ձեռագիր Ավետարանի նմանահանյալ հրատարակության մեկ օրինակ: Վերջում, Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի խոսքից հետո, ներկաներին իր օրհնությունը բաշխեց Վեհափառ Հայրապետը՝ իր գնահատանքը բերելով իր այցի կազմակերպական աշխատանքներում մասնակցություն բերած բոլոր կանադահայերին՝ թեմակալ առաջնորդի գլխավորությամբ:

Ապա Նորին Սրբությունը կանադահայերին ներկայացրեց վերջին մեկ և կես տարում Մայր Աթոռում իրականացված աշխատանքներն ու առաջիկա անելիքները եկեղեցական կյանքի վերակազմակերպման ուղղությամբ: ճաշկերույթը փակվեց «Պահպանիչ» - ով:

**Մայիս 21-22**

Նորին Սրբությունն իր այցը Կանադա եզրափակեց այցելելով Տորոնտո և Սենտ Քեթրինզ քաղաքներ:

Տորոնտոյում ներկայումս բնակվում է հիմնականում Թուրքիայից և Եգիպտոսից արտագաղթած շուրջ 35 հազար հայ: Մայիսի 20-ին քաղաքի Սուրբ Երրորդություն հայկական եկեղեցում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին «Հրաշափառ» երգեցողությամբ:

«Մեծապես ուրախ եմ, որ գտնվում եմ ձեր մեջ, վայելում ձեր այսօրվա պայծառակերպությունը, որ պայման ու հիմք է հոգևոր ու ազգային մեր ինքնության պահպանման ու զորացման»,- իր պատգամն ու բարձր գնահատանքը տալով Տորոնտոյի հայությանը՝ նշեց Վեհափառ Հայրապետը:

Տորոնտոյում Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ հայ երիտասարդության հետ, այցելեց քաղաքում գործող 6 հայկական վարժարաններից երեքը, հանդիպեց Տորոնտոյի քաղաքապետի հետ: Տորոնտոյի Ս. Երրորդություն եկեղեցում մայիսի 22-ին մատուցվեց հայրապետական Պատարագ, որին ներկա էին եղել քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ: Հավարտ Ս. Պատարագի բազմաթիվ հայ հավատացյալներ Հաղորդություն ստացան Հայոց Հայրապետի ձեռքից:

Վեհափառ Հայրապետը մեկնեց Սենտ Քեթրինզ: Այս քաղաքում է ձևավորվել, այսօր արդեն փոքրաթիվ, հնագույն կանադահայ համայնքը: Հոգևոր հովիվն է Արժանապատիվ Տ. Շնորհք քհն. Սունին: Քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բաշխեց հավատացյալներին՝ հորդորելով ծաղկուն ու շեն պահել համայնքը: Ապա եկեղեցու սրահի

հայկական եկեղեցում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բաշխեց հավատացյալներին՝ հորդորելով ծաղկուն ու շեն պահել համայնքը: Ապա եկեղեցու սրահի մեջ տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն, որին ներկա եղան Սենտ Քեթրինզի քաղաքապետը և նահանգային իշխանության ներկայացուցիչներ:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով և քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ տեղի կաթոլիկ եկեղեցում ներկա գտնվեց «Սուրբ Խաչ» օրատորիային՝ կանադացի երգիչ-երգչուհիների կատարմամբ: Հայոց մեծ Դարձի պատեհարժին նվիրված այս ստեղծագործությունը, բաղկացած մի քանի մասերից, անդրադարձ է հայ ժողովրդի պատմության կարևորագույն հանգրվաններին. համազգային մկրտություն, գրերի գյուտ, Վարդանանք և այլն:

Ներկայացման ավարտից հետո Ամենայն Հայոց Հայրապետին ու ներկաներին ողջունեցին Հույն Եկեղեցու միտրոպոլիտն ու Անգլիկան եպիսկոպոսը: Հանդիսությունն ավարտվեց Նորին Սրբության պատգամով, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը Հայ Եկեղեցու բարձր պարգևների արժանացրեց կանադահայ նշանավոր հայորդիների՝ շնորհելով նրանց «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» և «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշաններ:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կանադայի թեմ Հայրապետական այցելության ավարտին երեքշաբթի օրը, մայիս 22-ի գիշերը, մասնավոր ինքնաթիռով ժամանեց Վաշինգտոն: Նորին Սրբությանը ընկերակցում էին թեմակալ առաջնորդ, Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, արևմտյան թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Կանադայի թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Հովնան արք. Տերտերյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Մայր Աթոռի դիվանապետ, Հոգշ. Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը և գավազանակիր, Հոգշ. Տ. Վազգեն աբղ. Նանյանը:

**Մայիս 23**

Հայոց Հայրապետն իր շքախմբով առավոտյան մասնավոր աղոթքով բացումը կատարեց Միացյալ Նահանգների Կոնգրեսի և Ներկայացուցիչների Տան ժողովների: Ապա կեսօրին նրան ճաշի հրավիրեցին ամերիկյան երեսփոխանները կողմից, որից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց Ողջակիզման թանգարան: Դրանից անմիջապես հետո Նորին Սրբությունն իր շքախմբով ժամանեց Սպիտակ Տուն և ավելի քան կես ժամ հանդիպում ունեցավ Միացյալ Նահանգների նորընտիր նախագահ Ջորջ Բուշ Կրտսերի հետ:

Հանդիպումից անմիջապես հետո Հայրապետական շքախումբը Վաշինգտոնից մեկնեց Նյու Յորք: Օդանավակայանում պաշտոնական հյուրերի սրահում Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին ՄԱԿ-ում ՀՀ մնայուն և լիազոր դեսպան դոկտ. Մովսես Աբելյանը, Արևելյան թեմի հոգևորականներն ու թեմական խորհրդի անդամները, եկեղեցական, ազգային, մշակութային և բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Արևելյան թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը բարի գալուստ մաղթեց Վեհափառին: Վեհափառը Տիրոջ զորակցությունն ու սերը հայցեց հավատավոր հայորդիներին՝ անսայթաք քայլելու իրենց առաքելության մեջ, որի պատիվն ու պատասխանատվությունը ծանրացած է ամեն մեկ հայի ուսերին:

Աջահամբույրից հետո Նորին Սրբությունն իր շքախմբի և ներկաների հետ մեկնեց Արևելյան թեմի առաջնորդարան, որտեղ հավատացյալների հոծ բազմության հետ Հայոց Հայրապետի ժամանմանն էին սպասում Հայ և քույր Եկեղեցիների հոգևորականներ, ինչպես նաև ՄԱԿ-ում Վատիկանի մնայուն ներկայացուցիչը, Նյու Յորքի Եկեղեցիների Խորհրդի տնօրենը և այլք:

Մեծ էր ներկաների խանդավառությունը, երբ Հայոց Հայրապետը մուտք գործեց Ս. Վարդան առաջնորդանիստ եկեղեցի: Թեմակալ առաջնորդի բարիգալստյան խոսքից հետո Նորին Սրբությունը Հայրապետական իր պատգամը հղեց ներկաներին՝ փոխանցելով Միածնաէջ Սուրբ Աթոռից հայորդիների սերն ու գնահատանքը: Ապա իր մասնավոր գնահատանքը հայտնեց Ամերիկայի հայությանը, որ, հակառակ դժվարությունների, կարողացել է պահպանել Հայաստանյայց Եկեղեցին և մեր նախնյաց ոգին՝ փառք ու պատիվ բերելով մեր ժողովրդին: Խոսքի ավարտին Վեհափառն իր գնահատանքը հայտնեց թեմակալ առաջնորդին, թեմական խորհրդի անդամներին և Հայրապետական այցելությանը նպաստող բոլոր կազմակերպություններին:

Ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, առաջնորդարանի Հայկ և Ալիս Գավուքճյան հանդիսասրահի մեջ պաշտոնական ճաշկերույթ տրվեց:

**Մայիս 24**

Առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի և իր շքախմբի մասնակցությամբ տեղի ունեցավ Արևագալի արարողություն՝ Չիլինկիրյան և Էջմիածնական եղանակներով: Այնտեղ Cardinal Spellmans Retreat House կենտրոնի մեջ Արևելյան թեմի հոգևորականների հետ հանդիպում կազմակերպվեց, որն սկսվեց Վեհափառի աղոթքով. Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը կարդաց Ավետարանը, իսկ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը և իր շքախմբին: Ցուցադրվեց Նորին Սրբության մեկ տարվա գործունեությունը նկարագրող մի տեսաժապավեն: Ժողովի ընթացքում քննարկվեցին Եկեղեցու կառուցվածքը վերակազմակերպելու, Եկեղեցի-պետություն հարաբերության, ճեմարաններ բացելու և այլ զանազան խնդիրներ: Ներկայացվեց Հայաստանի հոգևոր կյանքը, խորհրդակցության նյութ դարձավ եկեղեցական կանոնադրությունը վերանորոգելու հարցը: Միօրյա այդ հանդիպումն ավարտվեց Նորին Սրբության փակման աղոթքով:

**Մայիս 25**

Ամեն տարի ամերիկյան «Մեռելոց հիշատակի» ընթացքում Հայ Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպությունն իր տարեկան համագումարն է կազմակերպում, որն այս տարի համընկավ Նորին Սրբության Հովվապետական այցելությանը:

Մայիս 25-ին Երիտասարդաց Կազմակերպության կենտրոնական խորհրդի անդամներն ու ծխերի պատգամավորները հավաքվել էին Ս. Վարդան եկեղեցում վայելելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայությունը: «Հրաշափառ»-ից և թեմակալ առաջնորդի բարիգալստյան խոսքից հետո Վեհափառն իր Հայրապետական պատգամն ուղղեց երիտասարդ հայորդիներին՝ ասելով. «Հայ ինքնությունը պայմանավորող միակ ճանապարհը, միակ ելքը , միակ արժեքը հավատարմությունն է մեր սրբազան հավատքին, հավատարմությունը Լուսավորչի հավատքին: Ուրեմն պատգամս ու աղոթքս է, որ միշտ Լուսավորչի հավատքով քայլեք, Ս. Էջմիածինը ձեր հոգու մեջ լինի և Ս. Էջմիածինը դառնա ձեզ օրհնություն»:

Տերունական աղոթքով և Վեհափառի «Պահպանիչ»-ով արարողությունն ավարտվեց:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն այցելեց Եպիսկոպոսական Եկեղեցու նախագահ, Գերշ. Տ. Ֆրանք եպիսկոպոս Կրիզուոլդ Գ-ին:

Ժամը 11.30-ին ՄԱԿ-ի կենտրոնի մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի, ՄԱԿ-ի ընդհանուր ենթաքարտուղար, հայազգի Բենոն Սևանի և ՄԱԿ-ի մոտ ՀՀ մնայուն և լիազոր դեսպան, դոկտ. Մովսես Աբելյանի հետ: Վեհափառ Հայրապետը իր երախ-

փագիտությունը հայտնեց Քոֆի Անանին՝ Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման հարցում ցուցաբերած հետաքրքրության, ինչպես նաև աջակցության համար, որ ցուցաբերում է ՄԱԿ-ը Հայաստանին ժողովրդավարության հաստատման գործում: Հանդիպման ավարտին, ստանալով Նորին Սրբության օրհնությունը, Քոֆի Անանն ասաց. «Մենք կարիքն ունենք Ձեր աղոթքների»:

Երեկոյան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ազգային բարերար և Հայ Օգնության Ֆոնդի հոգաբարձության, ատենապետ փիար Գևորգ Հովնանյանը ճաշկերույթ տվեց:

**Մայիս 26**

Առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով Նյու Յորքի քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանիի նախաճաշի հյուրը եղավ:

Նույն օրը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ ավելի քան 1500 հոգի մասնակցեց քայլարշավի՝ հակառակ փեղացող անձրևի և աննպաստ եղանակի: Քայլարշավի ավարտին տեղի ունեցավ «Վերընծայման» արարողություն, որի համար հատուկ բեմ էր կառուցվել և հեռուստափեսության երկու պաստառներ էին դրված՝ հետևելու հայտագրին: Հայոց Հայրապետի նախագահությամբ և աղոթքով սկսվեց արարողությունը, որի ընթացքում Նորին Սրբությունն իր պատգամում նշեց, որ հավատքի նվիրական կենտրոն Ս. Էջմիածնից Աստվածային օրհնությունն ու հայրենաբնակ մեր ժողովրդից սերն է փոխանցում թեմի հավատավոր հայորդիներին: Վեհափառի օրհնությունից հետո տեղի ունեցավ գեղարվեստական հայտագիր:

Երեկոյան Նորին Սրբությունն իր շքախմբով մեկնեց Նյու Ջերսիի Սրբոց Ղևոնդյաց եկեղեցի, ուր Վեհափառը ներկա գտնվեց Հայ Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպության Կրտսերների համագումարին:

**Մայիս 27**

Առավոտյան Նյու Յորքի կենտրոնական «Սենթրլ Փարկ» զբոսայգում բացօթյա Հայրապետական Սուրբ Պատարագ մատուցվեց, որին ներկա էին շուրջ 4000 հավատացյալներ: Հընթացս Պատարագի Նորին Սրբությունը դիմեց ներկաներին՝ ասելով.

*Սիրելի ժողովուրդ հայոց.*

*Օրհնում ենք մեր հանդիպման բարի այս առավոտը և գոհություն առ Աստված բարձրացնում Ոսկեբերան Հայրապետի խոսքով. «Փառք Քեզ. Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի փառք Քեզ»:*

*Փառք Քեզ Տեր, որ շնորհեցիր առիթը հայոց համազգային մկրտության 1700-ամյակի հոբելյանական տարում Հայրապետական Մեր անդրանիկ այցելությունը կատարելու Ամերիկայի հայոց թեմեր և Նյու Յորքում հանդիպելու հարազատ զավակներին մեր Եկեղեցու:*

*Փառք Քեզ Տեր, որ Եղեռն վերապրած աշխարհացրիվ մեր ժողովուրդը մայրցամաքից մայրցամաք քրիստոնեաբույր ու հայաշունչ իր կյանքն է շարունակում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքո՝ 1700-ամյա Սուրբ Էջմիածնի սերը իր հոգում և նրա պանծալի հոբելյանով հուսատուր:*

*Փառք Քեզ, որ նոր հազարամյակ ենք մուտք գործում Հայաստանի անկախ պետականության վերահաստատմամբ և Արցախի ազատագրությամբ հպարտ ու լավատես:*

*Սիրելիներ.*

*Հայրենիքի սիրով, Մասյաց կարոտով ենք եկել դեպի ձեզ, բերելով օրհնություններ ամենայն հայոց Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Եկել ենք առ Աստված հայրենյաց մեր ուխտը վերանորոգելու կոչով, քրիստոնեական հավատի մեր ջահը միշտավառ պահող Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ համախումբ ու միասնական մնալու հորդորով ու պատգամով:*

*Աշխարհում առաջիններից մեկը մեր նախնիք արժանացան Ավետարանի խոսքը լսելու շնորհին: Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ ու նահատակությամբ հիմնադրվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, և Սբ. Լուսավորչի հավատի զորությամբ 301 թ. առաջինը աշխարհում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն: Քրիստոսի Սուրբ Ավետարանի լույսով նոր իմաստ առավ հայոց ազգային կյանքը, լցվեց հույսով, սիրով, արարումով և Հարության հավատով դարձավ առաքելություն՝ մահվանից դեպի կյանք, կորստից դեպի փրկություն: Քրիստոնեական հավատով ենք ծնունդ տվել այն արժեքներին, ինչով այսօր հպարտանում ենք և ինչով հաղորդակից ենք համամարդկային քաղաքակրթությանը: Այսօր քրիստոնեական նույն հավատով եղբայր ենք բազմաթիվ ժողովուրդների, մեկ տան՝ երկրի նույն հարկի ներքո, նույն իղձերով ու տեսլականով, Աստծո և մարդկության առջև ունեցած նույն պարտականություններով ու պատասխանատվությամբ: «Արդ, ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի...» (Հռոմ. 8: 35):*

*Այս զգացումներով և լավագույն բարեմաղթանքներով ջերմորեն ողջունում ենք Մեզ բարի գալուստ մաղթելու եկած քույր Եկեղեցիների և Նյու*

*Յորքի նահանգային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներին:*

*Սիրելի հայորդիներ.*

*Մայիսյան այս օրերին մեր հոգիներում առավել ուժգնությամբ են հնչում արձագանքները հայոց Առաջին Հանրապետության փոթորկահույզ ու հերոսական ժամանակների, Ավարայրի և Սարդարապատի հերոսամարտերի, որ միմյանց են կապում ոչ միայն 5-րդ և 20-րդ դարերը հայոց պատմության, այլև «վասն հաւատի, վասն հայրենեաց» ոգով ապրված բոլոր օրերը: Ուղիղ 1550 տարիներ առաջ մեր նախնիները չվարանեցին Ավարայրի մարտում պաշտպանելու քրիստոնեական հավատը՝ եկեղեցական ու աշխարհական մեկ հոգի, մեկ կամք դարձած հռչակելով, որ «յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել. ո՛չ հրեշտակք, և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, և ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ ամենայն զինչ և են դառն հարուածք»: Հանուն հավատի, որ նույնն է, թե՝ հանուն հայրենյաց, նրանք նահատակվեցին, աքսորվեցին ու զրկանքներ կրեցին, քանզի քրիստոնեական հավատը կրում էին որպես մաշկի գույն, որպես հայության հատկանիշ: Արդ, Վարդանանց ոգով, աներկյուղ հավատով վերստին հաստատենք մեր ուխտը Աստծո հետ, մեր Հայրենիքի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հետ: Երկու հազարամյակ Հայ Եկեղեցին իր զավակներին փոխանցում է Աստվածգիտության լույս, Բարին ընտրելու, Բարին գործելու ազատություն, արարելու կամք ու հարատևելու զորություն, որպեսզի չզգանք երբեք հոգին կենդանացնող երկնառաք խոսքի կարոտ, չկորցնենք տենչանքն հավերժի, չապրենք ոգու սով. որ լցվենք սիրով հայրենյաց, ուժով արի ու ստեղծագործ, և մեր ընթացքը երրորդ՝ նոր հազարամյակ առաջնորդվի կյանքն իմացյալ անմահություն է գաղափարականով:*

*Սիրելի բարեպաշտ հայորդիներ.*

*Մեր ժողովուրդը հաղթահարել է երկրաշարժի, շրջափակման, Արցախյան ազատամարտի ամենամեծ դժվարությունները: Հաղթահարել է միասնաբար, հայրենաբնակ և սփյուռքի իր զավակների միացյալ ջանքերով: Վերստին ազատ ու անկախ է Հայաստանի Հանրապետությունը, ազատագրված է Արցախը: Մայր Հայրենիքն ու Եկեղեցին վերազարթոնքի օրեր են ապրում: Փառք մեր հայրերի Աստծուն, որ կրկին իջավ և ամեն օր ավելի ու ավելի է մոտենում աթեիզմի հարվածներից վիրավոր մեր ժողովրդի սրտին, մեր մանուկների անմեղ հոգիներին և Սուրբ Հոգու յոթնարփյա շնորհներով լցնում մեր Հայրենիքը: Նոր օր է բացվում հայոց կյանքում, Մայր Հայաստանում: Վճռորոշ այս շրջանում Հայրենիքը կրկին կարոտ է իր զավակների զորակցությանը: Հայրենիքը կանչում է մեզ: Տարակույսների, անվստահության, տրտունջի ու սպասումի ժամանակը չէ*

*զինվենք հայրենյաց սիրով. լցվենք լավատեսությամբ՝ հավատավոր գործերով կառուցելու հայոց կյանքն իմացյալ. որ չկանգնենք երբեք մահն իմացյալն ընտրելու անհրաժեշտության առջև: Արդ, համախմբվենք և համախմբենք մեր ուժերը՝ ամրապնդելու համար թանկ գնով ձեռք բերված նվաճումները և վերակառուցելու հայրական մեր տունն ընդհանուր: Դժվարություններ ապրող մերօրյա Հայրենիքը վաղը՝ բարօր, բարգավաճ ու հզոր, պիտի միավորի իր որդվոց և ոգեշնչի ու փայլ հաղորդի հայ կյանքին աշխարհասփյուռ: Ապավինենք մեր միասնության արարող զորությանը և հավատով նայենք հայոց պայծառ գալիքին:*

*Այսօր Մենք՝ Հայոց Հայրապետս, ուրախ և հպարտ ենք կանգնած այստեղ, մեր ժողովրդի ու Եկեղեցու հարազատ զավակներիդ առջև, որ արժանավոր, ազնիվ ու շինարար քաղաքացիներն եք այս հզոր երկրի: Մենք հպարտ ենք ու քաջալեր, քանզի դուք ևս Հայրենիքին տված նույն սիրով ու նվիրումով, որով ձեր հայրերն ու պապերը Ամերիկայից մինչ Հայաստան գնացին պաշտպանելու Հայոց Առաջին Հանրապետությունը, այսօր սատար եք ազատագրված Արցախին, անկախ պետականությունը կերտող Մայր Հայրենիքին: Հայրապետական Մեր սերն ու գնահատանքն ենք բերում ձեզ բոլորիդ՝ Թեմակալ Առաջնորդին, հոգևորականաց, թեմական և համայնքային խորհուրդների անդամներին, կրթության ու մշակույթի նվիրյալներին, մեծազնիվ բարերարներին, եկեղեցական ու ազգային կյանքում իրենց մասնակցությունն ու ներդրումը բերող մեր բոլոր զավակներին:*

*Սիրելի բարեպաշտ հայորդիք,*

*Աղոթախոս անցնենք կյանքի մեր ուղին, մեր հոգիներում վառ պահենք Լուսավորչի Կանթեղի լույսը, որ նոր ներշնչանքով ու սիրով դարձնի մեր հայացքը դեպի երկիրն Արարատի, դեպի Սուրբ Էջմիածին: Ուր էլ ապրենք, մենք բոլորս զավակներն ենք նույն ժողովրդի, Հայ Առաքելական մեկ Եկեղեցու: Ուր էլ լինենք, պահենք մեր հավատարմությունը հայրենյաց սրբություններին, որով պայմանավորվում է մեր արժեքը որպես մարդ և որպես հայ: Աղոթենք, որ 2001 թվականին սկսված 1700-ամյակը ազգային-քրիստոնեական մեր կյանքում լինի սկիզբ, որ չունի վախճան:*

*Թող Ամենախնամ Բարձրյալն Աստված Իր խաղաղությունը սփռի աշխարհին համայն և զորացնի ժողովուրդների միջև փոխվստահության, բարի կամեցողության ու համագործակցության ոգին, Իր հովանու ներքո ապահով ու անխռով պահպանի Ամերիկայի Միացյալ Նահանգները, երջանիկ ու բարօր՝ նրա մարդասեր ու հյուրընկալ ժողովրդին: Թող Տերը օրհնի մեր Հայրենիքը և համայն հայոց՝ աշխարհի բոլոր կողմերում, որ շարունակեն իրենց խաղաղ կյանքը և փառք տան Աստծուն միշտ և հավիտյան ամեն:*

Վեհափառ Հայրապետի պատգամին հաջորդած աջահամբույրից հետո առաջնորդարանի ընդարձակ սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որին իրենց ներկայությունն էին բերել քույր Եկեղեցիների ներկայացուցիչներից եպիսկոպոս Ջուդ Սենթ Անտուանը՝ Կանադայի Կաթոլիկ Եկեղեցու կարդինալի փոխանորդը Մոնրեալում, Վերապատվելի դր. Ջեյ Ռալֆ Վաթսոնը՝ Մոնրեալի եկեղեցիների խորհրդի նախագահ և այլք:

Ներկա էին օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների անդամներ, ինչպես նաև Մոնրեալ, Բրոսար և Լավալ քաղաքների իշխանությունների ներկայացուցիչներ:

Նորին Սրբությունը, առ ի գնահատություն թեմի բարեխնամ առաջնորդ, Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի նվիրյալ ծառայության, Սրբազան Հորը նվիրեց եպիսկոպոսական պանակն:

Նույն երեկոյան Նյու Յորքի շքեղ հյուրանոցներից մեկում՝ Ուոլդորֆ Աստորիայի մեջ, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

**Մայիս 28**

Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպության համագումարին, ուր Նորին Սրբության նախագահությամբ տեղի ունեցավ նորընտիր անդամների ուխտառության արարողությունը:

Կեսօրին առաջնորդարանի դահլիճում Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Հայ Ավետարանչական Ընկերակցության հոգաբարձության նախագահ, տիար Էնդի Թորիկյանի և փարիչ-տնօրեն, Վեր. Ժիրայր Սողոմոնյանի հետ:

Երեկոյան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական մարմնի անդամները, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ընդունելություն կազմակերպեցին Ուոլդորֆ Աստորիայի մեջ:

**Մայիս 29**

Հայոց Հայրապետը հյուրընկալվեց Հույն Ուղղափառ Եկեղեցու Դիմիտրիոս արքեպիսկոպոսին՝ Նյու Յորքի հունական առաջնորդարանի մեջ:

Ապա Նորին Սրբությունն իր շքախմբով մեկնեց Վաշինգտոն ՏԻ ՍԻ, ուր Ս. Աստվածածին եկեղեցու մեջ տեղի ունեցավ «Հրաշափառ»-ի արարողություն:

Երեկոյան պաշտոնական ճաշկերույթ տրվեց Պետեսդա Հեատ Ռժենս հյուրանոցում՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Բազմաթիվ հյուրերի հետ ներկա էին նաև դեսպան Արման Կիրակոսյանը, նորանկախ հանրապետությունների օժան-

դակության ԱՄՆ-ի համակարգող դեսպան Վիլհելմ Թեյլր Կրյտսերը և «Մինսկ»-յան խմբի ամերիկացի համանախագահ դեսպան Քերի Քավանոն: Դեսպան Թեյլրը ողջունեց Հայոց Հայրապետին, իսկ Քերի Քավանոն նշեց, որ իր գլխավոր նպատակն է՝ որքան հնարավոր է, շուտ երկկողմ խաղաղություն հաստատել Հայաստանի և Ադրբեջանի միջև:

**Մայիս 30**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով այցելեց Առլինգթոնի Ազգային գերեզմանատուն և աղոթեց ու ծաղկեպսակ զետեղեց Անհայտ զինվորի գերեզմանին: Շքախմբին ղիմավորեցին Ամերիկյան Բանակի և Ծովուժի ներկայացուցիչները:

Այնուհետև Վեհափառն այցելեց նախ Վաշինգտոնի արքեպիսկոպոս Կարդինալ Թեոդոր Մըք Գարիկին, ապա՝ Հովհաննես-Պողոս Բ կենտրոն:

Երեկոյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով մասնակցեց միջեկեղեցական պատմական մի արարողության կաթողիկե National Shrine Basilica-յի մեջ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ, ուր տեղի ունեցավ միջեկեղեցական երկխոսություն և արարողություն:

*Սիրելի եղբայրներ և քույրեր.*

*Բերկրանքով է լեցուն Հայոց Հայրապետիս հոգին այս օրերին, երբ Հայրապետական Մեր այցելության ընթացքին բազմաթիվ հանդիպումներ ունեցանք Ամերիկայի օրհնյալ հողում ապրող մեր զավակների հետ: Այսօր առավել բերկրաշատ ենք և լեցուն մխիթարությամբ. քանզի աղոթաբույր այս Տաճարի կամարների ներքո, որպես մեկ ընտանիք, հավաքվել ենք քրիստոնեական եկեղեցիների անդամներս՝ միասնաբար ոգեկոչելու հիշատակը հայոց համազգային մկրտության, հավաքվել ենք միասնաբար աղոթելու առ Աստված՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի առիթով: Այս պահին հավատակից մեր եղբայրների՝ ձեզ հետ զգում ենք հոգևոր մեր մեկ ամբողջությունը, որպես մեկ մարմին՝ ի Քրիստոս սիրով, հույսով ու հավատով ապրող. արդարև՝ «եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա» (Ա Կորնթ. 12:26):*

*Մեր երկիրը բիբլիական Հայաստանն է՝ մշտական շուքի ներքո պահեր Արարատ լեռան, ուր կանգ առավ Նոյ Նահապետի տապանը: Պատմաբանները մեր ժողովրդին համարում են Նոյի որդի Հաբեթի սերունդ, նրա թոռան՝ Թորգոմի զավակներ, որ հիշվում է նաև Եզեկիելի մարգարեության մեջ՝ որպես «Տունն Թորգոմայ ի ծագացն հիւսիսոյ» (Եզ. 38: 6): Նոյի պատմությունը մեր ժողովուրդը հիշում է ամեն այգաբացի հետ Արարատին նայելիս, հիշում է Աստծո համար կանգնեցրած նրա զոհասեղանը՝ «առ յաւե-*

*նույն անասնոց սրբոց և յամենայն թռչնոց սրբոց և եհան ողջակէզ ի վերայ սեղանոյն» (Ծննդ. 8:20): Հիշում է առանձնակի գորովով, որ Աստված օրհնեց Նոյի երկիրը, որտեղից պիտի սկսվեր մարդկության երկրորդ կենսագրությունը. «Այսուհետև զամենայն աւուրս երկրի սերմն եւ հունձք, ցուրտ եւ տօթ, ամառն եւ գարուն, զտիւ եւ զգիշեր՝ մի դադարեսցեն» (Ծննդ. 8:22):*

*Աստված կրկին օրհնեց այդ երկիրը, երբ արդեն Հայաստան էր կոչվում՝ Ավետարանի լույսը տարածելու համար այստեղ առաջնորդելով Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներին: Հայոց առաջին լուսավորիչների սերմանած հավատի հունդերից ծնունդ առավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հովվելու Արարատի երկրի տոհմիկ հայ ժողովրդին:*

*301 թվականին Աստված նորից օրհնեց Հայաստան աշխարհը՝ նոր Լուսավորիչ մեզ շնորհելով, ով 13 տարի մահապարտների գուբում անձանձիր աղոթելուց հետո Արևելյան Եփրատի՝ Արածանիի ջրերում քրիստոնյա մկրտեց հայոց Տրդատ թագավորին, արքունիքն ու ողջ ժողովրդին: Աստծո առաջ կանգնած խոստովանության, մեր ժողովուրդը տեսավ Աստծո Միածին Որդու էջքը իր հողին և առաջինը աշխարհում քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն: Աստվածորդու Իջման տեղում Սուրբգրական Արարատից բերված քարերով 1700 տարիներ առաջ կառուցվեց ամենայն հայոց Մայր Տաճարը, որ կոչվում է Էջմիածին՝ Էջք Աստծո Միածին Որդու: Եկել ենք հայոց նվիրական այդ սուրբ կենտրոնից. որ 1700 տարի վկան է առ Աստված մեր նոր ուխտի:*

*Սիրելիներ.*

*Ամանորի գիշերը Մենք ուխտի գնացինք Արարատի լանջին գտնվող հնագույն մի վանք, ուր համաձայն ավանդության Նոյը զոհասեղան կանգնեցրեց Արարատից իջնելուց հետո: Նույն վանքում է գտնվում ստորերկրյա վիրապը, որտեղ բանտարկված էր Քրիստոսի մեծ խոստովանող, հավատի մեր Հայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Նոր հազարամյակի առաջին ժամերին եկեղեցականներ ու ժողովուրդ Լուսավորչի Կանթեղից վառեցինք մեր մոմերը և ուխտեցինք հավատարիմ լինել նախնյաց մեր հավատին:*

*Հայոց կյանքում 2001 թ. բացվեց համազգային մկրտության 1700-ամյա հոբելյանով, հայոց երկնքում և հայորդյաց հոգիներում պայծառ շողարձակեց երկնքից անպարտ կախված Լուսավորչի Կանթեղի խորհուրդը, որ՝ կերտված մեր ժողովրդի հավատով, անշեջ է. քանզի յուղի փոխարեն նրա մեջ այրվում են մաքուր արցունքները սրբի:*

*Բազմահազար ուխտավորների ուղեկցությամբ այնուհետև առաջնորդվեցինք դեպի Սուրբ Էջմիածին, այնտեղից՝ մայրաքաղաք Երևան: Մատա-*

*խլապատ ու ցրտաշունչ գիշերին քաղաքամայր Երևանի հրապարակը, ուր Լենինի արձանի տեղում Քրիստոսի խաչն է հառնել, լի էր ժողովրդով: Մենք փառաբանեցինք մեր Փրկության Տիրոջը ու գոհություն հայտնեցինք, որ 1700 տարիներ անց շարունակում ենք աղոթքով նայել Սուրբ Խաչին: Մենք փառք տվեցինք Աստծուն, որ ընդդեմ չարիքի և մեզ պարտադրված կրոնափոխության հաջողությամբ ենք մղել հավատի բարի մարտը, նույն պայքարը 70 տարի նաև՝ ընդդեմ բռնացող անհավատության: Մենք մնացինք ու կանք քրիստոնյա այն «հոտը փոքրիկ», որ պատմության մեջ բոլոր նրանց, ովքեր փորձեցին ոչնչացնել մեր հավատը, պատասխանել է. «Որ իբրև զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն, արդ, իբրև զգոյն ի մորթոյ՝ չկարէ շրջել»:*

*Անցյալ դարասկզբին Թուրք տիրակալության ներքո մեկ ու կես միլիոն հայություն ենթարկվեց ցեղասպանության, պատմական Հայաստանի մեծ մասը դատարկվեց հայերից: Կոտորածից փրկվածները ապաստան գտան Միջին Արևելքի, Եվրոպայի ու Ամերիկայի երկրներում, և ձևավորվեց արդի Հայոց Սփյուռքը, որ ընդգրկում է աշխարհի բոլոր ծագերը: Միացյալ Նահանգները մեկն է մարդասեր այն պետություններից, որը դժվարին ժամանակներում աջակցության ձեռք մեկնեց հայությանը:*

*Աշխարհի չորս կողմերում մեր ժողովրդի զավակները՝ հավատարիմ մեր նախնյաց սուրբ հավատին, շարունակում են ապրել քրիստոնեական արժեքներով: Նրանք վստահելի քաղաքացիներն են իրենց նոր Հայրենիքների՝ ազնվորեն մասնակից դառնալով իրենց պապերին ու հայրերին ապաստանած երկրների հասարակական կյանքի շինությանը: Էլիս Այլընդում, ուր հայ գաղթականները առաջին անգամ ոտք դրեցին Ամերիկայի հողին, այսօր պարգևներ են ստանում նրանց ժառանգները՝ բազում հարգարժան հայորդիներ, ովքեր ներդրում ունեն ամերիկյան կյանքում:*

*Այո, վերապրեց եղեռնահար մեր ժողովուրդը: Վերապրեց Հարության կենսահաստատ հավատով, իր հանդեպ գործված չարը բարիով հաղթելու Քրիստոսաշնորհ զորությամբ՝ իր համար ևս ճշմարտելով առաքյալի խոսքը. «զբարիոք պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի» (Բ Տիմոթ. 4.7):*

*Պատմական Հայրենիքի փոքր մի հատվածի վրա մեր ժողովուրդը այսօր վերագտել է իր անկախությունը: Աշխարհասփյուռ հայությունը՝ հպարտ ազատ Հայաստանի գոյությամբ, Առաքելական Հայ Եկեղեցու թևերի ներքո հավատով նորոգված ու միասնական, ձգտում է խաղաղության ինչպես Մայր Հայրենիքի եզերքներում, այնպես և աշխարհի բոլոր կողմերում, որպեսզի ոչ մի ժողովուրդ երբեք չկրի իր հոգում ցեղասպանության վիշտն ու վիրավորանքը և ոչ մի հողում չկառուցվեն եղեռնի և հոլոքոստի հուշարձաններ: Մեր ժողովուրդը հավատով է նայում գալիքին և գիտի որ ազգերի*

*ու պետությունների կողմից Ցեղասպանության ճանաչումը՝ որպես արդարության հաղթանակ, մարդու և ազգերի իրավունքների անշեղորեն հարգումն ու պահպանումը միայն կարող են առաջնորդել մարդկությանը դեպի խաղաղության, հաշտության ու համագործակցության հանգրվան, քանզի բռնությունն ու չարիքը անհրաժեշտ է մերժել նախ մարդկային հոգիներում:*

*Սիրելի եղբայրներ և քույրեր, Հայոց համազգային մկրտության 1700-ամյակի առիթով ի խորոց սրտի աղոթենք առ Աստված և շնորհակալություն հայտնենք Իր Հարության սուրբ հավատի պարգևի համար, որով կանչվեցինք խավարից դեպի լույս, անգիտությունից դեպի գիտություն, մահվանից դեպի կյանք:*

*Շնորհակալ ենք, Տեր, որ այսօր, նոր դարասկզբին հավատակից մեր եղբայրների հետ էկումենիզմի դրոշի ներքո ի մի հավաքեցիր մեզ, և մենք միաձուլել ենք առ Աստված մեր աղոթքները: Էկումենիզմի ոգին միշտ հարազատ է եղել Հայ Եկեղեցուն և իր դասական ձևակերպումը գտել մեր Եկեղեցու մեծագործ կաթողիկոսներից Ներսես Շնորհալու կողմից դեռևս 12-րդ դարում «Միութիւն ի կարևորս, ազատութիւն ի երկբայականս, սէր յամենայնի»: Այս ըմբռնումով աղոթենք Հարուցյալ Փրկչին, որ զորացնի մեր մեջ փոխադարձ սերը, եղբայրական վերաբերմունքի ոգին՝ ողջագուրվելու համար Քրիստոսի խաղաղությամբ և խոստովանելու հաղթական Իր Հարության մեր հավատը:*

**Մայիս 31**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը National Press Club-ի մեջ հարցազրույց ունեցավ լրագրողների հետ: Հարցազրույցի ավարտին Նորին Սրբությունն իր շքախմբով այցելեց Կարմիր Խաչի կենտրոն, որի մուտքին կանգնեցված է «Մայրը՝ մանկանը գրկին» հուշարձանը՝ նվիրված հայկական համայնքի կողմից որպես շնորհակալության արտահայտություն երկրաշարժի ընթացքում Կամիր Խաչի ցուցաբերած մարդասիրական օգնության: Այնուհետև Հայրապետական շքախումբը հյուրաընկալվեց ՀՀ դեսպանատանը՝ ի դեմս դեսպան Արման Կիրակոսյանի:

Երեկոյան Նորին Սրբությունն իր շքախմբով վերադարձավ Նյու Յորք:

**Հունիս 1**

Առավոտյան Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդարանի պաշտոնեության հետ: Ապա Վեհափառն իր շքախմբով այցելեց Նյու Յորքի Ռուս Եկեղեցու կենտրոն:

Կեսօրին Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ մի շարք ազգային գործիչների հետ:

Երեկոյան ժամը 21.00-ին Ս. Վարդան առաջնորդանիստ եկեղեցում Նորին Սրբությունը գոհաբանական աղոթք մատուցեց առ Աստված և իր շքախմբով ուղևորվեց օդանավակայան:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ն ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ն Ամերիկայի Արևելյան և Արևմտյան, ինչպես և Կանադայի թեմեր իր Հովվապետական անդրանիկ և օրհնաբեր այցելությունները բարեհաջող ավարտելով՝ իր շքախմբով Նյու Յորքից վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մայր Տաճարում ի ներկայության Մայրավանքի միաբանության տեղի ունեցավ հավուր պատշաճի արարողություն:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՍՊԱՍԱՒՈՐՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹԵԱՆ, ՈՐ Ի ԼՎՈՎ, ՈՒԿՐԱԻՆԱ

Ամենայն Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Մայր Եկեղեցու հաւատարիմ սպասաւորին։

Սիրելի Սրբազան, քաջատեղեակ ենք Ֆրանսիայի, Արգենտինայի, Շիրակի եւ Արմաւիրի հայոց թեմերում ծաւալած եկեղեցաշէն Ձեր գործունէութեանը, որով Դուք Ձեր ներդրումն էք բերել Մայր Աթոռիս առաքելութեան արդիւնաւէտ իրականացմանը՝ արժանիօրէն վաստակելով յարգանքը մեր ազնիւ հաւատացեալների։

Նկատի առնելով հոգեւոր-քարոզչական անձանձիր Ձեր գործունէութիւնը եւ հայկական տարբեր համայնքներում հոգեւոր ծառայութեան Ձեր փորձառութիւնը, ուրախութիւն է Մեզ համար Հայրապետական այսու Կոնդակով ծառայութեան կոչել Ձեզ Ուկրաինայի հայոց թեմում որպէս առաջնորդ։

Վստահ ենք, որ նախանձախնդրութեան նոյն ոգով ու գիտակցութեամբ պիտի լծուէք Ձեր առաքելութեան իրականացմանը՝ հովուելով եւ առաջնորդելով հաւատաւոր ուկրաինահայութեան ընթացքը դէպի հոգեւոր ու ազգային նկարագրի անխաթար պահպանում եւ Աւետարանի լոյս պատգամների եւ նուիրական մեր արժէքների ու աւանդների շուրջ համախմբում:

Աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած, որ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, արեւշատ կեանք եւ առաջնորդական արգասաւոր գործունէութիւն՝ ի պայծառութիւն Առաքելական մեր Մայր Եկեղեցւոյ եւ Ուկրաինայի հայոց թեմի. յուրախութիւն Տիրախնամ թեմիդ հոգեւոր դասի եւ ի մխիթարութիւն Ուկրաինայի բարեպաշտ հայորդիների:

*Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:*

Սիրոյ ողջունիւ և օրհնութեամբ,

Աղօթարար՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տուաւ Կոնդակս ի 5-ն Մայիսի**
**յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**ընդ համարաւ 55**

# ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳՐԵՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մայիս ամսին, Կանադա կատարած իր հովվապետական այցելության ժամանակ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է.

Տիար Ապոմ Էկոյան (Կանադա):

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Տիկին Անահիտ Էվրենսել (Կանադա)
Տիկին Լեպա Ալեքսանյան (Կանադա)
Տիկին Լինդա Կյումուշյան (Կանադա)
Տիկին Տիանա Պողոսյան (Կանադա)
Տիար Սուրեն Աճեմյան (Կանադա)
Տիար Տիգրան Պալյան (Կանադա)
Տիար Արա Սիրունյան (Կանադա)
Տիար Պերճ Այվազյան (Կանադա)

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը Հայրապետական օրհնության և գնահատանքի գրերի է արժանացրել Կանադայի ազգային-եկեղեցական հետևյալ գործիչներին՝ նրանց ազգանվեր և եկեղեցանպաստ ծառայության համար:

Ջվարթ Թագվորյան
Մարգարիտ Գազերյան
Սիլվա Մանկասարյան
Սալբի Տեր-Ղազարյան
Սոնյա Գրիգորյան
Նիքի Գալաճյան

Աշխեն Թյությունջյան
Լիլիան Սվաճյան
Վերժին Ասատուրյան
Մուրադ Տեմիրփեոդեն
Վահե Քերեսթեջյան
Աշոտ Գասպարյան
Կարո Բարդաղամյան
Հակոբ սրկ. Ալթընեզեք
Պերճ Փափազյան
Էփի Պոյաճյան
Ռաֆֆի Մաղփեսյան
Վահագն Արապյան
Վահան սրկ. Շաքարյան
Ջոն Սաթուրի
Բարսեղ Քասապճյան

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ-Ք

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ, ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 8 մայիսի 2001 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը հետևյալ շնորհավորական ուղերձն է հղել Մայիսի 9-ի Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման օրվա տոնական առիթով:

«Բերկրաշատ հոգով ողջունում, շնորհավորում և Հայրապետական մեր օրհնությունն ենք բերում հանուր մեր ժողովրդին՝ Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման Օրվա տոնական առիթով:

Արդարության ու ազատության հաղթանակի բերկրանքով են համակված մեր բոլորի հոգիները, և մեր աղոթքը այսօր խաղաղության հայց է առ Աստված:

Սիրելիներ, ազատության սերը և խաղաղության երազը ամենաթանկ արժեքներից են, որ ժառանգություն ենք ստացել մեր նախնիներից: Հայաստանի և Արցախի անկախության հռչակման 10-րդ տարում, երբ ազգս այսօր Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի խորհրդով հոգևոր նորոգության օրեր է ապրում, հրավեր, հորդոր ու պատգամ ենք ուղղում մեր բարեպաշտ զավակներին՝ վերստին լցվել լավատեսությամբ, հավատավոր հոգու նոր զորությամբ և ութսունության միաբանության ոգով ծառայել ամենուր հայրենական մեր կյանքի վերաշինության ու Հայրենիքի վերածննդի նվիրական առաքելությանը:

Թող Բարձրյալն Աստված օրհնի ստեղծագործ ջանքերը մեր ժողովրդի, անկոտրում պահի ոգին ու բազուկը հայրենյաց պաշտպան մեր զավակների՝ հանուն ազատ և անկախ Հայաստանի ու Արցախի խաղաղ, բարգավաճ ու բարօր կյանքի:

Թող Տերը խաղաղություն սփռի աշխարհին համայն և զորացնի համերաշխությունը պետությունների ու ժողովուրդների»:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄԵՐ ԱՂՈԹՔՆ Է, ՈՐ ՆՊԱՍՏԵՆՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆԸ»

## ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 3 մայիսի 2001 թ.:**

Այսօր Հայաստանում պետական այցով գտնվող Լիբանանի Հանրապետության նախագահ, գեներալ Էմիլ Լահուդը փիկնոջ և ուղեկից շքախմբի հետ այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ հանդիպելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Նորին Սրբությունը ողջունեց պատվարժան հյուրի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ առանձնակի գոհունակությամբ նշելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Ի հաստատումն ասվածի՝ Լիբանանի նախագահը փաստեց, որ հայերը, որպես Լիբանանի լիարժեք քաղաքացիներ, իրենց կարևոր ներդրումն ունեն երկրի կյանքում:

«Մեր աղոթքն է, որ նպաստենք մեր ժողովուրդների բարեկամությանը»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանական տոնակատարությունների մասին, Նորին Սրբությունը ներկայացրեց Հայ Եկեղեցու գործունեությունը:

«1700-ամյակը մեծ իրադարձություն է աշխարհում, և վստահ ենք, որ շատ լիբանանահայեր մասնակից կլինեն այդ տոնախմբություններին», - ասաց գեներալ Էմիլ Լահուդը:

Հայ Եկեղեցու նշանակալի հոբելյանը մեծ շուքով կտոնախմբվի նաև Լիբանանում, որտեղ գտնվում է Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներից Մեծի Տանն

Կիլիկիո Կաթողիկոսությունը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը եղբայրական իր ջերմ ողջույնը եղեց Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսին:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը Լիբանանի նախագահին նվիրեց Հայ Եկեղեցու հոգևոր գանձերը պատկերող շքեղազարդ ալբոմ, ի պատասխան որի նույնպես նախագահի հայերեն «շնորհակալությունը»:

«Չեմ կարող իմ ուրախությունը չարտահայտել, որ Լիբանանի առաջին փիկինը հայ ազգի զավակ է և Լիբանանի ազնիվ քաղաքացի».- ասաց Հայոց Հայրապետը:

Վերջում Լիբանանի նախագահը Նորին Սրբության ուղեկցությամբ եղավ Վեհարանի թանգարանում, ծանոթացավ հայ հոգևոր արժեքներին:

Լիբանանի նախագահին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղեկցում էին ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, զույգ երկրների դեսպանները: Հանդիպմանը ներկա լիբանանյան պատվիրակության կազմում էր նաև հայազգի նախարար Սեպուհ Հովնանյանը:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԱԾ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ. ԿՅՈՒՐԵՂՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 17 մայիսի 2001 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մայիսի 15-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի նախկին առաջնորդ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական իշխանությանը անհնազանդ, հայ եկեղեցականի ուխտին անհարիր և Հայ Եկեղեցու կանոններին դեմ դատապարտելի գործողությունների համար:

Կարգալույծ արված Սրբազանն այլևս դասվում է աշխարհականների շարքը և կկոչվի ավազանի անունով՝ Ղազարոս Կյուրեղյան:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐ Է ՀՂԵԼ ԻՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՆՔՆԱԹԻՌԻ ՎԹԱՐԻ ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 21 մայիսի 2001 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ այս օրերին հովվապետական այցով գտնվում է Կանադայի հայոց թեմում, տեղեկանալով Իրանում կատարված ինքնաթիռի վթարի մասին, ցավակցական գիր է հղել զոհվածների հարազատներին և Իրանի իշխանություններին:

*«Սրտի խոր ցավով Կանադայում հայրապետական Մեր այցի ընթացքին տեղեկացանք Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում տեղի ունեցած ինքնաթիռի վթարի մասին, որի հետևանքով զոհվել են Իրանի Իսլամական Հանրապետության բարձրաստիճան պետական այրեր և հայ օդաչուներ: Մեր սրտաբուխ վշտակցությունն ենք բերում Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին և ննջեցյալների ազգակից հարազատներին՝ վախճանյալների ողբերգական ու անժամանակ մահվան առիթով: Աղոթք ենք բարձրացնում առ Ողորմածն Աստված, որ Տերը ամենատես Իր գթությամբ հավիտենական հանգիստ պարգևի զոհվածների հոգիներին՝ մխիթարություն պարգևելով ննջեցյալների ազգակից հարազատներին:*

*Աղոթք և օրհնություն զոհվածների հիշատակին»*, - ասված է Վեհափառ Հայրապետի ցավակցական ուղերձում:

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

## ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄ

### ՄՈՒՍՈՒԼԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Այս տարվա ապրիլի 26-ին մեծ թվով հավատացյալներ էին մասնակցելու նոր կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքի արարողությանը:

Արարողությունն սկսվեց թեմիս բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատրյանի գլխավորած թափորով: Հիմնարկեքի արարողությանը որպես կնքահայրեր հրավիրված էին եկեղեցու շինարարության համար նվիրատու ազգայիններ:

Հիշատակության արժանի է այն, որ այս հոգեպարար արարողությանն իր մասնակցությունը բերեց Մուսուլի շրջանի մեզ դավանակից Ասորի Օրթոդոքս համայնքապետ Սալիպա արքեպիսկոպոսը, որը առաջնորդ Սրբազան Հոր հրավերով Ս. Մյուռոնով օծեց վեմ-քարերից երեքը:

Արարողությունների վերջում առաջնորդ Սրբազան Հայրը շնորհավորեց իրաքահայությանը և ի մասնավորի Մուսուլի համայնքը, խրախուսեց բոլորին, որ նյութական աջակցություն բերեն եկեղեցու շինարարությանը:

### ԱՎԶՐՈՒԿ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

2000 թվականի մայիսին թեմիս բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ Տ. Ավագ արքեպս. Ասատրյանն Իրաքի հայաշատ կենտրոններին տված իր հովվական այցելությունների շարքին հիմնարկեքներ կատարեց հյուսիսային շրջանի Ավզրուկ հայկական գյուղում կառուցվելիք եկեղեցու: Աշխարհամատրան Կիրակիին զուգադիպող ապրիլի 29-ին կատարվեց սույն եկեղեցու օծումը:

«Զողորմութեան քո դուռն բաց...» շարականի երգեցողությամբ Սրբազան Հայրը նավակատիքը կատարեց նորակառույց եկեղեցու: Եվ ապա իր գլխավորած թափորով և հոծ հավատացյալների ներկայությամբ Նորին Սրբազնությունը մուտք գործեց

եկեղեցի: Եկեղեցու օծման խորհուրդը սկսվեց, երբ երկու քահանա հայրեր գինով և ջրով լվացին Ս. Սեղանը, իսկ Սրբազան Հայրը օծեց Ս. Սեղանը և եկեղեցու փասնվեց սյուների վրա գծերեղված խաչքարերը:

Տյառնագրելով եկեղեցու չորս կողմերը, Սրբազան Հայրը նվիրագործեց Աստծուն նվիրված այս աղոթքի տունը, «յանուն Ս. Վարդան Զաստապետայ եկեղեցի»: Այս արարողությունից հետո Սրբազանը մատուցեց նորաօծ եկեղեցու առաջին Սուրբ և անմահ Պատարագը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Իր քարոզի մեջ առաջնորդ Սրբազան Հայրը նախ շնորհավորեց գյուղի բնակիչներին, հորդորեց լինել Վարդան Մամիկոնյանի պես քաջարի հավատացյալներ:

Հիշատակության արժանի է, որ առաջնորդ Սրբազան Հոր դիմումին ընդառաջելով գերմանական «Capni» հաստատությունը հանձն էր առել եկեղեցու շինարարությունը և կարճ ժամանակում ավարտին հասցրել այն, իսկ «The Chrch in need» հաստատությունը հանձն էր առել կառուցելու հոգևոր հովվի բնակարանը:

*ԱՐԱՄ ՄՐԿ. ՔԵԹԵՆՃՅԱՆ*

# ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Քյոլնի Սանկտ Պանթալեոն եկեղեցում Ռուս և Հայ Եկեղեցիների հոգևորականները հոգեհանգիստ կատարեցին հայազգի Թեոֆանու կայսրուհու շիրիմի առջև: Տ. Մյուռոն քհն. Սարգսյանը խոսեց 1700-ամյա քրիստոնեության դերի մասին Հայաստանում ընդգծելով կայսրուհու դերը Եվրոպայում էկումենիկ շարժման գործում:

Ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի, 2001 թվականի ապրիլի 22-ին Հայ Եկեղեցու Բեռլինի համայնքի «Հայ Տան» մեջ «Թուրքիայի կրոնական կազմակերպությունները, ինչպես նաև գերմանական եկեղեցիները և Հայոց ցեղասպանությունը» թեմայով բանախոսեցին Գերմանիայի Գյոթինգեն քաղաքի Աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսորներ, դոկտ. Հերման Գոլցը և Մարթին Թամքը: Պրոֆ. Թամքը արևելյան Եկեղեցիների աստվածաբանության մասնագետ է և Գերմանիայում բազմաթիվ բանախոսություններով ներկայացրել է Հայ Եկեղեցին և նրա բազմադարյան մշակույթը: Նա հեղինակն է նաև «Արմին Թ. Վեգները և հայերը» գրքի:

2001 թվականի ապրիլի 24-ին Բեռլինի Լուիզըն եկեղեցում հոգեհանգստյան պաշտոն կատարեց Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի: Այնուհետև «Հայ Տան» մեջ «Կիլիկիայի փրկված զանձերը» թեմայով հանդես եկավ Հալլեի համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի ղեկավար և «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի փնօրեն, պրոֆ., դոկտ. Հերման Գոլցը:

Այնուհետև ուշագրավ խոսք արտասանեց Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը՝ անդրադառնալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման վերջին շրջանի հաջողություններին:

2001 թվականի մայիսի 27-ին Հայ Եկեղեցու Բեռլինի համայնքում նշվեց Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 83-րդ տարեդարձը: Այս առթիվ Լուիզըն եկեղեցում Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը, ներկայությամբ ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանի, կատարեց Հանրապետական մաղթանք:

Արարողությունից հետո «Հայ Տան» մեջ «Ժամանակակից հայ գրականությունը» թեմայով բանախոսեց Գերմանա-հայկական ընկերության նախագահ, դոկտ. Ռաֆֆի Քանդյանը:

Բանախոսության ավարտից հետո «Մեր Հայրենիք» և «Սարդարապատ» երգերի կատարումով հանդես եկավ համայնքի երիտասարդաց նորակազմ երգչախումբը՝ ղեկավարությամբ օրիորդ Մարո Հայքայի:



*ԱՐՄԵՆ ԱՐՔԵՊՍ. ԲԵՐԲԵՐՅԱՆ*

# ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## Անհրաժեշտություն Ավետարանի ընթերցման.

## Ի՞նչ է Ավետարանը

Ավետարան (հունարեն՝ evangelion) կազմված է eu (բարի) և aggelion (ավետել) բառերից, այսինքն՝ բարիի ավետում կամ Ավետիս: Այս բառը հունարեն բնագրում հանդիպում է 75 անգամ. դա այն լուրն է, որը տալիս է Աստված որպես հայտնություն և վերաբերում է Հիսուս Քրիստոսով փրկվելուն: Չորս Ավետարաններից յուրաքանչյուրը ասում է ինչ-որ բան, որը չեն ասում մյուսները և չեն հաղորդում նույն ձևով: Եկեղեցին դրանք ընդունեց իբրև հեղինակություն ունեցող և անառարկելի արժեք ունեցող գրքեր:

Սխալ կլինեի ասել, որ Ավետարանները Հիսուսի կյանքի պատմություններն են: Մարկոսն ու Հովհաննեսը ոչինչ չեն ասում Հիսուսի՝ որպես անձի, կյանքի մասին մինչև իր առաքելություն սկսելը: Մատթեոսն ու Ղուկասը տալիս են նրա ծննդյան պատմությունը: Ղուկասը նաև ներկայացնում է մի դեպք նրա պատանեկության ժամանակից: Մեզ հայտնի է միայն մի փաստ. նա հնազանդ է եղել իր ծնողներին, զարգացել է իմաստությամբ, հասակով և Աստծո ու մարդկանց մոտ շնորհք գտնելով (Ղուկ. Բ 51, 52):

Ավետարանիչը հիմնվում է վկայության վրա, և նրա նպատակը մարդկանց չոր ու ցամաք տվյալներ հաղորդելը չէ, այլ Հիսուս Քրիստոսին որպես Աստծո մարմ-

ճացած որդի լինելն ու մարդկանց թշնամու՝ սատանայի դեմ տարած իր հաղթանակի մասին լուրջ ավետումն է: Նա խաչի վրա հաղթելով մահվանն ու մեղքին, մարդկանց հաշտեցրեց Աստծո հետ: Նրանց սրտերում հաստատեց իր իշխանությունը և մի օր էլ գալու է՝ այն հաստատելու ամբողջ երկրի վրա: Ավետարանները գրվել են մ. թ. 60-65 թթ. միջև ընկած ժամանակահատվածում: Մեկ-երկու սերունդ դրանք փոխանցվել են բանավոր ձևով: Հաջորդ սերունդներին անհրաժեշտ էր տալ գրավոր վկայություններ: Հիսուսն իր աշակերտներին տվել էր իր անունից խոսելու իշխանություն, նրանց էր վստահել Եկեղեցու հոգևոր ղեկավարությունը: Մատթեոսն ու Հովհաննեսը առաքյալներ էին, Մարկոսը՝ Պետրոսի և Պողոսի մտերիմ ընկերը, իսկ Ղուկասը՝ Պողոսի ընկերը: Նրանք էլ հավաստի աղբյուրն էին, քանի որ նրանց հնարավորություն էր տրվել քարոզել և Եկեղեցիներ հիմնել:

## Քրիստոսի կյանքը

Պետք է ասել, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կյանքը և կենսագրականը իր նմանը չունի, եզակի է: Նրա երկրային կյանքի ընթացքում կատարվում էին դեռևս իր ծնունդից հարյուրավոր տարիներ առաջ արված մարգարեությունները՝ սկսած ծննդավայրից, մինչև չարչարվելն ու փառքով համբարձվելը (Միքիա Ե 2, Ես. Է 14, Թ 6):

Նրա երկրային կյանքով մենք տեսնում ենք մարմնացած Աստծուն. Նա ապրեց իբրև մարդ և իր կյանքով վկայեց Աստծո սերն ու արդարությունը:

Ավետարանները Հիսուսի կյանքի ամբողջական ընթացքի մասին բավարար պատմական նյութ չեն տալիս: Ելնելով Ղուկաս ավետարանչի առաջաբանից, հասկանում ենք, որ նրան չափազանց շատ էին հետաքրքրում Տիրոջ կյանքին վերաբերող իրադարձությունները: Հիսուսի աստվածային ծննդյան պատմության նկարագրից ենթադրում ենք, որ այդ մասին նա տեղեկացել է Հիսուսի մորից՝ Մարիամից (Ղուկ. Ա 26-56, Բ 1-5): Մատթեոսն իր հերթին նույն պատմությունը նկարագրում է Հովսեփի տեսանկյունից: Երկուսն էլ համաձայն են, որ Հիսուսը ոչ թե մարդ-երեխա է, այլ Սուրբ Մարիամը հղիացել է Ս. Հոգու զորությամբ և ծնել Աստծո Որդուն (Ղուկ. Ա 35 և Մատթ. Ա 18-25): Հովհաննեսն այդ է վկայում իր Ավետարանի նախաբանում ասված խոսքերով (Հովհ. Ա 1-14) և հաստատելով. «Որովհետև ես երկնքից իջա ոչ թե իմ կամքը կատարելու համար, այլ կամքը Նրա, որ ինձ ուղարկեց» (Հովհ. Զ 38): Հիսուսի մանկությունը և պատանեկությունը, ըստ Ղուկասի Ավետարանի. ընթացել են բնական հունով և հրաշալի (Ղուկ. Բ 52): Ննալած Հովսեփը մահացել է շատ վաղ, և Հիսուսը ստիպված է եղել աշխատել իբրև հյուսն (Մատթ. ԺԳ 55-56), այնուամենայնիվ փոքր հասակից ժամանակ է տրամադրել Ս. Գրքերի ուսումնասիրմանը և նրանց շուրջ խորհրդածությանը:

Երբ Հիսուս 30 տարեկան էր (Մատթ. ԺԳ 55-56), մկրտվեց Հովհաննեսի կողմից՝ հրապարակայնորեն ընդունելով իր Մեսիա՝ Աստծո Որդի և Փրկիչ լինելը: Չնայած որ չուներ մեղավոր սկիզբ՝ նա հանձն է առնում նույնանալ ընկած մարդուն, իր վրա վերցնել մոլորված ու անտեսված մարդու բոլոր տկարությունները: Այս վիճակը խրախուսվեց Հայր Աստծու կողմից Ս. Հոգին աղավնու տեսքով Նրա վրա իջեցնելու միջոցով (Ղուկ. Գ 22) և վկայելով, որ դա է Իր սիրելի Որդին:

Մկրտությունից հետո Ս. Հոգին Նրան տարավ անապատ փորձվելու (Մատթ. Դ 1), որով Հիսուսը պետք է ապացուցեր երկնային Տիրոջը հավատարմությունն ու գայթակղությունը հաղթելու զորությունը: Ի տարբերություն Եդեմական պարտեզում առաջին զույգի տարած պարտության, Հիսուս, անապատում ապրելով 40 օր պահեցողությամբ, հաղթեց սատանայի փորձությանը: Հիսուս հոգևոր մարտից դուրս եկավ որպես Աստծո հավատարիմ Որդի և ծառա (Մատթ. Դ 1-14, Մարկ. Ա 12-13, Ղուկ. Դ 1-13): Այս մեծ հաղթանակից հետո Հիսուս ձեռնամուխ եղավ իր հանձնարարականի կատարմանը և հասարարական գործունեությանը: Նա ընտրեց և կանչեց իր առաջին աշակերտներին (Հովհ. Ա 35-51), նրանց հետ շրջեց՝ կատարելով բազում հրաշքներ, հայտնելով իր փրկչական տնօրինությունը (Հովհ. 2), իշխանությունը չար ոգիների ու դևերի աշխարհի վրա (Ղուկ. Ը 26-39, Թ 37-45), մարդու մարմնի և հոգու հիվանդությունների վրա (Մատթ. Ը 1-17, Թ:1-8), կյանքի ու մահվան վրա (Ղուկ. Է 11-17), նաև բնության վրա (Մարկ. Դ 35-41, Զ 34-51): Այս բոլորի հետ միաժամանակ տեղեկացրեց, որ իր ձեռքում է մարդկանց հավիտենական ճակատագիրը, վերջնական իշխանությունը, իր շատ քարոզներում հռչակեց Երկնքի թագավորության օրենքները (Մատթ. Է 5-29):

Հիսուս Քրիստոս իր գերագույն զորությունը բացահայտելուն զուգահեռ իր սերն ու մխիթարությունը (Մատթ. Թ 1-8) տվեց նրանց, ովքեր տառապում էին մարմնական և հոգեկան ցավերով, շատ անգամներ հայտարարեց, որ եկել է փնտրելու և փրկելու մոլորյալներին (Ղուկ. Ե 20-26, Է 48-50):

Բազմաթիվ աշակերտներից ընտրեց 12-ին, որոնց հատուկ ուսուցանեց և ձևավորեց իբրև իր ապագա առաքյալներ (Մատթ. Ժ 1-4, Ղուկ. Զ 12-16): Այն ժամանակ, երբ Հիսուս մերժեց որպես երկրային Մեսիա թագադրվելու պահանջը, նրա շատ աշակերտներ և ամբոխը հեռացան նրանից (Հովհ. Զ 26-27, 66-67): Հիսուս այդ ժամանակ հեռացավ Տյուրոսից, գնաց Սիդոնի, Փիլիպյան և Կեսարիայի կողմերը (Մատթ. ԺԵ 21, ԺԶ 13, Մարկ. Է 31), բայց չկարողացավ խույս տալ ժողովրդի ուշադրությունից: Երբ վերադարձավ Գալիլիայի ծովափը, բազմությանը կերակրեց, բուժեց, օգնեց վշտահար շատ մարդկանց և այդ ժամանակ էր, որ աշակերտների հետ առանձնանալով՝ հարցրեց. «Դուք իմ մասին ի՞նչ կասեք, ո՞վ եմ ես» (Մատթ. ԺԶ 15), որին հաջորդեց Պետրոսի անմիջական պատասխանը. «Դու Քրիստոսն ես, կենդանի Աստծո Որդին»:

Այդ պահից ի վեր Քրիստոսը նրանց սկսեց լրջորեն պատրաստել Երուսաղեմում սպասվող ահավոր հարվածին (Մատթ. ԺԶ 21-26), նրանց վստահեցրեց վերջնական հաղթանակի վերաբերյալ և այն բանում, որ հավատացյալները վախենալու ոչինչ չունեն (Ղուկ. ԺԲ 4-12, 32-34):

Իր երեք աշակերտների առջև պայծառակերպության ժամանակ, երբ նրանք Հիսուսին տեսան Աստվածային փառքով պարուրված (Մատթ. ԺԷ 1-11, Մարկ. Թ 2-10, Ղուկ. Թ 28-35), նրա անձի բացահայտումը որպես Աստծո Որդի նոր աստիճանի հասավ, երբ երկրորդ անգամ վկայվեց երկնքից. «Դա է Իմ սիրելի Որդին, Նրան լսեցեք»: Որքան մեծանում էր Հիսուսի՝ որպես Աստծո Որդու բացահայտումը, այնքան աճում էր նաև հրեա կրոնական ղեկավարների հակադրությունն ու ատելությունը նրա ճշմարիտ ու արդիական ուսմունքի, ուսուցումների նկատմամբ որոնք կատարվում էին ուղղակիորեն և առակներով, որոնք ծնունդ էին տալիս հավատափոխությունն ու ատելությունը:

Զատիկից մեկ շաբաթ առաջ, բացահայտ ձևով, որպես Մեսիա-Թագավոր Երուսաղեմ մտնելով, Հիսուսը տաճարից վռնդեց լումայափոխներին ու վաճառականներին՝ բացահայտելով Մեսիայի և Թագավորի իր իշխանությունը (Ղուկ. ԺԹ 45, Մատթ. ԻԱ 12): Իր առաքելության վերջին՝ վճռական օրերին տաճարում նա հրապարակորեն վարդապետեց (Մատթ. ԻԱ 23)՝ կանխագուշակելով այն ամենը, ինչ կատարվելու էր Հրեաստանի ժողովրդի հետ:

Խաչելության նախորդ օրվա երեկոյան, իբրև անխուսափելի, քավիչ զոհողության նախապատրաստություն, աշակերտների հետ նա կերավ Զատիկը, վերջին անգամ ուսուցանեց նրանց, լվաց նրանց ոտքերը (Հովհ. ԺԳ 1-11), սովորեցրեց լինել հնազանդ, կանխագուշակեց Հուդայի մատնությունը, աղոթեց բոլոր նրանց համար, ովքեր հավատալու էին իր անվանը (Հովհ. ԺԷ):

Գեթսեմանի պարտեզում վրա հասավ Հոր կամքին ենթարկվելու վճռական ժամը: Իր վրա վերցնելով մարդկության մեղքերի բեռը, Հիսուս թույլ տվեց, որ իրեն բանտարկեն: Նրան դատեցին անօրեն ձևով, անմեղ ճանաչելով հանդերձ՝ խաչեցին: Նրա զոհողությունը գագաթնակետին հասավ խավարի ու լքվածության ժամերին, ու նրա ճիչը թե՛ հուսահատության, և թե՛ գերագույն այն առաքելությունը կատարելու նշան էր, որի համար եկել էր մարդկանց մոտ. «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ ես ինձ լքում» (Մատթ. ԻԷ 46): Կամավոր զոհաբերվելով իբրև Զատկի գառ, նրա երկրային գործը ավարտին էր հասնում, բայց մինչ իր հոգին Աստծուն տալը, հաղթականորեն հայտարարեց. «Ամեն ինչ կատարված է» (Հովհ. ԺԹ 30):

Մահվանից հետո Հիսուս այլևս թշնամիների տրամադրության տակ չէր: Իր խոստման համաձայն հարություն առնելով և հայտնվելով կենդանի՝ ցրեց իր աշակերտների վախն ու տագնապը: 40 օր շարունակ հայտնվեց, զրուցեց և կերավ նրանց հետ՝ ապացուցելով հարության իրականությունը: Վերջին անգամ իր համաշխարհային զորությունը հաստատելով՝ նա հրամայեց բոլոր ազգերի միջից աշակերտներ պատրաստել և մկրտել նրանց՝ Հոր, Որդու և Ս. Հոգու անունով: Խոս-

տացավ նրանց ուղարկել Ս. Հոգի մխիթարիչը, որը կօգներ նրանց. և խոստացավ նրանց հետ լինել մինչև դարերի վերջը: Այնուհետև, մինչ օրհնում էր, նրանց աչքերի առջև «երկինք համբարձվեց» (Ղուկաս ԻԴ 51):

Հիսուս Քրիստոսի կյանքն ու գործունեությունը ավարտվեցին կատարյալ հաղթանակով: Եվ իրավամբ էին հնչում Պետրոսի այն խոսքերը, որոնք գրված են Գործք Բ 36-ում «Աստված Տեր և Քրիստոս դարձրեց Նրան, Ում դուք խաչել եք»:

## Քրիստոսի հարությունը՝ գրավականն Նրա վարդապետության հարատևության

Ցանկացած կենսագիր, գրելով որևէ անձի կենսագրությունը, այն սկսում է ծննդից, ամփոփում կյանքը և ավարտում է մահվան արձանագրությամբ: Այդ կենսագրությունների մեջ ներառում են նաև այն գործերն ու ներդրումները, որոնցով տվյալ անձը արժանացել է մեծարման և ճանաչման:

Այս համընդհանուր կանոնից առանձնանում է միայն մեկի կենսագրությունը՝ Հիսուս Քրիստոսի: Ո՞րն է այդ առանձնահատկությունը:

Առաջինն այն, որ, համաձայն Ավետարանի և Նոր Կտակարանի մնացած մասերի, Հիսուս նախապես գոյություն է ունեցել իր մարմնացումից՝ ծնունդից առաջ (Հովհ. Ը 58, Զ 62, Բ Կորնթ. Ը 9, Փիլ. Բ 16): Այս պնդումը գիտական հետազոտությունների մեթոդներով ստուգման ենթակա չէ: Այն կարելի է ժխտել, մերժել կամ հավատալ և ընդունել:

Երկրորդ տարբերությունն այն է, որ Հիսուս Քրիստոսի փրկագործական առաքելությունը շարունակվում է նաև Նրա մահից հետո՝ հարությամբ և 40 օր շարունակ մարդկանց հետ հաղորդակցվելու փաստերով (աշակերտների, երկուսի հետ ճանապարհին, ծովափին, փակ սենյակում, ձուկ ուտելիս):

Պետք է նկատի առնել, որ նախքան հարության փաստը գրի առնելը քրիստոնեական առաջին սերունդը արդեն դավանում էր հարության նկատմամբ իր հավատքը, և վաղ շրջանի Եկեղեցու հույսն ու հավատքը հենված էին հենց Տիրոջ մարմնավոր հարության վրա: Հիսուսի մերձավորները տեսել են Նրան տարբեր պարագաներում՝ հեռվից, մոտիկից, տարբեր ժամերին և տեղերում, դիպել են Նրան, քայլել Նրա հետ, կերել Նրա հետ: Նրանք տեսել են Հիսուսի վիրավոր ձեռքերն ու ոտքերը, սպիները: Այս բոլորի հետ միաժամանակ Նրա հետ շփվողները նկատել են, որ Հիսուս ձեռք էր բերել այնպիսի մի կարողություն, որ չուներ մահկանացու մարմինը:

Հիսուսի աշակերտները համոզված էին, որ հաղորդակցվում էին մի քանի օր առաջ թաղված իրենց սիրելի ուսուցչի հետ: Քրիստոսի հարության վրա է հիմնված մեր հավատքն ու Եկեղեցին (Ա Կորնթ. ԺԵ 12-22): Այն դառնալով քրիստոնեական հավատքի միջուկը՝ միավորում և լուսավորում է առանձին-առանձին վերցրած հա-

վատքի տարրերը։ Եթե Նոր Կտակարանի էջերից հանենք հարությունը, ապա Եկեղեցին հօդս կցնդի, քանի որ այն քրիստոնեական ավանդի անկյունաքարն է։ Չորս Ավետարանների, «Գործք առաքելոցի» 18, 19 քարոզներից 13-ում խոսվում է հարության մասին։ Հարության նյութը հենց այն էր, ինչը որ Պողոսը պնդում էր ամենուրեք։ Հիսուսը ողջ էր, և նա (Պողոսը) թե՛ կուսակալների, և թե՛ ժամանակի նշանավոր մարդկանց ներկայությամբ չէր ընկրկում, համարձակորեն հաստատում էր հարության իրողությունը։

Հիսուսի հետևորդները, հենվելով հարության փաստի վրա և զորանալով դրանից, ուժ և համարձակություն ստացան տակնուվրա անելու պատմության ընթացքը. նրանցից և ոչ մեկը առաքյալ չէր համարվի, եթե ականատես եղած չլինեին Քրիստոսի հարությանը։

Առաքյալներից բացի Հիսուսի հարության ականատես էին բազմաթիվ կանայք և 500-ից ավելի տղամարդիկ։ Դժվար է պատկերացնել, որ նրանք կարող էին ստել և դրանով իսկ կանգնել դաժան մահով մեռնելու վտանգի առաջ։

Մի շարք գիտնականներ, որոնք նաև հավատացյալներ են, նույնպես հայտարարում են, որ հարության փաստը հաստատված է։ Եվ նա, ով չի ընդունում այն, լոկ այն պատճառով, որ ոչ թե հակառակ փաստեր ունի, այլ ներկայացնում է մեկ այլ հավատք, որը ժխտում է գերբնականը, մերժում և չի ընդունում ճշմարտությունը։ Հին և ժամանակակից շատ աղանդներ արդիականության դիմակով ներխուժում են Եկեղեցի՝ այն քանդելու նպատակով։ Մենք գիտենք, որ Քրիստոսի Եկեղեցին «Գնեալ արեամբն Քրիստոսի», բայց շատ աղանդներ, չընդունելով Քրիստոսի խաչելությունն ու հարությունը, դրանով իսկ քանդում են մարմինը՝ Եկեղեցին։ Եկեղեցին մեկն է, սուրբ է, առաքելական և ընդհանրական է։ Այն ձևավորվել է Քրիստոսի հարության լույսի ներքո և ընկած է մեղավորի արդարացման հիմքում (Հռովմ. Դ 25, Զ 4)։ Նրանից է բխում նաև վերջին դատաստանի համոզմունքը (Գործք ԺԷ 31, Եբր. ԺԳ 20)։

Հիսուս Քրիստոս ինքը բացահայտորեն խոսում է դրա մասին. «Ես եմ առաջինը և վերջինը և ողջը։ Ես մեռած էի և ահա կենդանի եմ հավիտյանս հավիտենից...»։

*ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏՔԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

19-րդ դարում Ռուսաստանում լույս տեսած հայագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայոց Եկեղեցու և հայերի հավատքի թեման բավականին զբաղեցրել է ռուս հեղինակներին: Ընդ որում, քննելով հայոց պատմությունը, ռուս հեղինակներն իրավացիորեն Հայոց Եկեղեցու պատմությունը համարում են այդ պատմության բաղկացուցիչ մասը:

Հայոց Եկեղեցուն և հայերի հավատքին նվիրված հրապարակումներում ռուս հեղինակներն առաջին հերթին ընդգծում են հայերի անսասան հավատարմությունը քրիստոնեական իրենց հավատին: Դեռևս 19-րդ դարի արշալույսին ռուս նշանավոր հայագետ Ս. Գլինկան[1] «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատության մեջ նշելով Հայ Եկեղեցու ծառայությունները, առանձնակի շեշտում էր նրա մշակութային ուղղվածությունը, որն, ի դեպ, ռուս հեղինակը համարում էր հայ ժողովրդի գոյատևման կարևոր նախապայման. «Հայաստանը հարուստ է նշանավոր գրողներով: Նրանք հմուտ էին բանասիրության բոլոր ճյուղերում, իսկ պատմիչների ստեղծած բազում տարեգրությունները սրբությամբ պահպանվում էին վանքերում... Ինչ զանձերի պետք է տիրանար մի երկիր, -գրում է նա,- որը գիտությունների ապաստարան էր անգամ այն ժամանակներում, երբ բռնության անողոք ձեռքն ամենուր հետապնդում էր նրան»[2]:

---

[1] Ծնթ. Հեղինակն այստեղ մանրամասն չի անդրադառնա խնդրի առնչությամբ Ս. Գլինկայի արտահայտած մտքերին, քանի որ դրանք ներկայացված են հեղինակի՝ մեր ամսագրում տպագրված առանձին հոդվածում: Տե՛ս «Էջմիածին», 2001, № Ա:

[2] Տե՛ս С. Н. Глинка, Обозрение истории армянского народа, М., 1832, ч.1, с. 4.

19-րդ դարի երեսնական թվականներին Մոսկվայում լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության տեսությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածուն» նշում էր, որ «հայերը հնուց ի վեր անհողդողդ են եղել քրիստոնեական իրենց հավատի հանդեպ և, որպես հաստատակամ խանդավառներ, մեծագույն համոզվածությամբ կարող են դառնալ Արևելքում քրիստոնեության տարածման մեր մերձավոր ու հավատարիմ զինակիցները»[3]: Հենց սկզբից կցանկանայինք մեկ ընդհանրացնող մասնավորում կատարել. 19-րդ դարի հայագիտական գրականության մեջ այս միտքը բավականին հաճախ է ընդգծվում: Հայաստանը դիտվել է որպես քրիստոնեության վերջին պատնեշն Արևելքում: «Հետաքրքիր և ուսանելի է նկատել, - գրում են ժողովածուի հեղինակները,- որ որտեղ էլ որ հայերը բնակություն են հաստատել՝ իրենց հայրենիքում, թե օտար ափերում, անմիջապես ձեռնարկել են եկեղեցիների կառուցումը և նրանց կից բացել են ուսումնարաններ, հիմնադրել ակադեմիաներ և ճեմարաններ»[4]:

Հայոց պատմությանը նվիրված ռուս հեղինակների ուսումնասիրություններում բավականին հաճախակի կարելի է հանդիպել հայկական եկեղեցիների ու վանքերի նկարագրություններին, որոնք որպես կանոն բերվում են ապացուցելու համար Հայ Եկեղեցու վաղնջականությունը հայերի՝ աշխարհում առաջինը քրիստոնեությունն ընդունած ժողովրդի իրողությունը: Ռուս հեղինակ Ն. Նեֆեդևը, օրինակ, նկարագրելով Էջմիածնի վանքը և ներկայացնելով նրա կառուցման մանրամասն պատմությունը, այնուհետև գրում է. «Անբացատրելի բարեհաճ զգացումով ես մտա այդ եկեղեցին: Ներսից այն բավականին ընդարձակ էր և ուներ գեղեցիկ գմբեթ»[5]: Վանքի նկարագրությանը զուգընթաց, Նեֆեդևը չի մոռանում նշել նաև հայերի՝ որպես աշխարհում առաջինը քրիստոնեությունն ընդունած ժողովրդի փաստը, ընդգծում հայերի նվիրվածությունն իրենց հավատին և եկեղեցուն. «Հայերը,- գրում է նա,- տարածված են աշխարհի բազում երկրներում, սակայն որտեղ էլ որ նրանք ապրում են, միավորված են իրենց ընդհանուր հավատի շուրջ»[6]:

Հայ Եկեղեցու և հայերի հավատքի մասին ուշագրավ մտքերի կարելի է հանդիպել ռուս նշանավոր ռազմական պատմաբան Վ. Պոտտոյի գրքում, որի բաժիններից մեկը կրում է «Արարատի երկիրը» խորագիրը: Ռուս պատմաբանն առանձնակի ընդգծում է հայերի՝ աշխարհում առաջինը քրիստոնեությունը պաշտոնապես ընդունելու փաստը. «Այս ժողովրդի առանձնահատկությունն այն է,- գրում է նա,- որ նույնիսկ օտար տիրապետությունների շրջանում նրանք պահպանեցին իրենց հավատը, լեզուն ու հոգևոր ընդգծված կերտվածքը, այն ժամանակ, երբ հարևան տե-

---

[3] Տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. II, с. 25.

[4] Նույն տեղում, մաս 3, էջ 19:

[5] Տե՛ս Н. Нефедьев, Взгляд на Армянскую область, СПб, 1839. с. 13.

[6] Նույն տեղում:

րությունները, որոնք ժամանակին տնօրինում էին աշխարհի ճակատագիրը. քաղաքական հզորության կորստի հետ միասին կորցրեցին նաև իրենց բարոյական ինքնատիպությունը և ձուլվեցին մյուս ազգերի հետ»[7]:

Ռուս հայագետ, պատմաբան Վ. Աբազայի «Հայոց պատմություն» աշխատությունում ևս անդրադարձներ կան Հայ Եկեղեցու պատմությանը, համառոտակի ներկայացված է Հայաստանում քրիստոնեության ընդունումը, եկեղեցական ժողովները, արարողությունները ու ծեսերը, հայոց հոգևոր տիտղոսները ու նշանավոր վանքերը: Ամենից ուշագրավը, սակայն, Աբազայի գրքի ավարտն է. «Բնական է,- գրում է նա,- հեթանոսական և մուսուլմանական բազմադարյան լուծը պետք է որ իր բացասական ազդեցությունը ունենար հայերի բարոյական կերպարի վրա, սակայն հայ ժողովրդին առավել բնութագրական են բնավորության լուսավոր կողմերը»[8]: Որպես ասվածի հաստատում, նա մեջ է բերում «Նովոյե վրեմյա» լրագրի 1887 թ. համարներից մեկում զետեղված Ի. Հախվերդովի[9] հոդվածից մի հատված. «Ներկայիս հայերի մասին պատկերացումները, - գրում էր հեղինակը, - գլխավորապես հիմնված են ճանապարհորդական նոթերի վրա, որոնք իրապես չգիտեն իսկական հային... հայրենիքի, ***սեփական հավատի ու ավանդույթների հանդեպ նվիրվածությունը հայերի մոտ պահպանվում է սրբությամբ*** / ընդգծումը՝ Հ.Հ./, իսկ բուն երկրի խորքերում՝ Զեյթունի, Վանի, Մուշի հայերի մոտ այն պահպանվում է կատարյալ մաքրությամբ»[10]:

Հայերի հավատի մասին ուշագրավ դատողություններ կան նաև Մագդա Նեյմանի «Հայերը» գրքում: Հրատարակվել է Ս. Պետերբուրգում 1899 թ.: Նեյմանն իր գիրքը սկսում է հայոց գրերի ստեղծման պատմությունով. «Ժողովուրդը, որը տիրապետում էր այդքան հարուստ լեզվի, - գրում է նա, - չէր կարող իր սրտին այդքան հոգեհարազատ Սուրբ գիրքը կարդալ անհասկանալի լեզվով: Հրատապ պահանջ էր զգացվում հայոց գրերի ստեղծման համար»[11]: Հեղինակն այստեղ կարևոր շեղում է կատարում. ներկայացնելով հայոց գրերի ստեղծման պատմությունը, Նեյմանը տողատակում ծանոթագրում է. «Եդեսիա. այժմյան Ուրֆան Հալեպի վիլայեթում: Թուրքերն այստեղ 1895 թ. ջարդեցին և կոտորեցին 10 հազարից ավելի հայերի»[12]: Գրքի ներածականում Նեյմանը հատուկ ընդգծում է հայ ժողովրդի կրքոտ

---

[7] Տե՛ս В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, СПб, 1885, с. 653.

[8] В. А. Абаза, История Армении, СПб, 1888, с. 119.

[9] 1885 թ. Մոսկվայում հրատարակվել էր Հ. Ա. Հախվերդովի «Հայաստանը հինգերորդ դարում» աշխատությունը, ուր համառոտ ներկայացված է հավատի համար հայերի մղած պատերազմները:

[10] Տե՛ս М. Нейман, Армяне. Краткий очерк их истории и современного положения, СПб, 1899, с.120:

[11] Նույն տեղում, էջ 6-7:

[12] Նույն տեղում:

հավատասիրությունը. «Բոլոր ժողովուրդներից հայերն առաջինն ընդունեցին Քրիստոսի ուսմունքը: ...Սուրբ Գրիգորից սկսած, քրիստոնեությունն անդարձ հաստատվեց Հայաստանում և ո՛չ քաղաքական ցնցումները, և ո՛չ էլ հեթանոսների ու մահմեդականների դաժան հալածանքները չկարողացան նրանց ետ պահել իրենց հավատից: Հայերը հավատարիմ մնացին իրենց հավատին և քայլ անգամ չնահանջեցին»[13]:

Գրքի երկրորդ մասը հեղինակը վերնագրել է այսպես. «Քննադատական դիտողություններ հայ ժողովրդի պատմության»: Նյութն այն սկսում է Հայաստանի աշխարհագրական դիրքի բնորոշումից, որը թերևս հեռու չէ տրամաբանությունից. «Ավելի վատթար աշխարհագրական դիրք, որն ունեցել է Հայաստանը, հազիվ թե ունենա աշխարհում մեկ այլ երկիր: Բոլոր կողմերից բնական խոչընդոտների բացակայության պատճառով այն դարձել է Արևմուտքի և Արևելքի բախման գլխավոր թատերաբեմ... Այդ միջավայրը Հայաստանը զբաղեցրեց իր գոյության ողջ ընթացքում, ավելի քան չորս հազարամյակ»[14]: Քննելով հայոց պատմության հարցերը, նա մասնավորապես նշում է, որ հիմնելով թագավորական չորս դինաստիաներ և նրանց կորստից հետո «ենթարկվելով ճակատագրի դաժան խաղերին ու նվաճողների հալածանքներին, հայերն, այնուհանդերձ, չանհետացան և հաստատուն մնացին իրենց նախնիների հողում, *պահպանեցին հավատը, լեզուն, ավանդույթներն ու նահապետական կենցաղը. երևույթ, որը հազվադեպ է պատահում մարդկության պատմության մեջ*» (ընդգծումը՝ Հ.Հ.)»[15]:

Որքան էլ տարակուսելի էր, Հայ Եկեղեցու պատմությանը և հայերի դավանած հավատի մասին ուշագրավ մտքերի կարելի է հանդիպել ռուս բարձրաստիճան սպաների հուշագրություններում և կովկասյան պատերազմներին նվիրված աշխատություններում: Դրանցից է, օրինակ, ռուսական բանակի գեներալ, Ղրիմի պատերազմի կովկասյան ճակատի երևանյան ջոկատներից մեկի հրամանատար Մ. Լիխուտինի «Ռուսները Ասիական Թուրքիայում 1854-1855 թթ.» աշխատությունը: Գրքում բավականին մանրամասն, և որ կարևոր է, մեծ գնահատանքով են ներկայացված հայկական եկեղեցիները ու ճարտարապետական հուշարձանները: Այս քաղվածքում, օրինակ, Սուրբ Հովհաննեսի նկարագրությունն է. «Վանքը հիմնադրվել է Գրիգոր Լուսավորչի կողմից... Այն բավականին ընդարձակ էր և վեհաշուք... Վերևում խաչն էր, ինչպես մեր շատ եկեղեցիներում է: Պատերը բավականին հաստ էին, որոնց կենտրոնում գտնվում էր քարապատ գմբեթը: Հատակը և աստիճանները քարից էին, որոնց վրա հստակորեն երևում էր դարերի դրոշմը... Քրդերը և թուրքերը կարծում են, թե նրա պատերի մեջ հայերը թաքցրել են իրենց հարս-

[13] Նույն տեղում, էջ 5:

[14] Նույն տեղում, էջ 62-63:

[15] Նույն տեղում, էջ 62:

տությունը և բավականին նկրտումներ ունեն վանքի հանդեպ...»[16]: Ռուս հեղինակին կարծես թե զարմացրել էր այն իրողությունը, երբ հայ հոգևորականությունը և տեղի ավագանին համոզել էին նրանց «մնալու այս տարածքներում և նույնիսկ առաջարկում էին գրավել ողջ Ալաշկերտի սանջակը, որից հետո մենք այլևս հացահատիկի, գարու և անասնակերի կարիք չենք ունենա... Նրանք վախենում էին,-գրում է Լիխուտինը,- որ մեր հեռացումից հետո իրենց դրությունն ավելի կծանրանա, և որ թուրքերը վերժխնդիր կլինեն և քրդերին կրկին կհրահրեն իրենց թալանելու...»[17]: Եվ թեպետ ռուս գեներալի «միամտությունն» ինչ-որ տեղ կարելի էր հասկանալ, սակայն մյուս կողմից չես ասի, թե հարցի էությունը չի ըմբռնել. «...չի բացառվում, որ այդ թալանը կարող է կոտորածով ավարտվել[18]: ...Սուրբ Հովհաննեսի զանձերը երկու պահապանի ուղեկցությամբ մենք ուղարկեցինք Էջմիածին: Վանքում մնացին միայն վանահայրը և երեք սպասավորներ, որոնք մեզ հաղորդեցին, որ իրենք, որպես քրիստոնյաներ, պարտավոր են մնալ Աստծո տաճարում և նույնիսկ դառնալու այս սրբատեղու զոհերը, եթե Աստված այդպես կամենա...»[19]:

Ռուս հեղինակը հստակ դատողություններ է կատարել հայոց պատմությունից, որոնք բնութագրական են և ընդունելի. «Հայոց թագավորությունը ժամանակին տարածվել է Թավրիզից մինչև Էրզրում, Վանից մինչև Վրաստան... Վայրենի հորդաները և անընդհատ երկրաշարժերը հայոց թագավորության կործանման պատճառ են դարձել: Բազում քաղաքներ ավերվեցին, իսկ նրանց բնակչությունը ոչնչացվեց: Հայերի մեծ մասը ստիպված թողեց իր հայրենիքը և տարացրվեց եվրոպական և ասիական երկրներ, որտեղ նրանք կարող էին ազատ առևտուր կատարել և անվտանգ ապրել: Հայոց լեզուն և կրոնը դարձան նրանց միավորման միակ միջոցը, իսկ Էջմիածինը դարձավ նրանց հոգևոր կենտրոնը, որը միաժամանակ և հայության կենտրոնն է: Հայոց լեզվի և քրիստոնեական հավատի շնորհիվ հազարամյակների ընթացքում պահպանվեց ազգայինն ու մշակույթը»[20]: Լիխուտինը նույնիսկ չի թաքցնում, որ այդ հանգամանքն այստեղի «որոշ հայերի շրջանում արմատացրել է հայոց թագավորության անկախությունն ու ինքնուրույնությունը վերականգնելու

---

[16] Տե՛ս М. Ликутин, Русские в Азиатской Турции в 1854-1855 гг. СПб, 1863, с.164: Այսօր արդեն հաստատապես կարելի է արձանագրել, որ ռուս հեղինակի «անհանգստությունն ի կատար է ածվել»: 2000 թ. ամռանը Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի առաջնորդությամբ Սուրբ Հովհաննես կատարած ուխտագնացության ժամանակ մենք կարողացանք միայն նշմարել նրա «հաստ» պատերը: ՉԿԱ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍԸ: Իսկ քրդերը, որոնք խմբվել էին մեր շուրջը, անհասկանալի հայացքներով ուղեկցում էին մեզ, կարծես թե ոչինչ չէր եղել...

[17] Նույն տեղում, էջ 165-166:

[18] Նույն տեղում, էջ 166:

[19] Նույն տեղում, էջ 167:

[20] Նույն տեղում, էջ 267-268:

գաղափարը»[21]: Խորանալով հայոց պատմության մանրամասների մեջ, ռուս գեներալը միաժամանակ իրավացիորեն նկատում է, որ նրանում հերոսականն ու կործանածի զգացումը կողք-կողքի համատեղում են: Խորհրդածելով այդ հարցերի շուրջ, Լիխուտինը գրում է. «Հայոց թագավորության անկման ու նրա ժողովրդի մի մասի ոչնչացման հանգամանքները ուղղակի շշմեցուցիչ են և ակամայից յուրաքանչյուրի մոտ անթաքույց հետաքրքրություն են առաջացնում. ինչպե՞ս կարող էր այդ ժողովուրդն այս աստիճան խղճուկ վիճակի հասնել: Մի՞թե վայրենի հորդաները կարող էին այդպես անպատիժ ոչնչացնել այս ժողովրդին, որոնք միալեզու են եղել և գրավել այդքան հսկայական տարածք: Եթե այդ ժողովուրդը միավորվել կարողանար և պատրաստ լիներ դիմագրավելու թշնամուն... Ես այնքան էլ գիտակ չեմ հայոց պատմությունից, որպեսզի կարողանամ պատասխան տալ այս հարցերին, - շարունակում է Լիխուտինը:- Էջմիածնում այս հարցերի շուրջ շատ գիտնականների և հոգևորականների հետ խորհրդակցեցի... Նրանք ինձ բացատրեցին, որ դրա պատճառը հին հայկական պետության մասնատվածությունն է եղել և միմյանց դեմ հաճախակի դարձած երկպառակտիչ կռիվները, որոնցով այնքան հարուստ է հայոց միջնադարյան պատմությունը: Եվ մի՞թե կարելի էր այդպիսի պահվածք ցուցաբերել և մոռանալ, որ իրենք գտնվում են բարբարոսական աշխարհի սահմանագծին: Հայոց շատ նախարարական տներ կենտրոնական իշխանության դեմ իրենց գործողություններում բավականին բացահայտ են եղել և եթե զենքի ուժով չի հաջողվել, նրանք նույնիսկ իրենց մոտ են հրավիրել օտար ժողովուրդների»[22]: Թեպետ Լիխուտինը փոքր-ինչ չափազանցնում է, սակայն ռուս հեղինակին հայոց պատմությունից անտեղյակության մեջ չես մեղադրի:

Հայերի՝ քրիստոնեական իրենց հավատի հանդեպ նվիրվածությունն է շեշտում նաև ռուս պատմաբան Ի. Գոլոբորոդկոն. հեղինակը հայ ժողովրդին համեմատելով տարածաշրջանի հին ու նոր ժողովուրդների հետ, գրում է. «Հայերն Ասիական Թուրքիայի ամենից ավելի մշակութային տարրն են: Երբ օսմանյան տիրապետության հետևանքով շատ ժողովուրդներ կանգ առան իրենց զարգացման մեջ, երբ անձը, գիտությունն ու ազատությունը մտան արգելված հասկացությունների շարքը և անողոքաբար արմատախիլ արվեցին, հայերն այդ պայմաններում նույնիսկ պահպանեցին թե՛ իրենց հավատը, թե՛ ազատ մտածողությունը, և թե՛ ստեղծագործական ոգին: Նրանք միաժամանակ ամուր կապ պահպանեցին եվրոպական մշակույթի հետ, դարձան նրա տարածողները մուսուլմանական տարածքներում»[23]: Ռուս հեղինակն այնուհետև շարունակում է. «Երբեմն զարմանում ես, թե ինչպես է այդ

---

[21] Նույն տեղում, էջ 268:

[22] Նույն տեղում, էջ 268-269:

[23] Տե՛ս И. И. Голобородько, Турция, М., 1908 г., с. 221.

ամենը հաջորդվել հայերին, որոնք թեկուզ արդեն բավականին ժամանակ է, ինչ կորցրել են քաղաքական անկախությունը, սակայն այսքան դարերի ընթացքում կարողացել են պահպանել իրենց ազգային հոգևոր առանձնահատկությունը: Այս առեղծվածը, - գրում է Գոլովորոդկոն, - պետք է փնտրել հայ ժողովրդի պատմական հարուստ անցյալի մեջ: Այստեղ Անիի խորհրդավոր ավերակներն են, կիսաավերված եկեղեցիներն ու վանքերը, հուշարձաններ, որոնք հայերի ազգային ինքնատիպության լուռ վկաներն են»[24]:

19-րդ դարի կեսերին լույս տեսավ Հաքսհաուզենի «Անդրկովկասի մարզ» գիրքը, որը գերմաներենից ռուսերեն է թարգմանվել Ներսես Կաթողիկոս Աշտարակեցու ջանքերով ու հովանավորությամբ: Գրքի առաջին էջում Աշտարակեցու նամակն է հեղինակին, ուր հայոց կաթողիկոսն իր գոհունակությունն էր հայտնում «փառավոր ու արժանահավատ այն տեղեկությունների համար», որոնք վերաբերում են կովկասյան մարզերին և նրա բնակիչներին. «Ես ինքս, -գրում էր Աշտարակեցին,- ծնվել եմ Հայաստանում, շատ բան եմ տեսել ու լսել և հաճախ ակամայից զարմացել եվրոպական ճանապարհորդների նկարագրություններից: Չունենալով հաստատուն գիտելիքներ, նրանք խոսում են ամեն ինչի մասին և դրանով տարակուսանքի մեջ գցում մարդկանց: Շատերն էլ սխալ տեղեկություններ են հաղորդում այդ երկրների մասին: Դուք, բարոն, - շարունակում է Կաթողիկոսը, - ձգտել եք հասնել ճշմարտին, ցանկացել եք տեղեկանալ նրանց մասին հանգամանորեն և հիմնովին, ուստի ես սուրբ պարտականություն համարեցի հոգեպես շնորհապարտ լինելու Ձեզ»[25]:

Ներածականում Հաքսհաուզենը գրում է. «Հրեաներից, հին երկրներից և Եգիպտոսից հետո, համաշխարհային պատմության մեջ հազիվ թե գտնվի երկիր, որը կարողացել է մարդկային ցեղի մասին այդքան կարևոր տեղեկություններ պահպանել, որքան այն երկրում, որն ընկած է Սև և Կասպից ծովերի միջև և հասնում է մինչև Արարատ լեռը... Այս տեսակետից առավել քան հետաքրքրություն է ներկայացնում մի երկիր, որը գտնվում է գլխավոր մայրուղիների խաչմերուկում, և որի վրայով էին հնում կատարվում ժողովուրդների մեծ տեղաշարժեր: Ինչպես վկայում է ավանդությունը, այստեղ է ընկել բռնակալ Բելը... այստեղ է առաջին անգամ հաջողությամբ քրիստոնեությունը քարոզել Սուրբ Գրիգորը»[26]:

Հաքսհաուզենը բարձր որակներով է բնութագրում հայ ժողովրդին. «Իմ կարծիքով, - գրում է նա, - հայերը կանգնած են զարգացման բարձր աստիճանի վրա, քանի որ հոգևոր որակների մեջ է նրանց ապագայի կոչումը՝ դառնալու Ասիայի և Եվրոպայի միջև համագործակցության օղակը: Հայերի մոտ հատկապես ուժեղ է ազ-

[24] Նույն տեղում:

[25] Տե՛ս Гакстгаузен, Закавказский край, СПб, 1857, с.7.

[26] Նույն տեղում, էջ I-II:

ցային ներքին կապը, *իսկ հավատի հանդեպ նվիրվածությունը՝ ազգայինի հզոր ակիզբը* /ընդգծումը՝ Հ.Հ./ : Հայերն, անկասկած, առավելություն ունեն իսկական հայրենիքի ու հողի մասին իրենց պատկերացումներում: Ինձ հայտնի չէ մեկ այլ ժողովուրդ, - հաստատում է հեղինակը, - որում ընտանեկան կապերն այդքան ամուր լինեն, որքան հայերի մոտ է»[27]:

Հայ Եկեղեցու պատմությանն է նվիրված Ալեքսանդր Աննինսկու աշխատությունը, որն այդպես էլ վերնագրված է «Հայ Եկեղեցու պատմություն»: Այն հրատարակվել է 1900 թվականին՝ Ռուսաստանի բարձրագույն սինոդի որոշմամբ: Հայ Եկեղեցու պատմությանն անդրադառնալու շարժառիթը հեղինակը բացատրում է հետևյալ կերպ. «Մինչև ներկա ժամանակները, - գրում է նա, - ո՛չ ռուս, և ո՛չ էլ օտար գրականության մեջ ամբողջական ձևով ներկայացված չէ Հայ Եկեղեցու պատմությունը, մինչդեռ նրա պատմության և գիտական մշակման անհրաժեշտությունը մեզանում, անկասկած, կա: Հայ Եկեղեցին, - շարունակում է Աննինսկին,- ներկայումս իրենից յուրահատուկ մի երևույթ է ներկայացնում քրիստոնեական աշխարհում»[28]: Գրքում Աննինսկին փորձ է անում ներկայացնել Հայ Եկեղեցու պատմության կարևորագույն փուլերը և այն հասցնում է մինչև 19-րդ դարը: Ինչպես երևում է հեղինակի պնդումներից, նա իր առջև ընդարձակ խնդիրներ չի դրել: Հետազոտողի նպատակն է եղել ի մի բերել հավաքած նյութերը և ուժերի ներածին չափով լուսաբանել դրանք: Ընդ որում, հեղինակը գրում է, որ իր գիրքն ուղղված չէ հայ հոգևորականությանը, քանի որ նրանց համար Հայ Եկեղեցու պատմության մանրամասները նորություն չեն ներկայացնում: Աննինսկին ընտրել և մեկնաբանել է Հայ Եկեղեցու պատմության հատկապես այն հատվածները, որոնք համաքրիստոնեական նշանակություն ունեն[29]:

Հեղինակը Հայ Եկեղեցու պատմությունը բաժանում է հինգ ժամանակահատվածների՝ քրիստոնեության ընդունման ժամանակներից սկսած մինչև 18-րդ դարի ավարտը: Գրքում ժամանակագրական կարգով ներկայացված են Հայ Եկեղեցու պատմության կարևոր ու նշանավոր դրվագները, հայոց կաթողիկոսները: Ընդ որում, Հայ Եկեղեցու պատմությունը հեղինակը ներկայացնում է հայոց պատմությանը զուգահեռ: Այդ հնարավորությունը նրան տալիս են օգտագործված բազում հայկական սկզբնաղբյուրները, որոնք արդեն լույս էին տեսել ռուսերեն և օտար լեզուներով:

Ռուս հեղինակ Ա. Գերյեն ևս, քննարկելով Հայ Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում, անվերապահորեն ընդգծում է նրա ազգանպաստ գործունեությունը հոգևոր արժեքների պահպանության խնդրում. «Դա բավականին ուշագրավ գիծ է

---

[27] Նույն տեղում, էջ 188-189:

[28] Տե՛ս Ал. Аннинский, История армянской церкви, Кишинев, 1900, с. VI:

[29] Նույն տեղում, էջ VIII:

հայ ժողովրդի կյանքում և Հայ Եկեղեցու մշակութային դերի էական արգասիքն է, - գրում է նա: -Հայոց պետականության վերացումից հետո նա է իր վրա վերցրել հայ ժողովրդին հավաքելու և նրա միասնությունը պահպանելու գործը»[30]:

Հայ Եկեղեցու և հայերի հավատի հանդեպ ունեցած նվիրվածության մասին ուշագրավ հրապարակումների կարելի է հանդիպել նաև ժամանակի ռուսական մամուլում: Այսպես, «Московские ведомости» պարբերականի մի հրապարակման մեջ, որը բերված է «Հայ ժողովրդի պատմության տեսությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածուի» մեջ, հանգամանորեն խոսվում է հայերի հավատի ու Հայ Եկեղեցու մասին, առանձնակի ընդգծվում հայ ժողովրդի նվիրվածությունն իր արմատներին ու նահապետական օրենքներին, «որոնք,- ինչպես գրում են գրքի հեղինակները,- հայերը սրբությամբ են պահպանում: Երիտասարդները մեծ հարգանք են տածում ավագների հանդեպ, որը հիշեցնում է Աբրահամի և Հակոբի նահապետական ժամանակները»[31]:

«Кавказ» թերթի 1855 թ. համարներից մեկում մենք հանդիպեցինք Ի. Իվանովի «Հայերի կրոնական պատերազմը զրադաշտականության դեմ» ուշագրավ հրապարակմանը: «Հեթանոսական աշխարհը,- գրում է նա,- դեռ նոր-նոր էր սկսում մահանալ Արևմուտքում, երբ Արևելքում այդ ժամանակ քրիստոնեությունն, ի դեմս զրադաշտականության, արդեն ուներ իր թշնամին: Պարսիկները ցանկանում էին ոչնչացնել նոր կրոնը, որն ուժգնորեն մտնենում էր իրենց սահմաններին»[32]: Ներկայացնելով քրիստոնեական հավատի համար հայ ժողովրդի կրած տառապանքները, հեղինակն այնուհետև գրում է. «Քրիստոնեությունն այնքան ամուր էր հայոց երկրում, որ այն սասանելն անհնար էր»[33]: Որպես ասվածի հավաստում, Իվանովը հանգամանորեն նկարագրում է Վարդանանց պատերազմում հայերի հերոսական դիմադրության ուշագրավ դրվագները:Նույն թերթի 1853 թ. հունվարյան համարներում Ի. Եվլախովի հոդվածաշարն է՝ «Հայաստանը հինգերորդ դարում և սպարապետ Վահան Մամիկոնյանը» վերնագրով: Հեղինակը հայ պատմիչների, գլխավորապես Փարպեցու տեղեկությունների հիման վրա ներկայացնում է Վարդան և Վահան Մամիկոնյանների գլխավորած ազատագրական շարժումների հերոսական դրվագները՝ առավելապես շեշտելով հավատի համար պայքարի հանգամանքը. «Հազկերտի գահակալությունը խորը վերքեր թողեց թալանված, ավերված ու ուժասպառ եղած Հայաստանին: Սակայն հայերը,- գրում է Եվլախովը,- որոնք թեև քաղաքականապես հարստահարված էին, հոգով արիացան և անսասան դարձան իրենց սուրբ հավատի հանդեպ: Շատ փորձություններ տարան նրանք Հազկերտի

[30] Նույն տեղում:

[31] Տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. III, с. 25.

[32] «Кавказ», 1855. № 33, էջ 136:

[33] Նույն տեղում:

բռնատիրությունից, սակայն Փրկչի աստվածային ուսմունքի լույսը նրանց սրտերում չհանգավ»[34]: Հեղինակն առանձնակի ընդգծում է, որ հավատի համար մղած երկարատև պայքարից «Հայաստանը դուրս եկավ հաղթանակած, և հայերը պետք է հպարտանան իրենց նշանավոր զորավարներով, խորաթափանց քաղաքագետներով ու մեծ հայրենասերներով: Նրանց շնորհիվ ամրապնդվեց հայրենիքի անվտանգությունը, բարձրացավ ժողովրդական ոգին, որը հարգանքի արժանացավ նաև հարևան ժողովուրդների կողմից»[35]:

Ուշագրավ են նաև «Кавказ»-ում զետեղված Ա. Գրենի երկու հոդվածները՝ «Հազկերտ Երկրորդը և հայերը» վերնագրով: Այս հոդվածի լույս ընծայումը՝ այն էլ դարավերջին, մեր կարծիքով պատահական չի եղել. հեղինակը մեկ անգամ ևս հիշեցնում է ընթերցողներին, թե ինչպիսի արհավիրքների է դիմակայել հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում: Ա. Գրենն ընթերցողին հասցնելով Վարդանանց պատերազմի խորհուրդը, նշում է հայերի՝ հավատի ու անկախության համար պայքարի պատրաստակամությունն ու հաստատակամությունը: Հոդվածի վերջում Ա. Գրենն ամփոփելով իր մտքերը, գրում է. «Հայոց բազմադարյան պատմության մի դրվագի ներկայացումով ես փորձեցի ցույց տալ, որ հայ ժողովուրդը մշտապես աչքի է ընկել իր համառ ու անկախասեր բնութագրով: Հուսով եմ, -շարունակում է հեղինակը,- որ այն առավել քան կհետաքրքրի ռուս ընթերցողներին և հնարավորություն կտա շատերին դատելու, թե ինչումն է կայանում հայ ազգի յուրահատկությունը և կազատի նրան ամեն տեսակ մեղադրանքներից ու կշտամբանքից, որոնք վերջերս այդքան հաճախակի են դարձել ռուս հասարակայնության շրջանում»[36]:

Հարկ է նշել, որ Վարդանանց պատերազմի թեման բավականին հաճախ է արծարծվել ռուսական մամուլում, որոնցում, որպես կանոն, ազատագրական այդ ձգտումներն անպայմանորեն զուգակցվել են հայերի՝ հավատի հանդեպ ունեցած մեծ նվիրվածության գաղափարի հետ: Հարկ է նշել նաև, որ այս առումով հատկապես առանձնանում էին «Кавказ» թերթում զետեղված հրապարակումները: Այսպես, թերթում զետեղված հոդվածներից մեկում հրապարակման հեղինակը Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը ներկայացնելով հայոց պատմությանը համընթաց, միաժամանակ պատմում է, թե ինչ ճիգերի գնով են հայերը կարողացել պահպանել իրենց հավատը՝ ենթարկվելով թուրքերի և պարսիկների անսանձ հալածանքներին[37]: Թերթի 1854 թ. համարներում ֆրանսիացի հայագետ Էդ. Դյուլորիեն հանդես էր եկել «Հայերը 1854 թ.» հոդվածաշարով, ուր հեղինակը բազում

---

[34] Նույն տեղում, 1853, № 24, էջ 100:

[35] Նույն տեղում, № 27, էջ 114:

[36] Նույն տեղում, 1896,№ 27, էջ 114:

[37] Նույն տեղում, 1857, № 17, 19, 21:

ատումներով անդրադառնում է նաև Հայ Եկեղեցու պատմության կարևորագույն անցքերին և բարձր գնահատում նրա խաղացած դերը հայ ժողովրդի ազգապահպանման խնդրում. «Հայերն արիությամբ են տարել իրենց բաժին հասած արհավիրքները, որն, անշուշտ, գալիս էր քրիստոնեական հավատի հանդեպ ունեցած մեծ զգացումից»[38],- գրում է նա: Այդպիսին էր նաև Դ. Մելիքովի հոդվածը, ուր հեղինակը, մանրամասն ու հանգամանորեն ներկայացնելով Վարդանանց պատերազմի խորհուրդը, անպայմանորեն ընդգծում է՝ իրենց հավատի ու հայրենիքի հանդեպ ունեցած հայ ժողովրդի մեծ նվիրվածությունը[39]: Ճիշտ է, հոդվածում քիչ են հեղինակի միջամտությունները, սակայն առավել քան ընդգծված են Եղիշե պատմիչի գրքի հերոսական դրվագները: «Թիֆլիսի տեղեկագիր» թերթի 1832 թվականի համարներից մեկում զետեղված հոդվածը պատմում է հայերի՝ քրիստոնեության ընդունման մասին, անդրադարձ կատարում Վարդանանց պատերազմին, ընդգծում հայերի նվիրվածությունն իրենց Եկեղեցուն ու հավատին[40]:

Մեզ համար հաճելի անակնկալ էր «Отечественные записки» ամսագրում հանդիպել Եղիշեի գրքի ռուսերեն թարգմանության առթիվ զետեղված հաղորդագրությանը՝ «Նոր գրքեր» խորագրի տակ: Անակնկալ էր, քանի որ ռուսական նման ծանրակշիռ ամսագրում հազվադեպ կարելի է հանդիպել հայոց պատմությանը նվիրված հրապարակումներ: Հաղորդագրությունը սկսվում է ուշագրավ ներածականով. «Քրիստոնյա ժողովուրդներից քչերին հաջողվեց առանց սուրը մերկացնելու պահպանել իրենց հավատը: Հավատի համար պատերազմների դարաշրջանը, որի ընթացքում փառավորվեցին շատ ժողովուրդներ, վերաբերում է նաև հայերին, ժողովուրդ, որի համար այդ պայքարը վերածվեց կենաց-մահու կռվի: Հայաստանի համար այդ պայքարն այնքան ծանր ու դժվարին էր, որ պատմությունը չի կարող լռության մատնել այդ իրադարձությունը»[41]: Իր ընթերցողին ներկայացնելով Վարդանանց պատերազմի խորհուրդն ու իմաստը, հանդեսը միաժամանակ հետևյալ խորհրդածությունն է կատարում Հայաստանի անցած պատմական ուղու շուրջ. «Իր աշխարհագրական դիրքի պատճառով կտրված լինելով քրիստոնյա հզոր տերություններից և բոլոր կողմերից շրջապատված լինելով սկզբում հեթանոսական, իսկ այնուհետև մուսուլմանական երկրներով, Հայաստանը մշտապես եղել է իր այլադավան հարևանների զոհը: Ուստի չպետք է զարմանալ, որ նմանօրինակ արյունահեղ իրադարձություններով հանդերձ,- շարունակում է ամսագիրը,- հայերի մոտ երբեք չի մարել քրիստոնեական հավատի հանդեպ նվիրվածությունը»[42]:

---

[38] Նույն տեղում, 1854, № 54, էջ 336:

[39] Նույն տեղում, 1854, № 64, էջ 376:

[40] Տե՛ս «Тифлисские ведомости», 1832, № 5,6.

[41] «Отечественные записки», 1853, т.89, с. 113.

[42] Նույն տեղում:

Ըստ արժանվույն գնահատելով Եղիշե պատմիչի գործը, հանդեսն առաջին հերթին նշում է նրա համաշխարհային նշանակությունը. «Որպես պատմական նյութ, գրքի լույս ընծայումը խիստ կարևոր է: Հայաստանի պատմությունը մեզանում գրեթե անհայտ է, մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, աշխարհագրական իր աննպաստ դիրքի պատճառով, նա մշտապես բախման մեջ է եղել համաշխարհային պատմությունը կերտողների հետ և այդ պատմության իմացությունը կարող է լրացնել մեզ հայտնի շատ իրադարձություններ: Ավելին, մի ժողովրդի ճակատագիր, որն այդքան փորձություններից հետո կարողացել է պահպանել իր հավատը, լեզուն ու ազգայինը, ինքնին մեզ զրկում է անտարբեր վերաբերմունքից»[43]:

Անակնկալ էր նաև «Военный сборник» ամսագրում զետեղված «Из походного дневника» հուշագրությունը՝ Եսաու ստորագրությամբ: Հուշերում հատկապես աչքի են ընկնում այն հատվածները, որոնցում ռուս սպան պատմում է իրենց ճանապարհին ընկած Հայաստանի հինավուրց քաղաքների ու բերդ-ամրոցների մասին. «Քաղաքի ավերակներից (խոսքը Շիրակավանի մասին է՝ Հ.Հ) կարելի էր կռահել, որ ժամանակին այն մեծ քաղաք է եղել. ասում են, որ հասակակից է Անիին և նույնիսկ ավելի հին է: Այժմ նրանից մնացել է միայն կիսավեր եկեղեցին: Նրանում քաղաքակրթության կնիքն է, թեպետ հստակ երևում են նաև վանդալիզմի և ֆանատիզմի հետքերը... Ի՞նչ է մնացել հայոց այս հինավուրց մայրաքաղաքից, որն, ինչպես պատմում են այստեղ, ունեցել է քառասուն վերստ շրջագիծ: Եվ որքան վեհաշուք է այս եկեղեցին, նույնիսկ իր ավերակ վիճակում... Թիֆլիսում նույնիսկ ես այսպիսի եկեղեցի չեմ տեսել: Թեև գմբեթն ավերված է, սակայն պատերը և ներսի սյուները դեռևս կանգուն են: Հայ պատմաբանները մասամբ դա վերագրում են հաճախակի երկրաշարժերին, սակայն հայտնի է նաև, որ Մահմուդ Երկրորդի հրամանով քանդման է արժանացել նաև այս եկեղեցու գմբեթը: ...Ներսում փորագրված հայկական արձանագրություններ են, որոնք բավականին լավ են պահպանված: Մեզ ուղեկցող հայ Բաքկենի հետ երկար տանջվեցինք՝ ինչ-որ կերպ հասկանալու համար նրանցից մեկի իմաստը»[44]: Վիմական այդ արձանագրությունն այնքան էր հետաքրքրել ռուս սպային, որ ի տես ընթերցողի նա հատուկ թարգմանել էր տվել այն և զետեղել... իր հուշերում:

Ռուսական մամուլում բազմաթիվ հրապարակումների կարելի է հանդիպել, որոնք անմիջականորեն նվիրված են Հայ Եկեղեցուն և նրա պատմությանը: Դրանք հիմնականում հանրամատչելի բնույթի հրապարակումներ են և ռուս ընթերցողին ծանոթացնում են Հայ Եկեղեցու ներքին կանոնների ու եկեղեցական կյանքի հետ: Այդ բնույթի հետաքրքիր հոդվածներ է զետեղել «Журнал министерства внутренних дел» ամսագիրը՝ «Հայ-Գրիգորյանական եկեղեցին» խորագրով: Դրանցից

[43] Նույն տեղում,, էջ 115:

[44] «Военный сборник», 1860, գիրք 5, էջ 154-155:

մեկում, օրինակ, համառոտ տեղեկություններ է հաղորդվում հայերի ծագման մասին, ներկայացվում են անկախության համար հայ ժողովրդի մղած պայքարը և օտար տիրապետության ծանր հետևանքները: Ներկայացնելով Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմությունը, ամսագիրն այնուհետև ընդգծում է. «Բազում ժողովուրդների թվում, որոնք այժմ միացված են Ռուսական կայսրությանը որպես մեկ մարմին, կա մի հնագույն, կարելի է ասել՝ նախաստեղծ ժողովրդի հետքերից մի բեկոր, որը հայտնի է հայ ժողովուրդ անունով: Չնայած բազում հալածանքներին, այս ժողովուրդը պահել և մինչ օրս շարունակում է պահպանել ազգային իր առանձնահատկությունները: Սփռված լինելով աշխարհով մեկ, նրանք ամենուր իրենց հերոսների աճյունների, ավերված քաղաքների ու պատմության հետ են, իսկ հավատի հանդեպ ունեցած նրանց սերը բացառություն է կազմում քրիստոնեական աշխարհում, հատուկ մի Եկեղեցի, որը կոչվում է Հայ Առաքելական»[45]:

Ռուսական մամուլում քիչ չեն նաև հայոց կաթողիկոսներին նվիրված հրապարակումները: Այդպիսի մի ուշագրավ հրապարակում զետեղված է «Правительственный вестник» պարբերականի 1895 թ. համարներից մեկում, որն արտատպված էր «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» նշանավոր ժողովածուում: Հոդվածն այդպես էլ վերնագրված էր՝ «Հայոց կաթողիկոսները»: Համառոտ ներկայացնելով Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմությունը, հեղինակն այնուհետև գրում է. «Հայկական Եկեղեցին քրիստոնեական հնագույն Եկեղեցիներից է... Հայերի շրջանում Գրիգոր Լուսավորչի հանդեպ սերն ու համակրանքը այնքան մեծ էր, որ քրիստոնեության ընդունման սկզբնական շրջանում կաթողիկոսներն ընտրվում էին բացառապես Լուսավորչի տոհմից...»[46]: Մանրամասն ներկայացնելով հայոց կաթողիկոսների ընտրակարգը, թերթն այնուհետև անդրադառնում է պետական շինարարության գործում Հայ Եկեղեցու խաղացած դերի գնահատությանը. «Թագավորական իշխանության և հայոց կաթողիկոսների միջև հարաբերությունները ձևավորվել էին դեռևս քրիստոնեության ընդունման առաջին տարիներին,- գրում էր թերթը: Հայոց կաթողիկոսները վճռական և կարևոր մասնակցություն են ունեցել թագավորական գործերում և հաշտարարի դեր կատարել ինչպես հայոց թագավորի և նախարարների, այնպես էլ նախարարների միջև ծագած տարաձայնությունները հարթելու խնդրում: Նրանք բազմիցս ընդվզել են բյուզանդական կայսրերի, արաբական խալիֆների, պարսից շահերի ու թուրքական սուլթանների դեմ, երբ հայրենի երկրի ազատությունն ու անկախությունը վտանգի տակ է եղել: Հայոց Եկեղեցին մշտապես եղել է հայ ժողովրդի կամքի և նրա զգացումների արտահայտիչը: Պետականությունից զրկված տարիներին երկրի ճակատագիրը վճռող կարևորագույն բոլոր փաստաթղթերը ստորագրվել են հայոց կաթողիկոսի

[45] Տե՛ս Журнал МВД, 1843, № 3, стр. 187-188.

[46] Տե՛ս Братская помощь пострадавшим в Турции армянам, 2-издание. М., 1898. с. 385-386.

ձեռքով ու նրա օրհնությամբ»[47]: Որքանով նկատում ենք, ռուս պարբերականը Հայոց Եկեղեցու գնահատության խնդրում միանգամայն իրավացի տեսակետ և դատողություններ է հայտնել: Ուշագրավ է նաև, որ ռուս պարբերականը Հայոց Եկեղեցուն կարևոր տեղ և դեր է հատկացնում ընդհանուր տարածաշրջանային իմաստով. «Նկատի ունենալով Հայոց Եկեղեցու և նրա կաթողիկոսների քաղաքական կարևոր նշանակությունը Կովկասի և ընդհանրապես Անդրկովկասի և Փոքր Ասիայի ողջ քրիստոնյա բնակչության խնդրում, ռուսական կառավարությունը հատուկ կարևորություն էր տալիս Էջմիածնի հետ ունեցած իր հարաբերություններին... Այդ հանգամանքը,- շարունակում է թերթը,- առաջին հերթին պայմանավորված է այն բացառիկ դիրքով ու ազդեցությամբ, որ գրավում էին հայոց կաթողիկոսները հայերի շրջանում՝ շարունակելով մնալ իրենց հայրենակիցների ազգային շահերի ու ձգտումների պաշտպանը»[48]:

Ռուսական մամուլում և պատմագիտական գրականության մեջ հատկապես ուշադրության են արժանացել հայոց երկու նշանավոր կաթողիկոսներ Ներսես Աշտարակեցին և Մկրտիչ Խրիմյանը: Դա, իհարկե, բնական էր, քանի որ երկուսի կաթողիկոսության և նրանց նախորդած տարիները խաչվում էին ռուսական կառավարության տարածաշրջանում վարած քաղաքականության խնդիրների հետ: Ամենից առաջ դա, իհարկե, վերաբերում էր Ներսես Աշտարակեցուն. «Հայոց կաթողիկոսներից շատերը կարևոր մասնակցություն ունեցան պարսիկների ու թուրքերի դեմ մղված պատերազմներին և Փրկչի խաչը ձեռքներին մեր բանակներին առաջնորդեցին ռազմի դաշտ: Այդպես էր, օրինակ, 1827 թ. Երևանի բերդի գրավման ժամանակ, երբ մեր բանակներին առաջնորդում էր անձամբ Ներսես Պատրիարքը»[49]: Նույն գնահատականին է արժանացել նաև Մկրտիչ Խրիմյանը. «Հայոց ներկայիս կաթողիկոսը մեծ սեր և հարգանք է վայելում իր հայրենակիցների շրջանում, որին կոչում են ոչ այլ կերպ, քան «Հայրիկ»: Հայոց կաթողիկոսի առանձնահատուկ հմայքը իր ժողովրդի հանդեպ տածած անսահման սերն է, իմաստնացած համբերությունը և պատրաստակամությունը՝ օգնելու իր ժողովրդին, յուրաքանչյուրին, ով իր օգնության կարիքն ունի՝ երբեք չմտածելով հատուցման մասին: Բառի իսկական իմաստով նա իր ժողովրդի և իր հոտի հայրն էր ու հովվապետը...»[50]: Հրապարակումներից մեկում ռուս հեղինակը ուշագրավ այսպիսի դիպվածք է պատմում Խրիմյան Հայրիկի կյանքից. «Կաթողիկոսի արտաքին տեսքը որքան գրավիչ ու ազդու է, նույնքան բարի ու իմաստուն են նրա աչքերը... Նրա կենսագիրները բնութագրական այսպիսի դիպվածք են պատմում. 50-ական թվականնե-

[47] Նույն տեղում, էջ 386:

[48] Նույն տեղում, էջ 388:

[49] Նույն տեղում:

[50] Նույն տեղում, էջ 391:

րին Խրիմյանի հակառակորդները մի քուրդ էին վարձել նրան սպանելու համար: Հանդիպելով նրան մի խուլ վայրում, քուրդը պատրաստվում է նրան սպանել, սակայն տեսնելով նրա ազդու արտաքինն ու վեհ տեսքը, ձեռքերը թուլացել են և ընկնելով Խրիմյան Հայրիկի ոտքերը՝ նրանից թողություն է աղերսել ...»[51]:

Այսպիսով, զետեղված հրապարակումներից ու նյութերից կարելի է եզրակացնել, որ ռուս հեղինակները հիմնականում իրական պատկերացում են ունեցել Հայ Եկեղեցու մասին և ճշմարտացիորեն ընդգծել նրա խաղացած ազգանըպաստ գործունեությունը հայ ժողովրդի ազգահավաքման ու ազգապահպանության խնդրում:

[51] Նույն տեղում:

*Ս. Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Գ. Լ. ԵԹԻՄՅԱՆ*

# ՓԻԼՈՒՄԱՆ ԹԱՅԻՐՅԱՆ

## (Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու կառուցման 170-ամյակի առթիվ)

Վանաձորի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու բակի գերեզմանատանը պահպանվում է Փիլուման Թայիրյանի տապանաքարը, որի վրա գրված է.

«Այս է տապան Իւզբաշի Փիլումի
Մեծահամբաւ Թաիրօվի՝
Քաջ ծառայող ըռուսաց ազգի
Գերահռչակ եկեղեցի Աստվածածնի:
Ձեռամբ սորա կառուցանի
Պարծանք հայոց ազգի:
Ով հանդիպողք, տուք զողորմի:
Վախճանեցաւ 1847-ն ամի»:

Տապանաքարի վրա թեև չի գրված Փիլումի ծննդյան թվականը, սակայն 1831 թ. Մեծ Ղարաքիլիսա գյուղի մարդահամարի ցուցակում նրա անվան դիմաց գրված է 55 տարեկան, ուստի նա ծնվել է 1776 թ. Կարին (Էրզրում) քաղաքում: Թե ինչպես է ընթացել նրա հետագա ճակատագիրը, մեզ դեռևս անհայտ է: Նրա շառավիղներից Ալբերտ Արամի Թայիրյանը (Փիլումի Գևորգ որդու թոռը) իր «Վասիլ Թայիրով» գրքույկում այդ մասին գրեթե ոչինչ չի հիշատակում, բացի այն, որ Փիլուման Էրզրումից իր բազմանդամ ընտանիքով շատերի հետ 1830 թ. ամռանը գաղթել է Մեծ Ղարաքիլիսա և մի քանի ամիս անց, 1831 թ., գյուղի բնակչության օգնությամբ ավարտել նոր եկեղեցու կառուցումը, որովհետև հին եկեղեցին երկու տարի առաջ ուժեղ երկրաշարժից ավերվել էր: Ահա թե ինչ է փորագրված այդ նոր եկեղեցու շինարարական արձանագրությունում. «Ի թագաւորութեան Ռուսաց Նիկոլայ Պաւլովիչին եւ ի Հայրապետութեան Ամենայն Հայոց Տեառն Յոհաննու Կաթողիկոսի, 1831 թ. շինեցաւ կաթողիկէ Սուրբ եկեղեցիս Յանուն Սուրբ Աստուածածնայ եւ յառաջնորդին մերոյ Յարութիւն վարդապետին, եւ յառաջ ի շարժմանէ փլուցաւ, որ քար քարի վրայ որ ոչ մնաց, այժմ ողորմութեամբն Աստուծոյ եւ՝ Փիլուման Իւզբաշս, օգնականութեամբն ամենայն ժողովրդոց վերստին նորոգեցաք»:

Նյութական նպաստ բերածների անունները նույնպես փորագրված են այդ շինարարական արձանագրության մեջ: «Յիշատակ է տված Սուրբ Աստուածածնայ 15 թուման Ծամքորեցի իշխանաց Սարգիս աղէն, Մկրտիչ աղէն, Աղամալ աղէն, յիշատակ է տված Սուրբ Աստուածածնայ հինգ թուման Գեղամեան Տէր-Սամուէլի որդի Աւետիք, յիշատակ է Ա չահ, Բ աշտանակ Օհաննէս Սիմոնով, յիշատակ է Եղնանց Սօլօմոն՝ երեք թուման, յիշատակ Տէր - Ղաչամեան Աւետիք՝ Բ թուման, Էլի Ծամքորեցի բարեպաշտ անձինք տվին տասնհինգ թուման յիշատակ Սուրբ Աստուածածնայ»:

Եկեղեցու պատի այս արձանագրությունը և տապանագիրը որոշ տեղեկություններ են հաղորդում Փիլուման Թայիրյանի մասին: Խիստ ուշագրավ են հատկապես «իւզբաշի», «մեծահամբաւ Թայիրով», «քաջ ծառայող ըռուսաց ազգի» և «պարծանք հայոց ազգի» արտահայտությունները ու բառերը: Այժմ փորձենք բացել տարիների մութ ու թանձր շղարշը և լույս սփռել Փիլուման Թայիրյանի անցած ուղու վրա, որը, մեր կարծիքով, արժանի է հանգամանալից ուսումնասիրության:

1828 թ. ապրիլի 14-ին սկսվում է ռուս-թուրքական պատերազմը: Ամբողջ արևմըտահայությունն իր ազատագրության հույսը կապում է այս պատերազմի և ռուսական զենքի հաղթանակների հետ: Այս էր պատճառը, որ հայ հայրենասեր ուժերը աջակցում էին ռուսական բանակին և ամեն կերպ օգնում նրան: Այդ աջակցողներից մեկն էլ Էրզրումցի Փիլումյան Թայիրյանն էր, որ այդ ժամանակ 52 տարեկան էր և հայտնի հասարակական գործիչ ու ճանաչված մարդ: Նա Էրզրումի հայերից կազմում է 100 մարտիկներից բաղկացած կամավորականների ջոկատ, միանում ռուսական զորքերին և հերոսաբար մարտնչում դարավոր թշնամու դեմ իր հայրենիքի ազատության ու փրկության համար: Փիլումանի ջոկատը հատկապես աչքի է ընկել հայրենի քաղաքի՝ Էրզրումի ազատագրման համար մղած մարտերին, որոնք ընթացան 1829 թ. ապրիլի վերջերից մինչև հունիսի վերջերը: Ապրիլին թուրքական 60-հազարանոց բանակը Էրզրումից շարժվում է Հասան-Ղալա՝ խնդիր ունենալով վերագրավել Կարսը և ներխուժել Արևելյան Հայաստան: Փիլումանը, վտանգելով իր կյանքը, թուրքական զորքերի այդ շարժման մասին լուրը հասցնում է ռուսական զորքերի հրամանատար, գեներալ Պասկևիչին: Թշնամու մտադրության մասին իմանալով՝ ռուսները դիրքեր են գրավում Կարսից Էրզրում տանող ճանապարհի վրա, այնուհետև անցնում հակահարձակման: Ռուսական բանակներին է միանում Փիլումանի ջոկատը: Քաջածանոթ լինելով տեղանքին ու ճանապարհներին, հմտորեն տիրապետելով թուրքերենին, նա իրոք մեծ ծառայություն է մատուցել ռուսական հրամանատարությանը: Խիզախ հայրենասերը ռուսական հրամանատարության և իր մարտական ընկերների կողմից արժանանում է «յուզբաշու» (հարյուրապետի) պատվավոր կոչմանը, որը սիրով կրել է նաև Մեծ Ղարաքիլիսայում մինչև իր կյանքի վերջը: Եթե չլինեին այս փաստերը, ապա կարելի էր եզրակացնել, որ Փիլումանը եղել է Էրզրումի շրջակայքի գյուղերից մեկի յուզբաշին (տանուտերը): Բայց «քաջ ծառայող ըռուսաց ազգի» արտահայտությունը սովո-

րական տանուտերի հետ ոչ մի կապ չունի. այստեղ խոսքը վերաբերում է զուտ պատերազմին:

1829 թ. հունիսին դեպի Էրզրում շարժվող ռուսական զորքերին, Փիլումանի ջոկատից բացի, էական օգնություն ցույց տվեցին նաև Բասենի, Կարսի, Էրզրումի, Բայազետի հայերը: Մարտական ջոկատներ էին ղեկավարում էրզրումցիներ Գրիգոր Ծեքերճյանը, Մկրտիչը, բայազետցի Մելիք-Մարտիրոսը և ուրիշներ: Սողանլուղի (հունիսի 20-ին), Հասան Ղալայի (հունիսի 24-ին) ճակատամարտերում գլխովին ջախջախելով թուրքական զորքերին՝ հունիսի 25-ին ռուսական բանակները գեներալներ Պասկևիչի, Բուրցովի, Մուրավյովի և Պանկրատևի հրամանատարությամբ մոտենում են Էրզրումի դարպասներին և պահանջում սերասքեր Հաջի Սալեհ փաշայից իրենց հանձնել Էրզրումը: Եվահա այս գործում ևս իր ավանդն է ներդնում Փիլուման յուզբաշին: Նա ամենուրեք քարոզում է իր հայրենակիցներին՝ ամեն կերպ օգնել ռուսական զորքերին և նպաստել քաղաքը ռուսներին հանձնելու համար:

Պաշտպանություն չգտնելով քաղաքի բնակչության կողմից՝ թուրք փաշան հունիսի 17-ին Պասկևիչին է ուղարկում Էրզրումի բերդի բանալիները: Էրզրումի գրավումը կանխորոշեց պատերազմի ելքը. Թուրքիան պարտվեց: 1829 թ. սեպտեմբերի 2-ին ստորագրվեց Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը, որտեղ մեզ դարձյալ հիասթափություն էր սպասում: Ռուսական դիվանագիտությունը գերադասեց ամրապնդվել Սև ծովի ափերին: Եվրոպական խարդախ դիվանագիտությունը լայն աջակցություն ցուցաբերեց Օսմանյան Թուրքիային, այլ ոչ թե ճնշված ու տառապած հայ ժողովրդին: Ռուսական զորքերի ու հայ կամավորների ազատագրած Էրզրումը, Կարսը, Բայազետը, Վանա լճի ավազանն ու Ալաշկերտի հովիտը կրկին վերադարձվեցին Թուրքիային: Ռուսաստանին անցան Սև ծովի արևելյան ափը, Անապա, Փոթի նավահանգիստները, ինչպես նաև Ախալցխայի փաշայության տարածքի մի մասը՝ Ախալցխա և Ախալքալաք բերդերով: Այդ պայմանագրի 13-րդ հոդվածով երկու կողմերի հպատակներին իրավունք վերապահվեց 18 ամսվա ընթացքում ինքնահոժար մեկ երկրից տեղափոխվել մյուսը:

Արևմտահայերի մեծ գաղթն սկսվեց 1830 թ. մայիս-հունիս ամիսներին: Բայազետի, Կարսի և Էրզրումի փաշայություններից և Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներից 14.947 ընտանիքներ (90-100 հազար մարդ) ներգաղթեցին Արևելյան Հայաստան, որը 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրով անցել էր Ռուսաստանին: Նրանցից մոտ 100 ընտանիքներ բնակություն հաստատեցին Մեծ Ղարաքիլիսա գյուղում (հիմնականում էրզրումցիներ և կարսեցիներ): Թեև մի քանի հրատարակություններում և մամուլում («Կիրովական» տեղեկատու) այդ թիվը ուռճացված է և հասցված նույնիսկ «մի քանի հարյուր ընտանիքների», բայց մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մեծ Ղարաքիլիսայում մշտական բնակություն հաստատած արևմտահայ ընտանիքների թվաքանակն ընդհանուր մոտենում է 100-ի:

Պայմանագրի կնքումից անմիջապես հետո, նույնիսկ չսպասելով սահմանված նպաստ ստանալուն, բազմաթիվ հայ գերդաստաններ շարժվում են դեպի ռուսական սահմանները: Գեներալ Պասկևիչը 1830 թ. հունվարի 22-ին Ռուսաստանի ռազմական մինիստր Չերնիշևին գրում էր, որ 1829 թ. հոկտեմբերից մեծ քանակությամբ հայեր անցել են ռուսական սահմանը, ընդ որում Կարսից ու նրա շրջակայքից 2500 ընտանիքներ արդեն տեղավորվել են Արագած լեռան ստորոտներում ու Փամբակի գյուղերում, իսկ Էրզրումցի 25 ընտանիքներ՝ Լոռիում: Չի բացառվում, որ այդ 25 ընտանիքները կամ նրանցից մի քանիսը հաստատվեին Մեծ Ղարաքիլիսայում: Այս տեսակետն ավելի է ամրապնդվում, երբ 1831 թ. մարդահամարի ցուցակներում Փիլոման Թալիրյանի գերդաստանը կա, իսկ նույն Էրզրումցի Ավագ Կարապետովինը (Ղարագյոզյանները) և էլի 31 գերդաստաններ չկան: Նշանակում է, Թալիրյանները և այլ Էրզրումցիներ եկել են 1829 թ. և հասցրել քաղաքացիություն ձեռք բերել: Դեռ նոր էին տեղավորվել գաղթականները և ռուսական պետության տրամադրած օգնությամբ կառուցել իրենց տները (յուրաքանչյուր ընտանիքին տրվեց 25 ռուբլի տեղափոխման ծախս, իսկ շինարարության համար հատկացվեց բավականաչափ գումար և անհրաժեշտ շինանյութ, նրանք 6 տարով ազատվում էին հարկերից, 3 տարով՝ պարհակներից), երբ 1831 թ. սկսվեց ծխական ցուցակագրությունը (մարդահամար) Փամբակի ու Բորչալուի դիստանցիաներում (տարածաշրջան), որոնք դեռևս Վրաստանի կազմում էին (Հայկական մարզում ցուցակագրությունն սկսվել էր 1829 թվականից և ավարտվել 1832 թ.): Ցուցակագրության նպատակն էր ճշտորեն պարզել, թե որքան ընտանիքներ, որքան բնակչություն է ներգաղթել Պարսկաստանից, Արևմտյան Հայաստանից ու Թուրքիայից, որպեսզի ձեռնարկվեն վարչական, ագրարային, հարկային ու այլ միջոցառումներ:

1831 թ. էլ Փիլոման Թալիրյանը նախաձեռնում և ավարտում է Ղարաքիլիսայի նոր եկեղեցու կառուցումը: Շինարարական արձանագրության մեջ նշված կաթողիկոսը Հովհաննես Կարբեցին է, որն աթոռակալել է հենց եկեղեցու շինարարության տարում՝ 1831 թ. մինչև 1842 թ.: Մեծ Ղարաքիլիսայի եկեղեցին ենթարկվում էր Հաղպատի հոգևոր թեմին, որի առաջնորդը Հարություն վարդապետն էր: Եկեղեցու դռան վերևի արձանագրության մեջ փորագրված են շինարարության մասնակիցների և մի քանի այլ անուններ:

Եկեղեցու կառուցումը հովանավորող մեկենասների մասին հետևյալը կասենք. մեզ թվում է, որ կազմակերպվել է հանգանակություն: Ղարաքիլիսայից հատուկ մարդիկ են գնացել Ծամքոր և դիմել տեղի աղաներին: Գեղամյան Տեր Սամուելի որդի Ավետիքը կալվածատեր Գեղամյաններից է, որոնք 1804 թ. գժտվելով Երևանի խանի հետ՝ Կոտայքից հեռացան Փամբակ ու Վրաստան, բայց միացումից հետո վերադարձան Կոտայք: Հովհաննես Սիմոնովը, որը ջահ ու աշտանակ է նվիրել եկեղեցուն, տեղացի է՝ Տեր-Սիմոնյաններից է: Վերջին երկու մեկենասները տեղացի չեն, որովհետև Մեծ Ղարաքիլիսայի ծխական ցուցակներում մենք չենք հանդիպել Եղիճյան և Տեր-Ղաջամյան տոհմանուններին:

Հին եկեղեցու կառուցման ժամանակի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Ղարաքիլիսայի եկեղեցու Տեր Խորեն ավագ քահանա Խանզադյանը (1846 - 1925 թթ.) իր հուշերում գրում է, որ «հայոց քարաշեն հնադարյան եկեղեցին այդ դեպքից (1826 սկսված ռուս - պարսկական պատերազմը - հեղ.) քիչ առաջ սաստիկ երկրաշարժից արդեն փլատակների կույտ էր ներկայացնում»: Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը (1809-1848) երբ 1826 թ. հունիսին Թիֆլիսից եկել է Մեծ Ղարաքիլիսա և այլևս չի կարողացել շարունակել ճանապարհը դեպի Քանաքեռ պատերազմի պատճառով, այդ եկեղեցին տեսել է «խարխուլ, կիսաքարաշեն, կիսափայտաշեն», այսինքն երկրաշարժն արդեն եղել էր, և եկեղեցին կիսով չափ ավերվել: Գյուղացիները փայտով մի կերպ նորոգել էին այն:

Ղարաքիլիսայի հին եկեղեցին դեռևս կանգուն տեսել են եվրոպացի ճանապարհորդներ Ջեյմս Մորիերը (1812 թ.), Ռոբերտ Կեր Փորտըրը, Կովկասի կառավարչապետ, գեներալ Երմոլովը, Պարսկաստան մեկնող նրա պատվիրակության անդամները (1917 թ.) և ուրիշներ, որոնք նկարագրել են հին Ղարաքիլիսան ու իր եկեղեցին: Հարց է առաջանում. իսկ ե՞րբ է կառուցվել «հնադարյան» եկեղեցին: Եկեղեցու բակում եղած տապանաքարերի չափսերի ու զարդանախշերի, մի քանի խաչքարերի զարդաքանդակների հորինվածքի և դեկորատիվ հարդարանքի համեմատական ուսումնասիրությունը մեզ թույլ են տալիս եզրակացնելու, որ հին եկեղեցին կառուցվել է 13-րդ դարում, Զաքարյանների իշխանության շրջանում:

Նոր եկեղեցին կառուցվել է հնի հարևանությամբ՝ նրանից մոտ 10-15 մ դեպի հյուսիս: Շինարարները օգտագործել են նաև հին եկեղեցու քարերը: Նոր եկեղեցու քարերի մի մասը դեղնագույն է, սակայն մոտակայքում դեղին քարերի հանք չկա: Կարծիքներ կան, որ դեղնագույն քարերը բերվել են Անի-Պեմզայից, իսկ սև տուֆը՝ Ղըշլաղ գյուղի քարհանքից:

Փիլուման Թայիրյանին վերաբերող մի հետաքրքիր փաստի մասին ևս: 1831 թ. մարդահամարի ցուցակում Փիլուման Թայիրյանի ընտանիքի դիմաց գրված է. «Երբ կազմված էր կամերալ ցուցակագրությունը, ներկայացավ փոխգնդապետ Վասիլ Կարգանովը (Ղորղանյան - հեղ.) և ներկայացրեց փաստաթուղթ, որ Փիլուման Թայիրովը վարձակալել է իր հողը և ընտանիքով հանդերձ իր կալվածատիրական գյուղացին է»: Հետագայում, 1842 թ. կամերալ ցուցակագրության նախօրյակին, երբ ստորագրվում էին հին ցուցակները, այդ գրառմանն ավելացվել է, որ, իրոք, կալվածատիրական գյուղացիների Համբակի դիստանցիայի ցուցակում 4-րդ թվահամարի ներքո Փիլուման Թայիրովի ընտանիքն է:

Հավանաբար երբ կարսեցի ու էրզրումցի գաղթականները եկան Մեծ Ղարաքիլիսա, թեև իշխանություններն ուզում էին, որ նրանք բնակվեն պետական հողերում, բայց այդպիսի հողեր այլևս չկային: Իր բազմանդամ ընտանիքին ապահովելու նպատակով Փիլումանը հող է վարձակալում կալվածատեր Ղորղանյանից: Իսկ թե երբ է փրկագնել հողը և ազատվել կալվածատիրական կախվածությունից, որևէ տեղեկություններ չեն պահպանվել: Ալբերտ Թայիրյանն իր գրքույկում թեև այդ

մասին ոչինչ չի գրել, բայց կարծում ենք, որ նա որոշ տեղեկություններ ունեցել է: Նա միայն մեկ-երկու նախադասությամբ նշում է, որ Փիլումանը «պայքարել է Լոռվա գյուղացիության ազատագրության համար»: Պարզ է, որ այդ պայքարն ուղղված էր կալվածատիրական ճորտատիրության դեմ:

Սերունդները միշտ էլ երախտագիտությամբ են հիշելու հայազգի բարերարներին, որտեղ էլ որ նրանք գործել են, այդ թվում Փիլուման Թայիրյանին, որի կենսագրության միայն մի հատվածը մենք ուսումնասիրեցինք: Համոզված ենք, որ հետագայում ևս նոր նյութեր կգտնվեն, որոնք կամբողջացնեն մեծ հայրենասերի ու բարերարի կենսագրությունը:

*ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

# ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ» ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թովմա Մեծոփեցու ապրած ժամանակաշրջանը (1378-1446) հայոց պատմության ամենամռայլ ու դժնի հատվածներից մեկն է, երբ Հայաստանը հեծում էր Լենկ-Թեմուրի, ապա և թուրքմենական Կարա-կոյունլու ցեղերի վայրենաբարո լծի տակ:

Թովմայի ստեղծագործության զգալի մասը՝ պատմագրությունը, հիշյալ ժամանակաշրջանի իրական դեպքերի նկարագրությունն է, մեր պատմության որոշակի ժամանակահատվածի կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկը: Մեծոփեցու գրական ժառանգությունը սակայն միայն պատմագրությամբ չի սահմանափակվում: Ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի բնութագրմամբ, Մեծոփեցու աշխատությունների ցանկը, ըստ միջնադարյան մատենագրության կարևոր բնագավառների, հետևյալն է՝ Պատմագրություն, Նամականի, Խրատք կանոնականք, Վկայաբանություն, Քերականություն և ազգակից նյութեր, Բանաստեղծություն, Մեկնություն և լուծմունք, Միսական բնագրեր, խմբագրություն-սրբագրություն[1]:

Մեծոփեցու գործերը, պատմական, բանասիրական, կրոնա-եկեղեցական արժեք ունենալուց զատ, կարևորվում են նաև լեզվական տեսակետից: Այդ կարևորությունը պայմանավորված է նախ և առաջ հեղինակի ապրած ժամանակաշրջանում տարբեր լեզվավիճակների առկայությամբ և փոխներթափանցմամբ: Գրաբարն արդեն խոսակցական լեզու չէր և իր տեղը զիջել էր միջին հայերենին, որպես համակարգ ձևավորման ընթացքում էին հայերենի բարբառները, քաղաքական նոր պայմաններում հայերենի բառապաշարում արմատավորվում էին օտար նոր փոխառություններ և այլն:

«Պատմագրության» լեզուն գրաբարն է՝ ավելորդություններից զերծ, հստակ ու պարզ շարադրանքով, որտեղ առկա են գրաբարի քերականական հիմնական իրողությունները: Զգացվում է, որ հեղինակը ծանոթ է դասական մատենագրությանը և երբեմն այս կամ այն իրողությունը նկարագրելիս ազատորեն մեջբերում է V

---

1. Տե՛ս **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ XXXIX : Հոդվածի նյութը քաղել ենք հիշյալ հրատարակությունից:

դարի մատենագիրներից: Ահա Ս. Սահակի տեսիլքի նկարագրությունը. «զի բեմբ չորեքկուսի կայր հաստատեալ ամպանման. եւ բարձրութիւն նորա հասանէր մինչեւ յերկինս. եւ ոսկի սկտեղ մի ի վերայ բեմին... եւ ի ձախակողմն սեղանոյն կայր աթոռ ծովագոյն սառնանման...» (231): Նմանությունը Փարպեցու նկարագրության հետ ակնհայտ է. «Եւ կանգնեալ երեւեցաւ ինձ յերկրի բեմ չորեքկուսի ամպեղէն, որոյ բարձրութիւնն հասանէր մինչեւ յերկինս... եւ ի վերայ բեմին երեւէր տետրասկեղ յոսկւոյ սրբոյ... եւ ընդ աջմէկէ բեմին տեսի աթոռ մի բարձր չորեքկուսի ծովագոյն սառնակերպ... »[2]:

Մեծոփեցին մի ճակատամարտի նկարագրություն տալիս է հետևյալ կերպ. «Աստ էր տեսանել զքաջութիւն արանց մենամարտից, զի քաջասիրտքն գոչէին, թուլասիրտքն փախչէին, անարիքն տկարանային, սուսերքն ջողային, նիզակքն բեկանէին, քաջք ընդ քաջաց ի մարտ մտին...» (27-28):

Նույնպես, նմանություն կարելի է տեսնել Եղիշեի գրքի հետևյալ հատվածի հետ. «Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին... քանզի թանձրամիտքն յիմարէին եւ վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին եւ նահատակքն գոչէին... անդ էր տեսանել զբեկումն նիզակացն եւ խորտակումն աղեղանց...»[3]:

Դասական գրաբարի ազդեցությունը դրսևորվում է նաև որոշ բառակապակցությունների, բառաձևերի գործածությամբ. հմմտ. «Դարձեալ՝ դարձցուք ի յառաջին կարգ շարագրութեան պատմութեանս» (48): «...եւ սկսեալ ի պարսիկ լեզու[4] դաւանէր զՔրիստոս ճշմարիտ Աստուած եւ Տէր ամենայնի» (125): «Իբրեւ զարծուի[5] սրընթաց ի վերայ քաղաքին հասին» (151):

Ինչքան էլ մեծ լինի հեղինակի՝ դասական գրաբարի ոճական ու քերականական համակարգի պահելու ձգտումը, այնուհանդերձ նրա գրաբարը կրում է իր ժամանակի կնիքը՝ պայմանավորված ինչպես լեզվի զարգացման ու փոփոխության ներքին օրինաչափություններով, միջին հայերենի տարրերի ներթափանցմամբ, այնպես էլ արտալեզվական հանգամանքներով:

Ինչպես ուշ շրջանի շատ գործերում, այնպես էլ քննության առարկա այս երկում ակնհայտորեն քիչ են ստորադասական ապառնիները, իսկ գործածվածների մեջ էլ գերակշիռ են երկրորդ ապառնիները: Ըստ էության բացակայում է խառը հոլովումը: Նկատելի են նոր ոճեր, կապական (նախդրային) կառույցներ, շարադասական, քերականական շեղումներ: Բերենք օրինակներ. «Եւ մահ սորա Գ (3) ամաւ յետոյ է քան զճգնաւորին Մաղաքիայ...» (15): «Ծան պէս ոռնայր» (182): «Եւ

[2] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. քննական բնագիր Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի. Երևան, 1982, էջ 66-68:

[3] Եղիշէ. Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի. Երևան, 1989, էջ 236-238:

[4] Հետդասական գրաբարին բնորոշ էր պարսկերէն, հայերէն... ձևերը:

[5] Արծուի ձևը բնորոշ էր դասական գրաբարին: Հետագայում ավելի հաճախական է արծիւ ձևը: Մեծոփեցու գրքում առկա է և վերջին ձևը (էջ 132):

մին կին ի ծառայից նորայ...» (134)։ «Թերեւս ելցուք ի ծովուն միջէ» (149)։ «Առանձնանալ ի զբաղանաց եւ դաս առնել նոցա»... (46)։ «Սիրտն ծակեցաւ եւ տարի մի շունչ եղանէր ի սրտէն» (58)։ «Եւ պակասեալ ի հոգեոր առաջինութեանց՝ ոչ ժամ, ոչ պատարագ» (70)։ «Փառք Աստուծոյ» (116)։ «Որ տեսաք եւ լսեցաք» (105) (Փոխ.՝ լուաք)։

Ներքոբերյալ բառաձևերը շեղումներ են գրաբարից և միջինհայերենյան կամ բարբառային արտացոլումներ են. քուեր ( 197, 198, 199), ի գեղ, ի գեղէն, (42, 156, 211), աքեղէն (49), քենոջն (145)։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «Պատմագրության» բառապաշարը։ Բնականաբար, բառապաշարի զգալի մասը գրաբարյան շերտն է՝ ավանդված գրաբարի բառարաններում, որին անդրադառնալու հարկ չկա։

Քննության առնենք հետևյալ շերտերը.

Ա) Նոր փոխառություններ

Մեծոփեցու ապրած դարաշրջանում արդեն Հայաստան էին խուժել թուրք-թաթարական ցեղախմբերը, որոնց լեզվի բառապաշարի որոշ տարրեր կամա թե ակամա սկսել էին գործառել հայերենում։ Այդ լեզուներից կատարված փոխառությունները կարող էին լինել անմիջական և միջնորդավորված (հատկապես պարսկերենի միջոցով)։ Մեծոփեցու գործերում կան նաև նոր պարսկերենից կատարված փոխառություններ, որոնց զգալի մասը գրաբարի, հատկապես վաղ գրաբարի մատենագրության մեջ ավանդված չէ[6]։ Այդ շրջանում հայերենի տարբեր լեզվավիճակներ են մուտք գործել նաև արաբերեն բազմաթիվ բառեր (մի մասը դարձյալ պարսկերենի միջոցով)։

Ստորև կներկայացնենք այդ բնույթի՝ Մեծոփեցու գործերում հանդիպող բառերը՝ ըստ անհրաժեշտության տալով որոշ մեկնություններ։ Բնականաբար, այդ բառերն առկա են ոչ միայն Մեծոփեցու, այլև միջին շրջանի հայերենի այլ գործերում, իսկ բառեր էլ կան, որոնք առաջին անգամ թերևս օգտագործել է Մեծոփեցին (համենայն դեպս ըստ որոշ բառարանների հավաստման)։ Նկատենք, որ ներքոգրյալ բառերի գերակշիռ մասը վկայված է միջին հայերենի բառարանում՝ համապատասխան վկայություններով։[7]

Աղա (տիտղոս է) (9), բազտ «շուկա» (161), արայիշ «հանդես» (6), բահրա (հարկատեսակ) (193), դանիշման «գիտուն, գիտնական» (97, 159), դաստա «տրցակ,

---

[6] Հայտնի է , որ գրաբարը հազարից ավելի իրանական փոխառություններ ունի, որոնց սկզբնաղբյուրը միջինիրանական լեզուներն են։ Միջինհայերենյան փուլում շարունակվում է փոխառությունների գործընթացը՝ արդեն նոր պարսկերենից կամ նոր իրանական լեզուներից։ Դրանք կարելի է անվանել իրանական նոր փոխառություններ, որոնց մեծ մասը արձանագրված չէ գրաբարի բառարաններում։

[7] Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան. հատ. Ա, 1987, հատ. Բ, 1999. Երևան։

կապոց» (285), ըռէս «գլխավոր, իշխանավոր» (202), թարքաշ «կապարճ» (146), թիպ «գունդ» (146), լանկ «կաղ» (8), խաբար խապար «լուր» (72), խարաճ «հարկ» (215), խոնդքար «տիրակալ» (100, 102), խուդա «աստված» (145), կլայ «բերդ, ամրոց» (178), հաքիմ «բժիշկ» (207), ղադի «դատավոր» (97, 99), ղան «խան» (119), ղարխոռ «?» (68), ղիամաթ «ահեղ դատաստան» (40), մզկիթ «մահմեդականների աղոթարան» (112), մնիրայ «մինարեթ» (208), մուդառիս «ուսուցիչ» (97), մուդրի, մուֆթի «մահմեդական օրենսգետ» (99), յիսէի «քրիստոնյա» (101), շարիաթ «մուսուլմանական հոգևորական դատարան» (99), շեխ/շեյխ «մուսուլմանական կրոնավոր» (99), չաղաթա (ցեղանուն է) (107-109), չարեք «քառորդ» (193), սարուփարթայ «արքայական վրան» (117), փատիշահ «թագավոր» (99), փեղամբար «մարգարե» (99), քաչալ «ճաղատ» (215), քեշիկ «պահակ» (3)[8]:

Արմատական բառարանը բահրա, դաստա, թարքաշ, թիպ, ղարխոռ, սարուփարթա, քեշիկ բառերի առաջին կամ միակ վկայությունը բերում է Մեծոփեցուց: Ղարխոռը համարվում է անստույգ բառ: Աճառյանի կարծիքով «անշուշտ թաթարերեն է. միակ հարմար ձևն է չաղաթ. qarγs «անեծք, նզովք, անիծյալ»: Եթե այս բառն է, պետք է կարդալ ղարխու...»[9]:

### Բ) Վաղ շրջանի գրաբարում չավանդված բառեր

Ներքոհիշյալ բառերը, որոնք հիմնականում հայակազմություններ են[10], արձանագրված են Նոր Հայկազյան բառարանում (ՆՀԲ)՝ ուշգրաբարյան կամ միջինհայերենյան բնագրային վկայություններով: Բառերի զգալի մասը չկա միջին հայերենի՝ վերը նշված բառարանում[11]:

**Անմարդաձայն** (18), **աստուածապահ** (142), **բոցածաւալ** (122), **գետակուր** (57), **գրագրութիւն** (282), **երկաբնակ** (209), **ժամատուն** (49), **լապստակակեր** (213)[12], **լման** «լրիվ, ամբողջ» (46, 80), **խոստակ** (147), **կածան** (21, 106)[13], **կամապաշտութիւն** (235)[14], **համշիրակ** «անդակից» (15, 44, 60), **համաքատակ** «համանման»

---

[8] Փակագծերում նշվում է վկայության էջը:

[9] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 3-րդ, Երևան, 1977, Ղարխոռ բառահոդվածը:

[10] Կան մի քանի իրանական փոխառություններ՝ խոստակ, համշիրակ, վարժապետ, բայց դրանք հին փոխառություններ են:

[11] Դրանք բառարանում լինելու դեպքում ընդգծվում են:

[12] Լապստակակեր-ը վրացիներին տրվող մականուն է՝ լապըստակակեր ազգն վրաց: Այլ ձեռագրեր ունեն նաև նապաստակակեր, նապըստակակեր (տե՛ս գրքի ծանոթագրությունը, էջ 213): Միջին հայերենի բառարանի վկայությունը մեր հեղինակից է:

[13] Միջին հայերենի բառարանն ունի կածնել «ճանապարհ բացել»:

[14] Միջին հայերենի բառարանն ունի կամապաշտ «իր կամքը պարտադրող, քմահաճ, կամակոր»:

(292), հեզահոգի (44, 85), հնձան (44), հրեշտակաբնակ (26), մսաղէզ (102), շարական (282), ոչխարիկ (129), ջոկապան (213)[15], սակաւաբան (61), սմբակազնաց «սմբակներով ոտնակոխ եղած» (131), սրբաբերան, «վարժապետ» (11, 12, 43, 92), փոշեջուր «ալյուրով ու ջրով պատրաստված կերակուր» (14), քառաթեւ (30), քուերորդի (78):

Անդրադառնանք մի քանի բառերի.

Խոստակ ՆՀԲ-ն մեկնում է. «խոշտակ, զաւակ, մանուկ, ծառանգ»: Ըստ Արմատական բառարանի՝ «պայմանական հողատիրություն, ավատ»: Մեծոփեցու վկայած օրինակում «...առին զքաղաք եւ զգեղ, զվանք եւ զաւան, կողոպտեցին եւ աւերեցին, ոչ հացի եւ ոչ խոստակի ետուն մնալ, այլ գազանաբար պատառեցին» (147) բառիմաստը այնքան էլ հստակ չէ:

Վարդապետ և վարժապետ ունեն նույն ծագումը (իրանական փոխառություններ են): Վարդապետը վկայված է վաղ գրաբարում, իսկ վարժապետը՝ ուշ: Այժմ դրանք ունեն իմաստային յուրահատկություններ. վարդապետը եկեղեցական հեգևորական տերմին է, իսկ վարժապետը բնորոշ է խոսակցական-բարբառային շերտին՝ «ուսուցիչ» իմաստով: ՆՀԲ-ն վարժապետը մեկնում է «որ Է վարդապետ. պետ վարժից. ուսուցիչ. մանկավարժ եւ վերակացու հրահանգաց մրցելոց»: Մեծոփեցու վկայած օրինակներից մեկում վարժապետը հոգևոր ավելի բարձր պաշտոն է, քան վարդապետը. հմմտ. «Եւ ի սոյն ամի եկն վարժապետն մեր Գրիգորիոս վարդապետօք եւ աշակերտօք...: Եւ ժողովեցան առ նա բազում վարդապետք եւ աշակերտք՝ ԺԱ (11) վարդապետ եւ Ձ (80) կրոնաւորս...» (92):

Փոշեջուրը Մեծոփեցու գրքում էժանագին ու համեստ ճաշի անվանում է: «Ջուր ոչ էարբ, եւ ի մեծի պահոցն ի կիրակիէ ի կիրակի միայն փոշեջուր ճաշակէր» (14): Հայերենի որոշ բառարաններում «փոշի ունի ալյուր, ալյուրի փոշի» իմաստները, որը և առկայանում է փոշեջուր բարդ բառում: Քուերորդին բարբառային ձև է, գրաբարյան ճիշտ ձևն է Քեռորդի: Սակայն քույր բառի քուեր ձևը հնագույն ակունքներ ունի և հ.-ե. swesor-ի արտացոլումն է: [16].

[15] Միջին հայերենի բառարանի վկայությունն այս հեղինակից է:

[16] Տես Է. Աղայան, Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր») հասարակական գիտությունների. № 5, 1958, էջ 735:

## ՆՀԲ- ՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

Առավել հետաքրքրություն են ներկայացնում այն բառերը, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում[17]: Մեզ հանդիպել է նման կարգի մոտ երեք տասնյակ բառեր, որոնք հիմնականում հայերեն բառեր են, որոշ արմատների ծագումն ստույգ չէ, մեկ բառ էլ ասորական փոխառություն է:

Աստուածագործակ «Աստծու ստեղծած» (ԱԲ+) - «զի փոխանակ աստուածագործակ մեռոնին՝ հասարակ ձիթապտղի ձիթով զհոգին Աստուած յազգէս Հայոց ի բաց բարձին» (226):

Այս նախադասության հասարակ- ի «սովորական» նշանակությունը ուշգրաբարյան է: ՆՀԲ-ն միակ օրինակը բերում է Նարեկացուց:

Աստուածապարփակ «Աստծուն բովանդակող»: «...եւ հարել զբազումս յազգաց մերոց, մանաւանդ զաստուածապատիւ եւ զաստուապարփակ... վարդապետն Գրիգորիոս...» (142-143):

Արեւորդի «արևապաշտ» (Արմ.+) - «Եւ Դ (4) արեւորդի կռապաշտ» (66):

Բերդկոց «?».- «...իբրեւ զոչխար զենեաց անողորմ եւ անագորոյն գազանն՝ որդին սատանայի եւ զսպանեալսն ի ճանապարհի իբրեւ զբերդկոտս եդին» (177)[18].

Գարշաբերան «զազրախոս» - «Եւ ի ժանդալից դառնապտուղ եւ դառնաբերան անիծից եւ նզովից գարշաբերան աղտեղութեանց...» (165):

Գարշադեմ «գարշելի դեմքով, գարշելի» (Միջ. հբ. - չ) - «եւ Կ (60) ոգի մին գարշադէմ քրիստոնէի զենուլ ետուն» (139):

Գեղեցկաշար «գեղեցիկ հորինված՝ շարադրված» (ԱԲ+) - «Գեղեցկաշար բառիւք եւ ողբալից դիմօք եւ աղիողորմ կսկծանօք» (285):

Գեր «ողբ, լաց» (Արմ +, ԱԲ+) - «Եւ լցաւ երկիր եւ աշխարհ ամենայն գերով եւ լալով, սգով եւ կոծով» (210):

Դառնաբերան «դառը խոսքեր ասող՝ անիծող»- (տես՝ գարշաբերանի օրինակը):

Իշխանակերպ «իշխանի տեսքով՝ իշխան» (Միջ. հբ. -չ) - «Իսկ Քրիստոնէիցն խորհուրդ ի մէջ առեալ զաղտնի ի յանօրինաց, մանաւանդ խորհրդական եւ իմաստուն, իշխանակերպ եւ քրիստոսասէր տանուտէրն Մուրատայ անուն...» (157):

Խաբողիկ «խաբող» (Արմ +)- «Այլ ծնողացն էր մեղադրութիւնն եւ ըռէս ձեռնատրին եւ թոյլ տուօղ առաջնորդին եւ խաբողիկ աբեղային» (202):

---

[17] Բառերի զգալի մասը չկա Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում, դրանք լինելու դեպքում կնշվի Արմ. +(հղումով), իսկ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի», Վենետիկ, 1865 լինելու դեպքում ԱԲ- հղումով: Բառերի մեծ մասը կա Միջին հայերենի բառարանում (չլինելու դեպքում կնշվի Միջ. հբ. - հղումով):

[18] Այլ ձեռագրերում զբերդկուտոց, զբերդկոց, զբերդկոտոց, զբերդ կուտեցին ... միջին հայերենի բառարանում համարվում է անստույգ՝ նշելով բերդոց ձևը: Բառը կարելի է թարգմանել «դիզված, բերդի նման դիզված»: Արմատը կարելի է համարել և հարդ «կույտ, շեղջ»-ը:

Ծովարոլոր «ծովի շուրջը» (Միջ. հբ. -չ) - «Եւ ծաղկեցաւ ուսումնականօքն ի ձեռն խաղաղութեանն Աստուծոյ ԺԱ (11) ամ ամենայն ծովարոլորս» (74):

Կալուլական առնել «ձերբակալել» - «Եւ յետոյ իջեալ ի յամրոցէն՝ գնաց առ նա եւ նորայ կապեալ կալուլական արար զնա» (38):

Կենդանաթաղ «կենդանի թաղված» - «Եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն եւ կենդանաթաղ գերեզման Լուսաւորչին ի Վիրայն» (223):

Ձեռնաւոր «իշխանավոր, պաշտոնյա» (ԱԲ+) - «... վասն զի սպանեալ էր զՍտեփաննոս քահանայն՝ ձեռնաւոր քաղաքին » (71):

Ղաշայ «ասորի քահանա» (Արմ.+) - «եւ ասորի ղաշայ մի նեստորական ցայ մտանէ ի տուն իշխանի միոջ» (35):

Ճագառակեր «ճագարի միս ուտող. այս օրինակում մականուն է» - «Զի յորժամ էր երկիրն Սիւնեաց՝ Կարապետ անուն վարդապետ մի՝ մականուն ճագառակեր» (152):

Ոքնագէտ «շատ բան իմացող, գիտակ» (միջ. հբ.-չ) - «Զի սա էր կատարեալ իմաստասէր ըստ Պղատոնին, որ ասէ. «իմաստասէր կոչեմ ես ոչ զոքնագէտս եւ ոչ զայն ... այլ զայն, որ անբիծ եւ անաղտ վարս ստացեալ ունիւն յինքեանս» (278)[19]:

Ջոկապան «հոտի, երամակի պահապան» - «Եւ սուր ի ձեռին առեալ՝ արիք եւ անարիք, հովիվք և ջոկապանք, մտանէին ի մայրիսն եւ ի ծերպս»(213):

Վանակերտ «վանք, վանական շինություն» (միջ. հբ. -չ) - «... եւ առեալ եկն ի վերայ աշխարհին Ըռշըտունեաց եւ վանակերտին Վարագայ» (113):

Սմբակացնաց «սմբակների տակ տրորված» (ԱԲ+) - «Եւ զօրաց նորա, զինքն անթաղ թողեալ, ի բաց գնացին եւ եկին հասին ի յալի եւ ողորմելի սմբակացնաց աշխարհս Քաջբերունեաց» (131):

Սոպռ «բիրտ, կոպիտ» (Արմ.+) - «Եւ սոպռ և կոպիտ, բիրտ եւ անհնազանդ քահանայական կարգիս ...» (273):

Փոռնակ «?» - «... բարկութեամբ զարթեաւ ի վերայ զօրաց իւրոց՝ գալ եւ հանել զփոռնակն, զայն որ տիրեալ էին զաւառիս մեր եւ պատառէին զամենեսեան իբրեւ զչար գազանս» (150)[20]:

Քաղկեդոնիկ «քաղկեդոնական» - «եղեն ուրացողք ճշմարտութեանն հաւատով-քըն քաղկեդոնիկ» (20):

Քրիստոսապահ «քրիստոնյա» - «Զի ի գիշերի եկեալ կամեցաք գնալ ի քաղաքն Բաղեշ, առ աստուածասէր եւ Քրիստոսապահ հաւատացեալքն» (187):(միջ. հբ. - չ):

Քարոզգիրք - «... եւ Բ (2) հատորս քարոզգիրքս, եւ քաղուածոյս Հնոց եւ Նորոց...» (45):

---

19 Այլ ձեռագրեր ունեն՝ զոգնագէտս, զյոգնագէտս, զոքնագէ(տ)ս. երևի ճիշտը յոգնագէտն է, որը և ունի ՆՀԲ-ն:

20 Արմ.-ը, վկայակոչելով այս օրինակը, բառը համարում է անստույգ՝ ենթադրելով «գազան» կամ նման իմաստով մի բառ (Տե՛ս Արմ. փոռնակ բառահոդվածը):

Ինչպես նկատելի է, Մեծոփեցու «Պատմագրության» մեջ գործածվող բառերը, որոնք վկայված չեն Նոր Հայկազյան բառարանում, հիմնականում կազմությամբ բաղադրյալ են, գերակշիռ մասով՝ երկարմատ:

Որոշակիորեն դժվար է պնդել, թե այդ բառերի մի մասը (նույնիսկ բառարաններում միայն Մեծոփեցուց վկայվածները) հեղինակի կերտած բառաձևերն են. դա տվյալ դեպքում էական էլ չէ: Այս կարգի բառերը կազմված են հայերենի բառակազմական օրենքներով և կարող էին գործածելի լինել հայերենի բոլոր փուլերում: Դրանք պետք է արձանագրվեն գրաբարի բառարաններում՝ անկախ այն հանգամանքից, որ Մեծոփեցու ապրած ժամանակաշրջանը հայոց լեզվի պատմության ընդունված շրջանաբաժանման տեսակետից ընդգրկվում է միջինհայերենյան փուլում[21]:

[21] Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ*

# «ՍՈՒՐԲ» ԲԱՌԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ

*Սուրբ* արմատական ածականը պատկանում է հայերենի գործուն բառապաշարի շերտին: Այն ունի կիրառության բարձր հաճախականություն և՛ ժամանակակից արևելահայերենում, և՛ արևմտահայերենում: Այն կիրառվել է նաև լեզվի զարգացման բոլոր փուլերում: Նախագրաբարյան, նախաքրիստոնեական շրջանում այն ունեցել է պարզապես «մաքուր, փայլուն» իմաստը: Այս բառի կրոնական իմաստը առնչվում է սոգդերենի zp'rt «մաքուր» բառի հետ՝ «սուրբ, ֆրանս. saint» նշանակությամբ: *Սուրբ* բառի ծագման մասին հայ մատենագրության, ինչպես նաև այլալեզու գիտական-լեզվաբանական գրականության մեջ կան տարաբնույթ վկայություններ: Նոր հայկազյան բառարանը, Հյուբշմանը, Մյույլերը, Տերվիշյանը, Ալիշանը, Կարստը և ուրիշներ հիմնականում վկայակոչում են արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, շումերերեն և սանսկրիտով բառեր՝ կապված *ջուր, ջրով լվանալ, մաքուր, պայծառ, առողջ, ողորկ* իմաստների հետ:

Ըստ Հրաչյա Աճառյանի՝ *սուրբ* բառը հայերենի բնիկ բառապաշարի միավոր է, որը ժամանակակից հայերենում ունի «մաքուր, անարատ, նվիրական» իմաստները: Այն ծագում է հնդեվրոպական նախալեզվի k'ubhro՝ «փայլուն, պայծառ, գեղեցիկ, մաքուր» արմատից, ընդ որում՝ հայերենում տեղի է ունեցել արմատի bhr > rb հնչյունափոխություն, որը ենթադրում է *սուրբ* բառի համար ավելի նախնական *սուբր* ձևը:

Հայերենի զարգացման տարբեր ժամանակներում այս արմատից առաջացել են բազմաթիվ բառեր, ինչպես՝ *սրբել, սրբանալ, սրբագիր, սրբիչ, սրբազան, սրբատեղի* և այլն և այլն:

*Սուրբ* բառը ի հայտ է բերում լեզվական ուշագրավ առանձնահատկություններ՝ կապված հատկապես գրական և բարբառային տարբերակների հետ: Գրական հայերենում և բարբառներում այն կիրառվում է և՛ ուղիղ, և՛ փոխաբերական, դարձվածային իմաստներով, որոնք դրսևորվում են բառակազմական զանազան կաղա-

պարներով՝ իբրև ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր, հարադրավոր կազմություններ:

Բարբառագիտական գրականություն ուսումնասիրելիս, ինչպես և բարբառային նյութերի հավաքչական աշխատանք կատարելու ընթացքում մեզ չհանդիպեցին «սուրբ» բառին փոխարինող այլարմատ փոխառյալ տարբերակներ: Հայերենի բարբառներում *սուրբ* բառը խիստ գործածական է և հիմնականում հանդես է գալիս հնչյունական զանազան տարբերակներով: Այսպես՝ գրական հայերենի *սուրբ* բառի դիմաց բարբառային ձևերը հանդես են բերում հետևյալ հնչյունափոխությունները.

ա) *բ* ձայնեղի դիմաց *փ* շնչեղ խուլ ունեն Ար., Ազլ., Ակն., Խրբ., Հմշ., Մկս., Պլ., Սբ., Սչ., Տգր., Ն Ն. , Ռդս., Զղ., Սլմ. և այլ բարբառներ(*սուրբ>սուրփ)* :

բ) *բ* ձայնորդի դիմաց *ռ* բաղաձայն ունի Մարաղայի բարբառը (*սուրբ>սուռփ*) :

գ) *ր* ձայնորդին համապատասխանում է *յ* բաղաձայն Զեյթունի բարբառում (*սույբ>սույբ՛* ) :

դ) Բառավերջի *բ* ձայնեղի դիմաց շնչեղ ձայնեղ են հանդես բերում Մշ., Զթ. բարբառները (*սուրբ>սուրբ'*):

ե) *ր* ձայնորդի անկում է նկատվում Թբ., Ն Ն., Վն. , Տգր. բարբառներում (սուրբ> սուփ, սըփ):

զ) *բ* ձայնեղի անկում է տեղի ունենում Ասլանբեգի բարբառում (*սուրբ > սիր*):

Հնչյունափոխության ենթարկվում են ոչ միայն բաղաձայնները, այլև ձայնավորը: Այսպես՝ *ու* ձայնավորի դիմաց ունենք.

ա) *ը* պարզ ձայնավոր (սուրբ > սըփ Թբ., Վն., բ) *իւ* երկհնչյուն (սիւրփ Ասլ., Անտ., գ) *էօ* երկհնչյուն (սէօրփ) Սվ., դ *օ* պարզ ձայնավոր (սօրփ) Գրս., Դրբ.:

Բարբառներում *սուրբ* արմատի կրկնությամբ կազմվում են նոր բառեր: Ինչպես՝ սէրսուբ (Մշ.), սէրսուփ (Ալշ.) , սարսուփ (Մկս.), սերսփիկ և այլն՝ *սրբասուրբ, սըրբացույն* իմաստով: Բայական ձևերը ս շփականի դիմաց ունեն *զ* հնչյունը, ինչպես՝ *զըրբ'էլ* (Արդ.), *զրբ'ել* (Սչ.) *սրբել, մաքրել* իմաստով և այլն:

Նշված հիմնական փոփոխություններից զատ ուշագրավ են նաև ստորև ներկայացվող ընդհանուր հնչյունափոխական ձևերը: Դրանցում առկա են պատմական հնչյունափոխության իրողություններ՝ հնչյունների կորուստ, հավելում, ամփոփում, տարաբանություն, անգամ պարտադրված հնչյունափոխություն:

Այսպես՝ Սուրբ Խաչին նվիրված տաղավար տոնը՝ Խաչվերացը, խոսակցականբարբառային հայերենում կոչվում է *սրխէչ, սպխէճ, սպխէչ, սփխէչ:* Ինչպես տեսնում ենք, այստեղ տեղի է ունեցել և՛ ձայնավորի հնչյունափոխություն, և՛ բաղաձայնի կորուստ (սուրբ խաչ > սըբ + խէչ): Այդպես և *Սրբանեսի* վանքի անվանումը ևս արգասիք է հնչյունափոխության: Հովհան Օձնեցուն նվիրված այս վանքը *Սուրբ Հովհաննես* ձևի դիմաց ունի *Սրբանես* բարբառային ձևը՝ որպես ամփոփման օրինակ: Ըստ Միքայել Չամչյանի Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ծակատք գավառում գտնվող Սուրբ Մարիամ > Սուրբ Մարի բերդաքաղաքի, ապա նաև համանուն դաշտի անվանումը ենթարկվելով հնչյունափոխության՝ բարբառներում ստացել է

*Սոտմարի > Սոտմառու> Սուրմալու* ձևը: Նախիջևանի շրջանի Ազնաբերդ գյուղում կա մի մատուռ Ս. Հակոբի անունով, որը տեղացիների խոսվածքով կոչվում է *Սրզացոփ* (Սուրբ Հակոբ > Սրբակոբ > Սրբացոփ > Սրզացոփ):

Ինչպես ցույց են տալիս օրինակները, վերը նշվածները ունեն նաև պարտադրված հնչյունափոխության բնույթ:

*Սուրբ* բառը բարբառներում ի հայտ է բերում բառակազմական զանազան իրողություններ՝ արտահայտվելով բարդ և ածանցավոր կազմությունների մեջ: Բառակազմական քննություն կատարելիս մենք միաժամանակ կկատարենք իմաստաբանական վերլուծություններ՝ խուսափելով անհարկի կրկնություններից:

Այսպես՝ *սրբակ* բարդ բառը, որ բառացի նշանակում է կոկորդի ամբողջ անցքը, կազմված է սուրբ + ակ բաղադրիչներից: Բառի այս անվանումը հավանաբար պայմանավորվում է Աստվածաշնչով: Ըստ Հին Կտակարանի՝ Աստված մարդկանց համար որպես կերակուր սահմանեց սուրբ, այսինքն՝ մաքուր համարվող կենդանիները՝ դրանք զանազանելով անսուրբ կենդանիներից: Այդ ակը, այսինքն՝ փողը, մարդկային կոկորդը սահմանված է միայն սուրբ համարվող կենդանիներ, ինչպես և ընդհանրապես մաքուր այլ սնունդ ընդունելու համար, որի պատճառով էլ, երևի, կոչվում է *սրբակ*: *Սրբունակ*, Ն.Ն. – սուրբ + ուն + ակ (1. սուրբ, նվիրական, 2. սրբակյաց): Բարբառային ածանցավոր կազմություններից կարելի է հիշատակել *սրբիչ*, Դրբ., որ նշանակում է՝ երկաթե կամ փայտե ափաչափ գործիք, որով քերում են խոփի վրայի հողը: Այդպես է կոչվում նաև ծայրը ակիշաձև երկաթ անցկացված հաստ փայտը: *Սրբտուք*, Արբ. ավլել, սրբելու գործողությունն է նշանակում, իսկ Եվդ. բարբառում՝ տան տախտակամածը ջրով լվանալու գործողությունը:

Բարբառային հոգնակի ձևերը ևս հետաքրքրություններ են ներկայացնում: Այսպես՝ *սրբունաք* (սրբեր) Եվդ., *սրբօրէք*, Խութ:

*Սուրբ* ածականին որպես նույնանուն բառ է հանդես գալիս Սվեդիայի բարբառի *սուրբ* գոյականը, որի իմաստը հետևյալն է. «խոնավ խորոշներում ապրող մի տեսակ գորտ»:

Հնչյունական նշված տարբերակներից զատ *սուրբ* բառը բարբառներում հանդես է գալիս որպես հարադրավոր բարդություններ՝ արտահայտելով դարձվածային իմաստներ: Այդ կազմություններից մի քանիսը փոխաբերական իմաստից զատ, ունեն նաև տերմինային իմաստներ և բնորոշ են աստվածաբանական եզրաբանությանը:

Ստորև ներկայացնում ենք հարադրավոր կազմություններով արտահայտված զանազան իմաստները:

1. *Սուրբ Երրորդություն*. Աստծու եռամիասնություն՝ Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված: Քրիստոնեության հիմնական դավանանքը՝ սահմանված Նիկիայի 325 թ. առաջին տիեզերական ժողովում և տեղ գտած քրիստոնեական դավանանքի «Հավատո հանգանակում»:

2. Աստվածաշունչ մատյանը ունի «սուրբ» բառով հետևյալ անվանումները. *Սուրբ Գիրք, Սրբագիրք (հնց.), Սրբագրյա Գիրք, Սրբազնաբանություն, Սրբազան Գիրք, Սրբազան Մատյան, Սուրբ տառ(ք)* և այլն:

3. *Սուրբ Սրբոց*՝ հին հրեական խորանի, հետագայում Երուսաղեմի տաճարի սրբազան մասը, որտեղ տարին մեկ անգամ իրավունք ուներ մտնելու միայն քահանայապետը: Ըստ Հին Կտակարանի՝ *Սուրբ Սրբոցում* պահվում էր Մովսես մարգարեի «Կտակարանի» կամ «Ուխտի» տապանակը: Փոխաբերական առումով «Սուրբ սրբոց» նշանակում է ամենանվիրական, ամենաթանկարժեք:

4. *Սուրբ Սեղան.* Եկեղեցու արևելյան մասում՝ գլխավոր խորանում գտնվող օծված սեղան՝ Աստվածամոր և Աստվածորդու պատկերով, որի վրա կատարվում է Սուրբ Պատարագի արարողությունը:

5. *Սուրբ Երկիր* . Պաղեստին:

6. *Սուրբ քաղաք*՝ քրիստոնյաների համար Երուսաղեմ, մահմեդականների համար՝ Մեքքա:

Բարբառային հարադրավոր կազմություններից տարածված են հետևյալ արտահայտությունները.

ա) *Սուրբ-սուրբ անել*, Եր. Ղրբ. հարգել, պաշտել, շատ սիրել (Նրան սուրբ-սուրբ է անում): Այս արտահայտությունն ասվում է նաև իրերի համար: բ) Սուրբի դուռ դառնալ, Ախք. -այցելուները շատ լինել (Խանութս սուրբի դուռ դարձավ, հաճախորդ շատ ունիմ): *Սրբած թուր*- անվեհեր, աներկյուղ, *սրբած թրից երես չթեքել*- անվեհեր, քաջասիրտ լինել:

Հետաքրքիր բարբառային հարադրություններ են հանդիպում բույսանունների և թռչունների անվանումներում: Օրինակ՝ *Սուրբ Կարապետի ծաղիկ*, Մշ. - անթառամ ծաղիկ: *Սուրբ Գևորգու խոտ* (բսբ.) - կատվախոտ, կատվի դեղ, կատվակծկուռն, *Սուրբ Գրիգորի խոտ*- խնկածաղիկ, մարեմխոտ, *Սուրբ Գրիգորի ծառ* - կասի, սալիխա, *Սուրբ Հակոբա ղուշ*, Ար. Ալշ. Նն.. - զրզոռ (Բլ. Խլթ), տարմահավ - սարյակի մեծությամբ և նրա նման սևաթույր թռչուն, որ կերակրվում է մորեխով և այլն:

Բարբառներում «սուրբ» բառով որոշ կազմություններ փոխաբերաբար ունեն բացասական իմաստ, ինչպես՝ օրինակ՝ *սուրբ-սրբոց*, Պլ. ծաղրական իմաստով նշանակում է ամբարիշտ մարդ: *Սուրբ սխտոր*, Պլ. բարի դեմքով խաբեբա, խաչագող:

«Սուրբ» բառով կազմվում է նաև իգական անձնանուն՝ Սրբուհի, որն ունի Սըրբուն, Սրպուհի, Սռպուհի բարբառային տարբերակները: Այս անձնանունը առավելապես հատուկ է արևմտյան լեզվատարածքին:

Բարբառային կիրառություններից զատ՝ *սուրբ* բառը հատուկ է նաև գործառական բոլոր ոճերին: Այսպես՝

1. Առօրյա-խոսակցական ոճում «սուրբ» բառը «նվիրական, սիրելի» իմաստով առավելապես կիրառվում է համեմատություններում մեջ, ինչպես նաև փոխաբերություններում, օրինակ՝ *իրեն սրբի տեղ է դրել, սրբի նման աղջիկ, սուրբ մայրիկ, սուրբ հայրենիք, սուրբ հող, հազար սրբի դուռ գնալ* և այլն և այլն:

2. Վարչագործարարական ոճում «սուրբ» բառը կիրառվում է մասնավորաբար եկեղեցական պաշտոնական գրագրության մեջ, քրիստոնեական-հոգևոր ոլորտի գործնական գրություններում՝ դիմումներում, խնդրագրերում, արձանագրություններում և դիվանատան այլ փաստաթղթերում: Կուսակրոն քահանայությանը ուղղված դիմումներում կամ խնդրագրերում «սուրբ» բառը հանդիպում է բառակազմական զանազան կերպերով:

3. Գիտական ոճում «սուրբ» բառի կիրառության դասական բազմաթիվ օրինակների կարող ենք հանդիպել քրիստոնեական հայրերի՝ Եզնիկ Կողբացու, Հովհան Ոսկեբերանի, Հովհան Օձնեցու, Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Խլաթեցու, Հակոբ Ղրիմեցու, Մաշկևորցու, ինչպես և մեր նշանավոր հովվապետների և այլոց աստվածաբանական, եկեղեցական, հայրաբանական գրականության մեջ: Որպես աստվածաբանական-գիտական ոճի դրսևորումներ մենք քննության ենք ենթարկել հիմնականում երանաշնորհ Գարեգին Առաջին Սարգսյան Կաթողիկոսի «Հայ Եկեղեցու աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու» վարդապետական թեզը (Անթիլիաս, 1955, անտիպ) և «Դաւանաբանական աստուածաբանութիւն» երկը (Անթիլիաս, 1975, անտիպ):

4. Հրապարակախոսական ոճ: Մեր հոգևոր հայրերը հրապարակային քարոզխոսություններում բնականաբար բազմիցս կիրառում են «սուրբ» բառով կազմված բազմաթիվ բարդություններ:

5. Գեղարվեստական ոճ: Մեր հոգևոր հայրերի երկերում, Շնորհալու շարականներում, Գրիգոր Նարեկացու և մյուս հայտնի, նաև ոչ այնքան հայտնի հոգևորականների գեղարվեստական երկերում չափազանց շատ են «սուրբ» բառի գեղարվեստական կիրառությունները: Երջանկահիշատակ Գարեգին Առաջին Կաթողիկոսի գրչին պատկանող ակնարկային բնույթի արձակ բանաստեղծությունները ևս («Հող, մարդ և գիր», Անթիլիաս, 1991) այս բառի գեղարվեստական կիրառության բազմաթիվ օրինակներ են ի հայտ բերում:

Քրիստոնեական աստվածաբանական բառապաշարում այն ունի նաև տերմինային արժեք: Որպես մասնագիտական բառ գործածվելիս «սուրբ» բառը տարբերվում է սովորական կիրառություններից նրանով, որ գործածվում է որոշակի իմաստով՝ գիտականորեն, տվյալ պարագայում աստվածաբանորեն ճշգրիտ և ստույգ սահմանված հասկացություններ արտահայտելու համար: Այդ դեպքում քննարկման ենթարկված բառը, որպես աստվածաբանական ոլորտին բնորոշ բառ, հանդես է գալիս որպես աստվածաբանական եզր: Տերմինային կիրառություն ունեն ընդհանրական և Հայ Եկեղեցու սրբադասման մեջ ընդունված մարտիրոսների և քրիստոնեական վկաների անուններին ավելացվող «սուրբ» մակդիրը: Օրինակ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի (Եկեղեցին ոչ միայն սուրբ է՝ մաքուր, անբիծ, այլև սրբարար, որտեղ կարող են գալ և անդամակցել բոլոր մեղավորները), Ս. Աստվածածին, Քրիստոսի 12 սուրբ առաքյալները, Սուրբ Հռիփսիմե, Ս. Ստեփաննոս Նախավկա, Ս. Սանդուխտ կույս, Ս. Ոսկյանք, Ս. Վարդանանք և այլն և

այլն: «Սուրբ» տերմինով են կոչվում նաև եկեղեցիների և զանազան սրբավայրերի անունները: Ինչպես՝ Սուրբ Երուսաղեմ, Ս. Կաթողիկե, Ս. Հարություն և այլն: «Սուրբ» բառը տերմինային արժեք ունի նաև քրիստոնեական դավանաբանության, ծիսական արարողակարգին, քրիստոնեական տոներին վերաբերող բառակապակցություններում: Օրինակ՝ Սուրբ Երրորդություն, Սուրբ Հոգի, Սուրբ Ծնունդ, Սուրբ Հարություն, Սուրբ Մյուռոն, Սուրբ Պատարագ, Սուրբ Խորան, Սուրբ Գեղարդ, Սուրբ Դաստառակ և այլ բազմաթիվ սուրբ իրերն ու անոթները անվանող բառերի մասը:

«Սուրբ» արմատական ածականը լայնորեն կիրառվում է նաև գոյականաբար, դրսևորում գոյական խոսքի մասին բնորոշ հոգնակիություն և հոլովական հատկանիշներ՝ կիրառվելով նաև ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Ինչպես տեսանք, «սուրբ» ածականը բառային կազմում հանդես է բերում հաճախականության մեծությամբ և կենսունակությամբ և դրսևորվում է հայերենի զարգացման բոլոր փուլերում, բարբառային և գրական տարբերակներում, գործառական բոլոր ոճերում, բառակազմական բոլոր դրսևորումներում:

Ինչպես հայտնի է, ամեն մի լեզու ունի բառակազմական որոշակի օրինաչափություններ և հնարավորություններ՝ նորանոր բառեր կազմելու և դրանցով եղած բառապաշարը համալրելու և հարստացնելու: Բառաբարդման անսպառ հնարավորություններ կիրառելով՝ բառակազմական կաղապարների ու բաղադրական հիմքերի բազմազանությամբ, ածանցների հարստությունն ու ածանցական բառակազմությունների անսահմանափակ հնարավորությունները կիրառելով երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ստեղծել է բազմաթիվ նորաբանություններ, թվով մոտ 2000 (տե՛ս Հայկանուշ Մեսրոպեան, «Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկերի բառարան», Մոնրէալ, 2000), որոնցից մեր նյութի հետ առնչվում են «սուրբ» բառով նորակազմությունները: Այս պարագայում «սուրբ» բառը կենսունակություն է դրսևորում նաև որպես նորակազմության բաղադրիչ տարր:

Այդպես Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեր լեզուն հարստացրել է բառապաշարի ներքին հնարավորություններով:

Այդ բառերի մեծագույն մասը այսօր այլևս մեկուսացած նորաբանություններ չեն, այսինքն՝ դիպվածային բառեր չեն, որպիսիները չեն ընդհանրանում ու չեն անցնում բառապաշարի գործուն շերտին, այլ դրանցից շատերը ընդհանրացող նորաբանություններ են, որոնք լայնորեն կիրառվում են հոգևոր գրականության մեջ և աստիճանաբար այդ ոլորտից դուրս գալու միտում ունեն, ինչպես՝ *անսակարկ, բնութենական, թելադրական, հոգեմտաւոր, ձայնեղէն, որոշադրիչ* և այլն: «Սուրբ» բառով հեղինակային նորակազմություններ են՝ *սրբադասում* – սուրբ+ա+դաս+ում (սրբերի կարգը դասելը), «Եւ կու գայ օրը, երբ այլեւս բնականօրէն ճանչցուած ձեր սրբութիւնը կը դառնայ կանոնականացեալ սրբադասում» (Անցեալը անցած չէ, 59), *սրբադրոշմ* – սուրբ+ա+դրոշմ (սուրբ կնիքով դրոշմված, մաքրությամբ փայլող),

«Ով կը սիրէ Զարեհ Կաթողիկոսը, ով կը նայի մաքուր հայեացքով անոր սրբադրոշմ և հայատիպ անձին, ան կը քալէ զարեհեան շաւիղով» («Հասկ», 1988, 3-4): *Սրբազնախօս* = սուրբ+ազն+ա+խօս (սուրբին հատուկ բառերով խոսող, սրբավայել արտահայտվող) «Անտեսանելի Աստուած յանկարծ մարմին կը դառնայ, ինչ որ հայ սրբազնախօս բանաստեղծ աստուածաբանը կը կոչէ «խորհուրդ մեծ և սքանչելի» («Ես յաղթեցի աշխարհի», 43): *Սրբազնաճաճանչ* = սուրբ+ազն+ա+ճաճանչ (սրբի նման ճաճանչող, փայլող): *Սրբազնաշունչ* = սուրբ+ազն+ա+շունչ, սուրբ ցեղից ծագած, ազնվական շունչ և մաքրություն ունեցող (Վարդանանց և Ղևոնդեանց սրբազնաշունչ հերոսներու մարմնատրած ոգին մեր ազգային աւանդաւ ցոյն աւանդութեանց անլռելի զանգահարումն է մեր գիտակցութեան մէջ («Ծանի՛ր զքեզ...», 100), *սրբաճաճանչ* = սուրբ+ա+ճաճանչ (սրբի պես փայլող, մաքրությամբ փայլող) «Ինչպէ՞ս պիտի ստանայինք կտակն անմահներուն, եթէ չըլլար դիւցազունններուն գեր-շիրիմեան լեզու տուող Եղիշէին «Ցաղագս Վարդանայ» աՀեղաշունչ եւ սրբաճաճանչ մատեանը» («Հայ մարդը հայ գիրքին դիմաց...», 29): *Սրբաշող* = սուրբ+ա+շող (սրբի պես շողացող, փայլող), «Եկած ենք մեր նախնեացներու սրբաշող յիշատակէն լո՞յս քաղելու և մեղահալած սպիտակութիւնը ցանելու մեր գորշացած հոգիներուն վրայ» («Հող, մարդ և գիր», 96): *Սրբատաշութիւն* = սուրբ+ա+տաշ+ութիւն (սրբորեն տաշված, հղկված, ողորկված), («Պէտք է բացուեն մեր աչքերը կարենալ տեսնելու համար հաւատքի այս հսկայական, անդիմադրելի հոսանքը, որ անցնում է հայոց քարերի բիւրեղ սրբատաշութեամբ, հայոց քանդակների նրբաքանդակ երեսներով» («Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ», 52):

### Եզրակացություն

«Սուրբ» բառը հայերենի բառային կազմի հիմնական բառապաշարի մաս է կազմում և օժտված է գործածության հաճախականությամբ և կենսունակությամբ: Կարծում ենք, որ այդ է պատճառը, որ «սուրբ» բառը բարբառներում և հայերենի զարգացման տարբեր փուլերում, ինչպես և մեր երկու գրական լեզուներում մեծ դիմադրականություն է հանդես բերել օտարաբանություններին և այլ լեզուների ազդեցությամբ կատարվող աղավաղումների հանդեպ:

# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագլ. - Ագուլիս
Ադբ. - Ադաբազար
Ախք - Ախալխալաք
Ակն. - Ակն
Ալշ. - Ալաշկերտ
Ալ. - Ալանբեգ
Ար. - Արարատյան
Արբ. - Արաբկիր
Անտ. - Անտիոք
Բլ. - Բալու
Գրս. - Գորիս
Եվդ. - Եվդոկիա
Զթ. - Զեյթուն
Թբ. - Թբիլիսի
Խլթ. - Խլաթ
Խրբ.- Խարբերդ
Համշ. - Համշեն
Ղրբ. - Ղարաբաղ
Մկս. - Մոկս
Մշ. - Մուշ
ՆՆ. - Նոր Նախիջևան
Պլ. - Պոլիս
Ջղ. - Ջուղա
Ռդս. - Ռոդոսթո
Սբ. - Սեբաստիա
Սլմ. - Սալմաստ
Սչ. - Սուչավա
Վն. - Վան
Տգր. - Տիգրանակերտ
բսբ. - բուսաբանական
ենց. - ենացած

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Հրաչյա Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979:

2. Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:

3. Սահակ վարդապետ Ամատունի. Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:

4. Հրաչեայ Աճառեան, Էջմիածնեան ազգագրական ժողովածու, հատոր Թ, Հայերէն գաւառական բառարան, Մոսկուա, 1902:

5. Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992:

6. Հայոց լեզու, Գ. Բ. Ջահուկյան, Է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, մաս 1, Երևան, 1980:

7. Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Հ. Խլղաթյան, Հայոց լեզու. Ոճաբանություն, Երևան, 1976:

8. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985:

9. Գարեգին Ա Սարգիսեան, ամբողջ գրական ժառանգությունը:

10. «Հասկ», Անթիլիաս, 1954-1994:

11. «Էջմիածին», Էջմիածին, 1996-1999:

12. Գարեգին Ա Սարգիսեան, Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու, վարդապետական ճառ, Անթիլիաս, 1955, անտիպ:

13. Գարեգին Ա Սարգիսեան, Դաւանաբանական աստուածաբանութիւն, Անթիլիաս, 1975, անտիպ:

14. Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, Երևան, 1985:

*ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ*

# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Բագրատունիների թագավորության հաստատումով, երբ վերականգնվեց Հայաստանի քաղաքական անկախությունը, երկրում սկսվում է տնտեսական կյանքի բուռն վերելք. և զարգանում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ու տարանցիկ առևտուրը: «Առանձնապես մեծ ծավալ էր ստացել միջազգային քարավանային առևտուրը: Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները, որոնք դուրս էին մնացել արաբա-բյուզանդական երկարատև պայքարի ոլորտից, IX-XI դարերում դարձել էին Արևելքն Արևմուտքի հետ կապող կարևոր օղակներ: Առանձնապես բանուկ են դառնում Հայաստանի վրայով անցնող տարանցիկ ճանապարհները, որոնց կենտրոնը և գլխավոր հանգույցը VIII - IX դարերում Դվինն էր»[1], իսկ X դարի երկրորդ կեսից՝ արագորեն զարգացող Անին:

Հայաստանով անցնող քարավանային ճանապարհները, նաև Դվինից Հրազդանի ու Աղստևի հովիտներով դեպի Տփխիս և Գանձակ գնացող ուղիները նկարագրել են մեծավաստակ Հակոբ Մանանդյանը[2] և Վարազդատ Հարությունյանը[3], սակայն ընդհանուր գծերով, առանց մանրամասնելու: Խնդրո առարկա տարածաշրջանի ու իրադարձություններով հարուստ ժամանակի մասին իր «Վահրամյանների իշխանությունը» շահեկան աշխատության մեջ պատմաբան Արտաշես Շահնազարյանը վերլուծելով Զաքարյանների կրտսեր ճյուղի իշխանությունում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նաև անդրադարձել է այդտեղով իրականացվող տարանցիկ առևտրին, որի գլխավոր զարկերակը Պարտավ-Տփխիս ճանապարհն էր: «Առևտրական այդ ուղին,- գրում է նա,- ոչ միայն Վահրամյանների համար եկամտի աղբյուր էր, այլև նրանց ֆեոդալական իշխանությունը կապում էր արտաքին աշխարհի հետ»[4] և միաժամանակ ապրանքա-դրամական հարաբերու-

---

[1] Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, էջ 21:

[2] **А. Я. Манандян**. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н.э.- XV в.н.э.), Ереван, 1954.

[3] Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960:

[4] Ա. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 152:

թյունների կարևոր խթանիչ էր: Այնուհանդերձ, այդ հեղինակն ինչպես աշխատության շարադրանքում, այնպես էլ մատուցած քարտեզում չի տվել Բագրատունիների, նրանց շառավիղ Կյուրիկյանների և ապա նրանց հաջորդած Զաքարյանների ժամանակների՝ ներկայիս Տավուշի մարզի տարածքով անցնող ճանապարհների նկարագիրը: Դրանք քննարկված չեն նաև Ռաֆայել Մաթևոսյանի Տաշիր-Ձորագետի թագավորությանը նվիրված աշխատությունում[5]: Երկրամասի XIX դարավերջի նոր ճանապարհներին անդրադարձել և կարևոր տեղեկություններ է հայտնել Ալեքսանդր Երիցյանը[6], սակայն առանց խորանալու մինչև ռուսական տիրապետության հաստատումը եղած քարավանային ճանապարհների պատմության մեջ:

Հովհաննես Դրասխանակերտցին հայրենասերի հոգու վայելքով է նկարագրել հայոց պետականության վերահաստատման փաստը և Բագրատունյաց անդրանիկ թագավորի՝ Աշոտ Ա-ի (885-890 թթ.), մեծագործության մանրամասները, երբ նա արքայավայել նպաստել է այն ամենին, ինչ արժանի է «թագավորությանը՝ և՛ թագավորության մեջ, և՛ թագավորության շուրջը»: Նա «նաև ամբողջությամբ իր ազդեցության տակ է գցում Գուգարքի խռովարար ժողովուրդներին և Ուտի գավառի ավազակային մարդկանց՝ նրանցից վանելով մարդադավ ավազակությունը, բոլորին դարձնում է օրինավոր ու հնազանդ և նրանց համար առաջնորդներ ու իշխաններ է կարգում»[7]: Երկիրը բարեկարգելու, կառավարելի ու ռազմաշունչ ցեղերի հարձակումներից անվտանգ դարձնելու գործը շարունակում են Բագրատունյաց հաջորդ թագավորները: Նրանց ժամանակներում են կառուցվել կամ վերակառուցվել Կուրի դաշտավայրից հարձակվող թշնամիների առջև թագավորության հյուսիս-արևելյան ձորաբերանները փակող Գագ, Գավարզին, Մահկանաբերդ, Կայան, Կայծոն, Կածարեթ, Տերունական, Տավուշ, Երգեվանք և Մածնաբերդ ամրոցները, որոնք, անշուշտ, ճանապարհներով կապված են եղել իրար հետ՝ որպես պաշտպանական նույն համակարգի մասնիկներ: Նորաստեղծ պետության սահմանները Տփխիսի ու Գանձակի ամիրայությունների ոտնձգություններից զերծ պահելու նպատակով պատմական Գուգարք նահանգի կենտրոնական, հյուսիսային և արևելյան կողմերում, որոնք արդեն կոչվում էին Տաշիր-Ձորագետ, 966-ին ստեղծվում է ռազմավարչական մարզ, որը հիմնադիր-կառավարիչ Գուրգենի՝ Աշոտ Գ Բագրատունու կրտսեր որդու անունով կոչվում է Կյուրիկյանների (Լոռու կամ Տաշիր-Ձորագետի) թագավորություն, որը գոյատևում է մինչև 1118 թվականը: Սկզբում այդ թագավորության կենտրոնը Վրաց դաշտում գտնվող Շամշուլդե բերդն էր, իսկ 1065-ից՝ Կյուրիկյան Դավիթ Անհողին թագավորի հիմնադրած Լոռե կամ Լոռի բերդաքաղաքը, որի մոտակայքում Սանահինում, Հաղպատում էր գտնվում

[5] Ռ. Մաթևոսյան. Տաշիր-Ձորագետ. Երևան, 1982:

[6] **Д. А. Ерицов**. Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветопольской губернии. Тифлис, 1886.

[7] Հովհ. Դրասխանակերտցի. Հայոց պատմություն. Երևան, 1996, էջ 143:

կյուրիկյան թագավորության հոգևոր կառավարչությունը՝ Հայոց Եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդարանը[8]: Ահա աշխարհիկ և հոգևոր այս կենտրոններից թագավորության մինչև Արցախի սահմաններ տարածվող արևելյան գավառների հետ կապերի իրականացման հիմնական «մայրուղին»* է, մեր կարծիքով, բազմազան կապերի իրականացման հիմնական «մայրուղին»՝ մինչև այժմ անտեսված ու չճշտված: Իսկ այդպիսին, որ անպայման պիտի լիներ, աներկբա է:

Նայելով քարտեզին, յուրաքանչյուր ոք կնկատի, որ թագավորանիստ Լոռի բերդից դեպի Կուր գետի աջափնյակում տարածվող երկրամասի կենտրոն ամենակարճ ուղին կարող էր անցնել ներկայիս Դսեղ-Աթան-Կիրանց գծով, միջնամասում հաղթահարելով Կյուրիկյան թագավորության երկու մասերը՝ Տաշիրն ու Ձորահետը իրարից բաժանող Գուգարաց լեռնաշղթան: Եվ, իսկապես, եղել է նման «մայրուղի»: Լոռի բերդից սկզբնավորվող քարավանային ճանապարհը Դեբեդի կամուրջներից մեկով բարձրացել է Դսեղի սարավանդ, շրջվել հյուսիս-արևելք, գնացել դեպի Աթան գյուղ և Գիլիկ սարի ստորոտի լեռնանցքով հատել Գուգարաց լեռնաշղթան և դուրս եկել Աղստևի վտակներ Պաղջուր ու Կիրանց գետերի ակունքների շրջանը (տե՛ս ներկայացվող քարտեզը):

Ճանապարհը գնացել է դեպի Կուրի դաշտավայր և լեռնաշղթան հատելուց հետո չի թեքվել աջ՝ դեպի իշխանանիստ Կայան բերդ, որովհետև դրան խոչընդոտ են եղել իրար շարունակություն կազմող դժվար մատչելի, իսկ ձյունառատ ձմեռներն անմատչելի Հալաբի և Կայենո լեռնաշղթաները: Ներկայիս Կիրանց և Ոսկեպար գյուղերի ամառանոցների Գառնասար հանդամասից ճանապարհը բաժանվել է մի շարք ճյուղերի: Կենտրոնականը մինչև Մեսրոպավան (նախկին Չայղոշան) իջել է երկու ուղղությամբ: Մեկը Գառնասարից անմիջապես մտել է Կիրանցի ձոր և համանուն վանքի մոտով ձգվել դեպի Մեսրոպավան: Մյուսը Գառնասարից Պաղջրի և Կիրանցի ջրաբաժանը հանդիսացող լեռնաբազկի կատարով գնացել է արևելյան ուղղությամբ և Հարսնաքարի մոտ թեքվել հյուսիս-արևելք ու Դեղձնուտի վանքի մոտով նույնպես հասել Մեսրոպավան, Կիրանց ու Սամսոն գետակների միախառնման անկյունի քարե կամարակապ կամրջով միացել Կիրանցի վանքի կողմից եկող ճյուղին: Առաջին ճյուղը կարճ է եղել, բայց ոչ անվտանգ, որովհետև ապրիլ-հուլիս ամիսներին հազվադեպ չեն հեղեղները և քարավանների համար վտանգավոր են եղել նաև հանկարծահաս ձնաբքերը: Իսկ Դեղձնուտի վանքի մոտով անցնող ճանապարհը մի փոքր երկար, բայց եղել է անվտանգ: Մեսրոպավանում նորից միատեղված ճանապարհը մտել է Մահկանաբերդի Արծրունիների Առաքելոց գյուղաքաղաք, ապա Կանգարք գավառի (ուշ միջնադարերում Խերումյան իշխանական

[8] «Էջմիածին» ամսագիր, 1998, Զ, էջ 68-76:

* Այս ճանապարհի գոյությունը կռահել են «Դիվան հայ վիմագրության» պրակ VI-ի (Երևան, 1977) կազմողներ Ս. Ավագյանը, Հռ. Ջանփոլադյանը և մի քանի տող նվիրել այդ հարցին «Առաքելոց վանք» հոդվածում, էջ 202:

տոհմի)[9] իշխանանիստ կուճեն գյուղաքաղաք և Ոսկեպար ու Կիրանց գետերի միախառնման անկյունից դուրս եկել Գագա դաշտ ու այստեղ բարձրացող միակ Գավարգին (կամ Քավազին) ժայռ-ամրոցի արևելյան ստորոտով գնացել միանալու Տփխիս - Գանձակ ճանապարհին: Ինչպես վկայում են փաստերը, Լոռի բերդ-Կիրանց-Գագա դաշտ կարևոր ճանապարհն իր նախնական նշանակությամբ բանուկ է եղել մինչև XIX դարի առաջին կեսը և հատվածաբար բանուկ է նաև այժմ:

1975 թ. ամռանը նախկին Իջևանի շրջանի Կիրանց գյուղի 117-ամյա բնակչուհի Խանում Ծաղինյանը հողվածի հեղինակին պատմել է. «Երբ Ծահնանց տուն հարս եկա, նրանց մեծ նանը՝ իննսուն տարեկան մի ժիր պառավ, դեռ ապրում էր: Դե, հիմա դու հաշվիր, թե որ թվին էր ծնվել: Նանն ասում էր, թե իր աղջկության ու նորահարսության տարիներին քարավան-քարավանի հետից առևտրականները մեր ճանապարհով Պարսկաստանից աբրեշումի (մետաքսի) նոթ կտորներ էին տանում Տրապիզոն ու Ստամբոլ, իսկ այնտեղից բերում էին «ֆրանկի» ապրանքներ: Նաև դեպքեր են եղել, որ խոր ձորերում բքախեղդ է եղել մի ամբողջ քարավան: Առևտրին շատ-շատ են վնասել Դաղստանի լեզգիները»: Ժողովրդի հիշողության այս տարրը պատմական հիմք ունի: Հայտնի է, որ Պարսկաստանը XVIII դար մտավ որպես քայքայվող թույլ երկիր: Վիճակից օգտվել ցանկացան հզոր հարևանները՝ ցարական Ռուսաստանն ու սուլթանական Թուրքիան: Օսմանցիները Պետրոս Մեծի կասպիական արշավանքին պատասխանեցին Անդրկովկասի մեծ մասի գրավումով և ոտքի հանեցին դավանակից (սուննի) Դաղստանի լեռնականներին, որոնց չդադարող ասպատակությունները ավելի քան մեկ դար իսկական չարիք դարձան հյուսիս-արևելյան Հայաստանի բնակչության համար: Ներկայիս Տավուշի մարզի գյուղերը գրեթե հայաթափվեցին: Իսկ ամենամոտ թուրքական իշխանությունը՝ Ախալցխայի փաշայության հետ իրենց կապը Դաղստանի լեռնականները պահպանել են հիմնականում այս կարճ ու հարմար ճանապարհով: Որպես անցած դժնդակ օրերի հիշողություններ Կիրանցի ձորում մնացել է Լեզգու քար, Լեզգու արահետ, Չաչանի (չեչենի) գոմեր, Չերքեզի քերծ, Ավարի թալա տեղանունները:

Մինչև 1980-ական թվականներն ապրող տարեցների վկայությամբ, այս քարավանային ճանապարհը ռազմական նպատակով վերջին անգամ օգտագործվել է 1918-ի հունիսի առաջին օրերին, երբ Լոռի մտած թուրքական բանակը Գուգարաց սարերից երթով իջել է Կիրանցի ձոր ու անցել Ղազախ: Երկրամասում աշխարհաքաղաքական իրավիճակի փոխվելուց հետո, երբ XIX դարի սկզբին Անդրկովկասից դուրս մղվեց Պարսկաստանը և նրա տեղը գրավեց Ռուսաստանը, Գագա դաշտ-Լոռվա սարահարթ քարավանային ճանապարհը կորցրեց իր հիմնական նշանակությունը: Մինչև 1950 թ. դրանից, որպես քոչի ճանապարհ, ավանդույթի ուժով օգտվում էին անասնապահ ադրբեջանցիները: Միջնամասում ճանապարհը վերականգնելու շնորհիվ սկսել է ծառայել Անճարկուտի անտառտնտեսությանը,

[9] «Էջմիածին» ամսագիր, 1998, Զ, էջ 77-80:

որից շարունակում են օգտվել մերձակա գյուղերի համայնքները: Այժմ էլ բեռնատար ավտոմեքենայով մի քանի ժամում Կիրանց գյուղից կարելի է հասնել Աթան կամ Դսեղ:

Լոռի բերդ-Գագա դաշտ քարավանային ճանապարհի մասին լավ պատկերացում կարելի է կազմել Կիրանցի ձորում գրեթե անվթար մնացած Կուց աղբյուր - Թեղուտ հատվածով: Ճանապարհը նախատեսված է եղել ոչ միայն հետիոտների ու գրաստների, այլև սայլերի համար: 2.5-3.5 մետր լայնությամբ այս հնագույն «մայրուղին» աննշան բացառությամբ անցել է ձորերի արևահայաց լանջերով, հարմարվելով բարդ ռելիեֆին՝ ոլորքներ տալով քարափների շուրթերին, կրկնելով ձորերի ու բարձունքների կորությունը, որովհետև հին ճանապարհաշինարարներին անհայտ են եղել պայթուցիկ նյութերն ու տեխնիկական հզոր միջոցները: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում 2-2.5 մետր բարձրությամբ, առանց շաղախի՝ «չոր» շարվածքի քարե հենապատերը, որոնց շնորհիվ հարթեցվել, անվտանգ երթևեկելի են դարձվել սարալանջերի մեծ թեքությունները: Ժամանակի ընթացքում աճած ծառերն ու թփերն այնպես են ամրացրել հենապատերը, որ ճանապարհի այս հատվածով 1930-1940-ական թվականներին երթևեկել են անտառանյութ կրող բեռնատար ավտոմեքենաները: Քարավանային այս ուղու վրա կառուցվել են մի շարք քարե կամարակապ կամուրջներ: Առաջինը Մեսրոպավանում է, երկրորդը՝ Կիրանց գյուղի Ծոռ ջրի ձորում, երրորդը՝ Ոսկեպար գետի վրա՝ Մազամլի գյուղի մոտ, որը մնացել է Ջողազի ջրամբարի տակ, և վերջինը՝ Գագա դաշտի հյուսիս-արևելյան կողմում, Կոթի գյուղից դեպի Ոսկեպար գետ ձգվող ձորակի վրա:

Այն դարերում, ընդունված կարգի համաձայն, ելնելով անվտանգության և հարմարության պահանջներից, հետևակ մարդու քայլքի մեկ օրվա ճանապարհի հեռավորությամբ այստեղ պիտի կառուցվեին քարավանատներ կամ լինեին ապաստարաններ: Իսկ այստեղ եղե՞լ են այդպիսիք: Այո: Գանձակ-Տփխիս ճանապարհից դեպի Լոռի թեքվող ճյուղի սկզբնամասում, ըստ տարեցների հաղորդման, եղել է ավերված քարավանատուն: Հաջորդ քարավանատունը եղել է Առաքելոց գյուղաքաղաքում և այժմ էլ կիսավեր վիճակում պահպանվում է: Այս նպատակին, անշուշտ, ծառայել է նաև Կիրանցի վանքի պարսպապատ ընդարձակ բակը: Մինչև Գուգարաց լեռնաշղթան հատելը, վերջին քարավանատունը կառուցված է եղել վերը հիշատակված Գառնասարի հարավ-արևմտյան կողմում, Նորից գետափին, ուր պարզորոշ նշմարվում են ուղղանկյուն շինությունների հետքեր և կան անվիմագիր խաչեր կրող գերեզմանաքարեր ու խաչքարեր: Իսկ այստեղից մեկ օրում ուղևորները հասել են Դսեղ, իսկ հաջորդ օրը՝ Լոռի բերդաքաղաք: Կուրի ափից մինչև Կյուրիկյանների մայրաքաղաք, շուրջ 120 կմ ճանապարհը, հաղթահարվել է 5 օրում:

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ



## ԱՂՍՏԵՎԻ ՀՈՎՏԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ



Երկրամասում կենտրոնական դիրք գրավող այս քարավանային ճանապարհով Կյուրիկյանների ոստանը բազմաթիվ ճյուղերով կապված է եղել Տաշիր-Ձորագետի թագավորության արևելյան գավառների հետ: Գառնասարում գլխավորից դեպի հյուսիս և հարավ բացվում են ևս երկու կարևոր ճանապարհներ: Մեկը ներկայիս Լոռվա մարզի Աճնիձոր գյուղի արևելյան կողմով, Հալաբ սարի ուսով դուրս է գալիս Մարգահովիտ գյուղի մոտ, ապա ճյուղավորվելով շարունակում դեպի Վանաձոր, իսկ մյուսով հաղթահարելով Փամբակի լեռնաշղթան՝ մտնում է Հրազդանի հովիտ, պատմական Վարաժնունիք: Մինչև Հալաբ սարին հասնելը այս կարևոր ուղուց բաժանվում է 2 ճյուղ, մեկը Սառնաջուր գետի վտակ Խաչաղբյուրի ձորից, կեչուտ սարամասով, Կայենո լեռնաշղթայի վրայով մտնում է Հաղարծնի վանք՝ Կայան գավառ: Իսկ մյուսը Մեծակ քարի (Այրի դաշ) լեռնանցքով իջնում է Դիլիջան քաղաքի Շամախյան թաղամաս (Հենց այս լեռնանցքով է 1918-ի մայիսի վերջին իր զորքն ու շուրջ 20 հազարանոց գաղթականներին Դսեղից Դիլիջան տեղափոխել Անդրանիկ զորավարը):

Գառնասարից դեպի հյուսիս գնացող կարևոր ճանապարհը նախ Նոյեմբերյանի Կարմիրգեղ սարամասից թեքվելով ձախ մտել է Կյուրիկյան թագավորության հոգևոր կենտրոն Հաղպատի վանք: Իսկ Կարմիրգեղից ճանապարհը շարունակվելով դեպի հյուսիս, մտել է պատմական Կողբափոր գավառ, որտեղից այլ ուղիներով վերջինս կապվել է Վրաստանի, Կողբ գետի ներքնագավառի ու Գագա դաշտի հետ: Գառնասարից ճյուղավորվող մի այլ ճանապարհ Աղբուղա վտակի ձախափնյակով մտել է Սառնաջուր գետի ձոր և ներկայիս Գետահովիտ գյուղի մատույցներում միացել Աղստևի հովտով անցնող ճանապարհին: Կիրանցի ձորով անցնող գլխավոր ճանապարհի միջնամասում Առաքելոց գյուղատեղից նույնպես սկիզբ են առնում երկուսը: Մեկը, հաղթահարելով արևմտյան կողմում գտնվող Հացուտ հանդամասի բարձունքը, իջել է Ոսկեպարի ձոր և Ջորու կամրջով միացել Գագա բերդին, իսկ այստեղից Գոմշավարով՝ Գառնասար-Կողբափոր ճանապարհին: Առաքելոց գյուղատեղում մի այլ ճանապարհ էլ թեքվել է արևելք և դեռ պահպանվող Սրանոցի կամարակապ քարե կամրջով անցել Կիրանց գետի աջ ափ, ուր նշմարվում են մաքսատան հետքերը, և գնացել դեպի Մակարավանք ու նորից միացել Աղստևի հովտով անցնող ճանապարհին: Ընդհանրապես պետք է նկատել, որ Կյուրիկյան թագավորության արևելքում բերդերը, եկեղեցիներն ու բնակավայրերը հիմնականում կառուցված են եղել նախալեռնային գոտում և իրար հետ կապված ճանապարհների ցանցով:

Աղստևի հովտի ճանապարհների մասին կխոսվի ստորև: Իսկ այժմ փորձենք նկարագրել Տավուշի մարզի արևելյան տարածաշրջանը, որն ընդգրկում է Հախում, Տավուշ և Խնձորուտ (Ախինջի) գետերի հովիտները, որոնցով Կուրի աջ ափի հարթավայրից մինչև Միափոր (Մուրղուզ) սար ձգվել են ճանապարհներ: Գարդմանից Տփխիս գնացող ճանապարհն Ասրիկ գետի հովտով թեքվել է ձախ, Խորանաշատի լեռնանցքում հատել Խնձորուտի լեռնաշղթան, անցել Ախինջի գետի ձախ ափ,

Արծվաբերդի հին գյուղատեղից մտել Զորաթան, ապա Մովսես, Տավուշ գետի հովտում գտնվող Տերունական բերդի մոտից հաղթահարելով Կենաց լեռնաշղթան, իջել Հախումի ձոր, որի արևմտյան լանջերին են Նոր Վարագա, Ծխմուրատի վանքերը և կյուրիկյանների Նոր բերդը: Նոր Վարագա վանքի մոտից հարմար ուղին հատելով Հախումի լեռնաշղթան, ներկայիս Այգեհովիտ գյուղի տարածքում գտնվող Սրվեղի վանքի մոտ միացել է Աղստևի աջափնյակով անցնող ճանապարհին: Սակայն վերադառնանք խորանաշատ, որտեղից միջնադարյան ճանապարհի մի ճյուղը թեքվել է ձախ, ներկայիս Այգեձոր գյուղի միջով, Երգեվանք և Մածնաբերդ ամրոցների ստորոտներով, Խնձորուտ գետի ձախափնյակի արևահայաց լանջով առաջացել Միափորի լեռնաշղթայի արևելյան ծայրամասի թամբոցին գտնվող լեռնանցք և իջնելով Գետիկի հովիտ՝ մտել Միափորի գավառ: Իրար մոտ գտնվող Մածնաբերդի և Երգեվանքի մատույցներից մի այլ ճանապարհ հյուսիս-արևմտյան ուղղությամբ հատելով Տավուշի լեռնաշղթան, ներկայիս Արծվաբերդ-Վերին Կարմիրաղբյուր երթուղով իջել է Տավուշի ձոր, միացել համանուն բերդի հետ: Այստեղից երկու ճանապարհ, Չինչինի և Նավուրի լեռնանցքներով հատելով Կենաց լեռնաշղթան, նույնպես մտել են Հախումի ձոր: Նավուրից գետահովիտ մտած ճանապարհը դարձել է եռաճյուղ: Աջակողմյանը, հաղթահարելով Հախումի լեռնաշղթան, մտել է Աղստևի հովտում գտնվող Մորո ձորի վանք: Կենտրոնականը, նույնպես հատելով այս լեռնաշղթան, Սխտորուտի լեռնանցքով միացել է Կայան գավառի արևելքում՝ ներկայիս Գանձաքար գյուղի տարածքում գտնվող ճանապարհների հանգույցին: Նավուրից ձախ թեքվող ճանապարհը Հախումի ձորով գնացել է վեր և Քառասուն աղբյուրի մոտակայքում, Միափոր (Մուրղուզ) գագաթի արևմտյան ստորոտի և Քամոտի լեռնաշղթայի կցանվածքի լեռնանցքով իջել Գետիկի հովտում (Միափորի գավառում) գտնվող ներկայիս Աղավնավանք գյուղ:

Մեծ Հայքի հյուսիս-արևելյան սահմանների պաշտպանությանը կոչված Գուգարքի բդեշխության (կամ զորաթևության) մեջ կարևոր դերակատարում է ունեցել Աղստև գետի միջնամասում տարածվող Ձորափոր գավառը, որն իր ամրություններով Հյուսիսային Կովկասից և արևելքից արշավող ռազմաշունչ ցեղերի առջև հուսալիորեն փակել է դեպի երկրի կենտրոն ձգվող կարևորագույն ուղիներից մեկը: Հակոբ Մանանդյանը խնդրին վերաբերող իր հայտնի աշխատության[10] մեջ, քննարկելով մ.թ.ա. 66-64 թվականներին հռոմեական զորավար Պոմպեոսի արշավանքի շրջանաձև ուղին Անդրկովկասում, գտնում է, որ նա իր բանակը Կոլխիդայից՝ Սև ծովի ափից Ջավախքով հասցնելով Շիրակի դաշտ, այնուհետև շրջվել է հյուսիս-արևելք և ներկայիս Սպիտակ-Վանաձոր-Դիլիջան-Իջևան կարճ ու հարմար ճանապարհով Ղազախ քաղաքի մատույցներում հասել Կուր գետին, ապա հաղթահարելով այս մեծ ջրարգելը՝ արշավել Աղվանքի վրա: Հայտնի է նաև, որ մ.թ. 450 թվականի ամռանը հայոց մեծ սպարապետ Վարդան Մամիկոնյանն Աղս-

[10] Հակոբ Մանանդյան, Երկեր, Ե հատոր, Երևան, 1984, էջ 231-232:

տնի հովտով է իր զորքը շարժել դեպի Խաղխաղի դաշտ, հաղթական ճակատամարտ տվել պարսից բանակին ու նույն ճանապարհով վերադարձել մայրաքաղաք Արտաշատ: Հովհաննես Դրասխանակերտցու պատմությունից երևում է, որ այս ճանապարհից է իր ռազմարշավների ժամանակ օգտվել Աշոտ Երկաթ թագավորը: Տարբեր դարերում այստեղով անցել են արաբները, հյուսիս-արևելյան Հայաստանն ազատագրող Զաքարյանների զորքերը, երկիրն ասպատակող սելջուկները, թաթար-մոնղոլները, պարսիկները, թուրքերը, հետագայում Հայաստանի ազատագրությանը մասնակցած ռուսները: Իսկ պատերազմների դադարների պահին՝ առևտրական քարավանները: Սակայն խոսքը ո՞ր ճանապարհի մասին է: Մեր ուսումնասիրությամբ Աղստևի արևահայաց ձախափնյակում երեքն են. մեկը՝ հայտնի (ներկայիս Իջևան-Երևան ասֆալտապատ մայրուղին), երկուսը՝ գրեթե անհայտ:

Արարատյան դաշտից Աղստևի հովտով դեպի Թիֆլիս գնացող քարավանային ճանապարհի մասին չափազանց ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայ ծագումով ռուս լուսավոր բարեկամ Ալեքսանդր Գրիբոյեդովը[11], որը 1819-ի հունվարի վերջին և փետրվարի առաջին օրերին դիվանագիտական առաքելությամբ մեկնում էր Պարսկաստան: Քսաներից հոգուց բաղկացած նրա խումբը շատ բեռնատար ձիերով ու ուղեկիցներով Թիֆլիսից դուրս է եկել հունվարի 28-ին և նույն օրը, երեկոյան, հասել 42 վերստ հեռավորության վրա գտնվող Դեմուրչիզամ գյուղ (Գարդաբանում): Հաջորդ օրը քարավանը, Կարմիր կամուրջն անցնելով, Ինջա գետի ափից թեքվել է աջ, հաղթահարել Ոսկեպարի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ծայրամասին գտնվող Սուրբ Սարգսի լեռնանցքը, Կոթի գյուղի արևելյան մասով, Ծոռ աղբյուր հանդամասում գտնվող փոստային կայանով, Գավարզին ծայրի, որին Գրիբոյեդովը կոչում է Պեպիս, մոտով հասել Պիպիս, ներկայիս Բերքաբեր գյուղ, և դադար առել: Այս անցման երկարությունը 48 վերստ է: Գավարզին ծայրից մեկ կիլոմետր հարավ այս ուղին հատվել է Լոռի բերդ - Կիրանց- Գազա դաշտ ճանապարհին: Հունվարի 30-ին օրը եղել է ցուրտ, սարերը սառցակալած, ուստի Պիպիս - Քարվանսարա ճանապարհն անցել են մեծ դժվարությամբ: Այնուհետև նա գրում է. «Մեզ խիստ վախեցնում են Դիլիջանի կիրճով. Քարվանսարայից մեկնեցինք Աղստաֆայի հոսանքով, նրա հոսանքին ընդառաջ, և առաջացանք մի կիրճով, որտեղ մեր կողքին կրկնվում էին կովկասյան վայրերը - անտառապատ ժայռեր, որոնց ստորոտին, նրանց միջով աղմկում է գետը, մերթ էլ բաժանվում է բարակ առվակների: Տարբերությունը միայն այն է, որ նախորդ կիրճերում վառոդով ու բրիչով պայքարել էին ճամփախափան ապառաժների դեմ, իսկ այստեղ մարդու ձեռքով ոչինչ չի հարմարեցված հանգիստ ընթանալու համար: Քարերի կույտերը ամեն քայլափոխին կարծես աճում են. ծառերի երկարած ճյուղերը դիպչում են աչքերիդ. ճանապարհը համարյա անանցանելի է. դուրս եկանք բաց տեղ, ուր ուժեղ քամի բարձրացավ մեզ ընդառաջ և չդադարեց հետո էլ մեզ փչել, երբ լեռները արդեն նե-

---

[11] Ա. Ս. Գրիբոյեդով, Ճանապարհորդական նոթեր, Երևան, 1954:

ղացան, և մենք մոտակայքում, անտառոտ սարալանջի մոտ ընտրեցինք գետակին հենված մի վայր՝ հանգստանալու ու գիշերելու համար»[12]:

Փետրվարի 1-ին Քարվանսարայից դեպի Դիլիջանի կիրճ քարավանն անցել է 42 վերստ ճանապարհ և դադար առել Բողասի բացօթյակներում: Ըստ անցած ճանապարհի նկարագրության և «բողաս» տեղանվան կարելի է պնդել, որ խումբը դադար է առել Աղստևի աջափնյա վտակ Հովաքրի նեղուցի («բողասի») նմանվող ձորում. ներկայիս Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տան համալիրի ստորոտում, որտեղից հարավկողմյան լեռնաբազկի վրա է բարձրանում մի հնագույն ճանապարհ, և որից նաև այժմ օգտվում են Աղստևի հովտի գյուղերի սարվորները: Նկատենք, որ Դիլիջան-Սեմյոնովկա-Սևան ճանապարհը կառուցվել է 1870-ական թվականների սկզբին: Գրիբոյեդովի խումբը, անշուշտ, գնացել է ոչ այս ճանապարհով: Նա հայտնում է, որ հաջորդ վաղ առավոտյան բարձրանալով սարի վրա, հանկարծ հայացքով փարվել է մարդկային ցեղը համաշխարհային ջրհեղեղից փրկած հրաշքին, անշարժացել սրբազան ավանդություններից ծնած ապրումներից: Իրենց շարժման ուղությամբ, հարավային հեռաստանի տիեզերական կապույտ գմբեթից կախված էր երկու փառահեղ զանգ: Դրանք Արարատներն էին: Ուղեգիրն այլևս մանրամասներ չի հաղորդում, թե որտեղից է տեսել Նոյյան հանգրվանը: Հաղթահարելով 36 վերստ ճանապարհ, քարավանը Դիլիջանի ձորից նույն օրը հասնում է մի այլ Քարվանսարա գյուղ, որն այժմ Հրազդան քաղաքի թաղամասերից մեկն է, իսկ հաջորդ օրը դեսպանական առաքելությունը հասնում է Երևան՝ «հայկական մայրաքաղաք»: Հրազդանի և Աղստևի հովիտների Քարվանսարա անունով գյուղերն ապացույցն են այն բանի, որ նրանք գտնվել են հնագույն քարավանային ճանապարհի վրա, իսկ նրանց կապող կարևորագույն օղակը Դիլիջան-Հրազդան ուղիղ գծի վրա, Դդմաշենի Մեղրան սարամասում գտնվող քարավանատունն է[13], որը XII դարի 2-րդ կեսին կառուցել է Կայան գավառի տեր Հասան Կայենեցին: Այստեղից մինչև Հրազդանի Քարվանսարան և Աղստևի ձորում գտնվող «բողասը» նույն հեռավորության վրա են: Անամպ օրերին հենց այստեղից, ասես ափիդ մեջ, հառնում են Արարատները:

Քանի որ Թիֆլիս-Ղազախ-Դիլիջան մեծուղին (տեղացիների լեզվով՝ «ռսի ճամփեն») կառուցվել է գրեթե «մեր օրերում», XIX դարի 2-րդ կեսին, ապա մեր հետաքրքրության առարկան մնում են Աղստևի հովտով ձգվող հնագույն ճանապարհները: Այս հովիտը ստորին մասում բավական ընդարձակ է և գնալով վեր, սկսում է նեղանալ, իսկ Իջևան քաղաքի մատույցներում՝ որպես ձագարի հիմք սեղմվում գետի երկու ափերից մոտեցած Կայենի և Պայտապարի լեռնաշղթաների պատճառով: Նաև Գրիբոյեդովի օրերում միջնադարյան քարավանային ճանապարհը Թիֆլիսից Աղստևի հովիտ է մտել կարճ ու իր ժամանակի համար հարմար Կարմիր կամուրջ-

[12] Ա. Ս. Գրիբոյեդով, նշվ. աշխ., էջ 19:

[13] Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 44–46:

Ծոռ աղբյուր (Կոթի գյուղից արևելք) - Ջողաս-Աչաջուր երթուղով և Աղստևի բարձր արևահայաց ձախափնյակով հասել Իջևան քաղաքի տեղում կառուցված քարավանատուն, որի անունով հետագայում սկսել է կոչվել XIX դարի սկզբին հիմնված բնակավայրը: Այստեղից է սկսվել Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ձորափոր, հետագա դարերում՝ Կայան կոչված գավառը:

Քարավանային ճանապարհը Իջևան քաղաքից 3 կմ հարավ գրեթե ուղիղ անկյան տակ թեքվել է աջ և Խոլարքեր հանդամասում երկճյուղվել: Աջակողմյանը, որ երթևեկելի է եղել նաև սայլերի համար, անտառամիջով դեպի վեր 8 կմ շարունակել է գետափին սկսած իր երթուղին, հասնելով Իջևան լեռնագագաթի ստորոտը՝ շրջվել ձախ և արևելյան կողմից Կայենո լեռնաշղթային զուգահեռ ընթացել հարավ, ձախում 3.5-5 կմ հեռավորության վրա թողնելով Կայան բերդը, հին բնակատեղիներ, Ներկայիս Հովք, Հաղարծին, Թեղուտ գյուղերը, մտել Հաղարծնի վանք: Այստեղից դեպի ձախ մի ճյուղ Պորտայալով գնացել է Գրիբոյեդովի նկարագրած «Քոդաս», այնտեղից՝ Հրազդանի հովիտ և Արարատյան դաշտ: Իսկ Հաղարծնի մոտից մյուս ճյուղը, Հալաբի լեռնաշղթայի լանջին միանալով Գառնասարից եկող ճանապարհին, ձգվել է դեպի Վանաձոր: Պետք է ընդունել, որ Վանաձոր-Մարգահովիտ-Հաղարծնի վանք-Իջևան-Ղազախ այս հարմար երթուղով է մ.թ.ա. 65 թ. ամռանն իր լեգիոնները տեղափոխել հռոմեացի Պոմպեոս զորավարը:

Իջևանի մատույցներում գտնվող Խոլարքեր հանդամասից միջնադարյան առաջին քավական երկար ճանապարհից դեպի ձախ, Միրզոյանների աղբյուրի մոտից ծունկ է տալիս գրաստների ու մարդկանց երթևեկելու համար քավականին հարմար ու կարճ 2-րդ ճյուղը: Այստեղով մարդիկ և կենդանիները կարող էին անցնել հիմնականում մեկ-մեկ՝ «իծաշարուկ», որովհետև որոշ տեղերում ուղին փոխվում է նեղ արահետի: Ահա այս ճյուղը Միրզոյանների աղբյուրի մոտ թրաձև գագաթ ունեցող լեռնաճյուղի հյուսիսային լանջով գնում է ձախ ու թեքվում արևելք, ապա վերջնամասում կտրուկ թեքվելով դեպի արևմուտք, մտնում է Ղազումյանների աղբյուրի ձորը: Այստեղից նս հերթական լեռնաբազկի հյուսիսային լանջով քարավանային ճանապարհը, որ սկսել է պատվել ծառերով, գնում է Աղստևի ձախափնյակին իշխող բարձր սեռի ծայրը, որն այժմ կոչվում է Տախտի քոլ: Այստեղ առաջին անգամ մեր ուշադրությանն է արժանացել շուրջ երկու հեկտարի վրա տարածվող հնավայրը, որն ունի մի քանի տասնյակ ավերակ շինություններ, իսկ սեռի ծայրին՝ եկեղեցի: Անշուշտ, սա եղել է բնակեցված միջանկյալ հօգետուն (= քարավանատուն): Այդպիսին ստեղծելու նախադրյալ են եղել գրաստների կերակրման համար արոտների առկայությունը, վառելափայտի առատությունը և հատկապես խմելու ջրի մոտիկությունը (Երևի սա Իվանե Զաքարյանի իջևանատեղն է, որի մասին հայտնում է պատմիչը Նոր Գետիկի վանքին պատկանող գինին ոմն վրացի Բասիլայի կողմից թռնագրավելու փորձի կապակցությամբ)[14]:

[14] Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 160:

Հնավայրից դեպի հարավ 200-250 մետր հեռավորության վրա. Լղոցի կից ձորակներում. բխում են աղբյուրներ, որոնց արանքում կա երկու շինություն. մեկը՝ 2x2,5 մետր, մյուսը՝ ավելի փոքր չափերի: Առաջինը հավանաբար եղել է աղբյուրների պահակակետ, իսկ երկրորդում դրվելիս են եղել ջուր վերցնելու պարագաները: Լղոցի ձոր մտած ուղին դառնում է մեկ գրաստի քայլքի համար արահետ և ներկայիս «Աշոտ Երկաթ» ռեստորանի մերձակա ժայռերի թիկունքով իջել Ծառատի ձոր և Կայան բերդի արևելյան ստորոտով, ինչպես Գրիբոյեդովն է վկայում, հանգիստ ընթանալու համար մարդու ձեռքով չհարմարեցված, համարյա անանցանելի երթուղով ձգվել ավելի հարավ: Ներկայիս Ներքին Դանաղռան հանդամասից քարավանային ճանապարհը մտել է երկրաբանների ավան, ուր կա միջնադարյան հնավայր, և դրա մատուռի մոտի ժայռերի արանքով իջել Հովք գյուղի հյուսիս-արևելյան ստորոտում գտնվող ձորը: Ապա ճանապարհը բարձրացել է համանուն գյուղ և դրան իշխող անանուն բերդի ստորոտով, Աղստևի ձախ ափից 500 մ հեռավորության վրա իջել բերդի հարավային կողմում գտնվող ձորը: Սակայն ճանապարհը չի գնացել գետափով, որովհետև դիմացի լեռնաբազկի երկու ծայրերը բարձր պատի պես մտել են հորդահոս գետի մեջ: Ուստի ճանապարհը Հովքի հարավկողմյան ձորից կտրուկ թեքվել է հարավ-արևմուտք, անցել լեռնաբազկի հարավային լանջը, այստեղ հիմնական ճանապարհից մի նոր ճյուղ արմունկ տալով դեպի արևելք, ապա հարավ-արևելք, գնացել է դեպի Նոր Գետիկի վանք և Միափորի գավառ:

Հիմնական ճանապարհը ներկայիս Հաղարծին և Թեղուտ գյուղերի տարածքով հասել է Դիլիջանի կինեմատոգրաֆիստների ստեղծագործական տան ստորոտում գտնվող վերելքի սկզբին, ապա գետի աջափնյակով հանգել Փամբակի և Արեգունու լեռնաշղթաների հանդիպումից առաջացած «բողասին»: Աներկբա է, որ 1819-ի փետրվարի 1-ին հենց այս դժվարին վերելքով է անցել ռուս մեծ գրող ու հայ ժողովրդի մեծ բարեկամ Ա..Ս. Գրիբոյեդովը: Նրա այն համոզմունքը, թե «այստեղ մարդու ձեռքով ոչինչ չի հարմարեցված հանգիստ ընթանալու համար», ճիշտ է մասնակիորեն: Այո, XIX դարի սկզբին Աղստևի հովտում դեռևս վառոդով՝ պայթեցումներով չէին պայքարել ճամփախափան ապառաժների դեմ, սակայն որ գործել է արարիչ բրիչը, աներկբա է: Ասվածի ապացույցն են ոչ միայն աղբյուրների ակերին կառուցված շինությունները, այլև Ցախտի քոլի միջանկյալ քարավանատունը և հատկապես ճանապարհի հենապատեր ունեցող հատվածները, որոնք թեք ռելիեֆը հարթեցնելով, հարմար ու անվտանգ են դարձրել քարավանային «մայրուղին»: Վերջինս ի հավելումն այդ բոլորի անցել է հեղեղների վտանգից բացարձակապես զերծ բարձունքներով և բնական աղբյուրների մոտակայքով: Այս ճանապարհով 1837-ի աշնանը անցել է ռուսաց Նիկոլայ Առաջին ցարը, և Կոթի գյուղում մինչև այժմ էլ տարեցները հիշում են իրենց նահապետների զրույցն այն մասին, որ ցարը Ջողասի կողմից եկել և Թիֆլիս է գնացել երեկոյան, ուստի կոթեցիները, որպես բացառիկ հարգանքի նշան, Սուրբ Սարգսի լեռնանցքի վերելքում և վայրէջ-

քում թագավորի ճանապարհը լուսավորել են հարյուրավոր ջահերով: Այս ուղու վրա կարևորվել է Պիպիս (Ջողաս) կայանը, ուր կառուցվել է փոստակայան, արքունական դպրոց, խանութ և կամուրջ, որը ժողովուրդը կոչել է «ոսկի խելի»: 1868-70 թվականներին Թիֆլիս-Աղստև գետ (այդ ժամանակ դեռ հիմնադրված չէր Ղազախ քաղաքը) և Աղստև գետ-Քարվանսարա խճուղային ճանապարհների կառուցման հետևանքով իսպառ անգործության ու մոռացումի մատնվեց Կարմիր կամուրջ-Ոռո աղբյուր (Կոթի) - Պիպիս (Ջողաս) քարավանային ճանապարհը: Ի դեպ, 1878-ի աշնանը Թիֆլիսից Ագուլիս ուղևորված հայ մեծ վիպասան Րաֆֆին անցել է Կուր գետի աջափնյակով ձգվող Նորակառույց Թիֆլիս-Աղստև գետ-Քարվանսարա-Դիլիջան-Ելենովկա (Սևան) - Ներքին Ախտա (Հրազդան) - Երևան երթուղով: Եվ նա Ղազախ քաղաքը չի հիշատակում, որովհետև այդ բնակավայրը դեռ չկար, իսկ գավառական կենտրոնը Դաղքյասաման գյուղն էր:

Ինչպես վերն ասվեց, Լոռի բերդ - Կիրանց-Գագա դաշտ կարևոր ճանապարհը մի քանի ճյուղով կապված է եղել Աղստևի ձախափնյակով անցնող Թիֆլիս-Դվին քարավանային ճանապարհի հետ, իսկ վերջինս իր հերթին՝ այս մեծ գետի աջափնյակով ձգվող ճանապարհին: Միափորի գավառ գնացողի մասին վերն ասվեց: Ներկայիս Հովք գյուղի մատույցներից սկսվել է մի այլ ճանապարհ, դեպի արևելք անցել Աղստևի աջ ափը, ներկայիս քարածխի հանքի սարի ստորոտով աստիճանաբար բարձրացել Պայտապար լեռնաշղթայի սեռի վրա, ձգվել դեպի հյուսիսարևելքում գտնվող Կայծոն բերդ: Սա միացել է դիմացում, գետի ձախ ափի քարափին թառած Կայան բերդից սկզբնավորվող ճանապարհին, որը նախ բերդի ստորոտում հատել է «գրիբոյեդովյան» ուղին, ապա հաղթահարել Աղստևի բուռն հոսանքը: Կայծոն բերդի արևելյան կողմում գտնվող «խաչմերուկից» քարավանային ճանապարհը մտել է մի շարք գյուղատեղեր, միջնամասում շրջվել լեռնաշղթայի արևահայաց լանջը և ներկայիս Գանձաքար գյուղի տարածքում միացել ճանապարհների մի նոր հանգույցի: Ուրթի ջուր գետի ձորով ուղիներից մեկը գնացել է դեպի Իջևան քաղաքի տեղում գտնված քարավանատուն՝ Դվին-Թիֆլիս ճանապարհի վրա: Գանձաքարից դեպի արևելք ձգվող ճանապարհը Սխտորուտի լեռնանցքով գնացել է Տավուշ գավառ: Իսկ կենտրոնականը՝ Գանձաքար-Մորո ձոր-Խաչթառակ-Դիտավան-Այգեհովիտ (Սրվեղի վանք)-Վազաշեն երթուղով իջել է Կուրի դաշտավայր: Ինչպես երևում է, ներկայիս Կայանավան գյուղի տարածքով միջնադարերում Գագա դաշտի ներքնագավառից ճանապարհ է անցել դեպի Նոր բերդ, Նոր Վարագա վանք և Տավուշի գավառ: Այսպես ասելու հիմք է տալիս Կայանավանի մոտ Աղստևի վրա կառուցված հնացույն քարակերտ կամարակապ կամուրջը, որի միայն ձախափնյա խելն է մնացել: Հավանաբար այս ճանապարհը գործել է նաև ուշ միջնադարերում, որովհետև այդ կամրջի մատույցներում կառուցվել է կլոր, աշտարակավոր պահակակետ:

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## ԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑՈՒՆ

Մեր եկեղեցական գրականության կարևոր դեմքերից է ԺԱ դարի մատենագիր Անանիա Սանահնեցին: Նրա կյանքին ու գործունեությանը, մատենագրական ժառանգության ուսումնասիրմանն ու բնագրերի հրատարակությանն է նվիրված Երևանի Մատենադարանի «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» խմբի ղեկավար, Հակոբ Քյոսեյանի «Անանիա Սանահնեցի» գիրքի առաջին հատորը[1]: Գիրքը տպագրվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ հրամանավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Այս մենագրությունում Անանիա Սանահնեցու գործունեությունը ներկայացվում է ժամանակի եկեղեցա-քաղաքական ընդհանուր համապատկերում: Համանման ձևով նրա ստեղծագործությունները քննվում են ոչ միայն Հաղբատ-Սանահինյան դպրոցի շրջանակներում, այլև հարաբերվում են Նարեկյան դպրոցի ու հատկապես Անանիա Նարեկացու ստեղծագործությունների հետ՝ դիտարկվելով Ժ-ԺԱ դարերի գրական շարժման մեջ, որպես այդ շարժման եկեղեցա-դավանաբանական և մեկնաբանական կարևոր արտահայտություններից մեկը, որն իր վրա կրում էր Բագրատունյաց թագավորության անկման առաջին տասնամյակների քաղաքական անորոշությունների, սպասումների ու ակնկալիքների, ինչպես նաև այդ տարիների հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների կնիքը:

Անանիա Սանահնեցին այն հեղինակներից է, որոնց գործերի քննությունից առաջ հետազոտողը նախ պետք է անդրադառնա դրանց հեղինակային իրավ պատկանելության և ապա այն հարցերին, թե ձեռագրային մի շարք խմբագրություններով վկայված տարբերակներից որ մեկն է բնագրային առումով ավելի հարազատ և սկզբնագիր, և ապա անցնի այդ ստեղծագործությունների վերլուծությանը:

---

[1] Հ. Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ, Ա. Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, 408 էջ:

Ինչպես ԺԲ-ԺԳ դարերում «Վարդան վարդապետ» անվամբ վկայված գործերն են որոշակի շփոթ և բարդություն ստեղծում դրանց Վարդան Այգեկցուն, Արևելցուն կամ «Վարդան» անվամբ այլ հեղինակների պատկանելը ճշտելու հարցում, այնպես էլ վերնագրային սկսվածքներում «Անանիայի վարդապետի ասացեալ» արտահայտությունն ունեցող մի շարք գործեր են շփոթության տեղիք տվել, թե արդյոք Անանիա Նարեկացո՞ւն, Սանահնեցո՞ւն, անգամ Շիրակացո՞ւն և կամ էլ ԺԱ-ԺԲ դարերում ստեղծագործած մի քանի Անանիա վարդապետներից ո՞ր մեկի գրչին են պատկանում այդ գրվածքներից յուրաքանչյուրը: Անանիա Սանահնեցու գործերը Անանիաների այս շարքից զատորոշելու համար Քյոսեյանը նախ քննում է ձեռագրային տեղեկությունները, և երկրորդ՝ թե այդ ստեղծագործությունները որքանով են համահունչ Հաղբատ-Սանահինյան դպրոցի ավանդներին, Անանիա Սանահնեցու մեկնաբանական մեթոդին և եկեղեցա-քաղաքական այն խնդիրներին, որոնց ուղղակի կամ անուղղակի արձագանքն ենք գտնում նրա բոլոր աշխատանքներում:

Համանման մոտեցմամբ այս գրքի առաջին մասում վերլուծվում, իսկ երկրորդում քննական բնագրերն են բերվում Անանիա Սանահնեցու հետևյալ ստեղծագործությունների. Մայր Տաճարի՝ Վաղարշապատի կաթողիկեի ներբողյանի, Հովհաննես Մկրտչին և Պետրոս առաքյալի խաչելությանը նվիրված ճառերի և, վերջապես, «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» դավանաբանական նշանավոր երկի:

Ի տարբերություն պատմագրության և ժամանակի կենդանի կյանքի հետ հարաբերվող քարոզների ու գրական մի շարք այլ ժանրերի, դավանաբանական և մեկնողական բնույթի գործերն առավել վերացարկված և ընդհանուր քրիստոնեական բնույթ ունեն և պահանջում են համարժեք քննություն: Այն լավագույնս կատարված է այս գրքում, ուր ներկայացվում են Անանիա Սանահնեցու աստվածաբանական ըմբռնումները, նախանձախնդրությունը հայոց դավանանքի հանդեպ և մատնացույց են արվում ընդհանուր քրիստոնեական և մեր Եկեղեցու հայրերի այն գործերը, որոնց վրա խարսխված են նրա գրածները թե՛ որպես մեկնաբանական-բացատրական ելակետ, և թե՛ նրանցից կատարված տառացի բանաքաղական վկայակոչումները, որոնք ցույց են տրվում երկսյուն, միմյանց զուգահեռ ընթացող համեմատությամբ:

Հեղինակը, սակայն, չբավականանալով բուն աստվածաբանական քննությամբ, անդրադառնում է նաև ժամանակի հայ իրականությամբ թելադրված այն գործոններին, որոնք պայմանավորել են Անանիա Սանահնեցու ստեղծագործությունների գրությունը: Մանուկ Աբեղյանը մեր հին գրականությունն անվանում է եկեղեցաքաղաքական մաքառման գրականություն: Նույն այս «մաքառման» արտահայտությունն է ներկայացվող գրքում ցույց տրվում «Հակաճառության» օրինակով, թե «բնույթով եկեղեցադավանաբանական, բայց ըստ էության գաղափարաքաղաքական այս աշխատանքը շատ կարևոր զենք էր ու միջոց» բյուզանդական «հարանուն ճնշման դեմ հայ ժողովրդի՝ ազգային-եկեղեցական, քաղաքական ինքնորոշման և անկախության համար մղված պայքարի» (էջ 111):

1700-ամյակի հանդիսությունների մեր օրերում առանձնակի կարևորություն և խորհուրդ ունի Անանիա Սանահնեցու հատկապես Վաղարշապատի կաթողիկեին նվիրված ներբողյանը: Վերջինիս հանգամանալից քննությունում Քյոսեյանը եկեղեցական առումով ներբողյանի գրությունը պայմանավորում է թոնդրակեցիների դեմ այս շրջանում մղվող պայքարով, որի համար Եկեղեցուն տրվող բնորոշումներով միաժամանակ և հերքվում են Եկեղեցու հանդեպ թոնդրակեցիների ունեցած ըմբռնումները: Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» գործի հետ տարվող զուգահեռով ցույց է տրվում, որ Անանիա Սանահնեցին ծանոթ է եղել այս ստեղծագործությանը: Քյոսեյանը վեր է հանում նաև ներբողյանի աղերսները անտիկ գրականության, հունաբան դպրոցի և վերջինիս ճարտասանական ու հյուսման արվեստի հռետորական-գեղագիտական ըմբռնումների հետ, որոնք վկայում են, որ այդ ավանդները կենսունակ են եղել նաև ԺԱ դարում, ուստի պատահական չէ նրանց մեծ տեղ գրավելը Հովհաննես Սարկավագի ստեղծագործություններում:

Ներբողի գրության երկրորդ պատճառը, որով և որոշվում է նրա գրության ժամանակը, Անիի անկումից հետո հոգևոր-քաղաքական իշխանության վերականգնման ձգտումն էր: Ըստ այդմ այս ստեղծագործությունը պետք է գրված լինի 1045 թվականից հետո: Քյոսեյանի բնորոշմամբ Անիի անկումից հետո «Վաղարշապատին նվիրված ամեն մի ստեղծագործություն ուղղակի կամ անուղղակի կերպով պետականության ու կենտրոնաձիգ իշխանության վերականգնման ուղղությամբ հայ ժողովրդի գործ դրած ճիգերի ու փայփայած քաղաքական իդեալների գեղարվեստական դրսևորումն է դառնում», և որպես բնորոշ օրինակներ բերվում են Ստեփանոս Օրբելյանի Ողբը և Սիմեոն Երևանցու՝ Էջմիածնին նվիրված ներբողական գործերը (էջ 22):

Մեր կողմից ավելացնենք ասվածի հետ հարաբերվող ևս մի պատճառ: Անիի անկումից հետո քանի որ Հայոց Հայրապետական Աթոռը մարմնավորում էր ազգային ողջ իշխանությունը, և որպեսզի այն քաղաքական ակնկալիքների իրականացման խորհրդանիշ չդառնա, Խաչիկ Բ Անեցի Կաթողիկոսի (1058-1065 թթ.) վախճանումից հետո բյուզանդական իշխանությունները թույլ չտվեցին, որ Կաթողիկոսական Աթոռը Անիում մնա, և այն տարագրվեց Կիլիկիա: Ըստ երևույթին դեռևս Խաչիկ Անեցու հայրապետության շրջանում Անանիա Սանահնեցին կանխազգացել է այս վտանգը և Մայր Տաճարին նվիրված ներբողյանով ցանկացել մեկ անգամ ևս շեշտել Վաղարշապատի կաթողիկեի նվիրականությունը, Հայոց Եկեղեցու ավանդական հոգևոր կենտրոնը վերստին Հայոց Եկեղեցու վարչական կենտրոն տեսնելու ձգտմամբ:

Այս ներբողյանը կարևորվում է ոչ միայն իր գեղարվեստական արժանիքներով և ժամանակի ըմբռնումները ներկայացնելով, այլև նրանով, որ յուրօրինակ անդրադարձն ու մեկնաբանությունն է Գրիգոր Լուսավորչի տեսիլի և ըստ այդմ, որպես ԺԱ դարի գործ օգնում է Ս. Էջմիածնի հետ կապված մի շարք հարցերի ճիշտ լուսաբանմանը: Բերենք բնորոշ մեկ օրինակ. բանասիրության մեջ հաճախ այն կար-

ծիքն է հայտնվում, որ Ագաթանգեղոսի «այր մի ստնավոր» խոսքերը վերաբերում են ոչ թե Աստծու Միածին Որդուն, այլ Աստծու տեսչությանը, այսինքն Աստծու հրեշտակին: Ըստ այսմ, անտեսելով Սահակ Ձորափորեցու Ը դարում գրած շարականի «Էջ Միածինն ի Հօրէ» խոսքերը, ասվում է, թե Լուսավորչի տեսիլում ասվածը որպես Աստծու Միածին Որդու էջք է սկսվել մեկնաբանվել ԺԳ-ԺԴ դարերում, այնինչ ԺԱ դարում գրված այս ստեղծագործությունում ևս հստակորեն ասվում է, որ Քրիստոս կործանեց սանդարամետի տաճարը. «Քանզի ահացին ճայթմանէ բախման ստնաձեւ ոսկիաձոյլն ձայնատուի՝ սարսեալ սաքրեցին մեծաւ դողմամբ հոյլք խաւարային անդնդասոյզ այսոցն բազմութեան՝ յանկարծ յեղակարծում ժամու առատաբար տեսանելով հեղեալ, սփռեալ, տարածեալ զշնորհս մարդասէր ողորմութեանն Քրիստոսի առ իւր արարածս» (էջ 143):

Սահակ Ձորափորեցու շարականի «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» տողի արձագանքն է Անանիա Սանահնեցու ներբողի մեկ այլ պարբերությունը, ուր վերստին այն միտքն է շեշտվում, թե Էջմիածնի կաթողիկեից մեզ ծագեց Հայոց աշխարհի փրկության լույսը «Դու զթանձրամած խաւարն կռապաշտական աղջամղջին նսեմութեան փարատեցեր եւ զհաստատարած գերագանցիկ լուսոյն զճառագայթս անճառ եւ անհատ սիրոյն Քրիստոսի յերկրի մերում սփռեալ, ծաւալեալ տարածեցեր» (էջ 144):

Ամփոփելով ասենք, որ այս հատորը, ուր բերված են թե՛ Սանահնեցու՝ մեզ հասած երկերի բնագրերը, և թե՛ նրանց համակողմանի վերլուծությունը, ընթերցողին մեծապես օգնում է ճիշտ հասկանալու հայ մեկնաբանական ու դավանաբանական գրականության ձևավորման ընթացքի առանցքային մի շարք հարցեր՝ արծարծված այն ժամանակահատվածում, որը յուրօրինակ կապող օղակ էր դառնալու Ոսկեդարից մինչև Բագրատունյաց վերածնություն ձգվող շրջանի ու Կիլիկյան Հայաստանի գրականության միջև:

*ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ*

# «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*
# (1984-2000 թթ.)

## Ե

223. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուղերձը ռուս պրավոսլավ Եկեղեցու պետ, Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին՝ Մեծ հաղթանակի քառասնամյակի առթիվ ՍՍՀՄ Եկեղեցիների և կրոնական համայնքների պետերի և ներկայացուցիչների հանդիպում կազմակերպելու մասին: 3-4

224. Ռուս պրավոսլավ Եկեղեցու պետ, Ն.Ս. Պիմեն Պատրիարքի պատասխանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուղերձին՝ Մեծ հաղթանակի քառասնամյակի առթիվ: 5-6

225. ԹՂԹԱԿԻՑ, ՍՍՀՄ Եկեղեցիների և կրոնական հարանվանությունների պետերի և ներկայացուցիչների համաժողով՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի փառապանծ հաղթանակի 40-ամյակին: 7-13

226. Տ.Տ. Վազգէն Ա Վեհափառ Հայրապետի ողջոյնի խօսքը՝ ուղղեալ Միացեալ Նահանգաց արևելեան թեմի հոգևորականաց համագումարին: 14

227. Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղջոյնի խօսքը՝ ուղղեալ Միացեալ Նահանգաց արեւելեան թեմի պատգամաւորական ժողովին: 15

228. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ: Հաղթանակի բերկրանքը: 16-17

229. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայրենասիրական գործունեությունը հայրենական պատերազմի տարիներին: 15-21

*Գևորգ Չորեքչյանի նամակը Ստալինին և Գարեգին արքեպս. Խաչատրյանի նամակը Գևորգ արքեպս. Չորեքչյանին: Երկու նամակ: Հարություն Ղազարյանի նամակը Գևորգ արքեպս Չորեքչյանին, ՀՍՍՌ Գերագույն սովետի նախագահության գործերի կառավարիչ Բ. Պետրոսյանի տեղեկանքը՝ 8000 ռուբլի հավաքելու մասին*

230. Կոչ հայ հավատացեալ ժողովրդին: 22-23

*Ազգընտիր տեղակալ Ամենայն Հայոց հայրապետության կոչը Կարմիր բանակին օգնելու մասին*

* Սկիզբը տե՛ս 2001 թ., № Դ, էջ 104-118:

231. Արտասահմանյան երկրների բոլոր հայերին: 23-27

*Կոչ*

232. ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Անաւտր պատերազմը և Խորհրդային Հայաստանը: 27-30

233. ԳԵՎՈՐԳ ՉՈՐԵՔՉՅԱՆ, Հեռագիր Ամերիկայի «Հաղթության կոմիտեին»: 30-31

234. Կոչ Գալիֆորնիայի հայության: 31-33

235. «Կովկասի պաշտպանության համար» մեդալի հանձնումը Ամենայն Հայոց հայրապետության ազգընտիր տեղակալ. Ամենապատիվ Տ. Գևորգ արքեպիսկոպոսին: 33-34

236. Հարցազրույց հայ մտավորականության ներկայացուցիչների հետ Մեծ հաղթանակի 40-ամյակի առիթով: 35-39

*Հարցազրույցին մասնակցել են Վարդգես Համազասպյանը, Աշոտ Աբրահամյանը և Հովհաննես Մուրադյանը*

237. ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՑ: Հ. ՇԻՐԱԶ, Էքսպրոմտ: 40

238. ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՑ: Գ. ԷՄԻՆ, Խաչը: 41

239. ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՑ: ԱՍԱՏՈՒՐ ՄԸՆԱՑԱԿԱՆՅԱՆ, Հրաժեշտ: 42

Ցանկություն: 43

*Ոտանավորներ*

240. ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ, Երևանի լույսերը: 44

241. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ, Մեծ հաղթանակի օրը: 45

*Ոտանավորներ*

242. Ը. ՂԱԶԱՐՅԱՆ, Մենք հաղթանակել ենք հանուն խաղաղության: 46-52

243. Ղ. ԱՅՎԱԶՅԱՆ, Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Հին Ռուսիայում: 53-62

244. ՖԻԼԱՐԵՏ, Ռուս Եկեղեցու ծագումը: 63-68

*Շարունակությունը տե՛ս «Էջմիածին», 1985, Զ. №263*

Զ

245. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Ծվեյցարիայի հայոց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» հիմնարկությանը՝ տեղի Ս. ՀԱԿՈԲ եկեղեցուն կից «Հայ կեդրոն» կառուցելու առթիվ: 3-4

246. Քննություն կուսակրոն քահանայության թեկնածուների: 5

*Քննիչ հանձնաժողովի և քննության նյութերի ու տեսակների մասին*

247. ՀԱԿՈԲ սարկավագ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Հայրենական մեծ պատերազմի 40-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում: 6-8

248. ԹՂԹԱԿԻՑ, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի պլենումը՝ նվիրված Մեծ հաղթանակի քառասնամյակին: 9-11

249. ՀԱԿՈԲ սարկավագ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ամավերջի հանդիսություն Հոգևոր Ճեմարանում: 12-17

250. Կ. Պոլսի Հունաց Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչները Մայր Աթոռում: 18

251. ՍՏԵՓԱՆ սարկավագ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ս. Ալբանգ Եկեղեցու ուխտավորները Մայր Աթոռում: 19-20

252. ՄԱՅՐ ԱԹՈՌ: Եկեղեցական քեմ. լուրեր: 21-24

253. Նոր հրատարակություն Մայր Աթոռում: 25

*Ն. Թաշճյանի «Ձայնագրեալ շարական հոգևոր երգոց»-ը Մասիս քահանա Գալստյանի ձեռնհասությամբ. եվրոպական նոտագրության մասին*

254. Տ. ՆԵՐՍԵՍ քահանա ՆԵՐՍԵՍՅԱՆ, Քարոզ: 26-27

*Ծաղկազարդի առթիվ*

255. ՄԻՍԱԿ սարկավագ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ, Քարոզ: 28-29

256. Ողջույնի նախաձեռնություն: 30

*Ս. Գրիգոր եկեղեցուն կից «Հայ կեդրոն» ստեղծելու մասին*

257. Նախապատրաստական ժողով խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի 6-րդ համագումարից առաջ: 31-32

258. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ:

ա. Իրաքի հայոց թեմում: 33

*Բաղդադում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման ընթացքի մասին.*

բ. Լուրեր Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմից: 34-35

*Թեմի գործունեության մասին*

259. Մեծ հաղթանակի 40-ամյակի առթիվ հարգանքի և խոնարհման այցելություն Բաքվի եղբայրական գերեզմանին: 36

260. ԹՂԹԱԿԻՑ, Հավատավոր-եկեղեցասեր կինը և նվիրյալ աշխատավորուհին: 36-37

*Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոմավաճառուհի Հայկանուշ Գրիգորյանի ծննդյան 80-ամյակի մասին*

261. ԶԱՎԵՆ քահանա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ, Ուխտանես եպիսկոպոս Սեբաստիո և իր «Պատմութիւն Հայոց» երկը: 38-43

*Շար. տես №351*

262. ՀԱԿՈԲ ծ. վ. ԳԸԼԸՆՃՅԱՆ. Անտիպ նամակներ Կարապետ եպիսկոպոսից, քաղված նրա մասին գերմաներեն լեզվով հրատարակված գրքից (մահվան յոթանասունամյակի առթիվ): 44- 48

263. ՖԻԼԱՐԵՏ, Ռուս եկեղեցու ծագումը: 49-57

*Սկիզբը տե՛ս «Էջմիածին», 1985, Ե, №244*

264. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, «Ներածություն Աստվածաշընչի»: 58-59

*Գրախոսություն*

265. Հանգիստ Տ. Հարություն քահանա Եսայանի (1912-1985): 60

Է

266. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության նախագահ, դոկտ. Ազերեդո Պարտիգանին՝ ազգային բարերար Գալուստ Կյուլպենկյանի մահվան 30-ամյակի առթիվ: 3-4

267. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ: Հոգու շըռայլությամբ: 5-6

*Գալուստ Կյուլպենկյանի մասին*

268. ՄԱՅՐ ԱԹՈՌ: Եկեղեցական քեմ. լուրեր: 7-8

269. Մայր Աթոռը իր պատմական դերին մեջ: 9-11

270. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Եղեռնի 70-ամյակի ոգեկոչում ԱՄՆ-ի արևմտյան թեմում: 12-13

271. ԹՂԹԱԿԻՑ: Մկրտություն, հաղորդություն և ձեռնադրություն խորհուրդների մասին ուղղափառ եկեղեցիների ժողով Բրակլայն (ԱՄՆ) քաղաքում: 14-15

272. ՀԱՅԿ սարկավագ ՉՈԻԼՋՅԱՆ, Ուխտագնացություն դեպի Սյունիք: 16-17

273. ՍՏԵՓԱՆ սարկավագ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հայրենաբաղձ կարոտով: 18-19

*ԱՄՆ Նյու Յորքի Ս. Վարդան եկեղեցուն կից ամերիկահայ եկեղեցասեր երիտասարդաց միության անդամների ուխտագնացությունը դեպի Էջմիածին*

274. ԵԶՆԻԿ քահանա ՊԵՏՐՈՍՅԱՆ, Աղվանից աշխարհի քաղկեդոնիկ կաթողիկոս Ներսես-Բակուրի գահընկեցության շուրջ: 20-24

275. ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆ, Փիլիպուպոլսի հայկական վանքի վանահայր Հովհաննես Ատմանի դերը հայբյուզանդական եկեղեցական բանակցություններում Ներսես Շնորհալի կաթողիկոսի օրոք (1166-1173): 25-32

276. ԳՈՒՐԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաների «Շարադրությունները»: 34-37

277. Ս. ԹՈՍՈՒՆՅԱՆ, Աստվածաշնչի համաբարբառները և նրանց կազմման սկզբունքները: 38-42

278. ՍԵԴԱ ՄԱՐԱԲՅԱՆ, Գրիգոր Խլաթեցու Տոնականները: 43-46

279. ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ, Ավագ Շաղկող: 47-52

*Շարունակությունը տե՛ս «Էջմիածին», 1985, Ը, № 293*

280. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 53-60:

*Սկիզբը տե՛ս «Էջմիածին», 1964, Ը-Թ: Շարունակելի: Տես № 294, 353, 418, 491*

## Ը

281. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պետ, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Պիմենին: 3-6

282. ՍՔՈԹ ՆԱԶԱՐՅԱՆ, ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒԿՅԱՆ, Ամերիկայի հայոց արևելյան թեմի երիտասարդաց կազմակերպության ուղերձը Վեհափառ Հայրապետին: 7

283. Հանգիստ Ավետարանականլյութերական Եկեղեցու պետ Ցանիս Մատուլիս արքեպիսկոպոսի: 8

284. ՄԱՅՐ ԱԹՈՌ: Եկեղեցական բեմ. լուրեր: 9-10

285. ԹՂԹԱԿԻՑ, Մայր Տաճարի ավանդատան վերաբացումը: 10

286. Սփյուռքահայ ուսուցիչները Մայր Աթոռում: 12-13

287. ԹՂԹԱԿԻՑ, Խաղաղության քրիստոնեական համաժողովի վեցերորդ նստաշրջանը Պրագայում: 14-15

288. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ա. Լուրեր Իրաքի հայոց թեմից: 16-18

*Կիսասարկավագական ձեռնադրություն են ստացել Պաղտասար Ավետիսյանը, Սիմոն Հովհաննիսյանը, Սարգիս Հովհաննիսյանը*

բ. Լուրեր Բուլղարիայի հայոց թեմից: 18-19

*Ռուսեի Ս. Աստվածածին եկեղեցու վարչության կազմի վերընտրություն*

գ. Հոգեգալստյան տոնակատարությունը Սոֆիայում: 19-20

դ. ԱՍՈՂԻԿ աբեղա ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ, Համբարձման տոնը Փարիզում: 20-21

289. Ներսես Շնորհալի Հայրապետի աղոթքը՝ խաղողն օրհնելու համար: 22-23

*Թարգմանությունը Ե. Մելքոնյանի*

290. ԱՆԱՀԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Հայոց Պատարագը Նիկողայոս Թաշճյանի գրառմամբ: 24-37

291. ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը: 38-44

292. ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հայ մշակույթի հուշարձանները Շամախու Գարդման գավառում (Ուշտալ, Ղալակա, Նորշեն գյուղեր): 45-50

293. ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ, Ավագ Ծաղկող: 51-57

*Սկիզբը տե՛ս «Էջմիածին», 1985, № 279*

294. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 58-61

*Սկիզբը տե՛ս «Էջմիածին», 1964, Ը-Թ, № 280*

Թ - Ժ

295. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երեսնամյակի տոնակատարությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: 3-20

*Ունի հետևյալ բաժինները. «Վարդանանք» գոբելեն գորգի բացումը, Վեհափառ Հայրապետի խոսքը «Վարդանանք» գոբելենի բացման առթիվ, Ս. Պատարագ և Հայրապետական մաղթանք, Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի քարոզը, Տ. Շնորհք Պատրիարքի խոսքը, Պաշտոնական ճաշկերույթ:*

296. Հանդիսավոր նիստ՝ նվիրված Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երեսնամյակին: 21-37

*Խոսք են առել Վեհափառ Հայրապետը, Շնորհք Պատրիարքը, Իլիա Բ, Պիմեն Պատրիարքը, Ռ. Կյույպենկյանը*

297. Հոգեհանգիստ Եղեռնի զոհերի հիշատակին: 37

298. Ընդունելություն ՀՍՍՀ Մինիստրների խորհրդում: 37

299. Եպիսկոպոսական խորհրդակցություն: 37-39

*Այժմեական խնդիրներ: Այս առթիվ կա նաև*

*Հայտարարություն*

300. ԽԱՐՋԵՎ, Հայոց Եկեղեցու ղեկավար, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ծայրագույն Պատրիարքին և Կաթողիկոսին Ամենայն Հայոց: 40

*Վեհափառի ծննդյան 77 և գահակալության 30-ամյակի առթիվ շնորհավորանքներ*

301. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի շնորհավորական գիրը: 41-42

*Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին ուղղված*

302. ՀԲԸՄ Նախագահ, պրն Ալեք Մանուկյանի շնորհավորական գիրը: 43-44

*Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին ուղղված*

303. ԳՐԻԳՈՐ ԲԱՄՊՈՒՔՃՅԱՆ. Վեհափառ Հայրապետի երեսներորդ տարեդարձի առթիվ: 45-46

304. ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ գահակալության երեսնամյակի տոնակատարությունը Արարատյան թեմում: 45-51

305. Ծաղկաքաղ Վեհափառ Հայրապետի մտորումներից: 54-98

*Ունի բաժիններ՝ «Քրիստոնեական», «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ մտքի հսկաներ», «Պատգամներ», «Ջայն խաղաղության»*

306.«Արարատ» օրաթերթի հարցազրույցը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ: 99-104

307 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ: 104-106

*Վեհափառ Հայրապետի գահակալության 30-ամյակի տոնակատարության մասին*

308. Պոլսահայ գրասաշրջիկների խումբը Մայր Աթոռում: 107-108

309 ՍԱՐԳԻՍ ՑԱՓՈՒՋՅԱՆ. Նոր Վարդանանք: 109-111

*Գր. Խանջյանի գործերի մասին*

310. ՄԱՅՐ ԱԹՈՌ: Եկեղեցական թեմ. լուրեր: 112-114

ԺԱ - ԺԲ

311. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Կ. Պոլսի հայոց Ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստյանի քահանայական ձեռնադրության հիսուն և պատրիարքական պաշտոնավարության քսանամյակը նշելու մասին: 3-4

312. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Գերշ. Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի առաջնորդական գործունեության 25-ամյակի առթիվ: 5-6

313. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Ռումենի հայոց Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման և օծման 150-ամյակի առթիվ: 7-8

314. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Եդեմի հայոց Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման և օծման յոթանասունհինգամյակի առթիվ: 9-10

315. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նորընտիր նախագահ Հրանդ Ոսկանյանին: 11

316. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նորընտիր նախագահ Կարլեն Դալլաքյանին: 12

317. Պարգևատրվել են Մայր Աթոռի շքանշաններով: 13-14

*Ցանկ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» «Ս. Ներսես Շնորհալի» և «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշաններով պարգևատրվածների*

318. Մայր Աթոռի օգնությունը Մխիթարյան միաբանությանը: 15-16

319. Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի նամակը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: 16

*Ս. Ղազարի վանքի ձեռագրերի կարևորության մասին*

320. Ն.Ս. Վազգեն Ա Վեհափառ կաթողիկոս Ամենայն Հայոց: 17

*Հ. Բարսեղ Չեփիճյանի շնորհակալական հեռագիրը օգնության համար*

321. Մխիթարյան վարժարանների միջազգային կոմիտեի հեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: 17-18

*Մխիթարյան միաբանությանը օգնելու կոչին արձագանքելու համար*

322. ՎԱԶԳԵՆ Ա, Հոգեշնորհ աթոռակալ Բարսեղ վրդ. Չեփիճյանին: 18

*Օգնության կոչին ընդառաջելու պատրաստակամություն*

323. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: 19

*Մխիթարյան միաբանությանը օգնելու կոչ*

324. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: 20

*Երուսաղեմի Պատրիարք Եղիշե Տերտերյանի և Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի մասին*

325. Երուսաղեմի Հունաց Պատրիարք Դիոդորոս Ա-ի պատասխանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ապրիլյան եղեռնի 70-ամյակի առթիվ հղած ուղերձի: 21-22

326. Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1985-1986 ուսումնական տարեշրջանի բացումը: 23-24

327. Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում: 25-27

*Քահանայական օծում են ստացել Ստեփան Կարապետյանը (Պսակ աբեղա), Մեսրոպ Խաչիկյանը (Մաշտոց աբեղա), Վահան Խաչատրյանը (Զավեն աբեղա), Մկրտիչ Ներսիսյանը(Եզրաս աբեղա), Գուրգեն Մարտիրոսյանը (Պարգև աբեղա), Գրիգոր Զմրուխտյանը (Սասուն աբեղա)*

328. Պսակ աբեղա Կարապետյան: 28

329. Մաշտոց աբեղա Խաչիկյան: 29

330. Զավեն աբեղա Խաչատրյան: 30

331. Եզրաս աբեղա Ներսիսյան: 31

332. Պարգև աբեղա Մարտիրոսյան: 32

333. Սասուն աբեղա Զմրուխտյան: 33-34

334. Քահանայական ձեռնադրություն: 35-36

*Քահանայական ձեռնադրություն են ստացել Միսակ Սարիբեկյանը (Տ. Մխիթար աբեղա), Սահակ Կյուրեղյանը (Տ. Միքայել աբեղա)*

335. ՄԱՅՐ ԱԹՈՌ: Եկեղեցական թեմ. լուրեր: 37-39

336. Երանելի Հովհաննես Պլուզ վարդապետի խոսքը սիրո մասին: 40-41

*Թարգմանությունը Ե. Մելքոնյանի*

337. Կոմիտաս վարդապետի մահվան 50-ամյա հոգեհանգստյան Ս. Պատարագ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում: 42-43

338. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ, Կոմիտասի հիշատակին: 44-46

*Չափածո*

339. ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ, Կոմիտասյան հանճարի նորոգ բացահայտում: 47-48

340. ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ, Կոմիտասագիտական դիտումներ: 49-50

341. ԳԱՐԵԳԻՆ եպիսկոպոս ՆԵՐՍԻՍՅԱՆ, Քարոզ: 56-57

342. ԵԶՐԱՍ աբեղա ՆԵՐՍԻՍՅԱՆ, Քարոզ: 58-59

343. ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Հայ արվեստին նվիրված Դ միջազգային գիտաժողով Երևանում: 60-62

344. ՍԱՄՎԵԼ սարկավագ ԿՃՈՅԱՆ, Մանկական «Ջարթիր» պարբերաթերթը Հայաստանի մասին: 63

345. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ: ՆԵՐՍԵՍ եպիսկոպոս ՊՈԶԱՊԱԼՅԱՆ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանը Բուենոս Այրեսում: 64-65

346. ՆԵՐՍԵՍ եպիսկոպոս ՊՈԶԱՊԱԼՅԱՆ, Անգլիկան և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հավաքը Անգլիայում: 66-67

347. Հանդիպում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կրոնական գործիչների միջև: 68-70

348. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղարի բաց նամակը նախագահ Ռեյգանին և գլխավոր քարտուղար Գորբաչովին: 71-73

*Նոյեմբերի 19-ին և 20-ին Ժնևում երկու երկրների նախագահների հանդիպման պատմական դերի մասին*

349. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ:

ա. Կ. Պոլսի Ամենապատիվ Շնորհք Պատրիարք Գալուստյանի այցելությունը ներքին գավառներ: 74-77

բ. Ռումինիայի հայոց թեմում: 77-78

գ. Լուրեր Կոստանցայի հայ համայնքից: 79

դ. Բուխարեստի հայոց գերեզմանատան զանգակատան և մատռան վերանորոգում: 79-80

ե. Բուխարեստի հայոց առաջնորդանիստ եկեղեցու օծման 70-րդ տարեդարձը: 80

զ. Բուլղարահայ թեմում: 81-82

է. Լուրեր Իրաքի հայոց թեմից: 82-83

ը. ՇՆՈՐՀՔ արեղա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Թարգմանչաց տոնը Լոնդոնի հայոց թեմում: 83

թ. Վրաստանի հայոց առաջնորդի հովվական այցը Ախալցխա և Ախալքալաք: 84-85

ժ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանի այցը Թբիլիսի: 85- 87

ժա. ԶԱՎԵՆ քահանա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ - Կկառուցվի հայ եկեղեցին Հարավային Ֆլորիդայի հայ համայնքի կողմե: 87-89

350. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Բացում Մելբուռնի Ակինյան ազգային միօրյա վարժարանի: 88-89

351. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: ԶԱՎԵՆ քահանա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ, Ուխտանես եպիսկոպոս Սեբաստիո և իր «Պատմութիւն Հայոց» երկը: 90-94

*Սկիզբը տե՛ս «Էջմիածին», 1985, № 261*

## Ջ

352. ՍԵՐՈՎԲԵ քահանա ՊԵՏՐՈՍՅԱՆ, Եսայի Նչեցու Թղթերը: 95-100

353. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Ցուցակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 101-110

*Սկիզբը տե՛ս «Էջմիածին», 1964, Ը-Թ, № 280*

354. Հանգիստ Տ. Պետրոս քահանա Մարգարյանի (1886- 1985): 111

355. Հանգիստ Տ. Մկրտիչ քահանա Ստեփանյանի (1914-1985): 112

356. Հանգիստ Տ. Գուրգեն քահանա Հաճեցյանի (1890-1985): 113

357. Մայր Աթոռի նոր հրատարակություններ: 128

## 1 9 8 6

### Ա

358. Հայրապետական քարոզ Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր Տաճարում: 3-5

359. ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ: Ամանորի և Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 6-8

360. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին: 9-10

361. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ: 11-14

362. Ընդունելություն ՀՍՍՀ Մինիստրների խորհրդում: 15

363. Հայրապետական կոչ՝ ուղղյալ Հայաստանյայց Եկեղեցու առաջնորդներին և հայ հավատացյալ ժողովրդին, որ ի սփյուռս աշխարհի: 16-17

364. Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի երեսնամյա գործունեության լույսին. Ն. Սրբության հրամանով հրապարակում ենք վերջին երեսուն տարիների ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հաստատված վարչա-տնտեսական կարգի կանոնները: 18-21

365. Սուրբ Ծննդյան հանդիսություններ Մայր Աթոռում: 22-23

366. Ամանորը Մայր Աթոռում: 24-27

367. Արարատյան թեմի թեմական խորհրդի այցը Վեհափառ Հայրապետին: 28-30

368. Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի հանդիպումը Վեհափառ Հայրապետի հետ: 31

369. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ: Եկեղեցական քեմ. լուրեր: 32-33

370. ԱՍՈՂԻԿ աբեղա ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ, Էջմիածին: 34

*Ոտանավոր*

371. ԹՂԹԱԿԻՑ. Ուղղափառ Եղեղեցիների երկու ընտրանիքների պաշտոնական առաջին հանդիպումը: 35

372. ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ, Ս. ԺԱՄԿՈՉՅԱՆ. Նյու Յորքի «Կոմիտաս» երգչախմբի 25-ամյակը: 36-39

373. ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, Ջրօրհնեքի և ոտնլվայի կանոնները «Մաշտոց» ծիսարաններում: 40-49

374. ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ, Հովհան Մայրագոմեցին և հայ միջնադարյան խորհրդանշանի աստվածաբանության մի քանի հարցեր: 50-62

### Բ

375. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Հալեպի համալսարանի տնօրենությանը և

ճայացետ դոկտ. Հերման Կոլցին՝ ճայր Ցոճաննես Լեփսիուսի մաճվան 60-ամյակի առթիվ: 3-5

376. ԹՂԹԱԿԻՑ, Դոկտ. ճայր Ցոճաննես Լեփսիուսի մաճվան 60-ամյակին նվիրված գիտաժողով: 6-9

377. Պրոֆ. Գերճարդ Բասարակի զեկուցումը: 10-13

*«Հայ Եկեղեցու գործունեությունը ի նպաստ խաղաղության»*

378. Սրբոց Ղևոնդյանց տոնը Մայր Աթոռում: 14-15

379. Ս. Վարդանանց տոնը և Վեճափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում:: 16-22

380. Տյառնընդառաջ և սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում: 23-26

*Սարկավագ են ձեռնադրվել Տիգրան Զուփայանը, Գևորգ Գյուլզյուլյանը, Հովակիմ Քիլեճյանը, Հրայր Հակոբյանը,Ռազմիկ Իսախանյանը, Գևորգ Մկրտչյանը, Մանվել Մաթևոսյանը, Ռազմիկ Հովճաննիսյանը*

381. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Եկեղեցական բեմ. լուրեր: 27-28

382. Եզնիկ քաճանա Պետրոսյան: 29

383. ԳԵՎՈՐԳ սարկավագ ՄԸԿԸՐՏՉՅԱՆ, Վաճագնի Ծնունդը

*Ոտանավոր*

384. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ:

ա. ՆԱՐԵԿ եպիսկոպոս ԾԱՔԱՐՅԱՆ, Եգիպտաճայ թեմում: 31-35

բ. ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ամստերդամի ճայկական եկեղեցու վերագնումը: 35-38

գ. ԶԱՏԻԿ աբեղա ԱՎԵՏԻՔՅԱՆ, Սարկավագաց ձեռնադրություն Լիոնի Ս. Հակոբ ճայոց եկեղեցում: 38-39

դ. Սարկավագական ձեռնադրություն Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցում: 39-40

ե. Վարդանանց տոնը իրաքաճայ թեմի մեջ: 40-42

զ. ՍԱՐԳԻՍ քաճանա ՍԱՐԳԸՍՅԱՆ, Հայ եկեղեցվո մասնակցությունը «Քրիստոնյաներու միության աղոթքի» շաբաթին Միլանոյի և շրջակա քաղաքներու մեջ: 42-43

385. Քրիստոնեական-մաճմեդական երկխոսությունը Պրագայում: 44

386. ԾՆՈՐՀՔ արքեպիսկոպոս ԳԱԼՈՒՍՏՅԱՆ, Համառոտ ակնարկ Հայաստանյայց եկեղեցվո ընդճանուր ժողովներու կազմության վրա: 45-50

387. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ, Ինչպես կարդալ Ավետարանը: 51-60

Տար. տես № 417, 446, 461, 490

Գ-Դ

388. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի Ջատկական քարոզը՝ արտասանված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում (30 մարտի 1986 թ.): 3-5

389. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի Կոնդակը Կիպրոսի Մելքոնյան կրթական ճաստատության վաթսունամյակի առթիվ: 6-7

390. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի Կոնդակը ազգային բարերար Արամ Ալեքսանյանին՝ Համիլթընի ճայոց Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման առթիվ: 8

391. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի Կոնդակը Համիլթընում ճայ եկեղեցի կառուցելու առթիվ: 9

392. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի սիրո և օրճնության գի-

րը Կանադայի հայոց թեմի երրորդ պատգամավորական ժողովին: 10

393. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի գիրը Կանադայի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Վազգեն եպիսկոպոս Քեշիշյանին՝ Տորոնտոյում հայկական եկեղեցի կառուցելու առթիվ: 11

394. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի քարոզը՝ արտասանված Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում: 12-14

395. Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Փարիզ: 15

396. ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ: Փրկչի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի և Քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 16-18

397. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի Հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին: 19-20

398. Սուրբ Հարության տոնը Մայր Աթոռում: 21

399. Հանդիսավոր «Հանգստյան» ժամերգություն և պաշտոնեության հավաք Մայր Աթոռում: 22-27

400. ԱՐԱՄ ՉԱՐԸԳ, Ժողովուրդների երգը: 28

*Ոտանավոր*

401. Մեծ եղեռնի տարելիցի ոգեկոչումը Մայր Աթոռում: 29-31

402. Ավարտաճառերի պաշտպանություն Հոգևոր Ճեմարանում: 32-34

*Ավարտաճառեր են պաշտպանել Սամվել Դանիելյանը, Սարգիս Գուտուզյանը, Հայկ Չոլչյանը, Մարգար Տերտերյանը, Սամվել Կնոյանը, Ռոբերտ Ադամյանը, Մխիթար Սարիբեկյանը, Սարգիս Մելքոնյանը*

403. ԹՂԹԱԿԻՑ, Գեղարվեստական երեկոներ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում: 35

404 ԹՂԹԱԿԻՑ, Սփյուռքահայ ուսանողների հանդիպում Վեհափառ Հայրապետի հետ: 36

405. ՄԱՅՐ ԱԹՈՌ: Եկեղեցական բեմ. լուրեր: 37-39

406. Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի մի քանի նամակներ: 40-59

*Թվով 15 նամակ*

407. ԳԱՐԵԳԻՆ եպիսկոպոս ՆԵՐՍԻՍՅԱՆ, Քարոզ: 60-61

408. ՍԻՓԱՆ քահանա ՄԸԽՍՅԱՆ, Անդրադարձումներ Մեծ պահոց առթիվ: 62-63

409. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տարեկան համաժողովը: 64

410. Հոբելյանական երեք հանդիսություններ Երևանում: 65-66

411. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ:

ա. Նիցցայի հայության եկեղեցական մշակութային կյանքը: 67

բ. Արսեն Եպիսկոպոս Բերբերյանը Շվեյցարիայում: 67-68

գ. Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի գործադիր կոմիտեի խորհրդակցությունը: 68

412 Կանտատ «Էջմիածին»: 69-80

Նոտա: Խոսք՝ Հովհաննես Հովհաննիսյանի, երաժշ. Խորեն Մեխանեջյանի

413. Կիլիկյան թագավորության մի քանի կնիքներ: 81-82

414. ՇՆՈՐՀՔ արքեպիսկոպոս ԳԱԼՈՒՍՏՅԱՆ. Համառոտ ակնարկ Հայաստանեայց Եկեղեցվո ընդհանուր ժողովներու կազմության վրա: 83-87

415. ՀԱԿՈԲ ծ. վ. ԳԸԼԸՆԺՅԱՆ. Մարտին Լութերին կանխող մի քանի եկեղեցական նշանավոր բարեկարգիչներ: 88-94

416.. ԳԵՎՈՐԳ սարկավագ ՄԸԿԸՐՏՉՅԱՆ. Վերին Նորավանքի տեղը: 95-101

417. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ. Ինչպես կարդալ Ավետարանը: 102-112

Սկ. տես № 387

418. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ. Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 113-123

Սկ. տես № 280

## Է

419. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության մեծահարգ նախագահ Անդրեյ Անդրեևիչ Գրոմիկոյին: 3

*Վազգեն Ա-ի հեռագիրը*

420. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույնի գիրը Միացյալ Նահանգների արևելյան թեմի հոգևորականաց համագումարին: 4

*Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից*

421. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ողջույնի Գիրը Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմի պատգամավորական ժողովին:

422. ԱՄՆ արևելյան թեմի թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հեռագիրը Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին 64-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի գումարման առթիվ: 6

423. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ողջույնի Գիրը Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին՝ նրա կազմակերպած Ֆրիդհոֆ Նանսենի ծննդյան 125-ամյակը հանդիսավորությամբ նշելու առթիվ: 7

424. Վեհափառ Հայրապետի Օրհնության խոսքը Ֆրանսիայի հայ բժիշկների համագումարին: 8

425. Վեհափառ Հայրապետի Ողջույնի գիրը ամերիկահայ միջազգային գոլֆի 10-ամյակի առթիվ: 9

426. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Օրհնության Կոնդակը գրական-կրթական վաստակաշատ գործիչ Վահե Վահյանի ծննդյան յոթանասունհինգամյակի առթիվ: 10

427. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Կ. Պոլսի հայոց կենտրոնական վարժարանի հարյուրամյակի առթիվ: 11-12

428. Կանադահայ թեմի երրորդ պատգամավորական ժողովի հեռագիրը Վեհափառ Հայրապետին: 12

429. ՊԵՏՐՈՍ քահանա ՄԱԼՅԱՆ, Ս. Գեղարդա վանքում աղբյուր-հուշարձանի բացում: 13-18

430. Մայր Աթոռի դիվանապետ, Գերշ. Տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանի այցելությունը Ավստրալիա: 19-24

431. ՊՍԱԿ աբեղա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. Բրիտանական եկեղեցիների ներկայացուցիչները Մայր Աթոռում: 25

432. ԹՂԹԱԿԻՑ. Պոլսահայերի այցելությունը Մայր Աթոռ: 26

433. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Եկեղեցական քհմ. լուրեր: 27-28

434. ՊԻՌՆ ՀԱԿՈԲՅԱՆ. Խ. Աբովյանի զատկական քարոզը: 30

Տես № 435

435. Խաչատուր Աբովյանի զատկական քարոզը՝ արտասանված Մոսկվայի հայոց եկեղեցում: 31-35

Տես № 434

436. ՆԵՐՍԵՍ եպիսկոպոս ՊՈԶԱՊԱԼՅԱՆ. Քարոզ, խոսված սուրբ թվականի ապրիլի 27-ին Մայր Տաճարում Երևման Ս. Խաչի տոնի առթիվ: 36-37

437. ԳՅՈՒՏ եպիսկոպոս ՆԱԳԳԱՇՅԱՆ. Քարոզ: 38-39

438. ԵԶՆԻԿ քահանա ՊԵՏՐՈՍՅԱՆ. Քարոզ Հայոց Հայրապետական Աթոռի Սսից Էջմիածին փոխադրման տարեդարձի առթիվ: 40-41

439. ՊՍԱԿ աբեղա Կարապետյան. Հոբելյան Լվովում: 42-43

*Ուկրաինայի հունա-կաթոլիկ Եկեղեցիների՝ Ռուս Ուղղափառ Մայր Եկեղեցուն միանալու քառասնամյակի հանդիսություն*

440. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ:

ա. Արևմտյան Գերմանիայի հայոց եկեղեցական համայնքների առաջին համագումարը: 44

բ. ՎԱԶԳԷՆ Ա. Խօսք օրհնութեան՝ ուղղեալ Գերմանիոյ հայոց եկեղեցական վարչութեանց ներկայացուցիչներին: 44-45

գ. Քահանայական ձեռնադրություն Դամասկոսի հայոց Ս. Սարգիս եկեղեցում: 45

*Աբեղայական ձեռնադրություն է ստացել Հակոբ Գալթագճյանը (Արարատ աբեղա)*

441. Արարատ աբեղա Գալթագճյան: 46

442. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Դրպրության չորս աստիճանների տվչություն Պաղտատի մեջ: 46-47

443. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: ԹՂԹԱԿԻՑ. Նոր եկեղեցի Թորոնթոյում: 47-48

444. ՀԱԿՈԲ ՃԵԼԱԼՅԱՆ. Սփյուռքի հնագույն ոստաններեն (Գոմոթինի): 48-50

445. Հայերը ՍՍՀՄ-ում ըստ ժողովրդագրական հանրագիտարանի: 51-52

446. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ. Ինչպես կարդալ Ավետարանը: 53-60

Նկ. տես № 387

Զ

447. ՎԱԶԳԵՆ Ա. Օրհնության խոսք Լիբանանի հայության: 3-4

448. Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսի պատասխանը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: 4

449. ԱԼԵՔՍԱՆԴՐ սարկավագ ՍԱՐԳՍՅԱՆ. Վեհափառ Հայրապետը Ս. Գեղարդա Վանքում: 5-6

450. ԹՂԹԱԿԻՑ. Սովետական Միության խաղաղության կողմնակիցների համաժողովը Մոսկվայում: 7

451. ԹՂԹԱԿԻՑ. Ամավերջի հանդիսություն Հոգևոր Ճեմարանում: 8-14

452. Եկեղեցական քհմ. լուրեր: 15

453. Ֆրանսիացի ուխտավորների այցը Մայր Աթոռ: 16-17

454. ԹՂԹԱԿԻՑ. Միջեկեղեցական կենդանի կապեր: 18

455. ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ. Տեսիլք ճավերժական: 20-22

*Ոտանավոր*

456. ԵՂՆԻԿ քաճանա ՊԵՏՐՈՍ-ՅԱՆ. Քրիստոսի Ծննդյան տոնը ճունվարի 6-ին տոնելու Հայ Եկեղեցու ավանդությունը: 23-30

457. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿ-ՅԱՆ. Աստուծո գաղափարը և կրոնական պատկերացումները ճայկական առածներում: 31-37

458. ԳԵՎՈՐԳ սարկավագ ՄԸ-ԿԸՐՏՉՅԱՆ, Վերին Նորավանքի տեղը: 37-41

459. ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍ-ՅԱՆ, Միսաք Մեծարենց (Ծննդյան 100-ամյակի առթիվ): 42-47

460. ՌԱՖԻԿ ԱԲԳԱՐՅԱՆ. Հայ ճարտարապետության նորաճայտ ճուշարձան: 48-53

*Լաչինի Աղավնո գետի Աղ-Օղլան վտակի աջ ափում գտնվող ճուշարձանի մասին*

461. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ, Ինչպես կարդալ Ավետարանը: 54-60

Տե՛ս. տես № 387

## Է - Ը

462. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի նամակը ԱՄՆ-ի նախագաճ Ռ. Ռեյգանին: 3-5

463. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի ցավակցական ճեռագիրը միտրոպոլիտ Թեոկտիստին՝ Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Ժուստինի մաճվան առթիվ: 6

464. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի ցավակցական ճեռագիրը Եգիպտոսի Հույն-Ուղղափառ Եկեղեցու սուրբ սինոդին՝ Ն.Ս. Նիկողայոս Զ-ի մաճվան առթիվ: 7

465. Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու կոնսիստորիայի կանցլեր Կ. Գալիտիսի գիրը Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետին: 8

*Կոնսիստորիայի ճաղորդագրությունը. ավետարանական-լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս է ընտըրվել Էրիկ Մեստերսը*

466. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի շնորճավորական ճեռագիրը Էրիկ Մեստերսին: 9

467. Ամենայն Հայոց Վեճափառ Հայրապետի Կոնդակը Սինգապուրի ճայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման և օծման 150-ամյակի առթիվ: 10-11

468. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ: Հաղորդագրություն: 12

*Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչների ճետ ճանդիպման մասին*

469. Ծայրագույն վարդապետական աստիճանի տվչություն 13-16

*Ծայրագույն վարդապետի աստիճան է ստացել Հայկազուն վարդապետ Նաջարյանը*

470. Վեճափառ Հայրապետի առաջին աշակերտները Մայր Աթոռում: 17-18

471. ՍԱՀԱԿ սարկավագ ՍՈՒ-ՔԻԱՍՅԱՆ, Լիոնաճայ երիտասարդ ուխտավորներու այցը Մայր Հայրենիք: 19-20

472. ՄԱՅՐ ԱԹՈՌ: Եկեղեցական բեմ. լուրեր: 21-22

473. ՀԱՅԿԱԶՈՒՆ վարդապետ ՆԱՋԱՐՅԱՆ - Եթե մոռանամ քեզ, Էջմիածին, թող չորանա աջն իմ: 23-24

*Քարոզ*

474. ՋԱՏԻԿ աբեղա ԱՎԵՏԻՔ-ՅԱՆ - Մարդ արարածը՝ տաճար հոգվո: 25-26

*Քարոզ*

475. ԵԶՐԱՍ աբեղա ՆԵՐՍԻՍ-ՅԱՆ. Տէր, շնորհեա տեսանել զքեզ: 27-28

*Քարոզ*

476. ՌԱԶՄԻԿ սարկավագ ԻՍԱ-ԽԱՆՅԱՆ - Երանի նրանց, որ հեզ են և խոնարհ: 29-30

*Քարոզ*

477. ԱՂԱՆ եպիսկոպոս ՊԱԼԻ-ՈՋՅԱՆ. Սինգապուրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո 150-ամյակը: 31-33

478. ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄ-ՅԱՆ, Բոստոնի հայոց Ս. Երրորդություն եկեղեցու օծման 25-ամյակը: 34-35

479. ՀՈՒՍԻԿ քահանա ԼԱԶԱՐ-ՅԱՆ, Գիտաժողով Կիևում նվիրված Ռուսիայի մկրտության 1000-ամյակին: 36-37

480. ՀՈՒՍԻԿ քահանա ԼԱԶԱՐ-ՅԱՆ, Հայ Առաքելական Եկեղեցու կապերը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ: 38-41

481. ԹՂԹԱԿԻՑ, Կրոնական դավանանքների համաժողով՝ նվիրված խաղաղության համաշխարհային տարվան: 42

482. Եկեղեցիներու համաշխարհային Խորհուրդի ներկայացուցիչներու այցը Իրաք: 43-44

483. ԵԶՆԻԿ քահանա ՊԵՏՐՈՍ-ՅԱՆ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի աստվածաբանական կրթության հանձնաժողովի տարեկան հավաքը Գանայում: 45-46

484. ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄ-ՅԱՆ. Հայ ձեռագրահավաքչական շնորհակալ աշխատանք: 47-48

485. ՍԵԴԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ. Մեծ հայրենասերը Տավուշից (Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյանի ծննդյան 150-ամյակի առթիվ): 49-54

486. ՆԵՐՍԵՍ քահանա ՆԵՐ-ՍԵՍՅԱՆ. Պետրոս առաքյալի ուսուցման դիպվածը և նախնական Եկեղեցու կեցվածքը հանդեպ ուրացողներուն (Lapsi): 55-63

487. Ռ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. Հայկական ճարտարապետական կոթող Գրոզնի քաղաքում: 64-68

488. Լ. ՀԱԿՈԲՅԱՆ, Հայկական Ծարականների տաղաչափությունը: 69-79

489. ՄԱՐԿ ՌԻԺԿՈՎ, Մեսրոպ Մաշտոցին: 80

*Ռուսերենից: Թրգմ. Սիլվա Կապուտիկյան*

490. Հայր ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ. Ինչպես կարդալ Ավետարանը: 81-89

Սկ. տես № 387

491. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼ-ՅԱՆ, Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 90-101

Սկ. տես № 280

492. Հանգիստ Տ. Գեղամ ավագ քահանա Փաշայանի (1894-1986): 102-103

(Շարունակելի)

*ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ*

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱՅԻ» ԷՋԵՐՈՒՄ

19-րդ դարի վերջին քառորդին հայ բանագիտությունը նշանավորվեց մի ամբողջ շարք բանահյուսական ժողովածուների հրատարակությամբ: Հրապարակի վրա էին Մ. Միանսարյանցի, Գ. Սրվանձտյանցի, Գ. Շերենցի, Հ. Ճանիկյանի, Տ. Նավասարդյանի, Մ. Բարխուդարյանի, Գ. Տեր-Ալեքսանդրյանի և շատ ուրիշների գրքերը: Հայ հասարակական միտքը ջերմությամբ ու խանդավառությամբ ընդունեց վերոհիշյալ ժողովածուները և հատկապես ազգային հերոսավեպի՝ «Սասնա ծռերի» երևան գալը: Վեպի նոր պատումների հայտնաբերումն ու տպագրությունը խթան հանդիսացան նոր-նոր սկզբնավորվող հայ բանագիտության զարգացման համար: Բանահյուսության, ազգային հոգևոր արժեքների նկատմամբ արտահայտված վերաբերմունքը ապացույցն էր այն մտայնության, թե որքան է կարևորվում հայ հասարակությունը ազգային ժողովրդական մշակույթը իբրև ազգային ինքնահաստատման ու հարատևման գործոն: Վիեննայում հանգրվանած Մխիթարյան միաբանությունը ևս ապում էր իր ազգի հոգսերով, անմասն չէր տեղի ունեցող հասարակական շարժումներից:

1887 թ. լույս է տեսնում «Հանդես ամսօրյա» պարբերականը: Խմբագրությունը հենց առաջին իսկ տարուց իր պարբերականի էջերում զգալի տեղ է հատկացնում բանահյուսական հին ու նոր հուշարձանների տպագրության, բազմակողմանի հետազոտության խնդիրներին:

Բանահյուսությանը վերաբերող նյութերը, փոքր ու ծավալուն ուսումնասիրությունները հանդեսի էջերում ներկայացնում են «Ազգային», «Ազգային ժողովրդական», «Ազգագրական» խորագրերի ներքո: Բանահյուսությունը դիտվում էր իբրև ազգային, ազգագրական երևույթ լայն առումով. այն տրվում էր ծիսական, կենցաղային պատմական երևույթների հետ իբրև սինկրետիկ երևույթ: Այդ մոտեցմամբ էր առաջնորդվել նաև Եր. Լալայանը՝ իր հիմնադրած պարբերականը անվանելով «Ազգագրական հանդես», որի 26 գրքերը հարուստ են բանահյուսական բազմաժանր նյութերով:

«Հանդես ամսօրյայի» լույս ընծայած՝ բանահյուսությանը վերաբերող նյութերը ի մի բերելով կարելի է դրանք պայմանականորեն խմբավորել հետևյալ կերպ. բուն բանահյուսական ստեղծագործություններ, ուսումնասիրություններ, ազգագրական-բանահյուսական հրատարակությունների մասին հաղորդումներ, արժեքավորող-գնահատող գրախոսություններ:

Հանդեսի առաջին իսկ համարում տպագրվում է Խոտորջրի բարբառով գրի առած առածների մի փունջ[1]: 1890-1895 թթ.[2] ընթացքում լույս է տեսնում Տրապիզոնի հայոց վարժարանի ուսուցիչ Նշան Խտշյանի հավաքածոն, բաղկացած շուրջ 700 միավոր առած-ասացվածքներից, որն ամբողջությամբ վերահրատարակեց Բարունակ Թոռլաքյանը իր կազմած «Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության» գրքում (Երևան, 1986):

1898-1900 թթ. «Լեզվաբանական» խորագրի ներքո հրատարակվում է Հովհաննես Գազանճյանի «Եվդոկիո հայոց գավառաբարբառը» աշխատությունը[3]: Նույնաբնույթ աշխատություններ են նաև 1900-1903 թթ. լույս տեսած Դավիթ-Բեկի «Արաբկիրի գավառաբարբառը»[4] և 1908-1912 թթ. տպագրված Մ. Գաբրիելյանի «Ակնա գավառաբարբառը և հայերեն լեզուն»[5]:

Վերոհիշյալ աշխատությունների հեղինակները հընթացս ուսումնասիրության ներկայացնում են գավառներում կենցաղավարող հեքիաթների, զրույցների, աղոթքների, ծիսական ու կենցաղային երգերի, վիպական մանր ժանրերի, բանաձևային-հմայական բանահյուսության, կոչականների դարձվածքների, փաղաքշանքի ու սպառնալիքի բազմաթիվ նմուշներ:

Ըստ որում բոլոր պայմաններում բանահյուսական ստեղծագործությունները հեղինակները ներկայացնում են կենցաղավարման հանգամանքների հետ, լինեն դրանք ծիսական, կենցաղային թե պատմական: Բանահյուսական նյութի ընդգրկմամբ ու ժանրային բազմազանությամբ հատկապես շահեկանորեն աչքի է ընկնում «Ակնա գավառաբարբառը»: Այս բարբառագիտական ուսումնասիրության շարունակությունը նվիրված է Ակնա և Գողթան երգերի տաղաչափական արվեստի յուրահատկությունների համեմատական վերլուծությանը: Հանդեսի խմբագրությունը,

---

[1] «Հանդես ամսօրյա», 1887, էջ 197- 198:

[2] Անդ, 1890, էջ 163-164, 289, 1891, էջ 116, 300-301, 1892, էջ 24, 183-184, 382-383, 1893, էջ 358-359, 1895, էջ 13:

[3] Անդ, 1898, էջ 97-105, 146-147, 174-175, 208-210, 256-258, 298-306, 1899, էջ 11-14, 46-49, 145-147, 176-177, 207-210, 1900, էջ 336-341:

[4] Անդ, 1900, էջ 248-252, 295-303, 328-332, 362-367, 1901, էջ 36-42, 175-177, 212-217, 235-238, 238-242, 1902, էջ 19-24, 48-53,177-179, 219-224, 268-271, 326-330, 359-363, 393-396, 1903 էջ 47-49, 125-127, 218-220, 335-338:

[5] Անդ, 1908, էջ 181-186, 207-212, 248-252, 279-288, 315-319, 344-350, 1909, էջ 54-61, 91-96, 120-124, 155-159, 190-192, 221-224, 252-256, 267-273 376-379, 1910, էջ 91-93, 114-118, 234-238, 298-301, 343-347, 1911, էջ 103-109, 410-419, 585-595, 1912, էջ 15-38:

կարծում ենք, ծանոթ էր Հ. Ճանիկյանի 1895 թ. լույս տեսած «Հնությունք Ակնա» ժողովածուին: Հրատարակելով Մ. Գաբրիելյանի աշխատությունը՝ խմբագրությունն ավելի էր հարստացնում հայ ժողովրդական տոհմիկ երգի, բառ ու բանի այն ժառանգությունը, որ պահպանվել էր Ակնում:

Արգասաբեր է եղել Արամ Երեմյանի բանահավաքչական գործունեությունը, որին հայ հասարակությունը, մասնավորապես բանագիտությամբ պարապողները, ծանոթացել ու հաղորդակցվել են «Հանդես ամսօրյայի» հրատարակությունների միջոցով: 1922 թ. ընթացքում լույս է տեսել նրա աշխատասիրած «Չահարմահալի ժողովրդական բանահյուսությունը» հոդվածաշարը՝ «ազգագրական ուսումնասիրություն» անվամբ[6]: «Չահարմահալի ժողովրդական բանահյուսությունը» բազմաժանր ժողովածու է և ներկայացնում է Պարսկաստանի այդ հայաբնակ գավառի ավանդական բանահյուսության գրեթե բոլոր տեսակները՝ ազգագրական իրողությունների հետ:

Հարկ է նշել, որ վերոբերյալ չորս աշխատություններն էլ Մխիթարյան միաբանությունը տպել է առանձին՝ «Ազգային մատենադարան» մատենաշարով:

1909-ին Հանդեսը հրատարակում է Տ. Չիթունու գրի առած ազգային հերոսավեպի մի պատումը՝ «Սասմանց տուն, հայ ժողովրդական դյուցազնավեպի նոր «վարիանտ» (տարբերակ) Կառկառու բարբառով», արևմտահայ գրական փոխադրությամբ հանդերձ[7]: Չիթունին իբրև բանահավաք մի անգամ էլ է հանդես գալիս պարբերականի էջերում: Նրա՝ 1906 թ. Վանում գրի առած «Քառասուն գիողեր և թակավուրու ախչիկ» ժողովրդական հեքիաթը լույս է տեսել ավելի ուշ՝ 1932 թ.[8]:

20-րդ դարի 20-ական թվականներից սկսած Հանդեսի էջերում հետզհետե նվազում է բանահյուսական նյութերի քանակը: Փոխվում է նաև լույս տեսածների բնույթը: Հավանաբար ազգային աղետը, բանահյուսության սնուցող հողի՝ բնաշխարհի կորուստը, քաղաքական հանգամանքները որոշակի բացասական անդրադարձներ ունեցան այս խնդրում: Եվ այնուամենայնիվ 30-40-ական թվականներին բանահյուսությունը շարունակում էր մնալ «Հանդեսի» տեսադաշտում:

1928 թ. հրատարակվում է Ա. Երեմյանի հաջորդ հավաքածուն՝ «Փշրանքներ հայ ժողովրդական բանահյուսությունից» խորագրով, որը պարունակում է պատառիկներ Մարզվանի, Բայազետի, Շիրակի, Ալաշկերտի հայ ժողովրդի բանարվեստից[9]: Նույն տարում լույս է տեսնում Կ. Մելիք-Օհանազարյանի (գրական շրջաններում հայտնի «Տմբլաշի-Խաչան» կեղծանունով) բանահյուսական հավաքածուի մի մասը՝ «Ղարաբաղի բարքերեն» վերնագրով, որը ներկայացնում է օրհնության ու ա-

---

[6] Անդ, 1922, էջ 33-39, 132-138, 255-268, 382-388, 452-460:

[7] Անդ, 1909, էջ 111-118, 186-190, 212-216, 274-279:

[8] Անդ, 1932, էջ 614-624:

[9] Անդ, 1928, էջ 536-552:

նեծքի նմուշների մի փունջ[10]: Հանդեսը շարունակում է տպագրվել Ա. Երեմյանի հավաքածուն. 1930 թ. «Փշրանքներ ջուղահայ և հնդկահայ բանահյուսությունից»[11] բաժինը, որն ընդգրկում է մայր հողից կտրված երկու գաղթավայրերում տակավին կենդանի կենցաղավարող սիրո, հարսանեկան, երգիծական և այլ տաղերի ու երգերի նմուշներ: Մելիք-Օհանջանյանի «Առակներ Ղարաբաղի բարբառով» նյութը նրա հավաքածուի շարունակությունն է, և ներկայացվում են ոչ թե առակներ, ինչպես վերնագրված է, այլ առածներ, 105 միավոր[12], և ապա՝ «Հանելուկներ Ղարաբաղի լեզվով»[13], 145 միավոր: Ավելորդ չենք համարում նշել, որ նույն հեղինակի ազգագրական բնույթի նյութերը ևս, մասնավորապես բուրդ գզելու, գորգ գործելու, ժողովրդական բժշկության վերաբերյալ, տեղ են գտել հանդեսի էջերում[14]:

1924-1927 թթ. բանագետ Ա. Երեմյանը հանդես է գալիս մի այլ՝ ժողովրդական բանահյուսությանը հարող բնագավառում: Նրա ծավալուն աշխատությունը՝ «Պարսկահայ նորագույն աշուղներ, կենսագրություններ և բնագրեր», լույս են տեսնում ինչպես հանդեսում[15], այնպես էլ առանձին գրքով՝ «Ազգային մատենադարան» մատենաշարով: Բանահավաքը շարունակում է պրպտումները և ահա ներկայացնում է մի աշխատանք, ուր ընդգրկված են շիրմաքարերի մակագրությունները, և որոնց նա հիրավի դիտարկում է իբրև ժողովրդական ստեղծագործություններ: Նրա «Թիֆլիսի հայկական պանթեոններում»-ը տպագրվել է հանդեսի 1937-1940 թթ. համարներում[16]: 30-ական թվականներին հանդեսը տպագրում է մի քանի բանահյուսական ստեղծագործություններ, փոքրածավալ հավաքածու, որոնք թեև արժեքավոր, բայց վկայությունն էին բուն նյութի նվազեցման և ոչ՝ հանդեսի վերաբերմունքի փոփոխության: Այսպես, 1932-ին Ն. Ակինյանը հրատարակում է «Երեք հարսանեկան տաղեր, հին ժողովրդական բանահյուսութենեն», որոնք նա հայտնաբերել էր Կաֆայում 1620 թ. գրված մի տաղարանում[17]:

1933 թ. լույս է տեսնում Ն. Ակինյանի «Քաջն Լիպարիտի պատմության, տաղերու և զրույցներու մեջ» ուսումնասիրությունը՝ Լիպարիտին ձոնված երգերի և պատմական զրույցների հետ[18]: Լիպարիտի կերպարին ու նրա անվանն աղերսվող պատմությանը նա անդրադառնում է նաև հետագայում[19], և այս կապակցությամբ

---

[10] Անդ, էջ 552-559:

[11] Անդ, 1930, էջ 346-356, 435-444, 685-695:

[12] Անդ, էջ 357-362:

[13] Անդ, էջ 596-601:

[14] Անդ, 1928, էջ 475-478, 1931, էջ 246-252, 1932, էջ 331-337:

[15] Անդ, 1924, էջ 102-111, 234-244, 312-318, 499-509, 1926, էջ 148-152, 229-235, 324-333, 1927, էջ 138-141:

[16] Անդ, 1937, էջ 359-378, 1938, էջ 116-126, 230-238, 402-416, 1939, էջ 115-123, 1940, էջ 121-128:

[17] Անդ, 1932, էջ 223-227:

[18] Անդ, 1933, էջ 129-138:

[19] Անդ, 1965, էջ 20-32:

ուշագրավ է նրա հետևյալ միտքը. «Թե՛ պատմական հիշատակները, և թե՛ գրուցախառն պատմվածքները արժանի են ուշադրության. վերջինները կբանան մեր առջև նոր էջ մը հայ դյուցազներգական գրականության»[20]: 1937 թ. հրատարակվում է Հ. Գ. Մոսկոֆյանի «Նմուշներ Սեբաստիո ժողովրդական բանահյուսութենեն» խորագրով հավաքածուն՝ բաղկացած աղոթքներից ու տարբեր ժանրերի երգերից:

Հետագա տասնամյակում ևս եղան հատուկենտ բանահյուսական ստեղծագործությունների հրապարակումներ: Առավել արժեքավորն ու ծավալունը Տիգրան Աբգարյանի ազգագրական-բանահյուսական բնույթի աշխատությունն է, որը լույս է տեսել 1964-1966 թթ. «Ընտանեկան բարք Նոր Ջուղայի», «Հավատալիքներ Նոր Ջուղայի մեջ» և «Նոր Ջուղայի առածները» վերնագրերով: Դրանք ընդգրկում են Նոր Ջուղայի բանահյուսության տարբեր ժանրերի, մասնավորապես տաղերի, երգերի, առածների, անեծք-օրհնանքների մի շարք նմուշներ[21]: Եվ ապա Պողոս Էսապալյանի «Հարսանեկան թագավորը» ազգագրական ուսումնասիրությունը, որի էջերում ըստ հարկի մեջ են բերվում հարսանիքի ժամանակ գործածվող բանաձևերը[22]:

«Հանդես ամսօրյայի» էջերում լույս են տեսել բանագիտական մի շարք մեծ ու փոքր աշխատություններ՝ նվիրված բանահյուսական ազգագրական իրողությունների, երևույթների ուսումնասիրությանը: Առաջին իսկ համարներից «Ազգագրական» խորագրով հրատարակվում է Ղ. Հովնանյանի «Մեր առակաց՝ հնդկականաց հետ հարաբերությունն. համեմատական ուսումնասիրությունը»[23]: Գրավոր ավանդույթով հայտնի առակների հետ հեղինակը վկայակոչում է նաև ժողովրդական ստեղծագործությունները: Բանագիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի «Միջնադարյան ազգային տաղաչափություն ռամկախառն. ուսումնասիրություն և կարևոր տաղերու հրատարակություն» աշխատությունը[24], որը մնաց անավարտ՝ հեղինակի մահվան պատճառով:

Վեպի նորանոր պատումների ի հայտ գալը անհրաժեշտաբար առաջացրեց այն բազմակողմանիորեն հետազոտելու ու արժեքավորելու խնդիրը: Վեպի ազգային, պատմական ու առասպելական կողմերի քննարկմանն է նվիրված Բագրատ Խալաթյանի «Հայ ժողովրդական դյուցազնական վեպը» աշխատությունը, որը լույս տեսավ Հանդեսի 1902 թ. համարներում[25] և ապա առանձին՝ «Ազգային մատենադարան» մատենաշարով: Տ. Չիթունու «Համեմատական, ազգագրական հետազո-

---

[20] Անդ, էջ 129:

[21] Անդ, 1964, էջ 245-256, 405-414, 515-528, 549-554, 1965, էջ 111-120, 285-290, 395-404, 1966, էջ 93-100:

[22] Անդ, 1944, էջ 36-56:

[23] Անդ, 1891, էջ175-178, 210-214, 295-300, 329-333:

[24] Անդ, 1895, էջ 305-310, 1896, էջ 52-55, 115-119:

[25] Անդ, 1902, էջ 132-136, 173-177, 252-256, 330-333, 349-354:

տությունը Անահիտ-Արև-Աստղիկ և հայ ժողովրդական վեպի Դեղձունծամ-Գոհարը» հրատարակվել է 1911 թ.[26]:

1920-ական թվականների «Հանդես ամսօրյան» աչքի է ընկնում բանագիտական խոշոր ու մանր աշխատությունների առատությամբ: Հատկապես ուշագրավ են Ալեքսանդր Մատիկյանի «Արա Գեղեցիկ» քննական ուսումնասիրությունը, որը լույս է տեսել 1922-1930 թթ. ընթացքում[27], և Թ. Ավդալբեգյանի «Միհրը հայոց մեջ» ուսումնասիրությունը, որն առաջին անգամ տպագրվել է «Ամսօրյայի» էջերում 1927-1928 թթ. ընթացքում[28]: Երկու աշխատություններն էլ արժանացել են առանձին տպագրության «Ազգային մատենադարան» մատենաշարով: Թվարկված հետազոտությունները իհարկե կարելի է բնութագրել իբրև բանագիտական վերապահությամբ. հեղինակներն իրենք իրենց գործերն անվանում են պատմական, դիցաբանական, ազգագրական համեմատական ուսումնասիրություն:

«Հանդես ամսօրյան» իր էջերում մեծ տեղ է հատկացրել հայերեն և հայերին վերաբերող հրատարակություններին և ի շարս դրանց բանահյուսական-ազգագրական բնույթի գրքերին: Ամսագիրը պարբերաբար տպագրել է հաղորդումներ այդ հրատարակությունների տեղի, ժամանակի, հեղինակների մասին՝ հաճախ ներկայացնելով դրանց համառոտ բովանդակությունը, գրախոսել ու արժեքավորել դրանք: 1887 թ. հանդեսը ծանուցում է Գր. Խալաթյանի «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» նույն թվականին Մոսկվայում տպագրված հիրավի ծրագրային աշխատության մասին[29]: Այնուհետև ծանուցվում և գրախոսվում են մասամբ «Ազգագրական հանդեսի» համարները[30], «Էմինյան ազգագրական ժողովածու»[31], Գր. Խալաթյանի «Հայկական էպոսը Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» ռուսերեն աշխատությունը[32], «Բանասեր» հանդեսի համարները[33]: Գ. Ծերենցի «Վանա սազը» (Բ գիրք)[34], Տ. Նավասարդյանի «Բառգիրք Արարատյան բարբառին»[35], Մաթ. Հաճյանի «Հին ավանդական հեքիաթներ Խոտորջրո»[36] ժողովածու, Վ. Համբարձումյանի «Գյուղաշխարհը»[37],

---

[26] ԱՕդ, 1911, էջ 169-172:

[27] ԱՕդ, 1922, էջ 111-121, 226-243, 556-563, 631-642, 1923, էջ 116-131, 481-496, 1926, էջ 152-161, 1927, էջ 43-55, 145-162, 317-325, 1928, էջ 224-241, 319-325, 1929, էջ 129-142, 1930, էջ 61-77, 164-181:

[28] ԱՕդ, 1927, էջ 442-453, 589-600, 1928, էջ 38-44, 146-157, 242-257, 325-337, 411-428, 494-505:

[29] ԱՕդ, 1887, էջ 10:

[30] ԱՕդ, 1896, էջ 152-154, 1899, էջ 86, 1900, էջ 24-26, 182-183:

[31] ԱՕդ, 1909, էջ 350-351:

[32] ԱՕդ: 1897, էջ 218:

[33] ԱՕդ, 1899, էջ 153-155, 316-317, 1900, էջ 23-24, 180-182, 316-317:

[34] ԱՕդ, 1900, էջ 121-122:

[35] ԱՕդ, 1903, էջ 382:

[36] ԱՕդ, 1907, էջ 256:

[37] ԱՕդ, 1928, էջ 94:

Տրդ. եպս. Պալյանի «Հայ աշուղներ. ժողովրդական հայ երգիչներ և տաղասացներ»[38] երկու հատորները, «Սասնա ծռերի» Ա հատորը[39], Տ. Չիթունու Փարիզում 1943 թ. հրատարակած «Սասունականը»[40], Ս. Ամատունու 1912 թ. լույս տեսած «Հայոց բառ ու բանը»[41], կարելի է շարունակել թվարկումը, սակայն կարծում ենք, այսքանն էլ բավական է:

Մեզ հետաքրքրող խնդրի կապակցությամբ հիշատակության են արժանի երկու փաստ, որոնք վկայում են պարբերականի խմբագրության կողմնորոշումների մասին: Հանդեսի էջերում մշտապես տեղ են գտել հայ երևելի անհատներին նվիրված մահախոսականներ: Այդ շարքում առանձնանում է 1931-ին վախճանված նշանավոր ազգագրագետ, խմբագիր, բանահավաք Երվանդ Լալայանի մահախոսականը՝ նրա աշխատությունների մատենագիտությամբ հանդերձ, որն աչքի է ընկնում Եր. Լալայանի գիտական վաստակի ու նշանակության ըստ արժանվույն գնահատմամբ[42]: 1931 թ. 6-րդ համարում խմբագրությունը հանդես է եկել Արտաշես Աբեղյանի Ազգագրական ընկերություն և Ազգագրական հանդես ստեղծելու առաջարկության պաշտպանությամբ և այդ առթիվ գրել է այսօր էլ իր հրատապությունը չկորցրած հետևյալ տողերը. «Ինչ որ զանց կընենք այսօր, զուր պիտի փնտռենք վաղը: Փրկենք այսօրվանը: Համախմբվինք, ձեռք ձեռքի տանք և հանենք մշակներ հայ ազգագրության դաշտ, որովհետև հունձք բազում են և մշակք սակավք՝ հավաքելու, ամբարելու գիտության շտեմարանը այն տոհմականները, որ հասցուցած է հայ անդաստանը: Երկինքը մառախլապատ է. կարող է կարկուտը ոչնչացնել հունձքը: Ոչ մեկ զոհողություն զուր պիտի չանցնի. հունձքը գիտության պիտի մնա, ստացվածքը՝ հայ ժողովրդույն»[43]:

[38] ԱՕդ. 1911, էջ 760-763: 1914, էջ 362-364:
[39] ԱՕդ. 1936. էջ 408-410:
[40] ԱՕդ. 1949. էջ 121-123:
[41] ԱՕդ. 1914. էջ 124-126:
[42] ԱՕդ. 1931, էջ 291-303:
[43] ԱՕդ. 1931. էջ 380:

# ՎԱՀԱԳՆ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ - 70

*«Ընդ եղեգան փող բոց ելանէր...»*



Երբ երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանը վերադարձավ Երևան և սկսեց իր գործունեությունը, նրա համերգները վերածվեցին ուխտագնացության: Դա 1964 թիվն էր: Հայաստանում շատերն առաջին անգամ էին տեսնում ու լսում երգեհոն: Մասնագետների, երաժշտասերների կողքին լինում էին և հետաքրքրասերներ, որ գալիս էին համոզվելու, թե ինչպես է նա նվագում ոտքերով, այն էլ՝ «մատների արագությամբ»: Իսկ ոմանք էլ, տեսնելով երգեհոնի առջև նստած իրենց լավ ծանոթ ֆուտբոլ խաղացող Վլադիմիր Ազատյանին, զարմանում էին: Քչերը գիտեին, որ հերթական անգամ որդուն մանկապարտեզից ու դպրոցից դուրս չհանելու կամ հալածանքի չենթարկելու համար մայրը ժամանակին ստիպված էր իր ազգանունը տալ նրան: Եվ միայն Լենինգրադում սովորելու տարիներին Վահագնը կարողացավ վերականգնել իր հայրական ազգանունը միաժամանակ ազատվելով նաև Լենինի անունը կրելու «բեռից»:

Բավական չէր, որ 37-ի բռնադատվածի որդի էր ու դեռ նվագում էր եկեղեցական նվագարան, պրոպագանդում հոգևոր երաժշտություն, այն էլ մի երկրում, ուր անհավատությունը հռչակված էր որպես «պետական կրոն»:

Նրա մուտքը մեծ բեմ սկսվեց Լենինգրադից ու Մոսկվայից: Դեռ իմ ուսանողական տարիներին մոսկովյան հայտագրերում հաճախ էինք տեսնում խոշոր, կարմիր տառերով գրված հայկական՝ «Ստամբոլցյան» երկար ազգանունը և հպարտանում: Հետո եկավ Հայաստան: Նպատակներ ուներ, որոնց մասին դեռ չգիտեինք: Եկավ և հեղաշրջում կատարեց Հայաստանի մշակութային, մասնավորապես երաժշտական կյանքում: Նրա երգեհոնի փողերի «համազարկը» երիքովյան շեփորների պես

փլուզեց աթեիզմի պատնեշները: Հոգևոր երաժշտությունը հորդաց համերգային կյանք, ողջացուրվեցին Բախն ու Կոմիտասը, խորալը և շարականը համերգասրահից տարածվեցին ու արձագանքվեցին բիբլիական Արարատի բարձունքներում: Այսօր հեշտ է խոսել այդ մասին, իսկ այն ժամանակ՝ 60-ականներին, պետք է հանդգնեիր, պետք է ինքդ քեզնից վեր կանգնեիր, իսկ դա նշանակում էր մարտահրավեր նետել: Ավելին՝ դեռ պիտի բեմահարթակ տրամադրեր նաև Լուսինե (Ավետյանա) Զաքարյանին, երբ մինչ ինքը երաժիշտներից ոչ ոք չէր էլ մտածել այդ մասին: Առնո Բաբաջանյանն ասում է. «Վ. Ստամբոլցյանը հայկական երգեհոնային դպրոցի հիմնադիրն է: Խոշոր երգեհոնահար, որ տարիներ շարունակ ելույթներ է ունենում մեզ մոտ և արտասահմանում: Մոսկվայում մշտապես մեծ հետաքրքրություն է առաջացնում ունկնդիրների շրջանում: Նրա արվեստին բնորոշ է մեծակերտությունը, դասական հստակ մտածողությունը, արտիստական ստեղծագործական կամքը»:

Այո՛, նա եկավ Հայաստան և հիմնեց երգեհոնային դպրոց: Այսօր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորը կրթել է երգեհոնահարների մի քանի սերունդ, նրանց հաղորդել ոչ միայն մասնագիտական հմտություն, գործիքին տիրապետելու արվեստ, այլև սեր ու նվիրում՝ սեփական ժառանգության հանդեպ՝ ինչ անուն էլ որ ունենա այդ ժառանգությունը՝ երաժշտություն թե ճարտարապետություն, մայրենի լեզու թե մայր բնություն: Նա հետևում է ոչ միայն ստեղծագործությունների տեքստերի ճշգրիտ վերարտադրությանը և երաժշտական լեզվի, ոճի հստակությանը, այլև մայրենի լեզվի անաղարտությանը: Ժառանգությունը ոգեկիր է, և հարկ է հավատարիմ մնալ այդ ոգուն: Այդ ոգին է, որ 40 տարի շարունակ նրան մղում է բեմից հնչեցնելու մեր միջնադարյան գանձերը, իր սաների հետ ոտքով շրջելու Հայաստան աշխարհով մեկ, լինելու այնտեղ, ուր վանք ու եկեղեցի կա, մատուռ ու սրբատեղի: Դժվար գտնվի մեկը, որ եղած լինի Հայաստանի բոլոր եկեղեցիներում՝ լեռան կատարին, բարձունքներում կառուցված թե ամենաներքևում՝ Սարկողովք լեռան խառնարանում: Ստամբոլցյանը շատ գագաթներ է բարձրացել Հայաստան աշխարհում, սակայն դրանցից ամենանվիրականներն Արագածի չորս գագաթներն են և երգեհոնային արվեստի «Պառնասը»: Այդ ոգին նպաստեց, որ Կապանում, Չարենցավանում ևս տեղադրվեն երգեհոններ, որպեսզի մայրաքաղաքից դուրս ևս հնարավոր լինի կազմակերպել մեծ համերգներ, փառատոներ, որպեսզի հնարավորինս շատ հայորդիներ կարողանան համերգասրահում լուռ աղոթել՝ իրենց հանճարեղ պապերի աստվածահաճո ու խորախորհուրդ մեղեդիների հնչյունների ներքո: Հիրավի, Ստամբոլցյանն ավելին է, քան սոսկ երգեհոնահար:

Նա մեծ հեղինակություն է վայելում ոչ միայն նախկին Խորհրդային Միության շատ հանրապետություններում, այլև արտասահմանյան երկրներում: Նա մշտապես մեկնում է հյուրախաղերի, ընդգրկվում միջազգային մրցութային հանձնաժողովներում, երգեհոնահարների որակավորման հանձնախմբերում... 1984-ին ինձ բախտ վիճակվեց ղեկավարածս «Շարական»-ով մասնակցելու Հոլանդիայի Մաաստրիխտ քաղաքում կազմակերպված հոգևոր երաժշտության միջազգային փառատոնին, որը նվիրված էր Նիդեռլանդներում քրիստոնեության հիմնադիր ու քա-

րոգիչ, հայազգի Սուրբ Սվասի ծննդյան 1600-ամյակին: Այստեղ էին Վահագնը և Լուսինեն: Ես եղա ականատեսն այն խանդավառ մթնոլորտի, որ ստեղծում էր Ստամբոլցյանն իր՝ Բախի, Նարեկացու, Շնորհալու, Տարոնացու, Կոմիտասի ու Եկմալյանի գործերի և մեր Պատարագի հատվածների կատարումներով: Զարմանալի էր, որ հոլանդացիների որոտընդոստ ծափերից չէին «փլվում» Սուրբ Հովհաննես եկեղեցու պատերը: Հիշեցի մեծ դիրիժոր Շառլ Մյունշին, որն ասում էր. «Եթե սառնարյուն հոլանդացին մեկ-երկու ծափ տվեց, ուրեմն համոզված եղիր, որ քեզնից առաջ ոչ ոք նման հաջողության չի հասել»: Իսկ մեկ այլ ոչ պակաս «սառնարյուն» ժողովրդի նշանավոր երաժիշտ, Տալլինի կոնսերվատորիայի պրոֆ. Հուգո Լեպնուրմը գրում է. «Ստամբոլցյանի կատարողական վարպետությունը հայտնի է ողջ Խորհրդային Միությունում իբրև հայկական երգեհոնային դպրոցի հիմնադրի՝ ճանաչված աշխարհում: Հատուկ դրվատանքի են արժանի նրա ներդրումները Հայաստանի մշակույթում. համերգաշարեր, փառատոներ, նոր գործեր ստեղծելու խթանումներ...»: Ի դեպ՝ շատ-շատ երգիչ-երգչուհիներ նրա շնորհիվ են առաջին անգամ բեմ բարձրացել, ինչպիսիք են Լուսինե Զաքարյանը, Արզաս Ոսկանյանը, Կարո Չալիկյանը, Գևորգ Հունանյանը և ուրիշներ:

Ստամբոլցյանի հայրենասիրությունը, քաղաքացիական դիրքորոշումը հատկապես վառ դրսևորվեցին երկրաշարժի և արցախյան շարժման օրերին: Հյուրախաղերի ընթացքում՝ ճշմարտությունը պարունակող թռուցիկներ էր տարածում արտերկրում, զրույցներ ունենում, համերգ-աղոթքներ կազմակերպում, բարեգործական համերգներ տալիս՝ հօգուտ աղետյալների ու արցախի եկեղեցիների վերականգնման: Եվ ինչ էլ անում էր ու անում է այսօր՝ անում է առանց թմբկահարումների, սուս ու փուս, ինչպես բնորոշ է իր նկարագրին: Ստամբոլցյանի ողջ նկարագիրն ու այդ նկարագրից բխող մոտեցումը հանդեպ իր արվեստը նման մի ձև է, որով նա կարողանում է մեր քաոսային կյանքին հակադրել Բախի կառուցիկ, տիեզերահուն և աստվածային վսեմ գեղեցիկն ու խորքն ամբարած հայկական եկեղեցական երաժշտությունը: Հակադրում է, որպեսզի չխաթարվի մարդու հոգեկան ներդաշնակությունը, չկտրվի բարոյականն ու գեղեցիկը մեզանում միմյանց ագուցող թելը: Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր, հանրահայտ երգեհոնահար Լ. Ռոյզմանը Ստամբոլցյանի մասին գրել է. «Վ. Ստամբոլցյանը Խորհրդային Միության առաջատար երգեհոնահարներից է... լուրջ արվեստագետ է, խորը երաժիշտ, փայլուն կերպով է ներկայացնում լենինգրադյան երգեհոնային դպրոցը: Նրա ելույթները թողնում են անմոռանալի տպավորություն...»: Ոչ մեկից ոչինչ չպահանջող, ոչ մեկի դուռը չթակող, փառք և նյութական բարիքներ չփնտրող այս արվեստագետը մի առաքելություն ունի միայն՝ ապրել ու իր ունեցածը տալ ծայրաստիճան նվիրումով, տալ՝ երբեք չսպասելով հատուցման:

Եվ այսպես 70 տարի կյանքում և 40՝ արվեստում:

*ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Մայիսի 6-ին, կիրակի.- Դ. կիրակի (Կարմիր կիրակէ):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբղ. Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Մայիսի 13-ին, կիրակի. - Ե. կիրակի: Տօն Երեւման Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ավետիս ավ. քհն. Բալըքչյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը քարոզ խոսեց՝ «Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան» (շարական) բնաբանով:

***Մայիսի 20-ին, կիրակի.- Զ. կիրակի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբղ. Սարոյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Մայիսի 24-ին, հինգշաբթի.-Խ. օր Յինանց: Համբարձումն Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պողապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Մայիսի 27-ին, կիրակի.- Է. կիրակի: Երկրորդ Ծաղկազարդ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Ջիբեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (Май 2001)

1. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, нанес первый патриархальный визит в США и Канаду, 5 мая - 1 июня 2001 г. (с. 3-38).

## ПАТРИАРХАЛЬНЫЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

2. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Преосвященству Архиепископу Григорису Бунятяну по случаю его назначения главой армянской епархии Украины, 5 мая 2001 г., No 5 (с. 39-40).
3. Пожалование наград Католикосата и патриархальных благословений (с. 41-42).

## ОФИЦИАЛЬНАЯ ИНФОРМАЦИЯ

4. Поздравительное послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Дня Победы, Дня оборонительной армии НКР и Дня освобождения г. Шуши, 8 мая 2001 (с. 43-44).
5. Католикос Гарегин II, "Молимся, чтобы содействовать дружбе между нашими народами", Визит Президента Ливана в Святой Престол, 3 мая 2001 г. (с. 44-45).
6. По приказу Его Святейшества Архиепископ Тиран Кюрегян был лишен сана, 15 мая 2001 г. (с. 45).
7. Письмо соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю воздушной катастрофы в Иране, 21 мая 2001 г. (с. 46).

## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

8. В Армянской епархии Ирака
**ДИЯКОН АРАМ КЕТЕНДЖЯН**
а) Основание новой церкви в г. Мосуле, 26 апреля 2001 г. (с. 47).
б) Освящение новой церкви Св.-Вардан в селе Авзрук, 29 апреля 2001 г. (с. 47-48).
9. Известия из армянской епархии Германии (с. 49).

## РЕЛИГИОЗНОЕ ИССЛЕДОВАНИЕ

10. **АРХИЕПИСКОП АРСЕН БЕРБЕРЯН** - Необходимые знания для христиан (с. 50-55).

## ИСТОРИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

11. **АЙКАЗ ОГАНИСЯН** - Армянская церковь и армянская вера в русских источниках (научное исследование) - (с. 56-70).
12. **С. С. ВИРАБЯН, Г. Л. ЕТИМЯН** - Пилуман Таирян (170-летие постройки церкви Св.-Богоматери в Ванадзоре) - (научное исследование) - (с. 71-76).
13. **ЛАВРЕНТИЙ ОГАНИСЯН** - Лингвистические особенности "Историографии" Товмы Мецопеци (научное исследование) - (с. 77-84).
14. **АЙКАНУШ МЕСРОПЯН** - "Особенности использования слова "Сурб" ("Святой") в различных пониманиях в армянском языке (научное исследование) - (с. 85-93).
15. **РУБЕН СИМОНЯН** - Средневековые дороги провинции Тавуш (научное исследование) - (с. 94-107).

## ЛИТЕРАТУРНАЯ РЕЦЕНЗИЯ

16. **ВАРДАН ДЕВРИКЯН** -Книга, посвященная Анании Санахнеци (О книге "Анания Санахнеци" Акопа Кесеяна) - (с. 108-111).

## БИБЛИОГРАФИЯ

17. **АНДРАНИК ЗЕЙТУНЯН** - Библиография ежемесячника "Эчмиадзин" (1984-2000 гг.) - (с. 112-126).
18. **АЛВАРД ГАЗИЯН** - Армянский народный фольклор и этнология на страницах журнала "Андес Амсория" (С. 127-133).
19. **ДАНИЕЛ МУЗЫКАНТ** - Ваагну Стамболцяну 70 лет (с. 134-136).

20. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном Соборе и Св. Престоле Эчмиадзина в течение мая 2001 г. (с. 137).

# "ETCHMIADZIN"
# OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
## (May 2001)

1. First Patriarchal Visit of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to USA and Canada, 5 May - 1 June 2001 (p. 3-38).

## PATRIARCHAL ENCYCLICALS AND BLESSINGS

2. Encyclical of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to His Eminence Archbishop Grigoris Buniatian on the Occasion of his Nomination Chief of the Armenian Diocese of Ukraine, 5 May 2001, № 55 (p. 39-40).
3. Granting of Catholicossate Orders and Patriachal Blessings and Congratulations (p. 41-42).

## OFFICIAL INFORMATION

4. Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, on the Occasion of the Victory Day, the Nagorny-Karabagh Army Day and the Liberation of Shushi, 8 May 2001 (p. 43-44).
5. Catholicos Gareguin II, "Our Prayer is to Contribute to the Friendship between our two Nations". Visit of the Lebanon President to the Holy See of St.-Echmiadzin, 3 May 2001 (p. 44-45).
6. By the Order of His Holiness the Armenian Catholicos, Archbishop Tiran Kureghian was unfrocked, 5 May 2001 (p. 45).
7. Condolence Message of his Holiness Gareguin II on the Occasion of Plane Crash in Iran, 21 May 2001 (p. 46).

## AT THE HOLY SEE AND IN THE DIOCESES

8. In the Iraqi Armenian Diocese
   **DEACON ARAM KETENJIAN**
   a) Foundation of the New Church Building in Mosul, 26 April 2001 (p. 47).
   b) Blessing of the New Church St.-Vardan of the Village of Avzruk, 29 April 2001 (p. 47-48).
9. News from Armenian Apostolic Church Diaces of Germanie (p. 47).

## RELIGIOUS STUDY

10. **ARCHBISHOP ARSEN BERBERIAN** - Necessary Knowledge for Christians (p. 50-55).

## HISTORICAL STUDIES

11. **HAYKAZ HOVHANNISSIAN** - The Armenian Church and the Armenian Faith in Russian Sources (investigation) - (p. 56-70).
12. **S. A. VIRABIAN, G. L. ETIMIAN** - Piluman Tairian (170th Anniversary of the Vanadzor St.-Virgin Church Construction (investigation) - (p. 71-76).
13. **LAVRENTI HOVHANNISSIAN** - Linguistic Peculiarities of Thovma Metzopetsi "Historiography" (investigation) - (p. 77-84).
14. **HAYKANOUSH MESROPIAN** - Peculiarities of the usage of the Word "Surb" ("Saint") in Armenian (investigation) - (p. 85-93).
15. **ROUBEN SIMONIAN** - Medieval Roads of the Tavush Province (investigation) - (p. 94-107)..

## CRITICAL REVIEW

16. **VARDAN DEVRIKIAN** - A Book Dedicated to Anania Sanahnetsi (About the Book "Anania Sanahnetsi" by Hacob Keusseyan) - (p. 108-111).

## BIBLIOGRAPHY

17. **ANDRANIK ZEYTUNIAN** - Bibliography of the Monthly "Echmiadzin" (1984-2000) - (p. 112-126).
18. **ALVARD GHAZIAN** - Armenian Folklore and Ethnology on the Pages of "Handes Amsorya" (p. 127-133).
19. **DANIEL MUSICIAN** - Vahagn Stamboltsian is 70 years old (p. 134-136).

20. Brief Church News. Information about the Holy Masses, Sermons and other Ceremonies held at the Holy See and the Cathedral of Saint-Echmiadzin in May 2001 (p.137).

# "ETCHMIADZINE" ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (Mai 2001)

1. Première visite patriarcale de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, aux Etats-Unis d'Amérique et au Canada, 5 mai - 1er juin 2001 (p. 3-38).

## ENCYCLIQUES PATRIARCAUX ET MESSAGES DE BENEDICTION

2. Félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à son Eminence l'Arcbevêque Grigoris Bouniatian a l'occasion de sa nomination Chef du diocèse arménien d'Ukraine, 5 mai 2001, no. 55 (p. 39-40).
3. Distribution de distinctions du Catholicossat, de bénédictions patriarcales et de messages de félicitation (p. 41-42).

## INFORMATION OFFICIELLE

4. Message de felicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion de la Fête de la Victoire, du Jour de l'Armée de la République du Haut-Karabagh et de la libération de la ville de Chouchi, 8 mai 2001 (p. 43-44).
5. Catholicos Garéguine II, "Notre prière est de contribuer à l'amitié entre nos deux nations". Visite du Président du Liban au Saint-siège d'Etchmiadzine, 3 mai 2001 (p. 44-45).
6. Sur ordre de Sa Sainteté le Catholicos de tous les Arméniens, l'archevêque Tiran Kuréghian a été défroqué, 15 mai 2001 (p. 45).
7. Lettre de condoléancs de Sa Sainteté Garéguine II à l'occasion de la catastrophe aérienne survenue en Iran, 21 mai 2001 (p. 46).

## AU SAINT SIEGE ET DANS LES DIOCESES


8. Diocèse arménien d'Iraq
**DEACON ARAM KETENDJIAN**
a) Pose de la première pierre de la nouvelle église de Mossoul, 26 avril 2001 (p. 47).
b) Bénédiction de la nouvelle église St.-Vardan du village d'Avzrouk, 29 avril 2001 (p. 47-48).
9. Nouvelles du diocèse arménien d'Allemagne (p. 49).


## ETUDE RELIGIEUSE


10. **ARCHEVEQUE ARSEN BERBERIAN** - Connaissances indispensables aux chrétiens (p. 50-55).


## ETUDES HISTORIQUES


11. **HAYKAZ HOVHANNISSIAN** - L'Eglise et la Foi arméniennes dans les sources russes (recherche scientifique) - (p. 56-70).
12. **S. A. VIRABIAN, G. L. ETIMIAN** - Pilouman Tairian (à l'occasion du 170$^e$ anniversaire de la construction de l'église Sainte-Vierge de Vanadzor (recherche scientifique) - (p. 71-76).
13. **LAVRENTI HOVHANNISSIAN** - Particularités linguistiques de l'"Historiographie" de Thovma Métzopétsi (recherche scientifique) - (p. 77-84).
14. **HAYKANOUCHE MESROPIAN** - Particularités des différents emplois du mot "Sourb" ("Saint") en arménien (recherche scientifique) - (p. 85-93).
15. **ROUBEN SIMONIAN** - Les routes médiévales du district de Tavouche (recherche scientifique) - (p. 94-107).


## CRITIQUE LITTERAIRE


16. **VARDAN DEVRIKIAN** - Livre consacré à Anania Sanahnétsi (Sur le livre "Anania Sanahnétsi" de Hacob Keusséyan) - (p. 108-111).

## BIBLIOGRAPHIE

17. **ANDRANIK ZEYTOUNIAN** - Bibliographie du mensuel "Etchmiadzine" (1984-2000) - (p. 112-126).
18. **ALVARD GHAZIYAN** - Ethnologie et folklore arméniens sur les pages de la revue "Handes Amsorya" (p. 127-133).
19. **DANIEL MUSICIEN** - Vahagn Stamboltsian a 70 ans (p. 134-136).

20. Brèves nouvelles ecclésiastiques.- Information sur les saintes Messes, les sermons et les autres cérémonies accomplies en mai 2001 à la Cathédrale et au Saint-Siège d'Etchmiadzine (p. 137).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ